



ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԵՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ԷՌՆԵՍ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏՐԱՆԻՆ
VII–IX ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԼԻՆԳՎԱ հրատ.
2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ս 694

Սողոմոնյան Մ., Սողոմոնյան Է.

Ս 694 Արցախի քաղաքական և եկեղեցական ընտրանին VII-IX դարերում. – Եր.: Լինգվա, 2010–248էջ:

Գիրքը ներկայացնում է պատմաբան Միքայել Սողոմոնյանի (1922-1989) հարուստ գիտական ժառանգության մի հատվածը՝ VII-IX դդ. Արցախի քաղաքական և եկեղեցական ընտրանու պատմության ուսումնասիրությունը: Խորհրդային իշխանությունների կողմից արգելված այս անտիպ նյութը, պատմական արժեքավոր աշխատություն լինելուց բացի, չի կորցրել նաև իր քաղաքական արդիականությունը: Ինչպես ժամանակին, այնպես էլ այսօր այն կոչված է հերքել ադրբեջանական պատմագրության կեղծիքներն ու խեղաթյուրումները՝ ներկայացնելով Արցախի ճշմարիտ պատմությունը:

Թեմային առնչվող նյութերը Մ.Սողոմոնյանի տարբեր աշխատություններից մեկտեղել, մշակել և լրացրել է նրա որդին՝ ՀՄԴՀԿ նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Էռնեստ Սողոմոնյանը:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-56-049-6

© Սողոմոնյան Է., 2010թ.
© «Լինգվա», 2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	4
ՆԱԽԱԲԱՆ	7
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. Հողային ձևերն Արցախում	10
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԹ. Երկրագործությունը, հարկային քաղաքականությունը, դասակարգային պայքարի սրումը և ընկերային շարժումների արձագանքները Արցախում	26
ՄԱՍ ԵՐՐՈՐԹ. Քաղաքները, առևտուրը և արհեստները	59
ՄԱՍ ՉՈՐՐՈՐԹ. Մշակութային կյանքը Արցախում	71
ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԹ. Արցախի քաղաքական ընտրանին արաբական տիրապետության ժամանակ	88
ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԹ. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր ընտրանու դերը հայերենի պահպանման գործում	207
ՎԵՐՋԱԲԱՆ	243
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	245

Երկու խոսք

Հայոց պատմության հատվածներից մեկը՝ Արցախ աշխարհի պատմությունը որպես ամբողջություն մի հետաքրքիր յուրահատկություն ունի. այն մեծապես համընկնում է իր հավերժացնողների՝ պատմագիրների աշխատությունների սեփական պատմության հետ: Ղարաբաղի ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է ու մարտնչել թշնամիների դեմ սեփական հողի վրա ազատ ապրելու և աշխարհի պետությունների ընտանիքի լիարժեք անդամ դառնալու, իսկ Արցախի պատմագիրներն ու նրանց հետնորդները կռիվ են տվել հայ ժողովրդի այդ հատվածի անցյալը նենգափոխողների դեմ՝ իրենց հայրենիքի իրական, ճշմարիտ պատմությունը համաշխարհային պատմության անբաժանելի մասնիկ դարձնելու համար: Բարդ, դժվարություններով ու զրկանքներով լեցուն, բայց հերոսական ճակատագիր է:

Ձեզ ներկայացվող գիրքը Ղարաբաղի պատմության կերտողներից մեկի, հորս՝ Միքայել Սողոմոնյանի աշխատություններից է: Խորհրդային կարգերի տարիներին այն արժանացել է Արցախ-Խաչեն-Ղարաբաղի պատմությանը նվիրված բազմաթիվ այլ պատմական երկերի ճակատագրին. մերժվել է և դատապարտվել «լռության»: Խորհրդային տարիներին դժվար էր, կամ գրեթե անհնար որևէ ճշմարիտ նյութ տպագրել Ղարաբաղի պատմության վերաբերյալ: Այսպես, Հայաստանի Կոմկոմի կենտրոնի Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի համակարգող խորհուրդը դեռևս 1968 թվականի նոյեմբերի 18-ին հաստատել էր պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Միքայել Սողոմոնյանի «Հնդափոխական շարժումը և բոլշևիկների գործունեությունը Լեռնային Ղարաբաղում 1900-1920թթ.» դոկտորական թեզը: Սակայն խորհրդային ԲՈՒՀ-ը (ԲԱԿ) մերժել էր նշված աշխատությունը՝ այն պատճառաբանությամբ, թե «դոկտորական թեզի համար Լեռնային Ղարաբաղի թեման չափազանց

նեղ է»։ Ատենախոսությունը չփրկվեց անգամ «բոլշևիկներ» և «հեղափոխական շարժում» բառակապակցությունների առկայության պարագայում, քանի որ հայրս իր թեզում բազմաթիվ գիտական փաստերով ապացուցում էր Աղվանաց երկրի և Արցախի մշտական պատկան լինելը հայ ժողովրդին։

Հարկ է նշել, որ այս աշխատությունը հանրությանը ներկայացնելը ոչ միայն լոկ պատմական արդարությունը վերականգնելու և անտիպ նյութի արտագրություններից (ավադ, ոչ առաջին անգամ) խուսափելու նպատակ ունի։ Այն բխում է նաև հայ ժողովրդի պատմության քաղաքական վայրիվերումներից դասեր քաղելու անհրաժեշտությունից։ Գերտերությունների հետ հավասարակշռված արտաքին քաղաքականություն վարելու փայլուն օրինակ է գրքում ներկայացվող Ջվանշիրի (7-րդ դարում Միասնական կամ Ընդհանուր Աղվանքի, բնականաբար նաև բուն Արցախ աշխարհի կառավարչի) գործունեությունը։

Գիրքն ամենևին հավակնություն չունի սպառիչ խոսք ասելու թեմայի բոլոր նրբերանգների վերաբերյալ, նույնիսկ այն պարագայում, որ այստեղ մեկտեղված են մասունքներ Միքայել Սոդոմոնյանի՝ թեմային առնչվող բոլոր աշխատություններից։ Հայրս, որ անկասկած փայլուն կերպով կարդիականացներ ու կլրացներ նյութը, հեռացել է կյանքից դեռևս 1989 թվականին, իսկ նա պատմաբան չեմ։ Գրքի նյութերի վրա աշխատելիս կատարել եմ լրացուցիչ փաստահավաք, ինչպես նաև խմբագրական աշխատանք՝ փորձելով զուգահեռաբար տալ քաղաքական և քաղաքագիտական եզրահանգումներ խնդրո առարկա պատմական նյութին։ Նկարագրվող որոշ պատմական իրադարձություններ վերլուծությունների և արդի քաղաքականության հետ զուգահեռներ անցկացնելու պարարտ հող են ստեղծում, սակայն վերջիններս այնչափ ակնառու են, որ նա միտումնավոր չեմ ծանրաբեռնել դրանցով այս հարուստ պատմագրական նյութը, այլ փորձել եմ հնարավորինս ամբողջական ներկայացնել պատմաբանի՝ հորս մեկնաբանությունները, դիտարկումներն ու վերլուծությունները։ Հուսով եմ, որ մասնագետները խիստ չեն դատի արված գործը, հատկապես նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով այդպես էլ ժամանակ կամ ցանկություն չունեցան ուսումնասիրելու այն և իրենց մասնագիտական ավանդը ներդնելու այս գործում։

Գրքի խմբագրման և արդիականացման ընթացքում մեծ օգնություն է ցուցաբերել Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, որին հայտնում եմ իմ շնորհակալությունը: Երախտագիտությունս եմ հայտնում նաև ընկերներին, որ աջակցել են գրքի հրատարակմանը, ինչպես նաև որդիներին՝ ինձ քաջալերելու համար ճիշտ այնպիսի համառությամբ, որի դրսևորումներով լեցուն է Արցախի պատմիչների կենսագրությունն ու Ղարաբաղի պատմության էջերից յուրաքանչյուրը:

**Հայաստանի Ս.-Դ. Հնչակյան կուսակցության նախագահ,
ՀՀ ԱԺ պատգամավոր,
Արտաքին հարաբերությունների
մշտական հանձնաժողովի անդամ**

Էռնեստ Միքայելի Սողոմոնյան

10. 01.10 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր երկրի կամ նահանգի քաղաքագիտական նկարագիրը անշուշտ թերի կհամարվի, առանց նրա քաղաքական պատմությունը պայմանավորող սոցիալ-տնտեսական, մշակութային հարաբերությունների վերլուծության: Ահա թե ինչու Արցախ Աշխարհը մենք փորձել ենք դիտել որպես հայկական այդ նահանգի քաղաքական՝ ներքին միջդասակարգային բարդ հարաբերությունների, նվաճողների նկատմամբ տարբեր դասերի ու խավերի վերաբերմունքի, ինչպես նաև եկեղեցական, մշակութային և այլ հարաբերությունների մի ամբողջականություն:

Այն տակ կուսակալների ու իշխանների, քաղաքական ընտրանու (էլիտայի), ռազմական, կրոնական ու քաղաքական բախումների նկարագրություն չէ, և ոչ էլ նահանգային ու գավառական տների տոհմագրություն է միայն: Իսկ դավանաբանական հարցերի շուրջ տեղի ունեցած վիճաբանություններն էլ զուտ եկեղեցական մաքառումներ չեն: Արցախում ևս բոլոր դարերում էլ արծարծվել են պատմագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական, իրավագիտական, մանկավարժական և սոցիալ-տնտեսական հարցեր, որոնք, սակայն, միասնական չեն ներկայացվել թե՛ նախասովետական շրջանի բուրժուա-կղերական պատմագիտության կողմից և թե՛ սովետահայ ու Ետխորհրդային պատմաբանների երկերում:

Բնականաբար, չի գատվել նաև Արցախի VII–IX դարերի քաղաքական, կրոնականեկեղեցական էլիտայի պատմությունը:

Սովետահայ գիտնականների նշված ոլորտի աշխատությունների համար աղբյուր է հանդիսացել հայ և օտար մատենագրությունը, որը ինչպես հայտնի է, այնքան էլ հարուստ չէ Արցախի քաղաքական պատմությունը լիարժեք ուսումնասիրելու համար: Սակայն ինչպես ասում են՝ ունենք այն, ինչ ունենք, մանավանդ, որ նշված մատենագրությունը հարուստ չէ նաև Արցախի սոցիալ-տնտեսական երևույթների լիարժեք վերլուծությամբ: Նման պարագաներում, բնականաբար, առաջանում են բազմաթիվ դժվարություններ, որոնց մասին, սակայն, մենք հանգամանորեն չենք խոսի, այլ կաշխատենք հնարավորության սահմաններում հաղթահարել գոյություն ունեցող դժվարությունները:

Քաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այն նաև ստեղծող ու կառավարող քաղաքական-կղերական էլիտան Արցախում չէր կարող միանգամայն այլ լինել, քան Հայաստանի մյուս նահանգներում: Հայտնի է, որ ֆեոդալական կացութեանը Հայաստանում գոյություն ունեւր մեր դարաշրջանից էլ առաջ: Ընդհանրապէս նկատենք, որ մինչև օրս հայագիտության և արդէն նաև քաղաքագիտության մեջ վիճելի է մնում հայ ժողովրդի քաղաքական պատմության փուլավորման խնդիրը, մասնավորապէս Հայաստանում ստրկատիրական հասարակարգի գոյության հարցը: Այդ հարցի վերաբերյալ Մ. Խորենացու, Սեբեոսի, Մ. Չամչյանի, Ա. Գարագաշյանի, Գր. Խալաթյանի, Ն. Աղոնցի, Լեոյի, Հ. Մանանդյանի, Բ. Բորյանի, Թ. Ավդալբեկյանի, Խ. Սամվելյանի, Բ. Առաքելյանի, Ի. Պետրոշևի, Լ. Բաբայանի, Ս. Հակոբյանի, Ս. Երեմյանի, Ս. Պողոսյանի, Ա. Աբրահամյանի և ուրիշների կարծիքները հանրահայտ են

¹: Նշենք, որ հին Հայաստանում ստրկատիրական հասարակարգի գոյությունը ընդունում են Ս. Երեմյանը, Բ. Առաքելյանը, Լ. Խաչիկյանը, Գ. Սարգսյանը, Ա. Փերիսանյանը և ուրիշներ, չեն ընդունում Հ. Մանանդյանը, Խ. Սամվելյանը, Ս. Հակոբյանը, Հ. Հարությունյանը, Բ. Հարությունյանը և ուրիշներ: Գրավոր ստույգ աղբյուրների բացակայության պատճառով ստրկատիրական հասարակարգի վերաբերյալ հաստատուն խոսք ասելը դժվար է: Մենք համոզված ենք, որ գերիշխողը այնուամենայնիվ ֆեոդալական կացութեանն էր՝ թե մեր դարաշրջանից առաջ և թե VII–IX դարերում: Հայ ժողովրդի պատմության առաջին հատորում կարդում ենք. «Հայաստանը փաստորեն չի ապրել ստրկատիրական հասարակության ծաղկման այն «դասական» ժամանակաշրջանը, որը տարբեր ժամանակներում և տարբեր ձևերով հատուկ է եղել Հին Արևելքի երկրներին և հունա-հռոմեական աշխարհին, և հետևաբար չի կարողացել լրիվ չափով ստեղծել ստրկատիրական հասարակարգի համար բնորոշ մի շարք սոցիալական և քաղաքական ձևեր ու հիմնարկներ»²: Այս ամենը

¹ Ե.Ռ. Հարությունյան, «Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920–1965 թ.թ.», ուրվագծեր, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1967թ., էջ 108–120:

² «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 1, Երևան, 1971թ., էջ 666:

զգալի չափով վերաբերում է հայկական Արցախ նահանգին, որտեղ կարևոր դեր են խաղացել հողային կամ ագրարային հարաբերությունները, որոնք ամենուր հաստատուն ու անբաժանելի բաղկացուցիչ են եղել ժամանակի արտադրական, ընկերային ու քաղաքական հարաբերությունների կարևորագույն դրսևորումներում: Հելլենիստական շրջանում հիմնական արտադրամիջոցի՝ հողի հանդեպ ունեցած այս կամ այն առնչությամբ էր պայմանավորված հասարակության անդամների սոցիալական էությունը, նրանց դիրքն ու դերը տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում:

Քաղաքական էլիտայի ողջ պատկերը մ.թ. VII–IX դարերում հնարավոր չէ ներկայացնել լիարժեք, եթե նաև խորամուխ չլինենք Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի գյուղացիության պատմությանը: Այն ներկայացված է սույն աշխատության առաջին և երկրորդ մասերում: Հայ և օտարերկրյա էլիտայի նկարագիրը ևս թերի կլիներ, եթե երրորդ և չորրորդ մասերում չփորձեինք ներկայացնել ոչ միայն VII–IX դարերի հայկական քաղաքները, առևտրի ձևերը և գոյություն ունեցող մշակույթը, այլև դրանից առաջ, մասնավորապես մ.թ. I–VI դարերում եղած պատկերը: Իսկ հարցերի հարցը ցանկաված ազգի պահպանման համար եղել և մնում է մայրենի լեզվի հարատևումը, ուր էլիտայի գործունեությունը փորձել ենք ներկայացնել աշխատության վերջին, վեցերորդ մասում՝ շեշտը դնելով հայ եկեղեցու և նրա սպասավորների տիտանական ջանքերի վրա, միևնույն ժամանակ վերլուծելով սլավներն ու բացթողումները: Հուսով ենք, որ սույն աշխատությունը հետաքրքրություն կառաջացնի ոչ միայն գիտական շրջանակներում, այլև հասարակության տարբեր շերտերում, քանզի մեր ժողովրդի մի հսկայական զանգվածի պատմական-քաղաքական կյանքը ընթացել է մի երկրամասում, որը տարբեր ժամանակահատվածներում կրել է տարբեր անվանումներ՝ Արցախ աշխարհ, կամ ուղղակի Արցախ, Խաչեն, Ղարաբաղ, միաժամանակ նաև Սյունիք, կամ փոքր Սյունիք:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ՀՈՂԱՅԻՆ ՁԵՎԵՐՆ ԱՐՅԱՆՈՒՄ

I–IX դարերում Հայաստանում հողատիրության ձևերի ուսումնասիրության հարցով զբաղվել են շատ գիտնականներ և միասնական եզրակացություններից զատ, առանձին հարցերում տարակարծիք մտքեր արտահայտել: Ճիշտ է, Հայաստանի հողատիրության ձևերը հիմնականում գոյություն են ունեցել նաև նրա Արցախ նահանգում, բայց մենք կիսում ենք մեծանուն գիտնական Հ. Մանանդյանի կարծիքն այն մասին, որ նախարարչական կազմակերպության առանձնահատկությունները պայմանավորված են նաև Հայկական Բարձրավանդակի աշխարհագրական դիրքով ու տեղագրական կառուցվածքով: Հ. Մանանդյանը գրում է. «Հայաստանը սարահարթերի և հովիտների, իրարից բաժանված ու կտրված շրջանների մի լեռնաշխարհ է, ուստի և նրա այդ տեղադրության համեմատ հնագույն ժամանակներից սկսած կազմվել էին այստեղ իրարից անջատ բազմաթիվ «աշխարհներ» և նախարարական ինքնուրույն երկրներ, որոնք տնտեսական ու կուլտուրական իրենց կենցաղով, առնչությամբ ու բնակչության կազմով նման ու համակերպ չէին հաճախ գանազան վայրերում»¹:

Նկատի ունենալով, որ Արցախը ևս միշտ Հայաստանի անբաժան մասը լինելով հանդերձ, նման մի լեռնային ինքնուրույն աշխարհ էր հանդիսանում, ապա հողային հարաբերությունները այստեղ ևս որոշ յուրահատուկ ձևեր են ընդունել: Մենք պաշտպանում ենք Հ. Մանանդյանի կարծիքն այն մասին, որով, հակառակ Ա. Գարագաշյանի, Խ. Սամվելյանի, Թ. Ավդալբեկյանի և ուրիշների կարծիքների, նախարարական Հայաստանում հողի գերագույն սեփականատերը պետությունը՝ այսինքն սուվերեն թագավորը չէր: Մեր կարծիքով Արցախի բուն իշխանների կախումը Հայոց կամ Աղվանից Արշակունիներից, եղել է ոչ թե հողային, այլ սոսկ քաղաքական: Հատկապես Արցախի վերաբերյալ անընդունելի է Խ. Սամվելյանի կարծիքն այն մասին, թե Հայաստանում ֆեոդալիզմի ծագման օրից ընդհուպ մինչև նրա ան-

¹ Հ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», էջ 307:

կումը հողի սեփականատիրական իրավունքը պատկանել է պետությանը՝ հանձին նրան գլխավորող թագավորի¹: Կարելի է ենթադրել, որ Արշակունիների օրոք եղել է քաղաքական իշխանության ներքին մոնոպոլիզացիա, որը ցանկացած տիրակալի առաջին ձգտումն է, սակայն տնտեսության վարման պատասխանատվությունը դրված էր տեղական ընտրանու ուսերին՝ ղեկավարելու և անմիջական վերահսկողություն իրականացնելու միտումով:

Այսպես, Մեծ Հայքի թագավորության ամբողջ տարածքը, որի մեջ մտնում էր նաև Արցախը, հայոց թագավորի ժառանգական սեփականությունն էր տեսականորեն, որը և համարվում էր «երկիր արքունի»: Սակայն իրական այդ տարածքները կազմում էին ռազմական, քրմական և ցեղային-տոհմական ավագանու ժառանգական սեփականությունը, բայց թագավորի գերագույն տիրակալական իրավունքները արտահայտվում էին նրանում, որ սովորաբար, այդ տարածքները մտնում էին այս կամ այն վարչական միավորման մեջ, որոնց գլուխ կանգնած էին թագավորի կողմից նշանակվող ստրատեգոս-կողմնակալները, որոնց պաշտոնը ևս սովորաբար դառնում էր ժառանգական-քաղաքական: Թագավորը իրական տերն էր միայն այն տարածքների, որոնք ժառանգական կամ նվաճման իրավունքով դարձել էին նրա սեփականությունը, ուստի այդ հարստության հողերը համարվում էին «երկիրք արքունականք», իսկ բոլորը միասին՝ «Արքունի տուն»: Արքունի էին համարվում երկրի ընդերքի հարստությունները (հանքերը), հանքային ջրերը, գլխավոր ձկնորսարանները և այլն:

Մեծ Հայքի թագավորական գյուղատնտեսական տարածքը բաժանված էր թագավորական-արքունական և ռազմա-հողատիրական ավագանու մասնատիրական տնտեսությունների, տաճարային և գյուղական համայնքների միջև: Գյուղական համայնքների հողերից բացի, մյուս բոլոր տեսակի մշակվելիք հողային տարածքները մասնատիրական տնտեսություններ էին և կոչվում էին դաստակերտ ու ազարակ:

¹ Խ. Սամվելյան, «Հին հայ իրավունքի պատմությունը», հատոր 1, էջ 158:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արշակունի հայ թագավորները «իշխանագուն անձանց» տիրությամբ էին նվիրում հատկապես Հայաստանի լեռնային նահանգներում՝ ուր բնակչությունը դեռ գտնվում էր տոհմատիրական կացության մեջ: Առանձին անհատներ գյուղերում վեր էին բարձրանում և առանձնանում (գյուղական ավագները, քահանաներն ու հատ ու կենտ հարուստ գյուղացիները):

Հելլենիստական շրջանում Հայաստանում, ընդ որում նաև Արցախում հողի մի մասը կազմում էր միապետի անմիջական սեփականությունը, որտեղ վերջինս իր գործակալների օգնությամբ հանդես էր գալիս որպես անմիջական շահագործող: Արքունի հողային ֆոնդից կատարվում էին նվիրատվություններ: Ռազմական արշավանքներում և այլ ձեռնարկումներում առաջ էր քաշվում ավագանու նոր շերտ՝ ժառայող ավագանին, որը համալրում էր իշխողների շարքերը, սակայն բավարարված չէր իր հողի չափերով: Երկրի կամ նահանգի տերը հարկադրված էր լինում մինչև անգամ առատաձեռնորեն լրացուցիչ հողեր հատկացնել նրանց:

Հողատիրության հիմնական ձևը ազատական խոշոր հողատիրությունն էր, որը վաղ ֆեոդալիզմի շրջանում (III–IX դարեր) ուներ ներք ձև՝ «հայրենական» (այն հողերը, որոնց իբրև ժառանգական սեփականություն հորից անցնում էին իրենց որդիներին), «պարզական» (այն հողերը, որոնք ստանում էին զինվորական և պետական պաշտոնյաները իբրև պարգև), «գանձագին» (այն հողերը, որոնք գնվում էին դրամատերերի կողմից): Արցախի և Սյունիքի ամենաընդարձակ կալվածքները արքունական էին, ժառանգական («հայրենական»): Ինչ խոսք, որ արքունիքը վերցնում էր լավագույն հողակտորները: Ամենամեծ հողատերը Հայոց Աղվանքում նրա իշխանն էր, որից հետո գալիս էին նրա գործակիցները: Օրինակ, Միասնական կամ Ընդհանուր Աղվանքի ամենախոշոր ֆեոդալը իր ժամանակին Ջվանշիրն էր, որին Պարսից արքան «իբրև սեփականություն գյուղեր ու ձկնառատ գետեր հանձնեց»¹: Իսկ բյուզանդացիների Կոստանդիանոս կայսրը Ջվանշիրին անվանում է Գարդմանի տեր: Նրան այդպես

¹ Վարագ Առաքելյան, «Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1969թ., էջ 136:

էին ճանաչում բոլորը: Ջվանշիրը բերդի իր բնիկ գավառում կառուցում է եկեղեցի: Նույն աղբյուրի հաղորդմամբ «Աղվանքի առաջին թագավորները եթե որևէ ժամանակ գյուղեր և ուրիշ տարածություններ ունեցել էին, բոլորը սերնդեսերունդ նրան (Ջվանշիրին, – Է.Ս.) հանձնեց (Կոստանդիանոսը, – Է.Ս.):»¹: Իսկ երկրորդ հանդիպման ժամանակ Կոստանդիանոսը Ջվանշիրին ենթակա է դարձնում Սյունիքի իշխանությունը և ստիպում է նրան, որ «համաձայնվի գետի այն կողմը Ատրպատականին ևս իշխելու»: Ճիշտ է, դրանք իշխանական իրավունքների իմաստ ունեին, սակայն Ջվանշիրը Գարդմանը սեփականացնելով չի բավարարվում: «Նա Վրաստանի սահմաններից մինչև Արաքս գետը տներ դարձավ միահեծան մեծությամբ»: Ջվանշիրը այդտեղ գրեթե ամենուր սեփական տիրույթներ ուներ: Եթե այդպես չլիներ, ապա նա իր մահկանացուն կնքելուց առաջ «իր որդիներից յուրաքանչյուրին» չէր նշանակի «իրենց բաժինների վրա»: Սա նույնպես վերը նշված քաղաքագիտական մոտեցումն է, այս անգամ Պարսից արքայի և Կոստանդիանոս կայսրի կիրառությամբ և հետագա շարադրանքից երևում է, որ այն սանդղակավորված իջնում է, դառնում հերարխիայի տեսակ:

Նման սեփականատերեր էին Աղվանքի, ընդ որում նաև Արցախի բոլոր տերերը: V դարում Աղվանքի իշխան Վաչեն, հրաժարվելով գահից, «վերցրեց միայն իր սեփական բաժինը՝ հազար ծուխ, որ հորից էր ժառանգել»¹: Այս փաստերը նաև Արցախում ու ամբողջ Աղվանքում ամենաընդարձակ կալվածքները արքունական, իսկ վերջինս էլ ժառանգական լինելու վկայություններ են: Նախարարական տներն իրենց կալվածքներն ընդարձակում էին գյուղական համայնքների հաշվին: Ավատական պետության մեջ հարստությունը միայն հողն էր, ուստի երկրի ամբողջ հարստությունը հավաքված էր կալվածատեր ազնվականության ձեռքում: Աղվանքի իշխանները, կուսակալները, նահանգների ու գավառների կառավարիչները ունեին անսահմանափակ իրավունքներ և թույլ էին տալիս ամեն տեսակի կամայականություններ: Նրանք կարող էին իրենց տիրույթի գյուղը նվիրել եկեղեցիներին, վանքերին, առանձին անհատներին (աչքի ընկնող զինվորականներին և այլն): Պատմահոր վկայությամբ

¹ Էջի մեջբերումները տես. Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 142:

նախարարական տիրույթի սահմանները որոշողը ուժն էր: Ուժեղը կտրում, վերցնում էր այնքան, որքան ներում էին նրա ուժերը: Քիչ չեն եղել ֆեոդալական բախումները՝ կալվածքային սահմանները որոշելու համար: Կային նաև հողատեր մանր ազնվականներ: Ու քանի որ ուժը, բոլորությունը որոշիչ հանգամանք էր, ապա այստեղից բխում է, որ Արցախում դեռ չէր ձևավորվել ռացիոնալ բյուրոկրատիան, որն ըստ Մ. Վեբերի՝ իշխանության լեգիտիմության ռացիոնալ-լեգալ տիպի գլխավոր բաղկացուցիչն է¹: Նշվածի ձևավորումը դժվարանում էր նախ օբյեկտիվ պատճառով: Այն է, որ բյուրոկրատիան հատուկ է նախ ֆեոդալական արքայադատական պետական համակարգին: Իսկ մեր ուսումնասիրության շրջանում Արցախի քաղաքական համակարգը միապետական-արքայադատական լինելի չէր կարող աշխարհաքաղաքական վայրիվերումներից ելնելով (ինչպես արդեն վերը նշել ենք՝ հնարավոր էր միայն քաղաքական իշխանության ներքին մոնոպոլիզացիա): Սուբյեկտիվն էլ այն էր, որ մ.թ. I–IX դարերում Արցախի տիրակալների քաղաքական կողմնորոշումներից էր կախված այս կամ այն գերտերության նկատմամբ վերաբերմունքը: Սույն աշխատության ողջ շարադրանքից երևում է, որ ժամանակի հայրենի քաղաքական մշակույթը կրում էր սերվիլիստական-պատերնալիստական էլեմենտներ:

* * *

Խոշոր հողատերեր էին եկեղեցիներն ու վանքերը, փաստորեն նաև եկեղեցականներն ու վանականները, որովհետև հին աշխարհում քրմությունը քաղաքական ու սոցիալական կարևոր դաս էր համարվում: Քրմության հասարակական-քաղաքական կշիռը պայմանավորված էր կրոնի՝ որպես տիրապետող գաղափարախոսության դերով, իսկ տնտեսական նշանակությունը՝ տաճարների հարստությամբ, որի նշանակալից մասն էին կազմում հողային տարածությունները²: Հայկական հեթանոսական տաճարների հողային լայնարձակ տարածությունները պահպանվել են ընդհուպ մինչև քրիստոնեության հաստատումը Ար-

¹ Ææáá Ì æeī ðòà, «ì í eèðì eī ãeý». Èçà-áí «ÒË Æáæáe», 2005á. Ñ. 129.

² Տես. Ì áðeðáí ýí Æ.Æ. «Òðáì í áúá í áúáæeí áí eý Ì æeí e Æçèè e Æðì áí eè (IV á. áí í .ý. – III á. í .ý.)». Ì ., 1958r.

ցախում և ողջ Հայաստանում, որից հետո ամբողջությամբ անցել են քրիստոնեական եկեղեցուն: Դրա վկայություններ են Ագաթանգեղոսի հաղորդումները, որը նկարագրելով հեթանոսական տաճարների կործանումը, հիշատակում է, որ նրանց «դաստակերտները, սպասավորներին... հողերով ու սահմաններով հանդերձ նվիրեցին եկեղեցու սպասավորության ծառայության» կամ «ամբողջ գյուղը դաստակերտներով և սահմաններով հանդերձ նվիրեցին եկեղեցուն»¹: Քրմությունը, պետության հետ դաշնակցած, հանդես էր գալիս որպես իշխող վերնախավ: Ահա թե ինչու թագավորները տաճարներին նվիրաբերում էին հողային մեծ տարածություններ:

Տրդատ Երրորդի (287–332 թ.թ.) հրամանով եկեղեցականները դասվում էին ազատանու շարքերը, յուրաքանչյուր եկեղեցի ստացավ չորսական կտոր հող՝ ազարակներում և յոթական կտոր հող՝ ավաններում: Չորրորդ դարի երկրորդ կեսին եկեղեցիները իրենցից ներկայացնում էին կալվածատիրական խոշոր օջախներ:

Քրիստոնեության տարածումն Արցախում համընկնում էր տեղում ֆեոդալական հարաբերությունների հաստատման հետ, և քրիստոնեական եկեղեցին ձևավորվում է որպես խոշոր ֆեոդալական կազմակերպություն: Աղվանքի իշխան Ուոնայրի ժամանակ (IV դար) քրիստոնեական եկեղեցին արդեն խոշոր կալվածատեր էր, իսկ նրա հաջորդների ժամանակ այն ավելի հարստանում ու հզորանում է: Եկեղեցու կալվածքները Արցախում ընդարձակվում էին ինչպես արքունի, այնպես էլ նախարարական ու համայնական հողերի հաշվին: Հայ թագավորների կողմից քրիստոնեական եկեղեցու հովանավորությունը նախարարների կենտրոնախույս ձգտումների դեմ հուսալի նեցուկ ստեղծելու նպատակ էր հետապնդում, որը, սակայն, չարդարացրեց իրեն: Արագորեն հարստացող ու հզորացող եկեղեցին շուտով դարձավ թագավորական տան հակառակորդներից մեկը: Եկեղեցու և թագավորական տան միջև մղվող պայքարում եկեղեցին ուներ այն առավելությունը, որ հենվում էր կենտրոնացած հոգևոր իշխանության վրա: Քրիստոնեական կրոնը լայն տարածում էր ստանում, որովհետև այն հին աշխարհի հեթանոսական կրոններին

¹ Ագաթանգեղոս, «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1914թ., էջ 406, 408

րի հետ միասին, մերժում էր տիրող ունեցվածքային ու դասակարգային անհավասարությունը: Աշխատավորները մեծ ակնկալություններ ունեին նոր կրոնից: Շինականն իր եկամտի մեկ տասներորդ մասը («տասանորդ») տալիս էր եկեղեցուն, իսկ հոգևորականությանը վճարում էր ծիսակատարությունների համար: Հինգերորդ դարի վերջին Վաչագան Բարեպաշտի և Շուփ-հաղիշա կաթողիկոսի կողմից Աղվենում անցկացված ժողովում հաստատված կանոնները ցույց են տալիս, որ «Աղվանից եկեղեցին հարկ ստանում էր թե՛ արմտիքներով և թե՛ անասուններով – ձի, արջառ, ոչխար և այլն: Նա պարտավորեցնում էր ամեն մեկին, լինելի դա ազատ թե՛ շինական, որ տարին մի անգամ պատարագ մատուցանեն իրենց մեռելիների համար և իրենց վաստակից բաժին հանեն այդ մեռելիներին իրենց տնտեսության համեմատ, ինչպես կուզեն: Հովիվ ու երկրագործ ժողովրդի եկեղեցին էլ, ուրեմն, ինչպես և արքունիքը, խշոր հովիվ ու երկրագործ էր: Եկեղեցական կարգերը, օրինակ՝ պասերը, պետք է պահպանվեին լսատությանը»¹: Իսկ այդ կարգերը նաև անսահման մեծ խտրականություն էին սահմանում հասարակական լսավերի՝ աղքատների ու սակավաթիվ հարուստների միջև: Օրինակ, կիրակի օրերը ծառաները տներին հետ կարող էին գնալ գլխավոր եկեղեցին և միասին նվերներ անել եկեղեցուն: Լեռն դրանից եզրակացություն է անում, թե՛ «նշանակում է՝ շաբաթվա մյուս օրերին այդ բանն արգելված էր»²:

Շինականների կախվածությունը եկեղեցիներից ու եկեղեցականներից նրանում է նաև հարկահանության համակարգից: Շինականը գյուղի երեցին պիտի վճարեր մոտ 40 կիլոգրամ ցորեն, մոտ 60 կիլոգրամ գարի, 16 բաժակ մեղր: Բացի այդ, ոչխար ունեցողները պետք է տալին մեկական ոչխար, երեքական ոչխարի բուրդ և մեկ գլուխ պանիր, ձիեր ունեցողները՝ մեկ քուռակ: Աղքատ շինականները հաճախ հարկադրված էին լինում դիմելու վաշխառուներին և նրանցից տոկոսով փող խնդրել: Երբ քահանա և սարկավագ էր ձեռնադրվում, չորս դրամ քահանային և երկու դրամ սարկավագին պետք է տրվեր: Ազնվական կամ թագավորական ցեղին պատկանող անձը կենդանության ժամանակ իր

¹ Լեռ, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 152–153:

² Նույն տեղը, էջ 155:

ծնորքով հոգու բաժին պետք է տար: Օրինակ, «ձի թամբով ու սանձով և կամ ինչ հարստություն որ ունի, դրանից պետք է տա, եթե կենդանության օրոք չտա, ապա նրա մահից հետո ընտանիքն է պարտավոր տալ»¹: Եկեղեցին հաճույքով էր ընդունում անասունները, հատկապես ձին, որը մեծ դեր էր խաղում տնտեսության համար:

Եկեղեցու գլուխ կանգնած էր կաթողիկոսը, որն օգտվում էր անասնամանափակ իրավունքներից: Նա կարող էր խույս տալ մեծ իշխանի առջև խոնարհվելուց և նրա անունը հաճախ էր նշվում իշխանական անուններից առաջ: Կաթողիկոսը երկրում միակն էր, ով իրավունք ուներ հարկադրելու իշխանին՝ խոնարհվելու: Այն իշխանները, որոնք չէին ենթարկվում կաթողիկոսի վճռին, եկեղեցու կողմից նգովվում, անգամ մարմնական պատիժների էին ենթարկվում: Այսպես, Աղվանքի Սիմոն կաթողիկոսի որոշմամբ, եկեղեցուց պահանջվում էր չհնազանդվել ֆեոդալներին, չենթարկվել նրանց և «զինվորական մարդկանց» ազդեցությանը, քանի որ Աստված չի հրամայել, որ «անարժանները կամ զինվորականները տիրեն եկեղեցու իշխանությանը, և ցասում առաջ բերեն աշխարհի ու իրենց վրա»²: Եվ ապա. «Որովհետև խորանը, սուրբ եկեղեցու նոր ուխտի քահանաները օրինակ էին, որ անարժաններն ու զինվորները չհանդգնեին եկեղեցում ապրել. այս պատվերը Փրկչի հրամանով ավելի ևս հաստատեցին սուրբ առաքյալները, ասելով թե՛ «Սուրբ հոգուն և մեզ հաճո թվաց՝ այսպես կարգել. զինվորներն ու անարժանները չպետք է հանդգնեն եկեղեցին զգել իրենց իշխանության տակ, իսկ ով որ հանդգնի, թող նգովվի»: Ըստ այդմ նաև մեր երջանիկ հայրերը հաստատել են. «Թե ոչ որ իրավունք չունի Աստծու եկեղեցին հանձնել անարժան մարդկանց ու զինվորների, կամ ծախել իբրև ունեցվածք, կամ տալ իշխաններին ու նրանց դայակներին իբրև նվեր»³: Եկեղեցու վերաբերյալ Աղվանքի կաթողիկոս տեր Սիմոնի կանոններով կալվածատերերը իրենց սեփական գյուղերը վաճառելիս, պայմանագրում պետք է գրեին, որ «զատ է եկեղեցուց և

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 66:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 239:

³ Նույն տեղը, էջ 240:

եկեղեցու հողից, քանի որ Աստծո եկեղեցիները ազատ են և որևէ մեկի իշխանության տակ չեն գտնվում»¹:

Կաթողիկոսն ու կղերը հասկանում էին, որ եկեղեցու ուժն ու ազդեցությունը կախված էին նրանց տիրույթների չափից, ուստի խստիվ կերպով հետևում էին, որպեսզի եկեղեցական կալվածքները չնվաճվեն, ընդհակառակն, ավելի ընդլայնվեն: Այդ երևում է տեր Սիմոնի կանոններում տեղ գտած հետևյալ փաստից. «Ներսմեհրի², վանահայր սրբասուն Բշիկը գրել է, թե աղվանից իշխան Վարագ-Տրդատը մի փոքրիկ գյուղակ է նվիրել սուրբ խաչիս և իր հոգու փրկության համար սպասավորելու, իսկ այժմ Փուսան-Վեհ անունով մի աշխարհիկ հեծելակ, որ անառակությամբ կյանք է անցկացնում, թուրթ է մեջտեղ բերում, թե Աղվանքի իշխանը ինձ է տվել այդ եկեղեցին վանականությամբ, որպեսզի ես հոգամ»³: Լսելով այդ մասին, տեր Սիմոնն իր ենթականերին հայտնում է, որ հոգեվորականների «իրավունքները կմնան այսուհետև ու ապագայում, իսկ այն Փուսան-Վեհը, ըստ սուրբ հոգու հրամանի, չպետք է տիրի այն եկեղեցուն, այլ անբիծ ու անարատ քահանաները կիշխեն եկեղեցու վրա, քանի որ նա ոչ Աստծուց է իրավունք ստացել և ոչ էլ մեզնից»⁴:

Եկեղեցականներն Արցախում մեծ թիվ էին կազմում: Ահա թե ինչու եկեղեցին մեծ միջոցների կարիք էր զգում, որով և ավելի էր ծանրանում շինականի վիճակը: Ծինականների հիասթափությունը հոգևորականներից դրսևորվեց աղանդավորական շարժումների ձևով, որոնց գաղափարախոսությունը խարսխված էր գլխավորապես վաղ քրիստոնեության հավասարության սկզբունքների վրա: Եթե նշված պարագայում ավանդների ներխուժումը Արցախ ինչ-որ տեղ տրամաբանական է, ապա այժմ, նրբ տարբեր աղանդներ ունեցողություն են անում Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու նորմերի նկատմամբ, դա առնվազն ան-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 240–241:

² Ներսմեհրը կամ Զրվշտիկը կրոնական միաբանության վանք էր Արցախում, որը գտնվում էր Թարթառի կիրճում և կոչվում՝ նաև Եղիշե առաքյալի վանք: Նրա հիմնադիրը «ավանդությամբ համարվում է Ադուանից Վաչագան Գ. թագավորը» (Հ. Առաքելյան, «Հանրագիտարան-բառարան», Թիֆլիս, 1915թ., էջ 581):

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 241:

⁴ Նույն տեղը:

հասկանալի է: Արցախյան ազատամարտի ողջ ընթացքում մեր նկեղնցին ժողովրդի կողքին էր՝ զենքը ձեռքը վերցրած թեմի առաջնորդ Պարզև սրբազանի ղեկավարությամբ: Այդ ժամանակահատվածում որևէ աղանդ Ղարաբաղում չկար: Նրանք սկսեցին նրևալ արդեն յսաղաղ շինարարության տարիներին:

* * *

Ամենաստորին դասը կազմում էին այսպես կոչված «ռամիկները» (գյուղացիները, արհեստավորները, մանր առևտրականները, «ստրուկները» և այլն): Արցախում «ռամիկների» հիմնական մասը գյուղացիներն էին, որոնք հին մատենագրության համաձայն կոչվում էին «շինականներ»: Վերջիններին հիմնական զբաղմունքը վաղ ֆեոդալիզմի շրջանում հողագործությունը, այգեգործությունն ու անասնապահությունն էր: Մշակվում էին ցորեն, գարի, վարսակ և կտվատ, այն էլ միայն արօրով ու փայտե գութանով, որն ուներ երկաթե խտի:

Արցախում տնտեսության կայուն օջախը գյուղական համայնքն էր, որը նույնքան հին է, որքան դասակարգային հասարակությունը: Այն առաջագնի է նախնադարյան համայնական հասարակության քայքայման ժամանակաշրջանից՝ որպես նրան հատուկ տոհմական համայնքի գործառույթների ժառանգորդ: Գյուղական համայնքի առաջացումն ունի իր սկզբնապատճառները. առաջին, բավարար քանակությամբ կենսամթերքների արտադրության անհրաժեշտությունը, որի ձեռք բերումը թույլ զարգացած կամ առանձնահատուկ աշխարհագրական ու կլիմայական պայմաններում գտնվող հասարակություններում անհնարին է այլ կերպ, քան կոլեկտիվի, այսինքն՝ համայնքի ընդհանուր ջանքերով: Իսկ Արցախն իր աշխարհագրական ու կլիմայական պայմաններով առանձնահատուկ «աշխարհ» է: Երկրորդ, գյուղական համայնքի առաջացման ու գոյության սկզբնապատճառներից մեկն էլ ներքնապես իրար շողկապվելու պահանջն էր՝ ունեցած ու ձեռք բերած իրավունքները միասնական ուժերով պաշտպանելու ձգտումը իշխող դասակարգի ներկայացուցիչների ճնշումից: Երրորդ, ավելի ուշ համայնքի գոյության հարցում մեծ շահագրգռվածություն է հանդես բերում պետությունը՝ արհեստականորեն պահպանելով այն որպես հարկման չափազանց հարմար միավոր: Եվ հարցը միայն

հարկման միավորի մեջ չէ: Հարկահավաք իրականացնող պաշտոնյան, չինովնիկը ցանկացած հասարակարգում, երկրում, հանդիսացել է կառավարման գործիք: Օրինակները բազում են և բազմապիսի: Բերենք ընդամենը մեկը. Նախքան պետության հաստատմանը դրսից, անհրաժեշտ է այն անել ներսից: Եվ այստեղ մենք կրկին հայտնաբերում ենք տեսուչների խմբի: Որպեսզի շեշտվի թագավորի ներկայությունը առ ադմինիստրացիա, XVI դարի 2-րդ կեսից մի շարք պետություններում ստեղծվում են տեսուչների այսպես կոչված ժամանակավոր առաքելություններ:

Հելլենիստական շրջանում համայնքը դառնում է պետական հարկային համակարգի կարևոր հանգույց և պետությունը, շահագրգռված նրա պահպանությամբ, նույնիսկ իր հովանու տակ է առնում նրա երևելի անդամներին՝ նրանց դարձնելով պետական պաշտոնյաներ, իսկ համայնականներին հաճախ զրկում համայնքը լքելու իրավունքից: Նման պատճառների առկայության վկայություն է համայնքի առաջացումն ու հարատևումը Արցախում, որտեղ գյուղական համայնքը, իր կրած որոշակի փոփոխություններով հանդերձ, գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից մինչև քսաներորդ դարի առաջին տասնամյակները: Իսկ խորհրդային կոլտնտեսություններից հետո այժմյան ԼՂՀ-ում այն կրկին վերածվել է համայնքային կացութեամբ՝ անշուշտ նորացված, ժամանակակից սկզբունքներով: Հ. Մանանդյանի այն կարծիքը, թե «անհավանական չէ նույնիսկ, որ նախկին համայնական-տոհմական կյանքի ֆեոդալացումից հետո համայնական հողատիրությունը, որպես երկրագործական արտադրության ձև, կարող էր հարմարեցված լինել կալվածատիրական նոր պայմաններին և որոշ տեղերում պահպանած լինել իր գոյությունը, կրելով իր հիմնական բովանդակության մեջ ոչ այնքան խոշոր փոփոխություններ»¹ մենք վերագրում ենք նաև Արցախին: Մենք չենք ընդունում Ն. Ադոնցի կարծիքն այն մասին, թե իբր Հին Հայաստանում Արշակունյաց շրջանում և նրանից հետո համայնական հողատիրություն չի եղել: Ն. Ադոնցը գրում է. «Հայաստանի երկու խոշոր հարևան երկրները, իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը, նույնպես ծանոթ չեն եղել

¹ Հ. Մանանդյան, «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 190:

համայնական հողատիրությանը»¹: Արցախը ևս հարևան պետությունների ազդեցության տակ կներտվող Հայաստանի մի մասն էր կազմում, բայց այնտեղ ևս համայնական հողատիրություն է գոյություն ունեցել:

Ինչպես Արտաշես Ա-ի (189–161 թ.թ.), այնպես էլ Տրդատ Ա-ի ժամանակ (66–88 թ.թ.) անցկացվում է գյուղատնտեսային տարածքների ամեն տեսակի հողերի հաշվառում և սահմանագատում (հողային կադաստր)՝ «աշխարհագիր» է անցկացվում: Դրանով գյուղատնտեսական տարածքների հիմնական մասը, որը պատկանում էր գյուղական համայնքներին և որից ստացվում էին հայոց արքունիքի հիմնական եկամուտները, ապահովվում էր մասնատիրական տնտեսությունների չարաշահումներից: Արցախում ևս գյուղական համայնքներին պատկանող գյուղատնտեսական հողերը համարվում էր «երկիր արքունի», իսկ իրենք՝ համայնական գյուղացիները՝ «մշակք արքունի» կամ «ծառայք արքունի»: I–II դարերում, ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ նրա Արցախ նահանգում, գյուղական համայնքը հարատևում է իր ավանդական ձևերով: Հողային հարաբերությունների հերարխիայում ստորին տեղը գրավում էր շինականը, որն ուներ հողօգտագործման իրավունք, բայց ոչ հողատիրոջ իրավունքով: Գյուղական համայնքը ներկայացնում էր հողի անմիջական մշակին, անմիջական նյութական բարիքներ արտադրողին և այդ բարիքները յուրացնողներին, այսինքն երկու հակամարտ դասակարգերին՝ շահագործողներին ու շահագործվողներին:

Գյուղական համայնքը նաև իրավահավասար անդամների մի կոլեկտիվ էր, որն ուներ հողի ընդհանուր՝ համայնական սեփականություն: Արցախում գյուղական համայնքի ծխերը իրավահավասար էին: Համայնքում հողը բաժանվում էր ըստ ընտանիքի (ծխի) անդամների թվի (հատկապես արու անդամների): Ծինականն ուներ իր սեփական տունը, կթի և քարշող անասուններն ու գյուղատնտեսական գործիքները: Իսկ արոտավայրերը, անտառները, գետները, լճերը և այլն, մնում էին չբաժանված՝ համայնքի անդամների հանրային օգտագործման համար: Բացի

¹ Ն. Ադոնց, «Պատմական ուսումնասիրություններ», Փարիզ, 1948թ., էջ 160:

իրենց հողաբաժինները մշակելուց, համայնական գյուղացիները կատարում էին ընդհանուր կարիքների հետ առնչվող աշխատանքներ՝ ոռոգման, բնակավայրերը և ցանքերը զարնանը հեղնղումներից պաշտպանելու և այլ բնագավառներում: Բայց կային նաև հողագուրկ գյուղացիներ, որոնք հարկադրված էին ծառայելու ուրիշներին: Համայնքի ունեզրկված գյուղացիների համար ստեղծվում էին տնտեսական ու արտատնտեսական կախվածությունուններ կալվածատերերից, որոնք աստիճանաբար գյուղացիներին ենթարկում են իրենց: Արցախում այդ գործընթացը ընդգրկում է վաղ ֆեոդալիզմի ամբողջ ժամանակաշրջանը:

Սակայն քանի որ գյուղացիների ճորտացումը սովորաբար զուգորդվում էր ֆեոդալական կենտրոնացված միապետության ուժեղացման հետ, նրա հզորացման բարձր աստիճանում է ավարտվում ճորտային հարաբերությունների ամրապնդումը, իսկ Հայաստանը V դարի առաջին կեսին արդեն դադարել էր կենտրոնացված միապետություն լինելուց, ուստի նրա Արցախ նահանգում ևս ճորտային հարաբերությունները բացակայում էին, կամ գրեթե բացակայում, Արցախում ֆեոդալական հարաբերությունների ձևավորումը տեղի է ունենում միասնական պետության ամրապնդման համար խիստ աննպաստ պայմաններում: Մի կողմից պարսկական ու բյուզանդական արշավանքները և մյուս կողմից, միջֆեոդալական ընդհարումները, խախտում են ճորտատիրության ամրապնդման սովորական ընթացքը: Ինչպես Հայաստանի մյուս նահանգներում, այնպես էլ Արցախում այդ պատճառով վաղ ֆեոդալիզմը հարատևում է այնքան ժամանակ, մինչև որ նպաստավոր պայմաններ են ստեղծվում ֆեոդալական արտադրության եղանակների արագ զարգացման համար:

Ինչպես ողջ նախարարական Հայաստանի, այնպես էլ Արցախի գյուղատնտեսության զարգացման կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ գյուղացիների “ճորտացման” ընթացքը կատարվում էր խիստ դանդաղ, գրեթե աննկատելիորեն: Նախարարական տների սեփական հողերը մշակող գյուղացիները դարեր շարունակ պահպանում էին իրենց հարաբերական անկախությունը: Մենք համամիտ ենք Հ. Մանանյանի այն կարծիքի հետ, որ նրանց անձնական և տնտեսական

կախյալ հարաբերությունները նախարարներից ճորտային բնույթ չունեին: Գյուղացիները նախարարներին, իշխաններին կամ կուսակալներին ճանաչում էին որպես իրենց «տներ», կատարում էին նրանց կամքը, հարկ եղած դեպքում կրում էին իրենց պատիժը «տներին» ձեռքով և կատարում իրենց տնտեսական պարտավորությունները: Սակայն այս պայմանները նպաստավոր չէին խոշոր կալվածատիրական տնտեսությունների զարգացման համար: Ուստի անընդունելի է սովետաադրբեջանական ակադեմիկոս Ջ. Բունիաթովի կարծիքն այն մասին, թե իբր Միասնական կամ Ընդհանուր Աղվանքում, ուրեմն նաև Արցախում «եկեղեցու և ֆեոդալների տիրոջներում գտնվող բոլոր գյուղերի բնակիչները, իհարկե, գտնվում էին ճորտատիրական կախման մեջ»¹:

Գյուղացիության ճորտացման հարցում մենք բաժանում ենք պրոֆ. Ս. Հակոբյանի կարծիքը, ըստ որի անընդունելի է համարվում ճորտատիրական իրավունքի հարաբերությունները պատմական բոլոր ժամանակահատվածներին վերագրելը: Ս. Հակոբյանը նաև սխալ է համարում այն տեսակետը, թե պատմական բոլոր ժամանակաշրջաններում բոլոր գյուղացիները կամ ճորտ էին կամ կախյալ, կամ թե՛ իրավապես ազատ: Գյուղացիների ճորտացման գործընթացը արդյունք է լինում ամենից առաջ ֆեոդալական էկոնոմիկայի, աշխատանքի հասարակական բաժանման, դասակարգային պայքարի սրման և այլ պարագաների: Հետևաբար սխալ է նաև Խ. Սամվելյանի կարծիքն այն մասին, թե իբր Հայաստանում ֆեոդալիզմի բոլոր ժամանակաշրջաններում նյութական բարիքներ արտադրողները կամ ստրուկներ էին, կամ ստրկացված ճորտներ: Միշտ չէ, որ շինականը անազատ է եղել՝ կախյալ և ճորտ: Իրավացի է Ս. Հակոբյանը նշելով, որ Խ. Սամվելյանը շփոթում է ճորտական հարաբերությունների և իրավունքի երկու հասկացությունները:

Պատերազմի ժամանակ շինականը պարտավոր էր ծառայելու հետևակ զորամասերում կամ գումակում: Ուստի տեղն ենք համարում երկու խոսք ասել նաև այդ ժամանակահատվածում Արցախում և ամբողջ Աղվանքում գոյություն ունեցած, այսպես

¹ Հօյ Աօհ ղաօհ ա, «Աճաձաձեձաի ա VII-IXաա.». Էճա-աի Ահ. ՌՌՁ, 1965ա., Աձեօ. Ռ. 66-67.

կոչված «զինվորական մարդկանց» մասին: Վերը մենք նրանց մասին ակնարկ տեսանք տեր Սիմոնի կանոններում: Առաջինից իններորդ դարերում Հայոց Աղվանքում, ընդ որում նաև Արցախում կային վարձու զինվորներ, որոնք պատերազմի ժամանակ վարձով ծառայում էին թագավորական կամ իշխանական բանակում իբրև աշխարհագորայիններ և կազմում էին բանակի կորիզը: Նման գորահավաքներ էին տեղի ունենում գյուղերում, խաղաղ ժամանակ այդ «զինվորական մարդիկ» ոչ մի բողոք չէին ներկայացնում և ապրում էին բացառապես թալանով ու կողոպուտով: Զինվորականների այդ խավը մեծ վտանգ էր ներկայացնում թե՛ շինականների և թե՛ եկեղեցու համար: Ահա թե ինչու վերջինս ջանք չէր խնայում նրանց դեմ պայքարելու գործում: Կաթողիկոս Սիմոնը պահանջում էր ոչ մի եկեղեցի չհանձնել «անարժան զինվորականներին: ...Շատերից լսել եմ, – ասում էր նա, – որ տրտնջում են, թե շատ տեղերում Աստծու եկեղեցուն վանականությունք հանդերձ զինվոր մարդիկ են տիրում, որոնք իրենց չար գործերի պատճառով արժանի չեն եկեղեցի մտնելու, թե՛ եկեղեցական հասույթն ու հացը ուտելու»¹: «Արդ՝ ես... աղվանից կաթողիկոս Սիմոնս, ըստ աստվածային պատվիրանների ու կանոնների այսպես հրամայեցի, ...զինվորներն ու աշխարհականները եկեղեցու վրա իշխանություն չունենան և բռնի կերպով չվերցնեն եկեղեցուն տրվող նվերից... որովհետև Աստված հրամայել է, որ եպիսկոպոսներն ու քահանաները հոգ տանեն եկեղեցու մասին և ոչ թե՛ անարժան մարդիկ, այսինքն՝ զինվորներն ու հեծյալները»²:

Այդպիսով, Արցախում այսպես կոչված «ազատանին», «զինվորական մարդիկ» և «հեծյալները» մեծ վնասներ էին պատճառում շինականներին և պաշտպանություն գտնում, հովանավորվում իշխանների կողմից: «Ազատանին» ու «զինվորական մարդիկ» ներկայացնում էին մանր ազնվականությունը: Ինչպես տեսնում ենք, այստեղ գործ ունենք այսպես կոչված «պատերազմական սինդրոմի» հետ: Սա ցանկացած երկրի ետպատերազմյան քաղաքական զարգացումների բաղադրիչն է, որը մեր շարադրանքի հետաքրքրությունից դուրս գտնվող՝

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 241:

² Նույն տեղը, էջ 242:

առանձին ու բարդ վերլուծության թեմա է: Այստեղ միայն նշենք, որ «գինված մարդկանց» գործունեությունից գերծ չեն մնացել ոչ Անտիկ աշխարհը, ոչ անցած-գնացած ու ներկա գերտերությունները ու առավել ևս փոքր երկրները: Մեր օրերում գոյատևում են «աղվանական», «չեչենական», «աբխազական» ու «օսական», «մերձդնեստրովյան», «դարաբաղյան», «իրաքյան» և այլ սինդրոմները:

Ինչ վերաբերում է գյուղական համայնքի վերնախավի (համայնքի ղեկավարությանը), կառավարման ձևերին, ապա այն իրականացվում էր նրա անդամների ժողովի, նրանում ընտրված ավագների խորհրդի, վերջինիս գլուխ կանգնած գեղջավագի ու նրան ենթակա, նույնպես ընտրովի անձնավորությունների միջոցով: Պետության առջև համայնքը ներկայանում էր որպես միասնական միավոր:

Այդպիսով, հայկական Արցախ նահանգի համար ևս ընդունելի ենք համարում պրոֆ. Ս. Հակոբյանի կարծիքն այն մասին, որ ինչպես վաղ, այնպես էլ զարգացած ֆեոդալական հասարակության մեջ անմիջական նյութական բարիքներ արտադրող, շահագործվող ու հարկատու դասակարգ էր հանդիսանում հայ շինականը: Երկրորդ, Հին Հայաստանում շինականների ճնշող մեծամասնությունը ընդգրկված էր գյուղական համայնքներում, նրա և հողատեր ֆեոդալների, ավելի ճիշտ, ֆեոդալական պետության հարաբերությունը որոշվում էր սոսկ տուրքապարտությանը: Բայց այս շրջանում ևս շինականների մի մասը, կորցնելով իր արտադրամիջոցը, հողակտորները, արդեն դրված էր նաև անձնապես կախյալ վիճակում: Երրորդ, զարգացած ֆեոդալական արտադրահարաբերությունների դարաշրջանում հայ շինականությունը ստորաբաժանվեց չորս հիմնական կատեգորիաների. ա) պետական կամ արքունական, բ) մասնատիրական, գ) վանական կամ եկեղեցական և դ) գյուղական համայնքային գյուղացիության:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐԿԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ
ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԿԵՐԱՅԻՆ
ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐՅԱԽՈՒՄ

Սովետահայ պատմագրության մեջ զգալի աշխատանք է կատարվել միջնադարյան Հայաստանում երկրագործության, հարկային քաղաքականության, դասակարգային պայքարի և սոցիալական շարժումների ու նրանց հետևանքների պատմության ուսումնասիրության ուղղությամբ, սակայն կոնկրետ Արցախի վերաբերյալ աշխատությունները բացակայում են: Բացի այդ, կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմաբաններն էլ կրոնական քողի տակ տեղի ունեցած միջնադարյան սոցիալական շարժումները դիտում են որպես լուկ կրոնա-աղանդավորական շարժումներ: Մենք համամիտ ենք պրոֆ. Ս. Հակոբյանի այն կարծիքի հետ, թե հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները Հայաստանը, ասել է թե նաև Արցախը, պատկերել են մի այնպիսի երկիր, որտեղ իբր, «համերաշխել են» հասարակական բոլոր խավերն ու դասերը: Սակայն դա տեղի ունենալ չէր կարող: Ինչպես տեսանք, հողային հարաբերությունները միատեսակ չէին, արտադրության հիմնական այդ միջոցները, ինչպես հայկական մյուս նահանգներում, այնպես էլ Արցախում, ավելի շատ կենտրոնացված էին շահագործող վերնախավի ձեռքերում, իսկ շինականը շահագործվում էր բազմաթիվ ձևերով, ծանր հարկեր էր վճարում և այլն:

Գյուղական համայնքի երկրագործի դառը վիճակի մասին պատկերացում կարելի է կազմել նաև ծանոթանալով երկրագործությանը, որը Արցախում ևս հեղինակալական ժամանակաշրջանում անցել էր զարգացման երկար ուղի և ուներ բարդ ու բազմազան աշխատանքային գործընթացների մշակված համակարգ: Արցախում գյուղատնտեսության մեջ գերիշխողը վարելահողային երկրագործությունն էր, իսկ ցեղային հողերի վրա, ուր դեռ պահպանվում էին նախնադարյան-համայնական հարաբերությունների բազմաթիվ մնացուկներ, շարունակում էր տիրել նաև մինչվարելահողային կամ մարկեղային երկրագործությունը:

Քանի որ Արցախը հարուստ էր խիտ անտառներով, իսկ հայկական այդպիսի նահանգներում կիրառվում էին անտառահատման համակարգը ու խոպանային աշխատանքի ձևերը, ապա նույնը պետք է որ կիրառված լինի նաև այնտեղ: «Հայաստանում այս սխտմնը (անտառահատման, – Է.Ս.) կարող էր գոյություն ունենալ միայն հյուսիսային և հարավային ծայրամասային շրջաններում, որոնք այն ժամանակ առանձնապես հարուստ էին անտառային մասիվներով: Մարդը վարի համար հողը մաքրում էր անտառից, իսկ հյուծումից հետո հողը թողնում էին անմշակ, որպեսզի նորից անտառ աճի: Սակայն ծառերը կտրելու ժամանակ գյուղացին անտառում թողնում էր վայրի վիճակում գոյություն ունեցող պտղատու ծառերը»¹: Վիճակագրական տեղեկությունների համաձայն 1700-ական թվականներին Ղարաբաղի տարածքի 75 տոկոսը ծածկված է եղել անտառներով, իսկ հնում արցախցիներին նույնիսկ անվանել են «անտառի բնակիչներ»²: Առաջինից-իններորդ դարերում անտառներն Արցախում ծառայում էին որպես «բերդ-ամրոցներ», ինչպես դեռևս Եղիշեի հաղորդումներում: Արցախն այդպիսին է մնում նաև IX դարից հետո: 1724 թվականին Ղարաբաղում Պետրոս Մեծի պատվիրակ Իվան Կարապետը ցարին գրած իր զեկուցագրում թվարկելով տեղի բնական հարստությունները, նշում է նաև, որ «Ըս նրկրումս մէշոյ էլ (անտառ էլ, – Է.Ս.) կայ»³:

Արցախում կիրառվում էր նրկրագործության հարուսային համակարգը, երբ մշակվող հողը մի քանի տարվա ընթացքում պարբերաբար թողնվում է առանց վարելու՝ բերրիությունը վերականգնելու համար: Առանձին դեպքերում էլ այսպես կոչված «հանգստագող» հողերում ցանվում էին միամյա խոտեր և հավաքվում իբրև անասնակեր: Նման դեպքերում ամուր արորի և նույնիսկ գութանի կարիք էր զգացվում: Քարշող ուժը եզն էր, իսկ մաճը վարողը (մաճկալը)՝ աշխատավոր գյուղացին: Նրանք ցանում էին ցորեն, կորեկ, գարի, բամբակ և այլն, այսինքն գրեթե այն ամենը, ինչ Հայոց Արևելից կողմանց մյուս նահանգներում:

¹ «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1971թ., հատոր 1, էջ 803:

² «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթ, 28 սեպտեմբերի 1972թ., № 228:

Արշակունյաց թագավորության ժամանակ Արցախը ևս հայտնի էր իր մրգատու այգիներով ու բամբակով, որոնք հիմնականում մշակվում էին նրա հյուսիս-արևելյան ցածրադիր շրջաններում: Յոթներորդ դարի «Աշխարհացոյց»-ում մատնանշված է, որ այն-տեղ «արտադրվում է անհաշիվ քանակությամբ բամբակ»:

Արցախը հարուստ էր մետաղի բնական հումքով և հանքային ջրերով: Բնությունը գեղատեսիլ էր, սակայն սուր հակադրություններով: Թե որքան մեծ էր երկրագործության նշանակությունը, դժվար է բառերով նկարագրել: Դրա վկայությունը նախաքրիստոնեական շրջանում գոյություն ունեցող երկրագործության պաշտամունքն է:

Ահա նման տառապանքներով ապրուստի միջոց հայթայթող շինականը պետությանն ու եկեղեցուն հարկ էր վճարում, որոնց մասին ակնարկեցիք վերը: Ուստի այստեղ միայն նշենք, որ գանձվող հարկերը բազմատեսակ էին («գլխահարկ» կամ «շնչահարկ», «ծխահարկ», «անասնահարկ» և այլն) և հիմնականում բաժանվում էին չորս խմբի.

1. Բերքից ստացվող տուրքեր, որոնք գանձվում էին՝ «յարմտեաց երկրին և ի բերոյ ծառոցն պտղոց» և վերցնում էին իբրև «յերրորդ սերմանն» և «զհասարակաց (այսինքն՝ կեսը) այգւոյ և զծառոցն»¹:

2. Աշխատանքային պարիսկներ, այսինքն «աշխատանք արքունի տան համար», իբրև հարկադրական աշխատանք, որը տարբեր բնույթ ուներ՝ «մարդահարկ», «պարիակ» և «խաշար»: Դա պարտադիր ու ձրի աշխատանք էր թագավորի ու պետության օգտին, որը տարածվում էր ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային համայնքների վրա:

3. Դրամական գանձումներ կամ «բաժ» (աղահանքերից գանձվող հարկի և ամուսնացողներից գանձվող հարկը):

4. Խառը գանձումներ, որոնք արվում էին թե՛ դրամով և թե՛ բնատուրքով: Դրանց թվին էր պատկանում «տասանորդը»²:

Հրեական թալմուդի տվյալներով նշվում է հարկերի երկու հիմնական տեսակ՝ հողահարկ («տասակ») և գլխահարկ («քար-

¹ «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 1, Երևան, 1971թ., էջ 799:

² Տես, նույն տեղը, էջ 799–800:

գա»), որոնք կազմում էին հողագործի եկամտի մեկ վեցերորդից մինչև մեկ երրորդը¹: «Անշուշտ, մեր տեղեկությունները գյուղական համայնքների կողմից վճարվող հարկերի ու կատարվող պարհակների մասին դեռևս նշանակալից չափով պայմանական բնույթ են կրում և կարոտ են նոր, հայ իրականությունը անմիջականորեն արտացոլող տվյալների, որոնք առայժմ պակասում են»²: Նույնը վերաբերում է նաև Արցախին: Սակայն հայտնի է, որ բացի հարկը վճարելուց շինականը պարտավոր էր նաև մասնակցել պետական նշանակություն ունեցող հասարակական աշխատանքներին (ճանապարհաշինարարություն, բերդերի, ամրոցների, կամուրջների, վանքերի, եկեղեցիների կառուցում և այլն): Ահա թե ինչու I–IX դարերում դասակարգային պայքարը Արցախում սուր բնույթ էր կրում: Հակաֆեոդալական շարժումները ծավալվում են ֆեոդալական հասարակության ձևավորման հենց արշալույսին և լրջորեն անհանգստացնում տիրող քաղաքական, տնտեսական ու եկեղեցական էլիտային: Դրա վկայությունն է թեևուզ մասնիների շարժումը, որը վերագրվում է 216 կամ 217–218 թվականներին:

Դեռևս 354 թվականի Աշտիշատի ժողովում Ներսես կաթողիկոսի ընդունած կանոնները Հայոց նահանգներում տիրող խռովությունները կանխելու նպատակով իշխաող էլիտային խորհուրդ են տալիս չափավորել ստորադրյալների շահագործումը, իսկ ծառաներին էլ պատվիրում են հնազանդ լինել իրենց տերերին:

IV և V դարերում Հայաստանում հանդես եկող կարևոր ընկերային շարժումներից մեկը «անապատականների» շարժումն էր, որը ակզբում հանդես գալով Սիրիայում, Պաղեստինում և Կապադովկիայում, իր «եղբայրանոցներն» ստեղծեծ նաև Արցախում ու Սյունիքում: Բազմաթիվ հավատացյալներ, դժգոհ լինելով իրենց ապրուստից, թողնում էին ընտանիքներն ու բնակավայրերը, մեկուսանում հասարակությունից, հեռու վայրերում հիմնում միաբանություններ («եղբայրություններ») և սկսում ապրել համայնական հավասար կյանքով: Ինչպիսի՞ քաղաքագիտական վերլուծությունների է հանգեցնում վերը շարադրածը: Առաջին հերթին ֆիքսենք, որ Արցախում գերակայում էր ազրա-

¹ Տես, նույն տեղը, էջ 800:

² Նույն տեղը, էջ 801:

րային սեկտորը՝ լավ թե՛ վատ ապահովելով փոքրաթիվ, բայց և պահանջկոտ էլիտայի պահանջմունքները: Եթե շահագործվող դասակարգին պայմանականորեն անվանենք ագրարային պրո-լետարիատ, ապա անշուշտ պիտի սաղմնավորվին ու զարգանային դժգոհությունը, ընթաստությունը: Եվ պատահական չեն նշված «եղբայրանոցների» առաջացումը ու եկեղեցական-կրոնական էլիտայի գաղափարական պոտենցիալի օգտագործումը նշված երևույթները մարելու ու ոչնչացնելու գործում:

Սակայն հայ ժողովուրդը նշված այս ամբողջ ընթացքում գրեթե անընդհատ ազատագրական կռիվ է մղել նաև օտար նվաճողների դեմ: Օտարազգի նվաճողները հայ ժողովրդին թալանելու և կողոպտելու հետ միաժամանակ ավերում էին ազգային եկեղեցիներն ու դպրոցները, ոչնչացնում մայրենի գիրն ու գրականությունը: Ժողովրդին բռնությամբ հավատափոխում, արգելում էին ազգային լեզուն ու սովորույթները, փորձում էին նվաճված երկրներում արմատավորել իրենց կրոնը, լեզուն, վարքն ու բարքը:

Արցախի շինականների դրությունն ավելի ծանրացավ պարսկական տիրապետության հաստատումով: Տիզբոնի վաղեմի ծրագիրն էր վերացնել հայ ժողովրդի ներքին անկախությունը, պարտադրել գրադաշտականությունը և աստիճանաբար ասիմիլյացիայի /ուծացնել/ ենթարկել նրան: Տիզբոնն իր այդ քաղաքականությունը վարում էր ամբողջ Անդրկովկասի նկատմամբ: Այդ նպատակն իրագործելու համար պարսկական արքունիքը արտակարգ լիազորություններով Հայաստան է ուղարկում Դենշապուհին, որը «լսադադասների կեղծավորությամբ» աշխատում է մեկը-մյուսի դեմ լարել հայ պաշտոնյաներին: Նա նրանցից ոմանց «որսում» էր ոսկով և արծաթով, շատերին առատ պարգևներ էր բաշխում, ոմանց տալիս էր ազարակներ և մեծամեծ գյուղեր, ոմանց մեծամեծ աստիճաններ և իշխանություն էր շնորհում, սնտտի հույս էր ներշնչում նրանց և այսպես մշտապես հրապուրում և թելադրում էր իր կամքը հայ քաղաքական ընտրանուն:

Պարսիկ այս պաշտոնյան կամայականություններ էր կատարում նաև սեփականության և իրավունքի նկատմամբ: Բացի այդ, Դենշապուհը ձեռնարկում է Հայաստանը և Հայոց Աղվանքը տնտեսապես քայքայելու քաղաքականությունը: Այդ նպատակով

նա կատարում է աշխարհագիր (մարդահամար)՝ հարկերը թնթսացնելու պատրվակով, բայց իրականում պարսկական մարդահամարներով ավելի էր ծանրանում ողջ հայ ժողովրդի, ընդ որում նաև Արցախի ու Սյունիքի աշխատավորների դրությունը: Հայաստանի մյուս նահանգների նման Արցախում ևս չափազրվեցին պիտանի վարելահողերն ու մարգագետինները, շինականներից գլխահարկ ու հողահարկ պահանջեցին: Հարկերը հավաքվում էին Երեք նվագով: Հողային հարկը գանձվում էր բուլորից, իսկ գլխահարկը՝ միայն շինականներից ու գյուղական քամիկներից: Չափահաս յուրաքանչյուր մարդուց գանձվում էր 4–12 դրամ հարկ: Արցախից հավաքվող հարկերը նույնպես ուղարկվում էին Տիգրան՝ պարսկական գանձարանը: Պատմիչների հաղորդմամբ Դենշապուհը հարկ էր դրել նաև հայ հոգևորականության վրա, որը որպես ընկերային արտոնյալ խավ, մինչ այդ ազատ էր ամեն տեսակի հարկատվությունից: Նա ծանրացնում է նաև հայ առևտրականներից գանձվող մաքուր «բաժը»: Հայ շինականը պարսկական արքունիքին վճարող հարկից բացի, ծանր պարտավորություններ ուներ նաև իր աշխարհիկ և հոգևոր տիրակալների հանդեպ: Նա պարտավոր էր իր խղճով եկամտից բավականին խոշոր բաժին հանել նաև նրանց:

Այդպիսով, Արցախում շինականները գտնվում էին պարսկական նվաճողների և տեղական աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների կրկնակի հարստահարման ներքո: Հարկային նոր համակարգը մեծ դժգոյություն առաջացրեց շինականների մեջ: Ստեղծված ծանր պայմանների հետևանքով, չքավորներից ոմանք իրենց հողաբաժինները հարկադրված վաճառում էին միջակ կամ հարուստ հողատերերին և ընկնում վասսալական վիճակի մեջ: Եթե փորձենք իրականացնել նկարագրվածի քաղաքական, ընկերային-տնտեսական իրավիճակի քաղաքական վերլուծություն, ապա կստանանք հետևյալ պատկերը. հայտնի է, որ բյուրոկրատիան որպես ընկերային երևույթ, հետաքրքրությունների ագրեգացիայի հիմնական պետական ինստիտուտն է: Այն իրենից ներկայացնում է ղեկավարող սուբյեկտների խումբ, որը հերարխիկ կազմակերպված է և գործում է սուբորդինացիայի հիմունքներից ելնելով:

Հայ ժողովրդի վերը նկարագրված իրավիճակում գործ ունենք կրկնակի ֆորմալիզացված նաև երկու հերարխիայի և

նույնքան սուբորդինացիաների հետ: Եթե հայ ժողովուրդը նույն կրկնությանը կեղևքվում էր, ապա հայ էլիտան կանգնած էր իրական իշխանությունը կորցնելու և հարստահարման վտանգի առաջ: Այսինքն Արցախում գործում էր ոչ թե վեբերյան բյուրոկրատիայի տնտեսության իդեալական տեսակը, այլ վերը նշված դուալիստականը՝ որի մի բաղկացուցիչը կարող էր փոփոխվել մեծ տերությունների քաղաքական պայմանավորվածություններից ելնելով, կամ ռազմական ուժի, նենգությունների ու դավադրությունների արդյունքում:

Այսպիսով պարսկական քաղաքականությունից դժգոհ էին հայ ժողովրդի բոլոր խավերը: Կրկենք, որ եթե հայ շինականները դժգոհ էին աննախադեպ կեղևքումների ենթարկվելու պատճառով, ապա հայ նախարարներն էլ դժգոհ էին, քանի որ նրանց էլ սպառնում էր քաղաքական իրավունքներից զրկվելու վտանգը: Հայ եկեղեցականները դժգոհ էին, որովհետև կանգնել էին լինել-չլինելու սպառնալիքի առաջ: Առևտրականները դժգոհ էին, որովհետև սահմանափակվել էին նրանց իրավունքները: Ժողովուրդը դժգոհում էր նաև կրոնափոխության հարկադրանքի քաղաքականությունից: Այնուամենայնիվ համեմատաբար լավ դրության մեջ էին հայ նախարարները: Ճիշտ է, նրանք մյուսների նման, վասալական կախման մեջ ընկան օտարազգի իշխողներից և վճարում էին սահմանված հարկը, կռվի ժամանակ նրանց տրամադրության տակ դնում իրենց այրուձին (հեծյալ բանակը), սակայն նրանց ֆորմալ թույլ էր տրվել պահպանել իրենց ներքին անկախությունը՝ ժողովրդի դժգոհությունը կազմակերպված հունի մեջ չդնելու, չղեկավարելու միտումով: Սակայն այնուամենայնիվ պարսկական բռնությունները հասցնում են վարդանանց հուժկու ապստամբությանը: Պետք է նկատել նաև, որ V դարում Հայաստանում ծավալված բորբորիտների և մծղենականների շարժումները աղանդավորական բնույթ են կրում սուկ արտաքնապես: Ըստ էության նրանց սոցիալ-դասակարգային բնույթի պատմությանը մասնագետները (Ս. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան, Ս. Հակոբյան, Ա.Գ. Հովհաննիսյան և ուրիշներ) հիմնականում անդրադարձել են պավլիկյանների և թոնդրակեցիների գաղափարական ակունքները ցույց տալու համար: «Աղանդավորական քողի տակ մղվող դասակարգային պայքարի՝ հատկապես V դարի վերջերին ուժեղանալը բացատրվում է այն բանով, որ գյու-

դացիության նկատմամբ կալվածատերերի իրավունքներն ավելի էին ընդարձակվել, իսկ շահագործումը ծանրացել... Եթե նկատի ունենանք, որ հոգևորականությունից բացի, աշխատավորության վրա գրեթե միշտ ծանրացած էր նաև օտար նվաճողների և տեղական աշխարհիկ ֆեոդալների լուծը, ապա լիովին հասկանալի կլինի նաև հետագայում Հայաստանում ծավալված՝ իր մասշտաբներով ավելի մեծ աղանդավորական շարժումների պատճառն ու արմատը, որոնք թեև անունով տարբեր, բայց ըստ էության իրենց *նախորդների նման* ուղղված էին շահագործող դասակարգների դեմ»¹:

Ստ. Մելիք-Բախշյանը նկատում է, որ «միջնադարյան Հայաստանում առաջացած աղանդավորական շարժումները ըստ էության դասակարգային հակասությունների հիմքի վրա առաջացած շարժումներ էին, որոնք ճնշված ու շահագործվող դասակարգների մասնակցությամբ դառնում էին հեղափոխական-սոցիալական շարժումներ ուղղված ֆեոդալական հասարակարգի դեմ»²:

Ն. Արոնցի այն միտքը, որ «ազատության համար մղված կռիվները և ջանքերը գրեթե կլանում են ազգերի պատմությունը»³ հաստատվում է նաև Արցախի պատմությամբ: Ճիշտ է, ինչպես ամբողջ հայ ժողովրդի, այնպես էլ նրա մի մասը կազմող Արցախ-Լսաչեն-Ղարաբաղի բնակիչների ուշադրությունը դարերով կլանված է եղել հենց այդ կռիվներով, սակայն հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագրության կողմից այդ պայքարի պատմությունը խեղաթյուրվել է, նրա առանձին դրսևորումները որակվել են որպես կրոնական պատերազմներ, անտեսվել է նրանց ընկերային-քաղաքական բնույթը:

481 թվականի ապստամբության ընկերային-քաղաքական պատճառները լուսաբանված են Վ. Նալբանդյանի «Հայերի կող-

¹ Ստ. Մելիք-Բախշյան, «Պավլիկյան շարժումը Հայաստանում», Երևան, 1953թ., էջ 78–79, Ս. Պողոսյան, «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX–XIII դարերում», Երևան, 1956թ., Պետհամալսարանի հրատարակչություն, էջ 353, Ս. Հակոբյան, «Հայ գյուղացիության պատմություն», հատոր 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1957թ., էջ 491:

² Ստ. Մելիք-Բախշյան, նշված աշխատությունը, էջ 232:

³ Ն. Արոնց, «Պատմական ուսումնասիրություններ», էջ 23:

մից պարսկական տիրապետության դեմ ուղղված 451 թվականի ապստամբության սոցիալ-քաղաքական պատճառների հարցի շուրջը» հոդվածում (Տես. ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951թ., № 10, էջ 91–115):

Հայ ժողովրդի ազատագրական պատմության ուսումնասիրության բնագավառում մեծ աշխատանք է կատարել ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը, որն իր հայտնի «Դրվագներում» յուրովի ու հանգամանորեն վերլուծում է հայ ազատագրական մտքի ծագման ու զարգացման, նրա ընկերային միջավայրի հետ կապված հարցերը:

Հայտնի է, որ Աղվենի ժողովը ևս հրավիրվել է դասակարգային պայքարի սրվելու հետևանքով: Այստեղ տեղն ենք համարում հիշեցնել Աղվանից արքա Վաչագանի կանոնական սահմանադրության առաջին տողերը. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին (V դարի երկրորդ կեսին, – Է.Ս.) աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակասություններ էին լինում (ընդգծումները մերն են, – Է.Ս.): Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում...»¹: Պատահական չէ նաև, որ այդ ժողովին մասնակցում էին հոգևորականներ, նահապետներ և այլ բազմաթիվ մարդիկ: Այդ ժողովում հոգևորականները Վաչագանին բողոքում են, որ այնպիսի գյուղացիները իրենց գյուղերում կառուցել են 2–3 եկեղեցի կամ վանք և դրանով իսկ նվազեցրել մայր եկեղեցու եկամուտները: Վաչագանը կարգադրում է գյուղական եկեղեցիների եկամուտները մուտք անել մայր եկեղեցու ֆոնդը: Կանոնների 17-րդ կետը ձևակերպվում է այսպես. «Դարձյալ՝ եթե եպիսկոպոսներն ու քահանաները թագավորի մոտ գանգատվեն ազնվականների դեմ, թե դրանք գյուղում երկու կամ երեք եկեղեցի վանք են դարձնում, և եթե թագավորի ներկայությամբ ազնվական մարդիկ պայմանավորվեցին, և թագավորին, եպիսկոպոսին, ազնվականներին այդպես հաճելի թվաց, թե վանք դարձված եկեղեցիները կթողնեն նույն վիճակում, իսկ եկեղեցու պտղին ու տուրքը կտան մայր եկեղեցուն»²:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 65:

² Նույն տեղը, էջ 68:

Վաչագանի կանոնական սահմանադրությամբ ազատ գյուղացիների իրավունքները բավականին սահմանափակվում են և գյուղացիները աստիճանաբար ավելի են կախվում եկեղեցուց ու ֆեոդալից: Այսպես, 5-րդ կենտով պահանջվում էր որպեսզի «աշխարհականներից ոչ ոք՝ ազնվական, շինական կամ մեկ ուրիշը, տարվա ընթացքում պատարագը բաց չպետք է թողնի...»¹: Կանոնների 15-րդ կետը ձևակերպվում է այսպես. «Եթե որևէ մի աշխարհական մարդ բամբասի քահանայի կամ սարկավագի և խոստովանի, թե իրոք այդպես է, նպիսկոպոսը կարգ է սահմանում նրա վրա, ու այդպիսի անապատում ապաշխարհում է: Իսկ եթե ճիշտը չի խոստովանում, այլ ուրիշներն են հայտնում ճշտությունը, և այդ պարզվում է, ինչպես որ կանոնների մեջ գրված է, պետք է պատժեն ու գյուղից հեռացնեն. իսկ եթե հանցանքը չի պարզվում, պետք է կարգադրեն, որ քահանային նվեր տա, և այդ երդում է լինում նրա համար»²:

Այնուամենայնիվ Աղվեհի ժողովից հետո ևս դասակարգային պայքարն ու օտարերկրացիների դեմ մղվող կռիվները չեն դադարում: Դրանք հատկապես սուր բնույթ են ընդունում 6-րդ դարի երկրորդ կեսին: 571–572 թվականներին արևելահայերը, ընդ որում նաև արցախցիները նորից են ապստամբում պարսկական բռնապետության դեմ, որի պատճառները պատմիչները համարում են.

1. Հարկերի աննախադեպ ծանրացումը:
2. Հայ իշխանների իրավունքների ոտնահարումը:
3. Կրոնական հալածանքներն ու զրադաշտականության հարկադրանքը:

Օտարերկրացիների ավերիչ արշավանքների հետևանքով հողը Աղվանքում, ընդ որում նաև Արցախում տարիներով մնում էր անմշակ, որը և 630 թվականին հասցրեց մեծ սովի ու համաճարակի: Դրանց մանրամասները դարձյալ տրված են Մ. Կաղանկատվացու երկում, որը և մեջ ենք բերում այստեղ. «Մենք անհրաժեշտ ու արժանի ենք համարում այսուհետև հիշատակել սովի, նեղ ժամանակի մասին. վրա հասավ սովը, մեր ոտքերի տակ վերացրեց ամեն ինչ ոչնչացնող մուկը. սա կերավ բոլոր

¹ Նույն տեղը, էջ 66:

² Նույն տեղը, էջ 68:

բույսերը, սպառեց մեր հանդերի ամբողջ բերքը: Ապա երեք սուկալի գորավարները՝ սովը, սուրը և մահը, որ գործակից է նախորդներին, միանալով, հավասար էին ընթանում ու միմյանց հետ մրցում. և անխնա կերպով կոտորում էին ու դիակներ սփռում: Ոչ որ չէր արժանանում հողորդության՝ քավության վերջին կերակուրին, որովհետև սուրը արգելում էր, սովը՝ խեղդում, մահը կոկորդը բռնում: Վայ այս դառը ժամանակիս, ողբալից են աչքերը նրանց, որոնք տեսան այն մեծ խորխորատը: Թշվառացած ազատվածները լեռներին աղերսում էին, թե ընկեք մեզ վրա: Նրանցից ահաբեկվածները միայն տներևի խշրտոցից սրտապատառ էին լինում: Եվ այդ նեղ ժամանակը՝ մեծ պատի օրերին հախուռն կերպով, առանց խտրության մոտենում էին անմաքուր սատկածների դիակներին, նաև քանջարների արմատները, ծառերի կեղևներն էին հանում ու ճյուղերի ծայրերը ծամում. բայց դրանք ուտելով ուժ չէին ստանում, իսկ այդ թշվառ մարդկանց ո՞վ կտար նույնիսկ խաղողի չոր կորիզ, որպեսզի աղային և ուտեին: Սովալների բազմությունը, միատեղ հավաքվելով, հարձակվում էր նրանց վրա, ուժեր ունեին. հափշտակում էին նրանցից, ինքի համար մինչև անգամ սպանում էին նրանց: Եվ այսպես ունևորներն էլ մեռնում էին չքավորների հետ: Նրանց աչքերը միշտ անկուշտ էին ընկերոջ ունեցածը հափշտակելու և խլելու: Ես վստահելի մարդկանցից լսեցի, որ ասում էին, թե՝ «Մենք տեսանք, որ ոմանք ուտում էին մեռածի մարմնի անդամները, այլև անասունների հնամենի կաշիները, ծխտոված պարկերը, կոշիկների հին կապիչները եփում ուտում էին:

...Եվ այդ ժամանակ, երբ ուրիշ ուտելիքներին խառնվեց կանաչը, ավելի մեծացավ մեռնողների թիվը, քան ամբողջ ձմեռվա ընթացքում: Եվ մանավանդ այն, որ ավելի կարևոր է լսելու և հիշելու համար, հետևյալն է: Սովի ժամանակը վերջանալու մոտերքը մի այլ համաճարակ հիվանդություն տարածվեց այս երկրի սահմաններում, որ ըստ էության նման չէր այլ հիվանդությունների: Այդ հիվանդությամբ բռնվածները անզգա էին դառնում մի կամ երկու ամիս, բերանները փակած կրճտում էին իրենց ատամները և շուտ էին տալիս աչքները. չէին իմանում, թե ինչը կամ որտեղ է ցավում, անգամ ունակ չէին ջուր պահանջելու: Ոմանք իբրև կատաղի խելացնորությամբ հիվանդներ մերկանդամ, խայտառակ կերպով դուրս էին փախչում անկողիններից,

պատերի հետ էին խոսում ու օդը ծեծում, ուրիշները հիվանդապահներին էին բռնցքահարում: Չնայած ծանր հիվանդություն էր, որ անվանեցին խելագարության ցավ, այնուամենայնիվ մահացություններ չևղան, բայց հյուծվում, սևանալով հալ ու մաշ էին լինում նրանց մարմինները, թուլանում էին հողերը, թափվում էին գլխի մազերն ու մորուքը: Դրանց ողբալով երկար օրեր սզացի բազմատեսակ մահերով մեռնողների վրա, աղաչելով ամենադորմ աստծուն, որ վերջ տա անտանելի հարվածներին:

Ես՝ Աղվանքի, Լիւնիքի և Չորի կաթողիկոս Վիրոս, չեմ ասում մյուս զազրելի բաները՝ մարմնի սևությունը, գլուխների կնտությունը. այս բանում էլ պարզ է դառնում մարգարեական խոսքը, որ ասում է. «թե բոլոր հասակի մարդկանց գոշ կդարձնեմ, իսկ բոլոր գլուխները կունտ կդարձնեմ և նրա համար իբրև սուգ կստեղծեմ սիրելի սուգը»¹:

Կաթողիկոս Վիրոն մահացողներին «ողբալով երկար օրեր» սգում էր «բազմատեսակ մահերով մեռնողների վրա»: Սակայն միայն ողբալով ու Աստծուն աղաչելով չէր, որ պիտի վերջ տրվեր անտանելի հարվածներին: Պատասխան հարվածներ էին պետք, ինչն անելու ունակությունից, սակայն, զուրկ էին հայ շինականները: Վերջիններիս հասցվող անտանելի հարվածներին նորերն են ավելանում: Որոշ ժամանակ անց Արցախի դաշտային գավառների ոռոգելի հողերը դառնում են արաբ ֆեոդալների սեփականությունը: Սկսվում է արաբական տիրապետության ծանր շրջանը, որի ժամանակ նաև սուր պայքար է տեղի ունենում քաղաքական կողմնորոշման համար: Աղվանքը արաբական խալիֆայանը ռազմական հետաքրքրություն պատճառելուց զատ, հետաքրքրում էր նաև տնտեսական տեսակետից, որովհետև այն զգալի հարկային եկամուտ էր տալիս: Պատերազմական գործողություններ սկսելուց առաջ գրավված երկրների բնակիչներին առաջարկվում էր կամ իսլամն ընդունել կամ գլխահարկ վճարել: Եթե նրանք հոժարակամ համաձայնվում էին գլխահարկ տալու պայմանի հետ, ապա հարձակում չէր լինում և անհավատներն օրենքի պաշտպանության ներքո շահում էին: Իսկ եթե մերժվում էին երկու առաջարկություններն էլ, այն ժամանակ սկսվում էր պատերազմը, պտղատու ծառերը կտրվում

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 127–129:

էին, ցանքերը ոչնչացվում, տները հրդեհվում: Արաբների, բյուզանդացիների և խազարների անընդմեջ հարձակումների հետևանքով, Արցախի շինականների դրությունը սուկալի ծանրանում է: Նրանք միաժամանակ հարկ էին վճարում թե՛ խալիֆաթին, թե՛ հոներիին, թե՛ Բյուզանդիային ու տեղական ֆեոդալներին: Բայց և այնպես մինչև ութերորդ դարի սկզբները արաբական հարկային լուծը, համեմատած նրանց տիրապետության հետագա շրջանի հետ, տանելի է եղել: Հարկաչափերը Արցախում նույնն էին, ինչ որ ամբողջ Արմենիայում: Իսկ մատենագիր Սամվել Անեցու վկայությամբ, արաբները յոթերորդ դարի վերջերին, ութերորդ դարի սկզբներին գրաված նահանգներում յուրաքանչյուր երդից կամ ծխից վերցնում էին չորս դրամ (մեկ դրամը հավասար է 50 կոպեկի՝ ոսկով), երեք մոթ (մեկ մոթը հավասար էր 29 կիլոգրամից քիչ ավելի) գտված հացահատիկ, մեկ կրկնապարկ, մեկ մազե պարան և մեկ գույզ ձեռնոց¹:

Արաբական հարկահանության այդ բիրտ ձևերը հավասարապես Արցախի վրա տարածվելու մասին Լեոյի երկերի ժողովածուի երկրորդ հատորի (1967թ.) 746-րդ էջի 111-րդ ծանոթագրության մեջ կարդում ենք. «Արաբական տիրապետության տակ ընկնելուց հետո արդեն Հայաստանը Աղվանքի և Վրաստանի հետ կանոնավոր հարկ էր վճարում օմայյան խալիֆաներին: Ըստ Սամվել Անեցու, վճարվում էր գլխահարկ ամեն երդից 4 դիրհեմ (արծաթ, դրամ) և բնահարկ՝ ցորեն, պարան, ձիատուգրակ և ձեռնոց: Դավանափոխ լինելու դեպքում քրիստոնյան գլխահարկից ազատվում էր, սակայն հողահարկը, որը խարաջ էր կոչվում, բոլորից անխտիր գանձվում էր»:

Նկատի ունենալով, որ այդ ժամանակ երդ կամ ծուխ ասելով հասկացվում էին մի քանի ընտանիքներ, ապա կարելի է ասել, որ հարկաչափերը դեռ մեծ չէին: Իսկ հոգևորականները, ազատներն ու հեծելազորի անդամներն էլ բոլորովին ազատված էին հարկատվությունից: Ինչի՞ հետևանք էր արաբական այս «մեղմությունը» սկզբնական շրջանում: Այդ բխում էր գրաված երկրներում նրանց դեռևս ոչ ամուր հիմքերից և բյուզանդական կայսրության սպառնալիքից: Հարկահանությունը VII դարի

¹ Տես Ս. Անեցի, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893թ., էջ 82:

80-ական թվականներին խալիֆությունը մինչև անգամ դադարեցնում է՝ ներքին պայքար սկսելու պատճառով: Մակայն այդ ժամանակ դրա փոխարեն անողորմ է դառնում բյուզանդական հարկահանությունը: Արաբական խալիֆությունը որքան ծավալվում, այնքան շատ միջոցների ու ծախսերի կարիք էր զգում, որը պիտի հայթայթեր գրավված երկրներից: Ութերորդ դարի առաջին տասնամյակից սկսած հարկաչափերը մեծանում են: Արցախի քաղաքական, կրոնա-եկեղեցական ընտրանին նսնմացման ու թուլացման նոր փուլ է թևակոխում: Ծփոթ է առաջանում առանց այն էլ լողոված պետական սուբորդինացիոն համակարգում, ավելին՝ հետզհետե քայքայվում էր հայկական դե-ֆակտո պետականությունը: Բնականաբար, այն իրավիճակում, որը նկարագրվեց վերը, հայկական պետությունը չէր կարող իրագործել իր բոլոր գործառնությունները, քանզի դժվար էր իրագործել անգամ երկրի անվտանգության հրամայականը: Իսկ երկրի անպաշտպան էլիտան, բնականաբար չէր կարող երաշխավոր հանդիսանալ ոչ սեփական ժողովրդի ֆիզիկական գոյությանը, ոչ ունեցվածքի թալանի արգելքին:

«Պակասը» լրացնում էին բնության արհավիրքները: «Անժամանակ անձրևներից բերքերը փչացան և երկրագործությունը, երկրի կենդանության գլխավոր աղբյուրը, ոչինչ չտվեց»¹: Արցախում այդ ժամանակ սով էր: Մեծ սով էր տիրում երկրում հատկապես 710 թվականին: «Վարագ-Տրդատի իշխանության ժամանակներում անտանելի սով ընկավ Աղվանքի սահմաններում, – ասված է Մ. Կաղանկատվացու երկում, – այդ պատճառով ոմանց կողմից առասպելաբանվեց, որպես թե կորեկը ասել է. «Ես՝ կորեկս, Ծակաշեն գավառի Հակու վայրում թաքնված էի. գնորդների բազմությունը ինձ անուշադրության էր մատնել և չէր գնում. եկավ մի բարի ժամ, նրբ տիրեց իմ եղբայր Սովը, և ահա դարձա երևելի ու բարձրացա Վարագ-Տրդատ իշխանի ու Եղիագար կաթողիկոսի սեղանները: Ովքեր որ ինձ կերան, նրանցից արյուն գնաց, ներողամիտ եղեք»»²: Նկատենք, որ այստեղ իրար է շփոթվել կաթողիկոսների անունները: Եղիագարը Աղվանքում կաթողիկոս է եղել 683–689 թվականներին, իսկ Վարագ-Տրդատի

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 552:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 243–244:

Բյուզանդիայից վերադառնալուց հետո Ադվանքում կաթողիկոս էր Տեր-Միքայելը (708–743 թ.թ.):

Վերը նշվեց, որ քրիստոնյա ժողովուրդը ավելի շատ էր տուժում հարկահանությունից: Նրա նկատմամբ սկսում է մեղմ վերաբերմունք ցուցաբերել միայն խալիֆ Օմար Երկրորդը (717–720թ.թ.), որը, Ղևոնդ պատմիչի վկայությամբ մեղադրվում է Հիշամ խալիֆի կողմից: Օմարի մահից հետո, նրան հոջորդած Եզիդ Երկրորդի ժամանակ (720–724 թ.թ.) քրիստոնեաների խարաջի չափը ավելացվում է: Եզիդ Բ-ը մի բույժ ու մոլի ֆանատիկոս էր, որը թշնամու պես էր վարվում քրիստոնեաների հետ: Մինչև անգամ խոզերին անսուրբ կենդանիներ անվանելով, նա հրամայում է դրանց ջնջել երկրի երեսից: Արաբական հարկային քաղաքականությունը մեծ փոփոխություններ է կրում այս խոզասպանին փոխարինած Հիշամ խալիֆի ժամանակ (724–743 թ.թ.): 725 թվականին նա Արմենիա է ուղարկում Հերթ անունով մի պաշտոնյայի, որը նոր աշխարհագիր է անցկացնում և նոր հաշվառման ենթարկում անասուններին, մարդկանց ամբողջ ունեցվածքը: Այդ մասին Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Հայոց հարյուր յոթանասուն չորս (725թ., – Է.Ս.) թվականի ամառը տեղի է ունենում անասունների համաճարակ և ձմեռը կատարվում է հերթական աշխարհագիր, որ մարդ, անասուն, հող ծանր հարկերի տակ դրեց»¹:

Ստեփանոս Ասողիկի վկայությամբ արաբները հարկերը սկսում են գանձել նկատի ունենալով հարկատվի տնտեսական կարողությունը, որի հետևանքով մինչև անգամ «...նախարաները և մեծամեծները չքավորության, աղքատության մեջ ընկան»: 725 թվականի անցկացված աշխարհագրով երդահարկի փոխարեն մտցվեց գլխահարկ՝ հարկատու ճանաչելով բոլոր տղամարդկանց: Հարկերի մի մասը սկսեցին գանձել դրամով: Կար նաև հողահարկ, անասնահարկ: Երդից գանձվող գլխահարկը սկսում են վերցնել ըստ անձի, իսկ հողահարկը ենթակա էր ավելացման ըստ հողամասի տարածության և որակի: Ամենաձանրը գլխահարկն էր, որը կոչվում էր «ջիզմ» կամ «ջիզյաթ»: Այն գանձվում էր 15–60 տարեկան քրիստոնեաներից և առհասարակ ոչ մահմեդական հպատակներից: Նոր հարկային քաղաքականությամբ

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 250:

հարկատու դարձան նաև կուսակրոնները: «Լսալի՜քը հրամայեց հաշվառման ենթարկել կուսակրոններին և նրանք հաշվառվեցին ու նրանցից յուրաքանչյուրը սկսեց խարաջ մուծել...»¹:

Արցախի նախկին հարուստներն անգամ սկսեցին ունեզրկվել: Գլխահարկի ենթակա հպատակները բաժանվում էին նրանք խափի. հարուստները վճարում էին 48 դիրհեմ (մեկ դիրհեմը հավասար է 15 կոպեկի՝ ոսկով), միջակ կարողություն ունեցողները՝ 24, իսկ չքավորները՝ 12 դիրհեմ: Գլխահարկից բացի արաբները հավաքում էին նաև հողահարկ, որը կոչվում էր «խարաջ» (այն գանձվում էր ոչ մահմեդական հպատակներից): Մուսուլմաններից գանձվում էր միայն տասորդ: Հողահարկը հայերը մուծում էին մուսուլմաններից կրկնակի անգամ ավելի: Կնքված պայմանագրերի համաձայն, հարկերը քրիստոնեաներից պիտի հավաքվեին առանց բռնությունների գործադրելու: Սակայն հարկահավաքները այդ հաշվի չէին առնում:

Իմամը (ուղղահավատների պետը, որը համարվում էր Մարգարեի հաջորդը) նվաճված երկրներում անսահմանափակ իրավունքներ ուներ՝ հողերը իբրև պարզև բաժանել իր զինվորներին ու զորապետներին, տեղական հողատեր-կալվածատերներին հողազրկել ու պաշտոնազրկել կամ թողնել անձեռնմխելի: Այդպիսով, ամեն ինչ թողնված էր Իմամի կամքին:

Գրավված երկրի բնակիչը կոչվում էր զիմմի՝ հպատակ, հարկատու, որը գլխահարկ էր վճարում: Ինչպես նշվեց, գլխահարկից ազատված էին միայն մուսուլմանները, իսկ զիմմին գլխահարկից բացի վճարում էր նաև ուրիշ հարկեր: Օրինակ, հողից օգտվելու համար նա տալիս էր խարաջ (տասնորդ), որը կազմում էր բերքի մեկ հինգերորդից մինչև կեսը: Խարաջի չափը տարբեր ժամանակներում տարբեր է եղել: Նկատենք, որ այդ հարկը միաժամանակ իրավունք էր տալիս հարկատուին հողը օգտագործելու և ժառանգելու: Արաբներն առաջինն էին, որ ողջ Հայաստանում, ընդ որում նաև Արցախում անցկացրած իրենց հարկային քաղաքականության ժամանակ մտցրեցին կրոնական խտրականության հանգամանքը, հարկային լուծն ավելի շատ ծանրացնելով հայ ազգաբնակչության հանդեպ:

¹ Aë-1 aëðeçè. N. 394.

Դրամական հարկերից բացի, հարկահանները արգախցիներից վերցնում էին նաև մեծ քանակությամբ բազմապիսի ապրանքներ ու կենդանիներ՝ գորգեր, ներկեր, ձիեր, ջորիներ, ոչխարներ, կովեր և այլն: Իսկ շատ դեպքերում էլ արաբները հարկերի դիմաց քաշում, տանում էին հարկատուի ընտանիքի անդամներին (կնոջը, երեխաներին):

Այդպիսով, գնալով ժողովրդի վիճակը այնպես էր վատանում, որ Մեքետսը այն նմանեցնում էր ծովում խեղդվողի դրությանը¹: Ղևոնդ պատմիչը գրում է. «Աշխարհագիրը տնասկ-տնասակ չարիքներ ... և շատ վտանգ հասցրեց մեր երկրին, մինչև որ ամենքը հառաչում էին անհանգստությունից ու նեղություններից, և անհնարին վտանգներից ոչ-ոքի ազատում չկար»²: Նույնի վկայությամբ այդ տարիներին հարկերն այնքան ծանրացան, որ դրանց վճարումն անհնարին դարձավ: Հարստահարվում և աղքատանում էին հասարակական բոլոր խավերն ու դասակարգերը: Մարդիկ ուղղակի փախչում էին անտառներն ու լեռները: Մ. Կաղանկատվացու երկում արաբների դաժանությունների մասին կարդում ենք. «... Աշխարհի չորս կողմը սիռավեց, տարածվեց հարավային ազգի (արաբների) դաժան ու մորմոքեցնող բռնակալությունը, որը, ինչպես հուր, լափեց մարդկանց ամբողջ վայելչությունն ու փառքը. և ըստ սուրբ Պողոսի խոսքի, այն ապստամբության հայտնի ժամանակը եղավ, թե դատավորը հասել է դռան մոտ և մերձ է ահարկու ժամը՝ չարի անաչառ օրը: Այսպես իսմայիլյան գազազած հագարացիք իրենց համար գրավեցին աշխարհի առատությունը, թե ծով, թե ցամաք հնագանդվեցին Նեոի կարապետներին՝ կորստյան զավակներին: Այս մեծ զրկանք եղավ Աղվանքի համար, որովհետև Պարտավ մայրաքաղաքը արաբները լսեցին Աղվանքի իշխաններից՝ համաձայն իրենց անառիկ ազգապղծության: Ինչպես իրենց իշխանության առաջին աթոռը հաստատեցին Ասորիքի Դամասկոսում, նույն ձևով այստեղ Աղվանքում՝ Պարտավում նստեցրին փոխարքա՝ կողոպտելու այս երկրի բարիքները. արքունի մարդկանցից մեկը եկավ բնակվեց Պարտավում»³:

¹ Տես Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 317:

² «Հայ ժողովրդի պատմություն», 1956թ., էջ 167:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 254:

Սակայն բռնությամբ ստեղծված խաղաղությունը միշտ չի շարունակվում: Արաբական տիրապետության շրջանում քաղաքական-ընկերային հոսանքներ են առաջանում, որոնցից մեկը պավլիկյան շարժումն էր: Վերջինս, ինչպես հայտնի է, V դարում հայտնի բորբորիտների և մծղենական շարժումների անմիջական և օրգանական շարունակությունն էր՝ պատմական այլ պայմաններում: Այն ծագել է V դարի վերջին և VI դարի սկզբներին, սակայն 554 թվականի Դվինի եկեղեցական ժողովից հետո պավլիկյանները և հայկական եկեղեցու մյուս հակառակորդները խիստ հալածանքի ու ոչնչացման ենթարկվեցին: Ահա թե ինչու VI դարի կեսերից մինչև VII դարի վերջերը Արևելյան Հայաստանում ու Հայոց Աղվանքում պավլիկյան շարժման մասին տեղեկությունները բացակայում են: Այդ շարժումը Հայոց Աղվանքում, ընդ որում նաև Արցախում, նորից սկսում է աշխուժանալ VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին, նրբ արաբական իշխանությունները բյուզանդական ազդեցության տարածվելու դեմ պայքարի անհրաժեշտությունից հարկադրված, հովանավորում կամ անուշադրության են մատնում պավլիկյանների գործունեությունը:

Նկատենք, որ Հայաստանի սոցիալական շարժումների, հատկապես պավլիկյանների պատմության գիտական հետազոտության ուղղությամբ բեղմնավոր աշխատանք է կատարել Ստեփան Մելիք-Բախշյանը: Հայկական և օտար սկզբնաղբյուրների ուսումնասիրման միջոցով նրան հաջողվել է ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ֆոնի վրա շարադրել միջնադարյան ամենասկնառու սոցիալական շարժումներից մեկի՝ պավլիկյան շարժման ամբողջական պատմությունը¹: Ստ. Մելիք-Բախշյանը լուսաբանում է այդ շարժման թե՛ սկզբնավորումը և թե՛ ամբողջ ընթացքը ու քննադատում Բ. Մարգարյանին և Կ. Տեր-Մկրտչյանին, որոնք պավլիկյան շարժումը ներկայացնում են որպես լոկ աղանդավորական-կրոնական մի շարժում՝ առանց թափանցելու նրա բովանդակության մեջ: Ստ. Մելիք-Բախշյանը նկատում է, որ պավլիկյան շարժումը սոցիալական խոշոր երևույթ էր, թեև ունեցել է կրոնա-աղանդա-

¹ Տես Ստ. Մելիք-Բախշյան, «Պավլիկյան շարժումը Հայաստանում», Երևան, 1953թ.:

վորական արտաքին շղարշ: Այդ շարժման համար հիմք է ծառայել օտար և հայրենի, հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների կեղեքման զոհ դարձած գյուղացիությունը, այն եղել է դասակարգային մի հուժկու պայքար՝ ուղղված ոչ միայն եկեղեցու, այլև ֆեոդալական հասարակարգի և օտարերկրյա գավթիչների դեմ ընդհանրապես: «Պավլիկյան շարժումն իր հիմնական կողմով եղել է գյուղացիական շարժում, թեև չի ժխտվում նաև այն, որ հասարակական այլ շերտեր մասնակցել են դրան»¹:

Ի՞նչ էին քարոզում պավլիկյանները: Պավլիկյան շարժումն ուղղված էր ամեն տեսակի անհավասարության և դասային բազմապիսի արտոնությունների դեմ: Պավլիկյանների հիմնական թևը ժխտում էր անդրշիրիմյան կյանքը, չէր ընդունում եկեղեցական բազմաթիվ ծեսերը: Նրանք ժխտում էին Քրիստոսի մարդկային հատկությունները և դրանով իսկ հակադրվում քաղեղոնական երկաբնակ եկեղեցուն, որը բյուզանդական աշխարհիկ իշխանության հետ համագործակցած հարստահարում ու ճնշում էր հայ ժողովրդին: Պավլիկյանները հիմնավորապես ժխտում էին սրբերի պաշտամունքը և պահանջում ոչնչացնել սրբապատկերներն ու եկեղեցիները: Ուստի նրանք պահանջում էին ոչնչացնել հոգևորականության այսպես կոչված սրբազան նվիրապետությունը: Պավլիկյանների ղեկավարները, առաջնորդներն ու քարոզիչները շարքայիններից ոչնչով չէին տարբերվում: Նրանք նույնիսկ հագնվում էին շարքայինների նման: Նաև առաջ էին քաշում ազատ սիրո գաղափարը:

Պավլիկյանների ուսմունքում մեծ տեղ է գրավել կրոնաաստվածաբանական կողմը: Նրանք չեն դրել կրոնի և պաշտամունքի իսպառ վերացման հարցը: Չնայած դրան, պավլիկյան շարժման սոցիալական էությունը կայանում է նրանում, որ ժխտում ու պայքարում է ֆեոդալների շահագործման դեմ:

Ն. Բարթիկյանի «Նայ աղանդավորների հետքերը Նյուսիսային Հունաստանում» (ՀՍՍՌ-ԳԱ «Տեղեկագիր», № 3, 1956թ.), «Պավլիկյան շարժման մի քանի աղբյուրների գնահատման շուրջը» (Սույն տեղը, № 6, 1957թ.), «Պավլիկյանների առասպելական ծագումը ըստ հին բուլղարերեն մի ձեռագրի» (Սույն տեղը, № 1, 1957թ.), «Պավլիկյան համայնքի կազմակերպության

¹ Ստ. Մելիք-Բախշյան, նշված աշխատությունը, էջ 232:

հարցի շուրջը» («Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1958թ.) և այլ աշխատություններում ու նրանց կից բյուզանդական վավերագրերում մենք նկատում ենք, որ պավլիկյան շարժումը, սոցիալական բնույթից գատ, ժողովրդա-ազատագրական պայքարի բնույթ է կրել նաև Արցախում:

Օմայան հարստությունը ավելի հզոր ցնցումների է ենթարկվում Հիշամի մահից հետո (743թ.), որին հաջորդած Վելիդը մի փուչ մարդ էր, որը շարունակ զբաղվում էր ըմբշամարտերով ու այլ զվարճություններով և այդպես վատնում իր ամբողջ ժամանակը և պետական գանձերը: Վելիդը ամենուր անկարգություններ էր սերմանում: Ծանր հարկերի պատճառով ամբողջ Հայաստանը իր Արցախով ու Սյունիքով, բռնկված էին ապստամբություններով: 748 թվականին արաբների դեմ Հայաստանում ծագած ապստամբությունը, որը գլխավորում էր Գրիգոր Մամիկոնյանը, տարածվում է Արցախում ու Սյունիքում: Առանձին աղբյուրներ հաղորդում են, որ այդ թվականին առաջինը նույնիսկ ապստամբել են Աղվանքի Բայլական քաղաքի և նրա շրջակայքի բնակիչները: Աղվանքի ապստամբները ջարդեցին Պարտավի արաբ էմիր իբն-Եզիդի, զորքերը և մարտի դաշտում սպանեցին նրան: Նույն ճակատագիրն ունեցան նաև օգնության եկած արաբական լրացուցիչ ուժերը: Այդ ապստամբությունն Աղվանքում շարունակվեց մինչև 752 թվականը: Պետական «մեքենայի» բացակայության պայմաններում ապստամբներն ավերում էին նաև արաբասեր հայ ազնվականների կալվածքները: Սակայն այդ ապստամբությունները վերջացան պարտությամբ:

Ժողովրդի դրությունն ավելի վատթարացավ Աբբասյանների օրոք: Հայ ժողովրդի կեղերքումը աննկարագրելի չափերի հասավ: Ութերորդ դարի նրկրորդ տասնամյակից Օմայան տոհմն արդեն անկման նշաններ էր ի հայտ բերում: Խալիֆության գահի վրա թեկնածուները երկար նստել չէին կարողանում: Ծանր ու խիստ հարկահանությունն էլ հենց անհաշիվ վատնումների ու դժգոհությունների պատճառ էր դառնում:

750 թվականից Օմայան տոհմին փոխարինելու է գալիս Աբբասյան տոհմը: Այդ ժամանակ գահն անցնում է Աբու-Աբբաս Արնախումին («Էս-Սաֆիահին»), որը գահակալում է 750–754 թվականներին: Մրա եղբայր Աբու-Ջաֆարն ավելի դաժան էր, որի համար հարստություն դիզելը ուղղակի մի հիվանդություն

էր: Ինչ խոսք, որ նրա հարստության առաջին և հիմնական աղբյուրը ևս հպատակներից գանձվող հարկերը պետք է լինեին: Նրա ցուցումներով արաբական տիրապետության բոլոր մասերում, ընդ որում նաև Արցախում, սկսվում են անասնի կեղևքումներ: Դեռ Աբուլ-Աբբասի գահակալության ժամանակ Աբու-Ջաֆարը, իբրև թագաժառանգ, պատվում էր պետության բոլոր երկրներում, ընդ որում նաև Աղվանքում, հարկահանության անտանելի ծանր համակարգ ստեղծում: Ղևնդ պատմիչի հաղորդմամբ նա տանջում էր մինչև անգամ այրիներին ու որբերին, հարկ էր պահանջում նաև մեռածներից, ծեծում ու տանջում էր քահանաներին՝ մեռելների անուններն իմանալու համար: Նրա հրամանով յուրաքանչյուր հարկատվի վզից կախված էր կապարյա կնիք: Ծանր դրություն ստեղծվեց նաև նախարարների համար: Նրանք ստիպված էին «վիշապի բերանը» լցնել իրենց գանձերով: Արքունի նպաստը, որը տրվում էր նախարարական գնդեր պահելու համար, կտրվում է: Նախարարները պետք է իրենց հաշվին զինեին ու պահեին գնդերը, որոնք միշտ պատրաստ պետք է լինեին արքունի ծառայության համար: 750 թվականին խալիֆաթում իշխանության գլուխ անցած Աբբասյանները պահանջեցին նույնիսկ 747–750 թվականների չմուծված հարկերը: Հայ ժողովրդի բոլոր խավերը հարկադրված եղան անգամ իրենց պապերի գերեզմանները փորփրել, որպեսզի մի արժեքավոր իր կամ մետաղ գտնեն և մուծեն դրամական հարկի դիմաց:

Կեղևքվող ժողովուրդը կրկին ոտքի կանգնեց: 752 թվականին Արցախի դաշտային գավառները արձագանքեցին Ծամբորում սկիզբ առած ապստամբությանը: Աբբասյանները մեծ դժվարությամբ ճնշեցին գյուղացիների այդ ապստամբությունը:

Ութերորդ դարի երկրորդ կեսում Արմենիայի տարեկան հարկը կազմում էր 13 միլիոն դիրհեմ: Ծանր էր նաև բնահարկը, որը բաղկացած էր հետևյալ տեսակներից. 20 գորգ, 580 լիտր (ռաթլ) զարդարուն գործվածք, տաս հազար լիտր աղած (սուրմահի) ձուկ, տաս հազար լիտր տառելյա ձուկ, 200 ջորի և 30 բազել¹: Այդպիսով, «տիրոջը նվաճվածին կյանք շնորհում էր միայն մի պայմանով – որ նվաճվածն ապրելու իրավունքը գնի բավա-

¹ Տես Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 747:

րար հարկեր տալու միջոցով»¹: Միայն նախարարական կալվածքային հարկը (խարաջ) VIII դարում Հայաստանում կազմում էր տարեկան 600.000 ռուբլի: Հարկը ժամանակին չվճարելու դեպքում հարկատուները ստրկացվում էին: Ստրկական վիճակը զանգվածին հարկադրում էր կրկին դիմելու զենքի: Արցախում արագորեն տարածվեց 774–775 թվականների Շիրակի գյուղացիների ապստամբությունը: Հայկական աշխարհագրական ջոկատները ամենուր գրավում էին արաբական զորքերով զբաղեցված ամրոցները: Այդ ապստամբությունը ճնշվեց 775 թվականի գարնանամուտին՝ Հայաստան ուղարկված արաբական 30-հազարանոց բանակի կողմից: Արաբական պատժիչ ջոկատները չկարողացան մեծ ջարդեր կազմակերպել Արցախում և Սյունիքում: Ինքնապաշտպանությունն այդ նահանգներում ավելի ուժեղ էր:

Ութերորդ դարի երկրորդ կեսին Արաբական խալիֆոսության ռազմաքաղաքական հիմքերը զգալիորեն թուլացել էին գրեթե ողջ Անդրկովկասում, ընդ որում նաև Հայոց Աղվանքում: Արաբական պատմիչ Յակուբի վկայությամբ, ութերորդ դարի վերջերին ծանր հարկերի պատճառով, Արմենիան բռնկված էր ապստամբական շարժումներով: Նույնի վկայությամբ Հարուն-էլ-Ռաշիդ խալիֆի ժամանակ (786–809 թ.թ.) միայն Հայաստանում իրար հետևից փոփոխվեցին 15-ից ավելի կառավարիչներ, որը նույնպես վկայություն է, որ խալիֆոսության ռազմաքաղաքական հիմքերը սասանվում էին: Հարունու Ուբեյդա կամ Ուբեյդուլլահ անունով եղբայրը գահի կռիվ է սկսում: Հարունը հարկադրված էր 788 թվականին եղբորը հանձնել Ատրպատականը, Հայաստանը, Վրաստանն ու Աղվանքը, որն իր ոստիկաններն ու կառավարիչներն է մտցնում այդ երկրները²:

Սակայն Եզիդ իբն-Մազայդուն փոխարինելու եկած Ուբեյդուլլահ իբն-Մեհտին երկար չի մնում իր պաշտոնում: Եզիդ իբն-Մազայդին, որը Արմենիայի կառավարիչ էր նշանակվել 786 թվականին և այդ պաշտոնում մնացել մինչև 788 թվականը, խալիֆ Հարուն էլ-Ռաշիդի կողմից նույն պաշտոնում վերականգնվում է երկրորդ անգամ և երկիրն սկսում այնպես կառա-

¹ Նույն տեղը:

² Sbu ат-Табари, 3, 636, Ибн ал-Асир, 6, 42 – 43:

վարել, որ ոչ ոք չէր կարողանում տնդից շարժվել՝ այդպիսով հակախալիֆական ըմբոստություններ առաջացնելով:

Արաբական աղբյուրները հաղորդում են. «Արաբական տիրապետության ժամանակ, սկսած 789 թվականից Պարտավում նստում էին ոստիկանները՝ իբրև ամբողջ կովկասի գործերի կառավարիչներ: Բաղաքը ուներ մնայուն արաբացի պահակազոր և մուսուլմանական ու քրիստոնեական ակտիվ կյանքի կենտրոն էր»¹: Այս ամենը մեր ուսումնասիրության ժամանակահատվածին բնորոշ պատմական, քաղաքական ու ընկերային առանձնահատկություններ են: Այս շրջանի համար օրինաչափ միտումներ են տարբեր սոցիալական խավերի միջև հակադրությունները, դրանցից բխող ըմբոստությունները, ապստամբությունները, զինված փոքր ու մեծ ընթացումները, սեպարատ բանակցությունները և այլն: Չբավորները ձգտում էին հնարավորինս սնկալս լինել իրենց տներից, տները՝ օտարներկրյա նվաճողներից: Հայկական բյուրոկրատիան պարտավորված էր լուծելու բարդագույն խնդիրներ, ուր չէր կարող մեկուսանալ եկեղեցուց, վերջինս էլ նրանից: Արաբական կառավարիչներն էլ հասկանալով, պատկերացնելով քրիստոնեության դերը մեր ժողովրդի հոգևոր կյանքում, աշխատում էին գոնե կրոնական համայնքներում բախումներ չառաջացնել: Պարտավը վերածելով երկու կրոնների ակտիվ կյանքի կենտրոնի, Խալիֆատի քաղաքական, կրոնական էլիտան հենց այս նպատակն էր հետապնդում: Ի դեպ, հետագայում էլ արաբական աշխարհի մոտեցումները տարբեր կրոնների նկատմամբ չեն փոփոխվել: Ասվածը ապացուցելու համար ընդամենը մեկ, բայց ցայտուն օրինակ բերենք. անուրանալի է մեր ժողովրդի համար Մեծ եղեռնի ընթացքում և հետո Սիրիայի և Լիբանանի կառավարիչների պահվածքը: Տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ ապաստան գտան այս երկրներում, իսկ Լիբանանի քաղաքական կյանքը (մերթ ընդ մերթ առաջացող ճգնաժամերով հանդերձ) մինչ օրս կարգավորվում է նաև կրոնական մոտեցումներով:

¹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965թ., էջ 146, ծանոթագրություն 97:

Այնուամենայնիվ ներքին անդորը երկար չի շարունակվում: 790-ական թվականներին ապստամբություն էին բարձրացրել Պարտավի, Բայլականի և Արդաբիլի աշխատավորները: Իրենց գայլային վերաբերմունքի պատճառով արաբները մեծ ջարդ կրեցին 793–794 թվականներին Պարտավում և նրա մերձակա շրջաններում, հատկապես Արցախի տափաստանային մասերում (Մուղանում): Խալիֆ Հարուն էլ-Ռաշիդի կողմից Արմենիայի կառավարիչ նշանակված ալ-ֆադր իբն Յալայա իբն խալիդ ալ-Բարմակին չկարողացավ զսպել ապստամբներին և հարկադրված եղավ նտ փախչել՝ իրեն փոխարինող թողնելով Ումար իբն Այուբ ալ-Կանանին: Իրաքից ալ-ֆադրը Արմենիա է ուղարկում Աբու աս-Սաբահուն՝ որպես հարկահան, իսկ Սաիդ իբն Մուհամմեդ ալ-Հարունուն՝ որպես բանակի հրամանատար: Աբու-աս-Սաբահին հազիվ էր հասցրել հասնել Արմենիա, երբ Բարդայի բնակչությունը ապստամբում է և սպանում նրան: Դրանից հետո ալ-ֆադրը Արմենիայի կառավարիչ է նշանակում Խալիդ իբն Ուսայիդ աս-Սուլամուն, որից հետո էլ-Ռաշիդը Արմենիայի կառավարիչ է նշանակում ալ-Աբբաս իբն Ջարիր իբն Եզիդ իբն Աբդուլլահ ալ-Բաժալուն: Նրա Բարդա հասնելուն պես ապստամբում են բայլականցիները: Այսպիսով հայ քաղաքական ընտրանին ստիպված է լինում մխրճվել մի նոր քաղաքական շրջապտույտի մեջ, այն է՝ տիրող արաբական քաղաքական էլիտայի ներսում ծագած անտագոնիստական հարաբերություններում ճիշտ կողմնորոշվելը: Խալիֆատի ներսում ընթացող դաժան պայքարը իշխանության համար չէր կարող իր կնիքը չթողնել նաև Արցախում:

Իսկ մենք շարունակենք հետևել արաբ էլիտայի կադրային տեղաշարժերին, մեկ անգամ ևս շեշտելով, որ Արմենիայում հակախալիֆական շարժումները խալիֆաթը ճնշել չի կարողանում: Խալիֆ Հարուն էլ-Ռաշիդը կրկին հիշում է Եզիդ իբն Մազադուն, կանչում նրան և տասնհազարանոց բանակով ուղարկում ապստամբների դեմ, որին միանում է Յալայա ալ-Խարաշին՝ 12-հազարանոց բանակով: Եզիդ իբն-Մազադուն հաջողվում է ճնշել ապստամբությունը և երրորդ անգամ ազատվել իր պաշտոնից: Չորրորդ անգամ նա Արմենիայի կառավարիչ է նշանակվում 799

թվականին¹: Եզիդ իբն-Մազայդին խաղաղեցնում է երկիրը ու Բարդայում նստում մինչև իր մահը՝ 801 թվականը և այնտեղ էլ հանձնվում հողին²:

Եզիդ իբն-Մազայդը երեք որդի ուներ (Ասադը, Խալիդը և Մուհամմեդը): Նա Աղվանքի կառավարումը հանձնարարել էր իր եղբայր Ահմադ իբն-Մազայդուն ու իր որդի Ասադ իբն-Եզիդին: Ահմադը Աղվանքը համատեղ կառավարում է մեկ տարի (800 թվականին), որից հետո սկսում է մեծատիրորեն իշխել Ասադը:

Հոր մահից հետո Ասադը խալիֆ Հարուն էլ-Ռաշիդի կողմից նշանակվում է Արմենիայի կառավարիչ: Սակայն դառնալով արդեն նաև դե-յուրե կառավարիչ, նրան միևնույնն է չի հաջողվում կանխել քաղաքական հոսանքների առաջացումն ու հակաարաբական շարժումները:

Ութերորդ դարում Աղվանքում և Արմենիայի մյուս մարզերում արաբական տիրապետության դեմ բռնկված ապստամբությունները շուտով հիմք դրեցին նաև համաժողովրդական այնպիսի մի հուժկու շարժման, որի դեմ տասնամյակներ շարունակ համառ պայքար մղելով, խալիֆությունը հազիվ կարողացավ փրկվել կործանումից: Այդ շարժումը պատմության մեջ հայտնի է խուրամիդյան շարժում անունով, որը սկսվեց 808–809 թվականներին Աղվանքում և Թալիշի լեռներում: Դա մի այնպիսի ժամանակ էր, երբ նորից վերականգնված ենք տեսնում հայկական սպարապետությունը (806–807 թվականներ), որն իրենց ձեռքն էին վերցրել Բագրատունիները: Հայոց սպարապետի պաշտոնը ստանձնել էր Սմբատի որդի Աշոտը կամ «Մսակերը», «Քաջը»: Հենց Աշոտի ժամանակ էր (808–809 թվականներին), որ հակաարաբական մեծ շարժում է սկսվում Աղվանքում ու Թալիշի լեռներում, որի առաջնորդն էր Ջավիդանը³: Վերջինիս քարոզը

¹ Տես ат-Табари, 3, 638.

² Տես ат-Табари, 3, 650, Ибн ал-Асир, 6, 60, Ибн Халликай, 2, 427.

³ Ջավիդանի կամ Ջավետան-բինի (որին անվանում էին նաև Սահակ կամ Սահլ) գլխավորած շարժումը արաբական գրականության մեջ հայտնի է խուրամյան կամ քուռամյան անունով: Աղանդավորներն իրենց անվանում էին «ալ-խուրամի», որը պետք է որ պարսկական «խուրամնա» («լուսավոր», «փայլուն») բառից լինի առաջացած:

կամ խուրբամյան վարդապետությունը իսլամի և քրիստոնեության մի խառնուրդ էր, որը քարոզում էր մարդկանց հավասարությունը: Դրա քարոզիչ Ջավնտան բին-Սահլը ընդունվեց իբրև աստվածային էակ (Քրիստոսի կամ սուրբ հոգու տեղ): Նրա շուրջը հավաքված բազմությունը հարձակումներ սկսեց արաբների վրա: Խալիֆը պատերազմ հայտարարեց խուրբամյաններին: 807–808 թվականներին Հարուն էլ-Ռաշիդ խալիֆը տաս հազարանոց զորք ուղարկեց խուրբամյանների դեմ, բայց այդ զորքը հաջողություն չունեցավ: 815–816 թվականներին խուրբամյանների հակաարաբական պայքարը սուր բնույթ է ստանում Հայաստանում: 815 թվականին Ջավիդանը սպանվում է, որից հետո խուրբամիդյան շարժման գլուխ է անցնում Բաբեկը: Հ. Ութմազյանի կարծիքով Սյունիք, Արցախ և Աղվանք մտած Բաբեկը ոչ թե մի սովորական օտար նվաճող էր, որ գործում էր հրով ու սրով, ինչպես նրան ներկայացնում են հայկական աղբյուրները, այլ սոցիալական գաղափարների տարածողը նաև Արցախում, Սյունիքում և բովանդակ Հայաստանում: Այն իրողություններից, որ խոշոր սեփականության ոչնչացման գաղափարները համակում է նաև Արցախի և Սյունիքի գյուղացիությանը, որի շնորհիվ այդ նահանգների գյուղացիությունը մտնում է խուրբամիդյան շարժման մեջ, Հայկարամ Ութմազյանը այնպիսի եզրակացության է գալիս, թե Բաբեկը իբր դրական մեծ դեր է խաղացել և համակել գյուղացիությանը¹:

Արմենիայում, ընդ որում նաև Հայոց Աղվանքում լայն տարածում է ստանում Ջահապի ղեկավարած շարժումը: Վերջինս այն արաբն էր, որին կնության էր գնացել Մուշեղ Մամիկոնյանի աղջիկներից մեկը՝ պաշտպանություն գտնելու նպատակով: Այս Ջահապը, որը հայտնի է նաև Աբդուլ-Սալիք Ջահհաֆն անունով, ձեռքն առնելով իր կնոջ կալվածքային իրավունքների պաշտպանությունը, վեճ է սկսում Աշոտ Մսակերի ու նրա եղբոր հետ և զենքի ուժով հափշտակում Արշարունյաց գավառի մի մասը: Ահա այս Ջահապն էր, որ Բաբեկի Հայաստան մտնելուց առաջ այնտեղ ապստամբական շարժումների տեղիք էր տալիս: Նրա

¹ Տես, Հ. Ութմազյան, «Բաբեկյան շարժման արձագանքները Հայաստանում», «Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը» ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1954թ., էջ 54:

պայքարը հիմնականում ուղղված էր Բագրատունյաց տոհմի դեմ: Սակայն IX դարի 2-րդ տասնամյակում (815–816 թվականներին) Աշոտ Մսակների հորեղբայր Վասակի թոռ Աշոտը խալիֆից ստանում է Վրաստանը կառավարելու իրավունք, իսկ քյուզանդական Լևոն Հայկազն կայսրից՝ կյուրապաղատության տիտղոս: Աշոտ Մսակերը, օգտվելով հարմար առիթից, 820 թվականին չափվում է Ջահապի հետ և մեծ ջարդ տալիս նրան: Ջահապը ապստամբել էր նաև խալիֆի դեմ: Ուստի ապստամբ Ջահապին զսպելու նպատակով Մամուն խալիֆը Հայաստանի նստիկան է նշանակում Թահիրին, որը գալիս և բնակություն է հաստատում Պարտավ մայրաքաղաքում:

Ջահապը իր հակախալիֆական պայքարով մեծ թվով կաղմնակիցներ էր ձեռք բերել նաև Հայոց Աղվանքում: Ուստի Թահիրու համար դժվար էր միանգամից կարգ ու կանոն հաստատել Պարտավում և Հայոց Աղվանքի նահանգներում ու գավառներում, հատկապես Արցախում: Հակախալիֆական ապստամբության կողմնակիցները այդտեղ շատ էին, որոնք և առանձին լսմբերով դուրս են գալիս Թահիրի դեմ: Ջահապը փաստորեն ապստամբության է հրահրում ամբողջ Բնյոկանը (Փայտակարանը) և այնքան առաջ տանում իր հանդուգն գործողությունները, որ նույնիսկ պաշարում է Թահիրիին Պարտավում և այդպես պահում մի քանի ամիս, մինչև որ գալիս է մի նոր նստիկան՝ Սուլեյման անունով, որը ազատում է Պարտավը: Յակուբի վկայությամբ Ջահապն ստիպված հաշտություն է խնդրում խալիֆից և ներում ստանում¹:

820 թվականին Մամուն խալիֆը Արմենիայի կառավարիչ է նշանակում Խալիդ իբն Եզիդ իբն Մազադ աշ-Շայբանին: Այդ ժամանակ Աղվանքում և Վրաստանում հակաարաբական մեծ ապստամբություն է տեղի ունենում: Հասարակական շարժումները շարունակվում էին նաև 837 թվականից հետո: Խալիֆաթին հաջողվում է միայն մասամբ վերականգնել իր խարխլված դիրքերը Անդրկովկասում:

Երկրորդ անգամ Խալիդը Արմենիայի կառավարիչ է նշանակվում խալիֆ ալ-Մութասիմի կողմից՝ 839 կամ 840 թվականին, նրբ Անդրկովկասյան բոլոր մարզերը ապստամբել և փաս-

¹ Տես Յակուբի, «Հանդես Ամսոթյա», 1907թ., էջ 140:

տորեն դուրս էին եկել արաբական ենթակայությունից: «Երբ Խալիդին Արմենիայի կառավարիչ նշանակելու մասին լուրը տեղ է հասնում, ապա նրանից երկյուղ կրելով, թագավորական բոլոր տները փակվում և ապստամբվում են»¹: Խալիդը չի կարողանում ճնշել հակախալիֆական շարժումները, որի պատճառով նա է կանչվում: Շուտով մահանում է նաև Մութասիմ խալիֆը (842 թվականին), որին փախարհնում է ալ-Վասիկը (842–847 թ.թ.): Սա անմիջապես հրավիրում է Խալիդ իբն Եզիդին և նրան նորից կարգում Արմենիայի կառավարիչ: Տասներկուհազարանոց բանակի գլուխ անցած Խալիդը վերադառնում է Պարտավ: Արմենիայի դրությունը կրկին լրջանում է: Հակախալիֆական նոր ապստամբություն է սկսվում, որը Խալիդը ճնշել չի կարողանում, շուտով մահանում է, որից հետո բանակի հրամանատարությունը ստանձնում է նրա որդի Ալի իբն Խալիդը: Սակայն բանակը ցրվում է և խալիֆ ալ-Վասիկը իր մոտ է հրավիրում Խալիդի երկրորդ որդի Մուհամմադին և հրամայում նրան գրավել հոր պաշտոնը ու վերջ տալ հակաարաբական շարժումներին: Մուհամմադ իբն Խալիդը Արմենիայի կառավարիչ է կարգվում 844–845 թվականներին: Վրաստանում պարտվելուց հետո նա վերադառնում է Բարդայի մոտերքը:

Նկատենք, որ այդ ժամանակահատվածում Արցախը աչքի էր ընկնում տնտեսական կյանքի ուրույն պայմաններով: Նրա տափարակներում զարգանում էր խաշնարածությունը: Իսկ թափառական կյանք տրամադրող այդ տնտեսաձևը չէր կարող գոյություն ունենալ առանց լեռնային արոտների, որը կարող էր լինել Լեռնային Արցախը: Վերջինս կարևոր նշանակություն ուներ Դաշտային Աղվանքի համար: Ամռանն Արցախի բյուրավոր ամառանոցներն էին բարձրանում դաշտնցի անասնապահները՝ ամբողջ ընտանիքներով ու գյուղերով: Մ. կադանկատվացու երկու գույց է տրվում թե ինչպես և ինչ բազմությամբ էր դաշտային խաշնարած ժողովուրդը տեղափոխվում Արցախի լեռները: Նրա հիշատակարաններից մեկում ասված է, որ «հայոց թվականության երեք հարյուր տարելիցին (851 թվականին, – Է.Ս.)... անձրևների շատությունը Մեծիրանք գավառում տեղատարափ է դառնում և հեղեղի հոսանքը հասնում է Դաստակերտ գյուղը: Գե-

¹ ал-Йакуби, 2. С. 578.

տերին միանալու տեղում խաշնարածների ութ հարյուր վրաններ տարավ, որոնք ամռանը եկել էին Կովկասից անասնարոտի»¹: Այդպիսով, եթե մի գավառի մեկ անկյունում այդքան վրաններ կային, ապա դժվար չէ պատկերացնել վրանների մեծաթվությունը ամբողջ Արցախում և վերջինիս նշանակությունը դաշտեցիների համար:

Դվինում և Պարտավում արդեն Բուդայի թողած արաբ ոստիկանները աշխատում էին շխառնվել տեղական ներքին գործերին, բայց լրտեսում էին պերմանենտ ապստամբության մեջ գտնվող հայ ժողովրդին: Արաբական տիրապետության 855 թվականին «թափված արյան և ավերակների մեջ հեռում էր տակավին ապստամբության ոգին»²: Հայոց սպարապետ Աշոտ Բագրատունին (855–862 թ.թ.) զգուշանում էր արաբ լրտեսներից (ոստիկաններից) և խուսափում արյունահեղություններից: Իսկ դասակարգային պայքարն ավելի էր սրվում: Դրա վկայություններից մեկը թոնդրակյան շարժումն էր: Հայ իրականության մեջ այդ շարժումը իր բնույթով սոցիալական անհավասարության և դասակարգային հակասությունների հողի վրա առաջացած ընդվզում էր: Այն Հայաստանի հյուսիս-արևելյան նահանգներից, հատկապես Արցախից հասել ու տարածվել էր նաև ամբողջ Ադվանքում, տարածվել մինչև Հյուսիսային Միջագետք, Ասորիք և այլուր:

Թոնդրակյան շարժման և X դարում Սյունիքի գյուղացիական ապստամբության պատմությանն է նվիրված Հ. Ջոռյանի «Ենոթալական Հայաստանի գյուղացիական շարժումները X դարում» ուսումնասիրությունը, որում հեղինակը փորձում է վերհանել գյուղացիական շարժումների սոցիալ-տնտեսական և քաղաքական դրդապատճառները:

Միջնադարյան ընկերային շարժումների հարցը ուսումնասիրվել է նաև Հ. Մանանդյանի աշխատություններում, որը գրում է. «Թոնդրակյան աղանդավորների գաղափարախոսությունը հիմնականում մի սուր բողոք էր... հայկական ֆեոդալիզմի և իշխող դասերի հարստահարությունների ու ճնշման դեմ»³:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 261:

² Ն. Ադոնց, «Պատմական ուսումնասիրություններ», էջ 72:

³ Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները X–XI դարերում», 1940թ., էջ 44:

Թոնդրակյանների մասին վերլուծություններ են հրապարակել Ա.Գ. Հովհաննիսյանը, Ս. Պողոսյանը, Վ. Համազասպյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրի մտքերը այստեղ մեջ բերելու հարկ չի զգացվում: Միայն ավելացնենք, որ թոնդրակյանների շարժումը ընդգրկեց նաև Արցախյան ու Սյունիքը: Թոնդրակյան դրոշի տակ համախմբված գյուղացիները հրահրեցին զինված ապստամբություն, որն առանձնապես սուր բնույթ ստացավ Սյունիքում:

Օտար կեղևիչների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական կռիվները չպետք է կրոնական թանձր քողով պարուրված պատկերացնել: Մինչև անգամ հայ մատենագրության մեջ էլ միշտ չէ, որ այդպես է պատկերացվել: Քիչ չեն եղել դեպքերը, նրբազատագրական պայքարի գաղափարախոս պատմիչները դեն են նետել կրոնական ծածկույթը և շեշտված ձևով ընդգծել այդ հերոսամարտերի սոցիալ-դասակարգային բնույթը: Ճիշտ է, վաղ միջնադարի պատմիչներ Փավստոս Բուզանդի, Մովսես Լտրենացու, Եղիշեի, Փարպեցու աշխատություններում գերիշխում են ազատագրական պատերազմների կրոնական մեկնաբանությունները, սակայն դրանք համեմատաբար աղոտ են ընդգծում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմագիրները: Վարդանանց պատերազմի պատճառների մասին Թովմա Արծրունին գրում է, որ Հազկերտը պարծենկոտությամբ սպառնում էր ավերել Հայաստանը¹: Հետևաբար, այդ պատերազմի բուն նպատակը ողջ Հայաստանի ավերումն էր և հայ ժողովրդի կողոպուտը: Ահա թե ինչու մեր ժողովուրդը ըմբոստացել էր բռնակալության դեմ: Դա ըստ էության ազգային ինքնուրույնության պահպանման համար մղվող, հայրենական պատերազմ էր: Ահա թե ինչու Արծրունու մոտ այդ պատերազմի կրոնա-դավանաբանական բացատրությունները գրեթե բացակայում են: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նա նշում է, որ նրանց խնդիրն էր նվաճել Հայաստանը, կողոպտել հայ ժողովրդին: Արաբական ոստիկանն իր ասպատակությունների ժամանակ անգույթորեն կողոպտում, հափշտակում էր բնակչության ունեցվածքը, գերեվարում կանանց ու տղամարդկանց: Ժողովուրդը ոտքի է կանգնում իր հողը ներխուժած օտար զիշատչից պաշտպանվելու համար:

¹ Տես Թ. Արծրունի, «Պատմություն...», էջ 138:

Արաբական հրոսակախմբերի դեմ հայ ժողովրդի պայքարի ազատագրական բնույթը բացահայտ է նաև Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն» մեջ, որը գրում է, թե աշխարհավեր Մրվանը 727 թվականին բազմաթիվ զորքով հարձակվում է Հայաստանի վրա և «իբրև հուր սաստիկ այրեաց և հրդեհեաց զգեղեցկություն աշխարհիս»¹: Իսկ «Վասակ՝ Սիւնեաց տէր և իշխանոց իշխեցող, գնայ փութանակի և ածէ զԲաբան պարսիկ բազում զօրոյ յԱտրպատականէ և էհար զՄրվան սաստկապէս, և փախստական արար»²:

Սյունյաց իշխանը պարսիկ Բաբանի հետ ռազմական դաշինք կնքելով, միաժամանակ և բարեկամանում է՝ նրան կնություն տալով իր աղջկան: Ուստի, նման դեպքում հայ-արաբական կռիվների կրոնական բնույթի մասին խոսք լինել չի կարող: Բոլորովին տարբեր կրոնական դավանանքի տեր կողմերի քաղաքական շահերը վերացնում են կրոնական պատենշները և նրանց միավորում ընդհանուր թշնամու դեմ: Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ հայ ժողովուրդը արտաքին հարստահարիչների դեմ կենաց և մահու պայքար էր մղում, որովհետև նրանք ոտնատակ էին արել Կովկասը, ընդ որում նաև Հայաստանը, ամայացնում էին վերջինիս շեն ավաններն ու գյուղերը, խոպան դարձնում արտերն ու այգիները, կործանում քաղաքները³: Ճիշտ է, այդ համազգային աղետի անմիջական զոհերը աշխատավորներն էին (շինականները), սակայն նրանց հավասարվում են նաև հայ ազնվականները, որոնք «առ սակաւ զիրեանց ստացուածս վատնեալք ընդ ատուրն պարենի՝ ի վերջին սնանկութիւն հասանէին և յաւէտ յաղքատութիւն և ի կարօտութիւն»⁴:

Արաբների և մոնղոլների կողմից Արցախի ավերածությունները լուսաբանում է Կիրակոս Գանձակեցի, որը, սակայն, ազնվականների մորթապաշտությանը հակադրում է շինականների անձնուրաց հայրենասիրությունը⁵:

¹ Ստ. Օրբելյան, «Պատմություն», էջ 158:

² Տես Թ. Արծրունի, «Պատմություն...», էջ 138:

³ Տես Հ. Դրասխանակերտցի, «Պատմություն...», էջ 257:

⁴ Նույն տեղը, էջ 261:

⁵ Տես Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն Հայոց», աշխատասիրությանը Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան 1961թ., էջ 258:

Լեոն էլ հայ ժողովրդի, մասնավորապես արցալսցիների պայքարի պատմությունը հանգեցնում է անհատների, լավագույն դեպքում նախարարական տոհմերի միջև մղած կռիվների: Իր «Հայոց պատմություն» գրքի 2-րդ հատորի 45–93-րդ էջերում նա V դարի հայ ժողովրդի ազատագրական պայքարը պարսկական տիրապետության դեմ շարադրում է յուրովի: Սուբյեկտիվ սոցիոլոգիզմը Լեոյին հնարավորություն չի տվել մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից լուսաբանելու այդ պայքարը: Լեոյի երկերի ժողովածուի առաջին հատորի «Պրոֆ. Լեոյի պատմագիտական ժառանգությունը» առաջաբանում ակադեմիկոս Մ. Ներսիսյանը հեղինակին իրավամբ քննադատում է այն բանի համար, որ նրա «աշխատություններում խիստ գերազնահատված է «հոգևոր ֆակտորի» դերը մարդկային հասարակության զարգացման գործում»¹: Լեոյի կարծիքով պատմության առաջընթացը պայմանավորված է մտավոր-մշակութային առաջադիմությամբ, կրթության, լուսավորության, հասարակական մտքի զարգացման մակարդակով: Ակադեմիկոս Մ. Ներսիսյանն անընդունելի է համարում Լեոյի այն վերաբերմունքը, որ նա «Հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցած մի շարք խոշոր տեղաշարժեր բացատրում է, օրինակ, միայն տառերի գյուտով, գաղափարների, դպրոցների ու գրականության զարգացմամբ»²: Լեոն գրում է. «Հինգերորդ դարի սկզբին, հայ աշխարհը փրկվել էր կործանումից, ստեղծելով ազգային դաստիարակություն»³: Եվ ապա. «Մտավոր գործունեությունը հայ ժողովրդի գոյության ամենահզոր պատվարն է եղել»⁴: Պատկերացնում եք Արցախյան ազատամարտի ժամանակ մեր հայրենասիրությունը, բազկի ուժը, ռազմական հմտությունը և ինչ խոսք նաև ամեն ինչին ուղեկցող Լեոյի «մտավոր գործունեությունը» սահմանափակվեր միայն թվարկացներից վերջինով: Թուրքը իր այսօրվա բույթ յաթաղանով ուղղակի կվռչնչացներ Արցախը, հետո կանցներ Չանգեզուրին, Սևանին և այլն:

Արաբ կեղեքիչները Հայոց հարուստ լեռնաշխարհը կողոպտում էին նաև IX–X դարերում: Խալիֆ Չաֆար էլ-Մոքթադիի

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 1, Երևան, 1966թ., էջ 10:

² Նույն տեղը, էջ 11:

³ Նույն տեղը, հատոր 3, էջ 273:

⁴ Լեո, «Հայկական տպագրություն», հատոր 1, էջ 4:

ժամանակ (908–932 թ.թ.) Հայոց Սմբատ թագավորից պահանջվեց մեծ հարկ: Սմբատը ստիպված դիմեց մի հարկահանման միջոցի, որն արտակարգ էր և հաճախ չէր գործադրվում: «Այդ միջոցն էր հարկերի կրկնապատկումը: Սովորական կարգ էր տասնորդ վերցնելը: Իսկ այժմ Սմբատը կարգադրում էր ստանալ հինգ մասից մեկը թե՛ բերքերից և թե՛ անասուններից, այնպես որ հարյուր գլուխ ոչխար կամ տավար ունեցողը պիտի տար 10 գլխի փոխանակ 20-ը: Այս միջոցով Սմբատը, իրավ է, կարողացավ իսկույն բավարարել հարկահանության պահանջները, բայց փոխարենը դժգոհություն տարածեց ժողովրդի մեջ»¹:

Դրությունն արմատականորեն փոխվեց Գագիկի իշխանության տարիներին (990–1020 թ.թ.), որի իշխանության նրբ տասնամյակները նդան խաղաղության ու մեծագործ շինարարությունների տասնամյակներ: Դեռ IX դարի կեսերից Արցախում սկսվում է որոշ չափով զարգանալ գյուղատնտեսությունը, որին նպաստում էր արաբ էմիրների ոտնաձգությունների վերացումը:

Այդպիսով, ֆեոդալական միապետության, նրա ընտրանու ձևաորումն ու զարգացումը Հայաստանում, ընդ որում նաև Արցախում, տեղի է ունենում միջազգային անվերջ ընդհարումների պայմաններում: Պետությունների թուլացումը, «սնանկ» երկրների ի հայտ գալը օբյեկտիվորեն հանգեցնում էր պետական իշխանության վերացմանը, պետությունների քայքայմանը: Սասուկանում էին միջցեղային, էթնիկ և կրոնական կոնֆլիկտները: Հայոց նահանգների տնտեսական ու քաղաքական անջատվածությունը մի կողմից և օտարազգի հարձակումները մյուս կողմից, ջլատում էին նաև նրա Արցախ նահանգի ուժերը: Հայաստանի քաղաքական անկախության կորուստը ավելի ծանրացրեց նրա նահանգների, մասնավորապես Արցախի հայերի դրությունը, որն էլ հանգեցրեց նրան, որ հայ քաղաքական էլիտան իր մեծամասնությամբ հայտնվեց կիսավասալային իրավիճակում, անընդհատ պարտադրված լինելով լուծելու քաղաքական կողմնորոշման խնդիրներ:

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 534:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ԱՐՏԵՍՏՆԵՐԸ

Նախորդիվ տեսանք, որ Արցախը գյուղատնտեսական նահանգ էր: Այն զուրկ էր դասական առումով նշանավոր քաղաքներից: Լնոն նշում է. «Երկիրը իշխանական ամրոցների, փոքրիկ բերդերի իրականության մեջ էլ մնաց մինչև վերջը, չունենալով փոքր ի շատն նշանավոր քաղաքներ, որոնք նշան լինեին թե այս լեռնաստանում էլ զարգանում է տնտեսության քաղաքային ձևը՝ արդյունաբերություն, վաճառականություն»¹:

Հայոց Աղվանքում միակ նշանավոր քաղաքը մնում էր Պարտավը (Պերոգապատ, Բարդա), որը «Աղվանքի մայրաքաղաքն էր՝ սկսած 462 թվականից և գտնվում էր Մեծ Հայքի Ուտիք նահանգում (Ուտիքի Ուտի-Առանձնակ Գավառում, – Է.Ս.): Նրա ավերակներից հարավ գտնվում է այժմյան Բարդա ավանը»²: Հյուսիսային ցեղերից պաշտպանվելու նպատակով որոշվում է թագավորանիստ աթոռը մայրաքաղաք Չողայից տեղափոխել Պարտավ: Պարսից Պերոգ թագավորի (459–484 թ.թ.) հրամանով Աղվանից Վաչն Երկրորդ թագավորը 459 թվականին հիմնադրում է Պարտավ քաղաքը: Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Եվ պարսից արքա Պերոգի հրամանով Վաչնի կողմից շինվեց Պերոգապատ մեծ քաղաքը, որ այժմ Պարտավ է կոչվում»³: Այլ-Բելլաժորու հաղորդմամբ «Կավատը... Աղվանքում կառուցում է Բարդա քաղաքը՝ ամբողջ երկրի գլխավոր քաղաքը»⁴: Միրխոնդը ևս Բարդայի հիմնադրումը վերագրում է Կավատին (Կավատ Պերոգ), այսինքն V դարին, որը հաստատվում է նաև Մ. Կաղանկատվացու մեկ այլ հաղորդմամբ, այն է, որ Աղվենի ժողովին մասնակցում էին Պարտավի արքեպիսկոպոս Շուփիադիչան, Պարտավի քահանա Մատթեմն⁵:

¹ Լնո, «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի», էջ 26:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 277, ծանոթագրություն 65:

³ Նույն տեղը, էջ 31:

⁴ ал-Баладзурри. С. 193.

⁵ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 65:

Այդպիսով, սխալվում է Համդուլլահ ալ-Ղազվինը կարծելով, թե Բարդան կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացին, իսկ հետագայում այն բարեկարգվել է Կավատի կողմից¹: Անընդունելի է նաև Ջալալեդդին Սահրաբի վկայությունն այն մասին, թե «հիջրի 85 թվականին այդ քաղաքը (Պարտավը, – Է.Ս.) կառուցեց մուսուլման գորավար Աբդլ իբն Հաթիմ իբն Նոման ալ Բահիլին»²: Ընդունելի է այդ ծանոթագրությունը կազմողների կարծիքն այն մասին, որ «անշուշտ խոսքը վերաշինելու, և ոչ կառուցելու մասին է, որովհետև քաղաքը շատ ավելի հին է»:

Կրկնենք, որ աղբյուրները քաղաքը անվանում են Պարտավ, Պերոզապատ, Բարդա կամ Բարդաա: Պարտավ և Պերոզապատ անունները առնչվում են Պերոզի անվան հետ: Ինչ մնում է Բարդա կամ Բարդաա անվանը, ապա այդ մասին արաբական աղբյուրները հաղորդում են. «Համզան ասել է, թե Բարդաան արաբացված հնչումն է Բարդադարի, որը պարսկերեն լեզվով նշանակում է գերիների վայր: Այսպես է կոչվել, որովհետև մի պարսիկ թագավոր Հայաստանի այն կողմից գերիներ բերելով բնակեցրեց այստեղ»³: Ինչ վերաբերում է նրա կոնկրետ տեղին, ապա այն կառուցվել է «Ուտի Առանձնակ գավառում... Ըստ Աբու-լ-Ֆիդայի տեղեկության, քաղաքը կառուցված է Թարթառ գետակի ձախափի վրա»⁴: Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին ցույց է տալիս, որ Թարթառ գետը «քաղաքից հազիվ մեկ փարսախս հեռավորություն ունի»⁵: Օգտվելով հավաստի աղբյուրներից, Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանցը նշում է, որ Բարդան քաղաք է Ուտի-Առանձնակ գավառում: Այն համարվում է Աղվանքի երկրորդ մայրաքաղաքը, որը հայերը անվանում են Պարտավ: Վերջինս կառուցված է Թարթառ գետի ձախս ափին: Աղվանից աշխարհի առաջին մայրաքաղաքը Չողան էր (Չողա պահակ կամ Ճորա պահակ. գտնվում է Դերբենդից հարավ, Կասպից ծովի ափին, Մասքուլների երկրում՝ Չող քաղաքի մոտ)⁶:

¹ Տես Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 158 (ռուսերեն):

² «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 145, ծանոթագրություն 97:

³ Նույն տեղը, էջ 35:

⁴ Նույն տեղը, էջ 145, ծանոթագրություն 97:

⁵ Նույն տեղը, էջ 36:

⁶ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 276, ծանոթագրություն 78:

Սակայն Մակար Բարխուդարյանը կարծում է, թե Պարտավր կառուցվել է «Գարգարացոց դաշտում»: Նա Արցախյան դաշտավայրը պարզապես շփոթում է Գարգարացոց դաշտի (Կուրի ձախափնյակի) հետ: Հյուբշմանը նշում է, որ Պերոգապատ, Պերոգ-Կավատ կամ պարզապես Պերոգ քաղաքը գտնվում է Ուտի գավառում, «որ Վաչե թագավորի ձեռքով շինվեց Պարսից Պերոգ (459–484 թ.թ.) արքայի կարգադրությամբ և հետո կոչվեց Պարտավ, ապա դարձավ (462 թվականից) Աղվանից մարզպանության մայրաքաղաք»¹:

Սլաւ է այն ենթադրությունը, թե իբր «VI դարից սկսած Պարտավը նախկին Կապադակի տեղ դարձավ Աղվանից մայրաքաղաք»²: Ինչպես տեսանք, Պարտավը Աղվանից մայրաքաղաք է դառնում 462 թվականից սկսած: Իսկ Ալ-Իսթահրին էլ (X դարի արաբ աշխարհագիր) հաղորդում է, որ «Բարդաան շատ մեծ քաղաք է, ավելի քան մի փարսախի վրա (5,5 վերստ, – է.Ս.): Ծառաշատ, պտղառատ, հաճելի մի վայր է, և Ռեյ ու Սպահան քաղաքներից հետո՝ Իրաք և Խորասանի միջև չկա ավելի մեծ, ավելի բարեբեր և ավելի գեղեցիկ վայր՝ քան Բարդաան: Քաղաքից մեկ փարսախից նվազ հեռավորության վրա է գտնվում Անդարաք կոչված վայրը, այգեստաններով ընդելուզված, որն ունի մրգաստաններ, առատ պտղատու ծառեր և կանաչազարդ պարտեզներ: Նա ունի պիստակ՝ ավելի պատվական, քան Սմրդանդի պիստակը, ունի շագանակ՝ ավելի ընտիր, քան Դամասկոսի շագանակը, ունի նաև մի տեսակ պտուղ «դավկալ» կոչված, որ հասունանալուց հետո խիստ քաղցրահամ է լինում, իսկ չհասունացած՝ դառնահամ է լինում: Բարդաայում կա թուզ, որը գերազանց է բոլոր տեսակի թուզերից: Մետաքսի արտադրությունը մեծ զարկ է ստացել այնտեղ, շնորհիվ անթիվ ու անտեր թթենիների, և արտածվում է դեպի Պարսկաստան ու Խորհաստան»³: Եվ ապա. «Բարդաայում կա մի դուռ՝ Բաբ ալ-Աքրադ կոչված, որտեղ գտնվում է ալ Բուրիաքի (կիրակի բառի աղավաղումն է, –

¹ Հյուբշման, «Հին հայոց տեղվո անունները», Վիեննա, 1907թ., էջ 110:

² «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 145, ծանոթագրություն 97:

³ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 35:

Է.Ս.) կոչված շուկան, որը տարածվում է մեկ փարսալսի վրա: Ամեն կիրակի օր այնտեղ են հավաքվում մարդիկ, և վաճառականները ապրանք են բերում մինչև անգամ Իրաքից: Կուրի ամենամեծ տոնավաճառն է այդ և այնքան հոշակ է հանել, որ տեղացիները շաբաթվա օրերը համրելու ժամանակ շաբաթին հաջորդող օրվան ասում են կիրակի: Հետո հաջորդ օրերը՝ երկուշաբթի, երեքշաբթի և այսպես մինչև շաբաթվա վերջին օրը: Նրանց գանձատունը գտնվում է մզկիթի մեջ, որը կառուցված է Դամասկոսի մզկիթի նմանությամբ, որովհետև Դամասկոսում էլ գանձատունը գտնվում է մզկիթի մեջ: Ծենքը արճիճով պատած տանիք ունի, ունի նաև մի երկաթե դուռ և ամբողջ կառուցվածքը հաստատված է ինը սյուների վրա: Կառավարիչի պալատը մզկիթի կողքին է, իսկ քաղաքի արվարձանում գտնվում է հասարակաց շուկան»¹:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը օգտվելով այդ աղբյուրներից, գրում է. «Փրկչ. 551 և հայկական I թվականին Ջոդայից քաղաքս է փոխադրվում նաև Աղվանից կաթողիկոսական աթոռն»: Քաղաքի պարիսպներն ունեցել են չորս դուռ: Ավանդության համաձայն Աղվանից Վաչե Երկրորդ թագավորը Պարտավ քաղաքի մոտ (Թարթառ գետի վրա) կառուցել է տվել մի կամուրջ, որն ունի 170 մետր երկարություն, 5 մետր լայնություն և 16 մետր կամար: Պարտավում գահակալել են Վաչե Երկրորդը, Վաչագան Երրորդը, կաթողիկոսներ, Վարագ-Գրիգոր, Վարագ-Տրդատ ու Ջվանշիր իշխանները և ուրիշներ: Ջվանշիր իշխանի անունով հետագայում գավառը կոչվել է Ջուվանշիրի գավառ:

Պարսկա-բյուզանդական պատերազմների ժամանակ Բարդան ավերվում է Խազարների կողմից (628 թվականին), որոնք այդ ժամանակ հանդես էին գալիս իբրև Բյուզանդիայի դաշնակիցներ: Ինչպես նշվեց, քաղաքը վերականգնվում է Օմայյան հարստության առաջին խալիֆ Մուավիայի (661–680 թ.թ.) ժամանակ՝ Աղվանքի կառավարիչ Աբդել-Ազիզի կողմից:

Պարտավը ութերորդ դարի երկրորդ կեսին նվաճվում է արաբների կողմից: «Առաջին կուսակալը կամ ոստիկանը, ինչպես նրևում է, արքայական ընտանիքի անդամներից էր, որի հա-

¹ Նույն տեղը, էջ 36:

մար Պարտավում կառուցվեց ապարանք և նրա մոտ՝ մի հոյակապ մզկիթ, որի մեջ և գտնվում էր պետական գանձարանը»¹:

Պարտավը առևտրական ճանապարհներով կապված էր Արդաբիլ, Բաբ-Ուլ-աբվաբ, Թիֆլիս, Դաբիլ քաղաքների հետ: Արաբ աշխարհագիրները մինչև անգամ ցույց են տվել Պարտավից մինչև այդ քաղաքներն ընկած երթուղիների կայարանները, նրանց միջև եղած հեռավորությունները:

Պարտավն իր առաջնային դերը պահպանում է մինչև X դարի սկզբները: «913 և 944 թվականների ռուսների արշավանքներից հետո առևտրական ճանապարհների փոփոխման հետևանքով առաջնությունն արդեն անցել էր Գանձակին: Ծեղադանների ժամանակ մայրաքաղաքը փոխադրվեց Գանձակ, և ինչպես Յակուտն էլ է նշում, Պարտավը կորցրեց իր նշանակությունը և դարձավ անկարևոր վայր»²: Ռուսական ի՞նչ արշավանքների մասին է այստեղ խոսքը: Մ. Կաղանկատվացու Բ գրքի 21-րդ գլխում հիշատակվում է տեղեկություն այն մասին, որ 3000 հոգուց բաղկացած ռուսական մի զորամաս առաջին անգամ, մրրկի նման ընթանալով, Կասպից ծովի ափերով հասնում է Ադվանք և մտնում նրա մայրաքաղաք Պարտավ: Յավալի է, որ այդ զորամասի Ադվանք և Պարտավ մտնելու թվականը հայ մատենագրի կողմից չի նշվում: Ըստ Վարազ Առաքելյանի՝ «բանասիրական քննությունները ցույց են տվել, որ պատմական այդ իրողությունը տեղի է ունեցել 944 թվականին»³:

Իններորդ դարի արաբ հեղինակ Աբդուլ Կասրմի հաղորդմամբ իր ժամանակ ռուս առևտրականները Վոլգայով գալիս հասնում են Կուր գետը և նրա վրայով շարժվում դեպի Պարտավ, որն այն ժամանակ հռչակված էր իբրև առևտրական կենտրոն:

Տասներորդ դարի արաբ հեղինակ Իբն-Միսկավեյկը ռուսների այդ արշավանքի մասին վկայում է, որ նրանք «մեծ ժողովուրդ են, աչքի են ընկնում խոշոր մարմնակազմությամբ և մեծ արիությամբ, նրանք փախչել չգիտեն և նրանցից ոչ ոք չի փախչում, թշնամու դեմ շուռ գալուց պիտի կամ սպանի կամ ապան-

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 368:

² «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 145, ծանոթագրություն 97:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, առաջաբան, էջ 13:

վի... Ես մարդկանցից լսել եմ, որոնք տեսել են ռուսներին, նրանց քաջագործությունների վերաբերյալ զարմանալի պատմություններ»¹: Եվ ապա. «Բարդայում ռուսները ձգտում են տեղացիների հետ համերաշխություն ստեղծել: Իբն-Միսկավկյեր գրում է, որ ռուսները, քաղաք մտնելով, բնակչությանը հայտարարում են. «մեզ վրա պարտականություն է ընկնում լավ վերաբերվել ձեր նկատմամբ, իսկ ձեզ վրա՝ լավ հնազանդվել»²:

Սակայն շուտով մարզպան իբն-Մուհամմեդը 30-հազարանոց բանակով սկսում է շրջափակել Բարդան, որտեղ ամրացել էին ռուսները: Քաղաքի գրավումը հաջողությամբ չի պսակվում: Ռուսները կանխում են հարձակումը, բայց և այնպես քաղաքում մնալ չեն կարողանում:

Արաբ հեղինակ Իբն ալ-Խակիհին հանդիպելով պարտավցիներից մեկին տեղեկություն է խնդրում քաղաքի մասին, որը տեղեկացնում է, որ «քաղաքը գտնվում է շատ ավերյալ վիճակում, բնակիչների թիվը շատ է պակասել, հավասարվել է մի գյուղի բնակչությանը: Թշվառությունը հայտնապես երևում է, շենքերը կործանված են»³:

Առևտրի գործում դեր խաղացած Հայոց Աղվանքի քաղաքներից էին նաև Փայտակարանը, որը արաբներն անվանում են Բայյական կամ Բելոկան: Բերզանջը կամ Բարզանջը, որը գտնվում է Պարտավից ոչ հեռու, Կուր գետի ափին⁴, իսկ արաբական աղբյուրները հաղորդում են. «Բարզանջ. մի քաղաք է Առանի մարզի մեջ. նրա և Բարդաայի միջև հեռավորությունը 13 փարսախ է՝ դեպի Բաբ-ալ-Աբվաբ տանող ճանապարհի վրա: Բարզանջում՝ Կուրի վրա կա մի կամուրջ, որի վրայով գնում են դեպի Շիրվանի Շամախի քաղաքը»⁵: Եվ ապա. «Բարզանջ – գտնվում է այժմյան Զարդոբ գյուղի մոտ»⁶: Արաբական աղբյուրներում այնուհետև նշվում է Մատրիսը, որը Պարտավից 20 փարսախ հեռավորության վրա էր գտնվում՝ Առանի Մատրիս փոքր

¹ «Աղբբեջանի պատմություն» (ռուսերեն), 1958թ., Բաքու, էջ 131:

² Նույն տեղը:

³ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 36:

⁴ Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 369:

⁵ «Արաբական աղբյուրները...», էջ 37:

⁶ Նույն տեղը, էջ 146, ծանոթագրություն 98:

քաղաքը¹: Նույն գրքի 310-րդ ծանոթագրությունում ասված է. «Մատրիս-Դվինից Պարտավ տանող ճանապարհի վրա, Դումիսից 12 փարսախ կամ 69 կիլոմետր հեռու: Ըստ ակադեմիկոս Մանանդյանի, պետք է կարդալ... Հատրիս, սկզբնական... տառերի շփոթությունն ուղղելով, և սա կլինի ճշտվի Հաթիրք գավառի անունը, որի մեջ գտնվում էր արաբական այս կայանը»²:

Պարտավի մոտ եղել է նաև Առանի Լասուք քաղաքը³:

Կար նաև Կարկառ անունով քաղաք «Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի կողմից»⁴: Եվ ապա. «Կարկառը գտնվում է այժմ Կարկառ-չայի գետի վրա՝ Դաշտային Ղարաբաղում: Հայ մատենագիրների «Կառկառացուց» դաշտավայրը»⁵:

Նույն աղբյուրների հաղորդմամբ կամ Իբն ալ-Աթիրի վկայությամբ Կարկառում Քարքար անունով բերդ կար նաև Մալաթիայի մոտ, Սամոսաթի և Հիսն Զիադի միջև, որն այժմ ավերված է⁶: Այս Կարկառը «Եփրատյան սահմանի կարևոր ամրություններից է: Քարաբլրի վրա շինված է, այժմ՝ Կեր-կեր-քալասի: Քաղաքը հայերով բնակեցված էր XII դարի սկզբից և ավելի առաջ էլ: Կարկառի իշխանը Միքայելն էր»⁷:

Կարևոր տեղեկությունների ենք հանդիպում նաև արաբ աշխարհագիր Յակուտ Աբու Աբդալլահ Շահաբադդինի կամ Յակուտ ալ-Համավու (1178–1229 թ.թ.) «Քիթաբ մուջամ ալ-Բուլդան» («Աշխարհագրական բառագիրք») գրքում: Նա ծնվել է Փոքր Ասիայում՝ հունական ընտանիքում, մանուկ հասակում գերվել արաբներին և տարվել Բաղդադ ու վաճառվել Համա քաղաքից մի վաճառականի, որը կոչվում էր Ասկար իբն Իբրահիմ ալ-Համավի: Այդ պատճառով էլ Յակուտը կոչվում է նաև «ար-Ռումի» (հույն), «ալ-Համավի» (Համագի՝ իր տիրոջ ծննդավայրի անունով) և «ալ-Բաղդադի» (բաղդադցի՝ այնտեղ բնակվելու հա-

¹ Նույն տեղը, էջ 107:

² «Արաբական աղբյուրներ...», էջ 196, տես նաև Հ. Մանանդյան, «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 200:

³ Տես նույն տեղը, էջ 106:

⁴ Տես նույն տեղը, էջ 103:

⁵ Տես նույն տեղը, էջ 103, ծանոթագրություն 292:

⁶ Տես նույն տեղը, էջ 103:

⁷ Տես նույն տեղը, էջ 194, ծանոթագրություն 292:

մար): Նրա մատնանշված գրքում կարդում ենք. «Առան-պարսկերեն անունն է ընդարձակ նահանգի, որ բազմաթիվ քաղաքներ ունի: Դրանցից է Ջանգան (Գանձակը), ժողովրդի կողմից Քանջա է կոչվում, Պարտավը, Շամքորը և Բայաքանը»¹: Այնուհետև նշվում է, որ Շամքորը «մի բերդ է Աղվանքում. նրա ու Գանձակի միջև հեռավորությունը մի օրվա ճանապարհ կամ տասնմեկ փարսախ կլինի»²: Եվ ապա. «Շամքոր – կուր գետից հարավ՝ Շամքոր գետի ստորին հոսանքի վրա: Ըստ հովհաննես կաթողիկոսի, Շամքորը Ուտիք գավառի մասն էր կազմում և գտնվում էր նրա արևելյան ծայրամասում: Աղվանից այս քաղաքը խազարները քանդել էին իրենց արշավանքների ժամանակ»³:

Ետ գնալով նշենք, որ Արշակունյաց թագավորության 66–114 թվականների խաղաղությունը նպաստում է ոչ միայն Արցախի գյուղատնտեսության զարգացմանը, այլև արհեստագործության ու առևտրի ծավալմանը: Ներքին առևտուրը մինչև նրորդ դարը ապրանքափոխանակության բնույթ ուներ, որը բացատրվում էր բնական տնտեսության ձևով: «Գյուղացի ընտանիքն իր սեփական միջոցներով իր տանը պատրաստում էր այն ամենը, ինչ հարկավոր էր նրա կյանքում: Նա ոչ միայն նրկրագործ էր, այլև արհեստավոր: ...Վաճառականություն համարյա զոյություն չուներ, շրջանառության մեջ գտնվող փողի քանակությունը շատ աննշան էր»⁴: Նման իրավիճակը հետևանք էր այն բանի, որ Արտաշեսյանների անկումից հետո, հայկական դրամների թողարկումը կանգ է առնում: Հռոմի նվաճողական քաղաքականությունը Օգոստոս Օկտավիանոսի իշխանության տարիներին հիմնովին վերացնում է հայաստանում դրամների ազգային պատկերատիպը: Սակայն Տիգրան Բ-ի և հելլենիստական այլ իշխողների դրամների շրջանառությունը լրիվ վերացված չէր: Բայց հնավուրց այդ դրամները, ինչպես նաև հռոմի հանրապետական դրամները հետզհետե սպառվում են և հռոմի կայսերական դրամներն են, որ լայն ասպարեզ են գտնում հայկական շու-

¹ «Արաբական աղբյուրներ...», էջ 12, 68–69, տես նաև Յակուտի ալ-Համավի, նշված գիրքը, էջ 196, 776:

² «Արաբական աղբյուրներ...», էջ 85:

³ Նույն տեղը, էջ 182, ծանոթագրություն 249:

⁴ Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 8:

կաներում: Հիմնական դրամային միավորը հռոմեական արծաթ դրամն էր, որը կոչվում էր դենար (տասանոց): Հռոմը Արևելքում հետապնդում էր ոչ միայն կայսրության սահմանները ապահովելու խնդիրը, այլև անմիջական, պարթևների պետությունը շրջանցող առևտրական կապեր ստեղծելու Միջինասիական քաղաքների հետ: Սակայն Հայաստանը և նրա Արցախ նահանգը միայն միջազգային տարանցիկ առևտրի կամրջի դեր չէին խաղում: Արցախը հարուստ էր իր սեփական արտադրությունով, ուստի զարգանում էր առաջին հերթին ներքին առևտուրը, որի մեջ, ինչպես տեսանք, ներգրավվել էին վերը մատնանշված գրեթե բոլոր քաղաքները:

«Հայկական ՍՍՀ տարածության վրա պարզապես հազիվ թե գտնվի մի շրջան, ուր այս դրամներից գտնված չլինեն: Նույնը վերաբերում է Վրաստանին և Ադվանքին»¹, ասել է թե նաև Արցախին: Այդ դրամները արցախյան շուկաներն են թափանցել միջազգային առևտրի ուղիներով, որոնցից զուրկ չէր նաև հայկական այդ նահանգը: Երրորդ դարից սկսած արտաքին առևտրի համար կարևոր դեր էր խաղում Արարատ-Սևան-Թարթառ-Կուր միջազգային տարանցիկ ճանապարհը: «Միրիայից ու Միջագետքից, Եփրատի ու Տիգրիսի վրայով ապրանքափոխանակությունը բերում էր նրանց Արաքսի հովիտը և այնուհետև Քուշի ավազանով մղում դեպի Վրաստան ու Ադվանք»²:

Վաղ կայսերական դրամներից բացի, Արցախ մուտք են գործում նաև պարթևական դրամներ, հատկապես Վոնոն Ա-ի, իսկ հետագայում՝ Վարդան Ա-ի (41–45 թ.թ.), Գոտարզ Բ-ի (41–45 թ.թ.), Վաղարշ Ա-ի (51–75 թ.թ.) պղնձյա դրամները, Ներոնի շքադրամները և այլն: Պարթևական դրամների բացարձակ տիրապետությունը Հայաստանի դրամային տնտեսության մեջ դիտվում է նրկրորդ դարում: Իսկ այդ դարի կեսից մինչև երրորդ դարի առաջին քառորդը Հայաստանն ու Արցախը մենք տեսնում ենք հռոմեական դրամներով կատարվող ապրանքափոխանակության ոլորտում:

¹ «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1971թ., հատոր 1, էջ 815:

² «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 1, Երևան, 1971թ., էջ 815:

Երկրորդ դարի վերջերից ծագում են Հայոց մայրաքաղաք Արտաշատի պղնձյա դրամները, բայց դրանք քաղաքային շրջանառության ներքին ոլորտներից հենու չեն տարածվում:

Երրորդ դարի առաջին կեսին թուլանում է հռոմեական դրամների հոսքը Հայաստան ու Արցախ աշխարհի և սկսվում է Իրանում ծագած Սասանյան հարստության դրամների շրջանառությունը, դրամներ, որոնց վիճակված էր մինչև յոթերորդ դարը տիրապետող դառնալ ողջ Հայաստանի և հարևան երկրների դրամաշրջանառության մեջ:

Վերը մատնանշված ճանապարհներով Արցախից գլխավորապես արտահանվում էին մետաքս ու մետաքսյա գործվածքներ, «իսկ Աղվանից աշխարհը տալիս էր նույնպես բազմահեղյակ կարմիր ներկ-տորոնը, որ արտահանվում է մինչև Հնդկաստան»¹:

Առևտրի մեջ մեծ տեղ էր գրավում անասունների վաճառքը: Իբն Հաուկալի վկայությամբ Կուր-Սերե կոչված անասնավաճառության մեծ շուկայում անհատներ կային, որ հարյուր հազարից երկու հարյուր հազար, նույնիսկ մեկ միլիոն ոչխար էին ծախում: «Այս ահագին քանակությունները, իհարկե, հավաքվում էին ուրիշ, ավելի փոքր վաճառականներից և ծախվում էին հեռավոր աշխարհների վաճառականներին»²:

Նկատենք, որ VI դարում առաջադիմում էր նաև Սյունիքը, որին նպաստում էր Նախիջևան-Վարդանակերտ-Փայտակարան մայրուղով կատարվող տարանցիկ առևտուրը, որում գործուն մասնակցություն ուներ Արցախը, որտեղ արտադրվում էր նաև մեծ քանակությամբ քարախունկ: Առևտրի և արհեստների աշխուժացման շնորհիվ V դարի վերջին քառորդում Արցախը սկսեց տնտեսական վերելք ապրել, որը կշարունակվեր ավելի երկար, եթե այնտեղ չմոլեցնեին պարսկական սատրապները: Արցախն ու Գարդմանը համեմատաբար բարգավաճման շրջան են ապրում Ջվանշիր իշխանի ժամանակ: Մ. Կաղանկատվացու հաղորդմամբ Կուր գետի «շուրջը գտնվող դաշտերից ստացվում են առատ հաց ու գինի, նավթ ու աղ, մետաքս ու բամբակ. այնտեղ աճում են անբավ ձիթենիներ, իսկ լեռներից պեղվում են ոսկի,

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 370:

² Նույն տեղը:

արծաթ, պղինձ և դեղնախուսկ: Վայրի կենդանիներից կան առյուծ, ինձ, հովազ, վայրի էշ, իսկ բազմաթիվ թռչուններից՝ արծիվներ, բազեններ և սրանց նման ուրիշներ»¹:

Արցախում շահագործվող խավերից էր արհեստավորությունը: Վաղ ֆեոդալիզմի շրջանում զարգանում էր արհեստագործությունը, որը հանդիսանում էր գյուղատնտեսության օժանդակ ճյուղը: Արհեստների ճյուղերից զարգացման նշանակալից աստիճանի էր հասել հատկապես զինագործությունը: Օտարագզի նվաճողների դեմ անընդհատ մղվող կռիվների ընթացքում ստեղծվում ու կատարելագործվում են զենքի շատ տեսակներ: Արցախի շատ գյուղերում I–IX դարերում տարբեր արհեստների անուններով տոհմեր գոյություն ունեին՝ երկաթագործներ կամ դամուրչունք (Աղջկաբերդում, Հացիում և այլուր), դերձակներ կամ դարզունք (դարգի, Ղարաբաղի բարբառով նշանակում է դերձակ), կոշկակարներ, փականագործներ, դարբիններ, պայտառներ և այլն:

Արցախի ճարտարապետական հարուստ կոթողները վկայում են շինարարական արվեստի հետ կապված արհեստանոցների բարձր աստիճանի զարգացման մասին: Դարի հայ մատենագիր Մ. Կաղանկատվացին հիացած էր Արցախի մետաղահանքերի և պատման քարերի առատությամբ: Արցախում լեռնարդյունահանող արդյունաբերության առկայությունը խթանում էր մետաղամշակությունը: Նահանգում մեծ թվով վարպետ-արհեստավորներ կային, որոնք հմտացել էին հատկապես ոսկու, արծաթի և պղնձի մշակման գործում: Հայոց Աղվանքի մաս Արցախի VII դարի բարեբեր և շինարար քաղաքականությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ չնայած հարկահանության բազմատեսակությանը, երկիրը առժամանակ արաբների և քյուզանդացիների մրցակցության տեսադաշտից դուրս էր մնացել: Մուավիան Բյուզանդիայի դեմ կռվելու թատերաբեմ էր դարձրել Փոքր Ասիայի կոստանդնուպոլսյան ուղղությունները, որի հետևանքով Հայաստանը դադարել էր մարտադաշտ լինելուց: Իսկ երբ Մուավիան 680 թվականին մահանում է, Հայոց

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 6:

Աղվանքը Հայաստանի ու Վրաստանի հետ միասին նույնիսկ դադարում է հարկ վճարելուց¹:

Յոթերորդ դարը Հայաստանի, ընդ որում նաև Հայոց Աղվանքի պատմության մեջ «առանձնահատուկ տեղ ունի, որը դժբախտաբար մեր պատմագրության մեջ արժանի արտացոլում չի գտել: Արշակունյաց թագավորության կործանումից հետո սա մի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանը քաղաքական, տնտեսական և մշակութային ասպարեզներում այնպիսի բարգավաճման հասավ, որ ընդհուպ մոտեցավ անկախ թագավորության»²:

¹ Տես Ղևոնդ, նր. 15, Լեո, «Երկնրի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 320:

² Լեո, «Երկնրի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 734, ծանոթագրություն 77:

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԱՐՅԱԽՈՒՄ

Արցախի հայերը ևս շատ հին մշակույթ ունեին, որն ավելի բարձր աստիճանի էր հասել, քան Մերձավոր Արևելքում տարածվել էր հելլենիզմը: Դեռևս Արտաշեսյան թագավորության ժամանակ Արցախում սկսում են զբաղվել գիտության, գրականության և արվեստի որոշ ճյուղերով: Արցախի հայերի մտածելակերպն ու ըմբռումներն ավելի բնորոշ կերպով դրսևորվում են նրանց պաշտամունքի մեջ: Այժմյան Լեռնային Ղարաբաղում (ԼՂՀ) բազմաթիվ վանքերի, եկեղեցիների և խաչքարերի առկայությունը ցույց է տալիս, որ նրա բնակչությունը վաղուց կրել է կրոնական ավանդույթներ: Պատմական Արցախը հարուստ էր սրբավայրերով, ավերված կամ կիսավեր մեծաստան-եկեղեցիներով ու հին կրակապաշտական օջախներով, որոնց թիվը ԼՂՀ-ում հասնում է մի քանի հարյուրի:

Արցախ-Խաչեն-Ղարաբաղում պահպանված սրբավայրերը կրում են նաև նախաքրիստոնեական բնույթ: Ղարաբաղում նախաքրիստոնեական հավատալիքները խոր արմատներ են ունեցել, որոնք քրիստոնեական եկեղեցին անգործ եղավ միանգամից խարխալելու: Գեղջկական խավերի մեջ նախաքրիստոնեական գաղափարախոսությունն ավելի ուժեղ է արտահայտվում սրբավայրերի, նրանց հետ կապվող հավատալիքների ու ծեսերի միջոցով:

Սրբավայրերն ու սրբազան ծեսերը կապված են կոնկրետ ժամանակաշրջանի հոգևոր կյանքի ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ, որոնք արտացոլվում են նրանց վերաբերող ժողովրդական բանավոր ստեղծագործություններում (ավանդություններ, ավանդական գրույցներ, մաղթանքներ, երգումներ, անեծքներ և այլն): Հավատացյալները նրանց հետ կապում էին մեծ հույսեր ու ակնկալիքներ (ապաքինում զանազան ախտերից, հաղթանակ պատերազմում, հորդ անձրևներ, առատ բերք և այլն):

Ի դեպ նշենք, որ հայկական բնակավայրերում պահպանված սրբավայրերն ու ուխտատեղիները սովորաբար կրում էին ժամանակի նշանավոր դեմքերի, պետական կամ կրոնական

խոշոր գործիչների, շատ դեպքերում էլ օտարերկրյա բռնակալության դեմ պայքար կազմակերպող և այդ պայքարում հերոսացած մարդկանց անունները: Դժբախտաբար մոռացվել են այդ կարգի բարի շատ ավանդություններ ու գրույցներ:

Հասկապես միջին դարերում Արցախում լայն տարածում է ստանում հասարակական կյանքում որոշակի դեր խաղացած մարդկանց սրբագործումն ու պաշտամունքը, որոնց անուններով բազմաթիվ սրբավայրեր են կառուցվել նահանգի տարբեր գյուղերում: Դրանք ամենից առաջ կրոնական գործիչներ են, որոնց հետ կապված սրբավայրեր կան ԼՂՀ այժմյան Մարտունու համայնքի Մաճկալաշեն («Ամարաս»), Մարտակերտի համայնքի Առաջածոր («Ծյապուն ծորի ելսժեն»), Ներքին Սրզնեք և Բալլուջա («Սպիտակ Սուրբ Վաննսր») և այլն: Ազատագրական շարժման մարտիկների ու զորավարների հետ կապված սրբավայրերի կարելի է հանդիպել Արցախ-Խաչեն-Ղարաբաղի գրեթե բոլոր գյուղերում, որոնց մեծ մասը անանուն են և կոչվում են «Նրհատակ» կամ «Նահատակ»: Նրանցից երկուսը մինչ օրս պահպանվում են ԼՂՀ Մարտունու համայնքի Աղջկաբերդ (Կրզկալա կամ Ղզղալա), այժմ՝ Բերդաշեն գյուղում («Մեծ նահատակը» և «Փոքր նահատակը»): Քիչ չեն անուններ հիշատակող սրբավայրերը («Ճոխտակ խաչ»-ը Խանցքում, «Սուրբ Սարիբեկ»-ը Դաշուշենում, «Մռավա սուրբ»-ը նույնանուն սարի վրա և այլն): Սրբավայրերի մի մասը կառուցվել են պատմական կարևոր դեպքերի կապակցությամբ և ունեն իրական հիմք, որոնք, ժամանակի ընթացքում ընդունելով տարբեր հավատալիքներ ու առասպելներ, ստացել են իրենց վերջնական- կրոնական տեսքն ու բովանդակությունը և այդ վիճակում էլ հասել մեր օրերը: Օրինակ, ավանդաբար պատմում են, որ Դաշբուլաղ գյուղի «Ճոխտակ խաչ» սրբավայրը երկու քաջամարտիկ զինվորի գերեզմանն է: Նրանց մի մասն էլ հիմնվել է գանազան երևակայական ու վերացական դեպքերի, ժողովրդական բանահյուսության մեջ գոյություն ունեցող կիսաառասպելական կերպարների առնչությամբ: Բարոյականություն, երախտագիտություն պարունակող այս ավանդույթը պահպանվեց նաև մեր օրերում՝ Արցախյան ազատամարտի հերոսները անմահացան տարբեր կոթողների, աղբյուրների տեսքով, որոնք այսօր հիրավի սրբատեղի են դարձել (օրինակ, Մոն-

թնի աղբյուրը ԼՂՀ Մարտունու համայնքում, և շատ ու շատ այլ հերոսների հիշատակումներ):

Փոքր Ասիայում ամենից վաղ տարածում գտած քրիստոնեությունը հետևորդներ է գտնում նաև Արցախում՝ դեռևս մ.թ. առաջին դարի երկրորդ կեսին: Մ. Կաղանկատվացու երկի Ա գրքի Զ գլխում («Տեղեկություն՝ մեզ՝ արևելցիներին, մեր աստծու երևալու մասին, ճշմարիտ պատմություն») նշվում է, որ Թադևոս առաքյալի «աշակերտ սուրբ Եղիշան վերադառնում է Երուսաղեմ (Վասպուրականի Արտագ գավառից, – Է.Ս.) և պատմում է նրա (Թադևոսի, – Է.Ս.) առաքելակիցների սքանչելի նահատակությունը: Այնտեղ սուրբ հոգու ներշնչումով Եղիշան ձեռնադրվում է սուրբ Հակոբի՝ տիրոջ նղբոբ կողմից, որ Երուսաղեմի առաջին հայրապետն էր: Իր համար վիճակ ընտրելով արևելքը՝ Երուսաղեմից ճանապարհվում է Պարսկաստանի միջով, մտնում է մասքութների (այժմ անհետացած կովկասյան լեռնաբնակ ժողովուրդ, – Է.Ս.) մեջ՝ խուսափելով հայերից: Քարոզչությունն սկսում է Չողում (մասքութների Արշակունի թագավորության մայրաքաղաքը, որ գտնվում էր Բիլիջի երկաթուղային կայարանի մոտերքը, – Է.Ս.) և բազմաթիվ տեղերում՝ շատերին աշակերտ դարձնելով, ճանաչել է տալիս փրկությունը (քրիստոնեությունը):

Այնտեղից երեք աշակերտող մարդկանցով գալիս է Ուտի գավառի Սահառ քաղաքը (հավանաբար Կապադակը, – Է.Ս.): Նրանց անհավատ հարազատներից ոմանք հետապնդում են, և աշակերտողներից մեկը նրանց կողմից նահատակվում է: Իսկ մնացած երկուսը թողնում են երանելի Եղիշային և գնում են անօրեն մարդասպանների ետևից: Իսկ սուրբ հայրապետը, գալով Գիս (Ուտիքում, Կուրից հարավ, հավանաբար Պարտավից արևմուտք, – Է.Ս.), կառուցում է եկեղեցի և մատուցում է անարյուն պատարագ: Արևելցիների եկեղեցիների սկիզբը այս տեղում եղավ, որը դարձավ մայրաքաղաք և լուսավորության տեղ: Այնտեղից անցավ Ջերգունի դաշտակը (ԼՂՀ Մարտունու համայնքի արևելյան մասերում, – Է.Ս.), որը դիցամոլ կռապաշտների զոհագործումների տեղն էր: Այդտեղ էլ նահատակվեց: Ինչ-որ անհայտ է, թե ում կողմից կատարվեց այդ գործը: Եվ հենց այնտեղ մահապարտների մի փոսի մեջ նետվեց դիակը ու երկար ժամա-

նակ ծածկվեց այդ տեղում, որ կոչվում է Հոմենք (Դաշտային Ղարաբաղում կամ Արցախում, – Է.Ս.)»¹:

Այդպիսով, այս «Ճշմարիտ պատմություն»-ից դժվար չէ տեսնել, որ քրիստոնեությունը ամենից վաղ տարածվելու փորձ է կատարվում նաև Ուտիքում ու Արցախում, սակայն նախքան այստեղ տիրապետող դիրք գրավելը, այն պետք է դուրս մղեր հին հավատալիքներն ու հին հայկական հեթանոսական կրոնը: Մ. Կաղանկատվացու նրկում կարդում ենք. «Որովհետև Երանելի Եղիշան քրիստոնեության տարածումը սկսեց նրկրի ծայրամասից, ուստի լուսավորեց հյուսիս-արևելյան որոշ մասեր միայն և ոչ թե ամբողջը»²:

Օտար աղբյուրների կցկտուր տեղեկություններից պիտի եզրակացնել, որ արցախցիների հին հավատալիքներին բնորոշ են եղել բնության, նրա ուժերի և երևույթների երկրպագումը: Արցախում բնական տարերքներից ամենից շատ սրբագործվել է կայծակը: Կայծակահարված ծառերն ու քարերը սրբազան էին համարվում ու վերածվում սրբավայրերի, վերագրելով նրանց մոգական հատկություններ: Լեռնաշխարհում հայտնի սրբավայրեր են դարձել բազմաթիվ աղբյուրներ («Ծվարաճուր»-ը Հադրութում, «Ջնյրանբուլաղ»-ը ճարտարում, «Օխճ ախպուր»-ը Մարտակերտի Ջազիկ գյուղում, «Դավաչնչագր» Բալլուջայում), որոնք կապված են ջրի պաշտամունքի հետ: Սրբազան աղբյուրներ շատ են պահպանվել Ստեփանակերտի շուրջ, Հադրութում և Մարտակերտում (Շուշիքենդ, Դաշուշեն, Առաջաձոր, Առաքյուլ և այլն), որոնց հաճախ սրբազան ծառերի հետ միասին զարդարում են փալասներով, կպցնում պայտեր ու մեխեր: Այդ ձևով նրանք ներկայացվում են իբրև գոհաբերության սիմվոլներ և ջրի ու մետաղների սիմվոլիկ պաշտամունքներ:

Մինչև չորրորդ դարը արցախցիների կրոնը եղել է հեթանոսությունը, ավելի ճիշտ, կրակապաշտությունը, որի սիմվոլը արեգակն էր: Արցախցիների գլխավոր աստվածը ևս Արամազդն էր՝ երկիր ու երկինք ստեղծողը, մարդկանց արիություն ու բարեկեցություն պարգևողը: Մյուս աստվածը, որի պաշտամունքը նույն-

¹ Մ. Կաղանկատվացի, «Պատմություն Աղվանից աշխարհի», Երևան, 1969թ., էջ 6–7:

² Նույն տեղը, էջ 10:

պևս տարածված էր Արցախի հայության մեջ, Անահիտն էր՝ Արամազդի դուստրը, բերրիության և բարերարության աստվածուհին: Տարածված էր նաև Վահագն Վիշապաքաղի՝ քաջության և ռազմի, Աստղիկի՝ գեղեցկության և սիրո, Տիրի՝ դպրության, գրի ու գրականության աստվածների պաշտամունքը:

Ֆետիշիզմը հեթանոս արցախցիների մոտ հիմնականում արտացոլել է բնության կույր ուժերի կողմից ճնշված մարդու սնապաշտ երկյուղը, գերբնական օգնություն ու պաշտպանություն ստանալու հույսը: Ֆետիշներ են եղել անզգա իրերը, որոնք պատրանք են ստեղծել, թե իբր կարող են փոխել իրենց բնական հատկությունները միայն նրա համար, որպեսզի ապահովեն քմահաճույքները, կենսական պահանջումները: Նշվեց, որ ինչպես բոլոր հեթանոս հայերի, այնպես էլ արցախցիների համար ֆետիշ է եղել Արեգակը: Այստեղ ավելացնենք, որ այդպիսին էին նաև Լուսինը, աստղերը: Մինչև օրս էլ Ղարաբաղում հանդիպում ենք «արևիդ մեռնեմ», «արևդ սիրեմ», «արևդ վկա» արտահայտությունների, որոնք համապատասխանում են «աստված վկա», «աստված սիրես» երդումներին: Արևի պաշտամունքը խորհրդանշող սրբավայրերի հետքեր են մնացել ԼՂՀ առանձին գյուղերում (Քերթ, Դաշուշեն, Առաքյուլ և այլն): Ֆետիշներ էին նաև առանձին տեղամասեր, անտառներ ու կենդանիներ և այլն: Սրբազան կենդանիների կամ տոտեմների (արջ, եղնիկ, եզ, ոչխար և այլն) պաշտամունքը խորհրդանշող սրբավայրեր են պահպանվել Ուլուբաբ, Դաշբուլաղ, Տումի և այլ գյուղերում:

Բացի ֆետիշներից արցախցիներին բնորոշ են եղել որոշ մոզական հավատամքներ: Մոզական արարողություններով զբաղվել են կախարդ-քուրմերը:

Հեթանոս արցախցիների մոտ լայն տարածում են ունեցել անիմիստական հավատալիքները՝ հոգևպաշտությունը, չար և բարի հոգիների, սատանաների և հրեշտակների, մարդկային հոգու և նրա հետմահու գոյության մասին հավատը:

Հին հայկական բազմատեսակ հավատալիքներն անցել են զարգացման երկար ուղի՝ չափազանց հասարակ հավատալիքներից մինչև բազմաստվածությանը բնորոշ կրոնական բարդ պատկերացումներ, որոնք հեթանոս արցախցիների գիտակցության մեջ ևս գցել են խոր արմատներ: Հետևաբար քրիստոնեությանը բավականին ժամանակ էր պետք, որպեսզի իր դիրքերն

ամրապնդեր հայկական հողում, դուրս մղեր հեթանոսական հավատալիքները և դառնար միակ իշխող կրոնը:

Արցախում քրիստոնեության տարածման փորձերի մասին Մ. Կաղանկատվացու նրկի հաղորդումները մեջ բերվեցին վերը: Այդ հաղորդումներում տեսանք, որ հեթանոս արցախցիների մեջ այնքան էլ հեշտ չէր նոր կրոնի տարածումը: Միայն ավելացնենք, որ մինչև VI դարը եկեղեցիները վանքերի վերածելու փորձեր էին կատարում, որի վկայությունը Վաչագան Բարեպաշտի միջոցառումներն էին: Քրիստոնեությունը տարածելու նպատակով Բարեպաշտը մի չափազանց մեծ տննչ ունեւր՝ գտնել սրբերի մատուցները, հատկապես «սուրբ մանուկ Գրիգորիսի մատուցները»¹: Եվ գտավ: Այդ նպատակով նա կանչում է Ամարասի վանական քահանային և հարցնում. «որևէ նշան կա՞ եկեղեցու մոտ մեկնումեկի գերեզմանի վրա, թե ոչ»²: Քահանան պատասխանում է, «այժմ եկեղեցու շուրջը շատ գերեզմաններ կան. որովհետև ավագակների արշավանքների պատճառով ու եկեղեցու կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպիսին, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր»³: Նկատենք, որ քահանայի այս անուղղակի պատասխանը (հարցին ուղղակիորեն չվերաբերող պատասխանը), հավաստի տեղեկություն է Ամարասի եկեղեցին Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրվելու և նրա մեծության մասին: Եկեղեցու մոտ եղած գերեզմանների վրա որևէ նշան լինելու վերաբերյալ հարցին բացասական պատասխան ստանալով, Բարեպաշտը դիմում է այլ մեթոդների: Նա իր իշխանության տակ գտնվող քահանաներին, սարկավագներին ու եկեղեցու ամբողջ միաբանությանը հրավիրում է իր սեփական աթոռանիստ Դյուտական կամ Գյուտական գյուղը, որտեղ «ներք օր փառավոր կերպով տոնեցին սրբերի հիշատակը: ...Նա գտավ Գրիգորիսի, չափազանց հռչակված Հռիփսիմնի ու Գայաննի ամենասուրբ մատուցները, որ գտնվում էին Արցախ գավառի Դարահոջ գյուղում»⁴:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 48:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը, էջ 49:

Նկատենք, որ Դյուտականը Արցախի Ջրաբերդ գավառում էր գտնվում՝ Թարթառ գետի ափին, Թալիշ և Մադադիս գյուղերի միջև: Այժմ այն ավերակ է¹: Հ. Առաքելյանը գրում է. «Դյուտական կամ Դիթական-գյուղ Արցախի Ջրաբերդ գ. մեջ, ուր Ադուանից Վաչագան թագաւորը շինել էր մի եկեղեցի և մէջն դրել ս. Գրիգորիսի մասունքները: Այս գիւղը եղել է Ադուանից կաթողիկոսների ամառանոց և այդտեղ Վաչագան թագաւորը շինել էր նաև մի վարժարան, ուր հաւաքվելով դիթերի, քրմերի և մատնահատ աղանդաւորների մանուկները, կրթել էր տալիս նրանց քրիստոնէական կրօնի մէջ. այժմ (1915 թվականին, – Ը.Ս.) գիւղի ավերակները կան»²: Նույն գյուղի մասին Ս. Ջալալյանը գրում է. «Հնդի ի կաղանկատուայ երեք մղոնաւ դեպ յարևմուտս հարաւոյ յեզր Թարթառ գետոյ շրջապատն թաւաթուփ անտառ և մազառապատ, ի վերն ունի գիտքր բլուր , յորոյ վերայ է եկեղեցին, գոր կառոյց արքայն Ադուանից Վաչական և ամփոփեաց ի նմա զոսկերս սրբոյն Գրիգորիս»³:

Այդպիսով, քանի որ Կաղանկատույքը Ուտիքի եզրին էր, ապա Դյուտականը կամ Դիթականը նրանից երեք մղոն (ավելի քան 20 կմ) դեպի արևմուտք գտնվելու պարագայում կլինի Արցախում: Դյուտականից Բարեպաշտը մեկնում է Արաժան գյուղը, որը Ամարասի մոտերքը գտնվող Արցախի բնակավայրերից մեկն էր⁴: Արաժանից Վաչագանը «կիր պալատական քահանա Մանասեին... ուղարկեց Ամարաս»⁵: Սուրբ Գրիգորիսի մասունքները հայտնաբերվում են, որի պատճառով Վաչագանը ուղևորվում է Ամարաս: «Հասնելով Բարվեճ փոքրիկ գյուղը (Ամարասի մոտ, – Ը.Ս.)՝ կատարեցին գիշերային ժամերգությունը»⁶: Բարվեճից Վաչագանը գնում է Ամարաս և հրամայում «մասունքները լվանալ, արևին տալ գետնին փռված վառի վրա»⁷: Ապա նա «հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել, շտապ

¹ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 279, ծանոթագրություն 98:

² Հ. Առաքելյան, «Հանրագիտարան-բառարան», Թիֆլիս, տպարան «Էսոլսա», 1915 թ., էջ 519:

³ Ս. Ջալալյան, «Ճանապարհորդություն...», էջ 348:

⁴ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 279, ծանոթագրություն 102:

⁵ Նույն տեղը, էջ 52:

⁶ Նույն տեղը, էջ 53:

⁷ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 59:

ավարտել ու անվանել սուրբ Գրիգորիսի մատուռ»¹: Վաչագանի համբավն ավելի մեծացավ: Նրա մասին այնպիսի գովեստներ էին հնչում, ինչպես Կոստանդին կայսրի, Տրդատ Արշակունու և ուրիշների մասին: Այդպիսով, «Ե դարում Աղվանից թագավոր Վաչագան Գ. Ամարասում պտրել և գտել է Ս. Գրիգորիսի մատուները և նորից ամփոփելով, վերանորոգել տաճարը»²: Հ. Առաքելյանի «Հանրագիտարան-բառարան»-ում տեղ գտած «Վաչական Գ թագավորը 489-ին...»³ վերակառուցում է նաև Ամարասի վանքը հաղորդումը հիմք ընդունելու դեպքում, ճշտվում է նաև սրբերի մատուների հայտնաբերման տարեթիվը:

Չորրորդ դարից հետո ևս Արցախում կառուցվում էին նոր վանքեր: ԼՂՀ Մարտակերտի համայնքի Հյուրենկի (Հոռենկա, Գլխ) վանքը կառուցվել է V դարում⁴: Նույն ժամանակաշրջանի հուշարձան է Մարտունու համայնքի Հացի գյուղի վանքը, որը կառուցված է գյուղից դեպի հյուսիս երկու կիլոմետրի վրա՝ Ադդամ տանող ճանապարհի ձախ կողմը՝ բլրաբերդի վրա: Նրա շուրջը կան հինգ հանգստարաններ: Ըստ ավանդության Հացի գյուղը հիմնադրել են Հլեման և Ղազի պապերը: Ընդ որում Հլեմանն իբր այդտեղ է ժամանել անհայտ տեղից՝ Ղազի պապից մեկ տարի առաջ: Իսկ Ղազին այդտեղ է տեղափոխվում Ջրաբերդից: Այնուհետև իբրև Հացի են տեղափոխվում Անտոնյանները և Դամուրչունք (երկաթագործները): Անտոնյանները իբր գաղթել են Տոնավարգ (այժմյան Կարմիր) գյուղից՝ Հացի գյուղը հիմնադրվելուց շուրջ 120 տարի հետո: Իսկ թե՛ Հլեման պապը երբ է հիմնադրում Հացի գյուղը, մեզ անհայտ է մնում, պատմությունը լռում է այդ մասին: Սակայն այդ գյուղը պետք է որ հիմնադրված լինի V դարից էլ շատ առաջ, քանի որ այդ ժամանակ, ինչպես նշվեց, այդտեղ կառուցվում է Արցախի ամենահին վանքերից մեկը: Հացի գյուղը իր մրգատու այգիներով, բուժիչ հատկությամբ

¹ Նույն տեղը, էջ 60:

² «Ազգագրական հանդես», գիրք Բ, Թիֆլիս, 1897 թ., էջ 7:

³ Հ. Առաքելյան, «Հանրագիտարան-բառարան», Թիֆլիս, 1915 թ., էջ 75:

⁴ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 278, ծանոթագրություն 73, էջ 285, ծանոթագրություն 191:

սառնորակ աղբյուրներով, մաքուր օդով և բնության այլ հրաշալիքներով հիանալի տպավորություն է թողնում այցելուների վրա:

Ինչպես նշվեց, այդ և Արցախ-Խաչեն-Ղարաբաղում պահպանված ուրիշ շատ սրբավայրեր կրում են նախաքրիստոնեական բնույթ: Տումի գյուղի մոտ եղած սրբազան կենդանիների կամ տոտեմների պաշտամունքը խորհրդանշող սրբավայրը այն բանի ապացույցն է, որ նրա բնակչությունը ևս ժամանակին կաշկանդված է եղել նախաքրիստոնեական կրոնական կապանքներով:

Ինչ վերաբերում է գիր ու գրականությանը, ապա մինչև IV դարը եղած հայատառ նյութերի մասին ճշգրիտ տեղեկություն մենք չունենք: Մինչ այդ հիմնված դպրոցներում ուսուցումը տարվում էր հունարեն կամ ասորերեն լեզուներով: Սակայն ճիշտ է նկատում պրոֆ. Ա. Աբրահամյանը նշելով, որ «մի ժողովուրդ, որ ստեղծել է դպրության աստված, նա, անկասկած, ունեցել է դպրություն: Հայ ժողովուրդը ծովի աստված չի ստեղծել. ինչո՞ւ, որովհետև ծով չի ունեցել: Անկարելի է, որ դպրության աստված ստեղծեին դպրության բացակայության պայմաններում»¹: Պրոֆ. Ա. Աբրահամյանի այս ճշմարիտ կարծիքները ամբողջովին վերաբերում են նաև Հայոց Աղվանքին ու նրա Արցախ նահանգին, որը հաստատվում է Մ. Կաղանկատվացու հետևյալ վկայություններով. «Տրտու գետի ափին գտնվող մատուռի վրա (683 թվականին, – Է.Ս.) հայտնաբերվել է երկու արծաթյա արկղ, որոնց վրա դրված էր կապարե կնիք, կնիքի վրա հաստահեղույս մեխներով մեխված էր մի ոսկեձույլ տախտակ, իսկ սրա վրա գրված էր ասորերեն ու հայերեն»²: Այդ արկղները այդտեղ տեղադրվել էին Մեսրոպ Մաշտոցի աշակերտների կողմից՝ չորրորդ դարում:

Քրիստոնեությունից առաջ, ինչպես հայկական մյուս նահանգներում, այնպես էլ Արցախում, եղել են բազմաթիվ քրմեր, որոնք ծիսակատարությունների համար ունեցել են իրենց համար անհրաժեշտ մեխյանական գրականություն: Հավանական է համարվում այն կարծիքը, որ հեթանոսության շրջանում Արցա-

¹ Ա. Աբրահամյան, «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում», պրակ 2, Երևան, 1959թ., էջ 152:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 161:

խում ևս գործածական գրությունը հիերոգլիֆ նշանագրերն են եղել: Քրիստոնեության մուտք գործելուց հետո, երբ անթույլատրելի է համարվում մեհյանական նշանագրեր գործածելը, մոտ մեկ դար օգտագործվում են հունարեն և ասորերեն տառանիշերը:

Ճիշտ է, քրիստոնեությունը պետական կրոն է դառնում, բայց հայ բնակչության նշանակալից մասի, ընդ որում նաև արցախյանների համար կրոն էր նորության բնույթ, որովհետև դեռ չէր ձևավորվել հայ եկեղեցու ծիսակատարությունների ու քարոզչական գործունեության համակարգը, սուրբ գրքի ընթերցումն ու ժամերգությունները շարունակվում էին կատարվել բերանացի՝ ժողովրդի համար անհասկանալի հունարեն և ասորերեն լեզուներով: Ազգային գրի ու գրականության բացակայությունը արգելք էր ոչ միայն այլ ազգերի քաղաքական ազդեցությունից պաշտպանվելու, այլև բնակչության վրա հայ եկեղեցու գաղափարական ազդեցությունը արմատավորելու համար: Այդ պատճառով էլ հայ եկեղեցու առջև կանգնում է հայ ազգային գիր ու գրականություն ստեղծելու պահանջը: Սակայն մենք բաժանում ենք այն կարծիքը, որ հինգերորդ դարի հայ հարուստ մատենագրությունը լերկ անապատում չէր կարող ստեղծվել: Եվ իրոք հայոց գիրն ու գրականությունն էր, որ օգնեց արցախյաններին պահպանելու իր մշակույթը, ավանդույթները՝ ուստի և իր գոյությունը:

Նշենք նաև, որ ուշագրավ է Աղվանից Եսվաղեն թագավորի խճանկար հուշարձանը հինգերորդ դարից՝ հայերեն արձանագրությամբ, որը հանվել է Երուսաղեմում գտնվող Պանդա վանքի փլատակներից: Ա.Շ. Մնացականյանը հեղինակի անունը կարդում է Եսվաղան, իսկ ժամանակին Գար. Հովսեփյանը կարդացել է՝ Ես վաղան ու այն հարցականով վերագրել VI–VII դարերին¹: Ըստ Հ.Յ. Տաշեանի այդ խճանկարը Ե. դարից է կամ առնվազը՝ VI սկզբներից²:

Բացառիկ արժեք ունեն VI դարում Աղվանից աշխարհում պեղված աղվանական սրբազան մատուռները տեղական՝ հայե-

¹ Տես նրա «Գրչութեան արունատը հին հայոց մեջ», մասն Գ, Վաղարշապատ, 1913թ., էջ 5:

² Տես նրա «Ակնարկ մը հայ հնագրութեն վրայ», Վիեննա, 1898թ., էջ 137:

րեն գրերով¹: Առավել բացառիկ են Երուսաղեմում գտնվող հայկական վանքերի պաշտոնական այն երկու ցուցակները, որոնք VII դարում կազմում է Անաստաս վարդապետը՝ ամփոփ նկարագրությամբ²: Հայկական այդ բոլոր վանքերում «ամենայն աստվածաշունչ և հոգնպատում պատուիրանք գոյր ի հայկեան լեզուս»³: Անաստաս վարդապետի այդ ցուցակներից օգտվել է նաև Աղվանից աշխարհին ժամանակակից հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին՝ ապացուցելով նրանց հավաստիությունը:

Մեծ արժեք ունեն հայերեն այն գրագրությունները, որոնք տեղի են ունեցել հայ գործիչների և Աղվանից աշխարհի Արշակունի թագավորներ Վաչե Բ-ի ու Վաչագան Գ-ի միջև: Դրանք են Հայոց Գյուտ կաթողիկոսի առ Վաչե Բ. ուղղված նամակները⁴, «Հարցումն Վաչականայ արքային Աղուանից զՄատթեմ երեց գիտնաւոր»՝ էջ 94–96, «Երանելոյն Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչական Աղուանից արքայ թողոթ սակս ննջեցելոց»՝ էջ 96–97, «Սահմանադրութիւն կանոնական ի Վաչականայ Աղուանից արքայէ եղեալ ի ժողովն, որ յԱղուէնն եղև»՝ էջ 97–103 և այլն:

Ինչ վերաբերում է գրականությանը, ապա Մ. Կաղանկատվացու երկում նշվում է միայն յոթերորդ դարի գրող Դավթակի անունը: Մատենագիրը վկայում է, որ Ջվանշիրին սգալու ժամանակ «Դավթակ անունով ճարտասանի մեկը, որ վարժ ու հաջողակ, քերթողական ընթերցման մեջ առաջադեմ, մեջտեղ եկավ: Սա առատ խոսքերի պաճուճանքներով ճարտար կերպով երգում է և շատ լավ գովաբանում՝ ունենալով այնպիսի լեզու, ինչպիսին ունենում է արագագիր գրողը»⁵: Ահա այդ Դավթակն էր, որ Աղվանքում Ջվանշիրի «հանկարծահաս սպանության առթիվ օրհասական շշուկը տարածվելուց» հետո «սկսեց երգել այբբենական

¹ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 236, 247:

² Տես «Վասն վանորէից որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղեմ, ըստ նախնեաց մերոց», գաղղիարէն թարգմանութեամբ, Վենետիկ, 1896թ., էջ 5–13: Հ.Ս. Անայան, «Հայկական մատենագրություն», հատոր Ա, էջ 825–829:

³ Նույն «Վասն վանորէից...», էջ 11:

⁴ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 25–36:

⁵ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 176:

կարգով դասավորված» իր ողբը¹: Մ. Կաղանկատվացու երկում մեջ է բերված Դավթակի ամբողջ քերթվածքը: Այն հայ գրական բանաստեղծության առաջին օրինակն է, «որ կրոնական չէ և գրված է աշխարհական մարդու ձեռքով: Ինչպես երևում է, այս Դավթակը շատ հայտնի բանաստեղծ է եղել – Կաղանկատվացին նրա մասին մեծամեծ գովասանքներով է խոսում... Եվ իրավ, ողբը բավական արտահայտիչ է ու ճաշակավոր, և հայոց գրականության պատմությունը հաճությամբ կարող է ցույց տալ հայ ընթերցողին երգչի այս տողերը»²:

Ա.Շ. Մնացականյանը միանգամայն նոր մեկնաբանությամբ է ներկայացնում Ջվանշիր իշխանի հայերեն աղոթքը՝ գրված այն օրերին, երբ նա ամբողջ ուժով մարտնչում էր պարսիկ բռնակալության դեմ, ազատելով երկիրը նրանց լծից, ինչպես նաև Դավթակ Քերթողի չափածո 36 քառյականոց ողբը, որոնք հերթականորեն սկսվում են հայոց այբուբենի տառերով³:

Յոթերորդ դարի վերջին և ութերորդ դարի սկզբներին Սյունյաց լեռնաշխարհում փայլատակում են նաև Սյունյաց դպրոցի վերջին խոշոր ներկայացուցիչ Ստեփանոս Սյունեցին և բանաստեղծուհի Սահակադուլստը, որոնց մասին գրել է Լեոն⁴:

Ա.Շ. Մնացականյանը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ այդ ժամանակվա Աղվանից աշխարհի իսկական գրականությունը և մատենագրությունը կապված է Համամ Բագրատունու անվան հետ: Նա գրում է. «Նա մի եզակի դեմք է՝ կանգնած արաբական բռնապետության վերջալույսի և կովկասյան ժողովուրդների ազատագրության արշալույսի սահմանագծին, արժանի հատուկ մենագրության»⁵:

Այդպիսով, Համամ Բագրատունին կամ Արևելցին, իններորդ դարի երկրորդ կեսին Աղվանից երկրի հայազն թագավորն էր և միաժամանակ գրական գործիչ: Նշենք, որ VII դարի վերջն-

¹ Տես նույն տեղը:

² Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 340:

³ Մ. Կաղանկատվացու երկում ողբի բնագիրը թերի է: Լրիվ բնագիրը տես «Ճաքադ», 1860թ., տնտրակ Ե., էջ 79–83:

⁴ Տես Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 466–468:

⁵ Ա.Շ. Մնացականյան, «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը», էջ 183:

րին ու VIII դարի սկզբներին Սյունյաց դպրոցն առաջ է բերում մի նշանավոր գրող ևս՝ Մովսես Բերթողին (Բերթողահորը):

Արցախի, Սյունիքի և ամբողջ Հայոց Աղվանքի գրակա-նությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ հայ գրականություն: Ինչ վերաբերում է լեզվի հարցին, ապա բոլոր դարերում գրեթե անփոփոխ է մնացել արցախցիների բարբառը: Օտարերկրացիների լեզուն քիչ է ազդել տեղացիների լեզվի վրա: Հայաստանում և Հայոց Աղվանքում հայոց լեզվից բացի, գործածական էր նաև պարսկե-րենը: Չնայած արաբերենը հռչակված էր պետական լեզու, բայց այն լայն տարածում չգտավ: Դեռ VII–VIII դարերում Ստեփա-նոս Սյունեցին հավաստի տեղեկություններ է հաղորդում Արցա-խի և Սյունիքի հայկական բարբառների մասին:

Արվեստի ճյուղերից I–IX դարերում Արցախում առաջըն-թաց է ապրում հատկապես ճարտարապետությունն ու նկար-չությունը: Ամարասի, Հացվի վանքերի, Պարտավի պարիսպների, պալատների և բնակության ու պաշտպանության համար կա-ռուցված շենքերի ու աշտարակների մասին նշել ենք: Այստեղ ավելացնենք, որ նման կառույցները անշուշտ նպաստել են ճար-տարապետության զարգացմանը: Ճիշտ է, այդ շինություններից շատերը մեզ չեն հասել, քանդվել են, սակայն համեմատաբար շատ են եղել և մասամբ կանգուն են մնացել եկեղեցիներն ու վանքերը, նահատակարաններն ու ամրոցները: Դեռևս վաղ շրջանից Արցախում շենքերը դրսից ու ներսից զարդարում էին զանազան քանդակներով ու նկարներով: Դրա փայլուն վկայույթ-յուններից մեկը Մ. Կաղանկատվացու երկի այն տողերն են, որ Ջվանշիրը բուզանդական կայսրի մոտից վերադառնալով «Գարդման գավառը... անմիջապես մտնում է իր ապավինութ-յան օթևանը՝ (տաճարը): Այնուհետև սկսեց թանկագին նյութեր գործադրել նրա հրաշագեղ անպատմելի պայծառությունը զար-դարելու համար: Մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավոթները նկարեց ու պաստառեց կեր-պասներով, իսկ տաճարի դուռը... արծաթապատեց և հրաման տվեց քանդակագարդել՝: Գարդման ամրոցի տաճարի ներսը ներկված էր գեղարվեստորեն: Նրա պատերը ծածկված էին մե-տաքայա գործվածքներով, դռները մշակված էին արծաթով ու

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 153:

քանդակված զարդարանքներով: Տրտու (Թարթառ) գետի ափին՝ «նշանավոր անտառում՝ Սարավանդակ վայրում» VII դարում «կար մի փայտաշեն մատուռ՝ խնցիկներով երեսպատված, խաչանիշ զարդարանքներով դրվագված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված»¹: Ծենքերը զարդարելու շնորհիվ հատկապես V–IX դարերում զարգացավ նաև քանդակագործությունն ու նկարչությունը: Ծենքերի պատերին քանդակվում էին կենդանիների, բույսերի, մրգերի, որոշ դեպքերում նաև շենքը կառուցող վարպետների բարձրաքանդակները (բարելեֆ): Քանդակագործական-նկարչական արվեստի զարգացման վկայություն է Մեծկողմանքի Դավիթ եպիսկոպոսի խնդրանքը Հոհան Մայրազմեցուց՝ արձանների ու նկարների վերաբերյալ: Մ. Կաղանկատվացու վկայությամբ հենց այն ժամանակներում, երբ դեռևս Աղվանքի հայրապետն էր տեր Ուխտանես Մաթնոսը (670–682 թ.թ.), ինչպես նաև տեր Եղիազարի ժամանակ (683–689 թ.թ.) «բազմաթիվ հերձվածներ ու խռովություններ էին առաջանում զանազան տեղերում, գիտունների ու տգետների կողմից տեղի էին ունենում պայքար ու մրցում հույների ու հայերի միջև: Սակայն Աղվանքը սկզբում այս բաներից զերծ էր մնում: Նրանց լուր հասավ, թե՛ կան ոմանք, որ պատկերները չեն ընդունում, կան որ մկրտություն չեն անում, աղ չեն օրհնում, հարսանիքների պսակադրություն չեն կատարում. այս է պատճառը, որ քահանայությունը վերացել է երկրից: Սրա համար Մեծկողմանքի Դավիթ եպիսկոպոսը գրավոր կերպով հայոց Հոհան վարդապետից խնդրեց այդ բաների պատճառը (բացատրել)»²:

Ինչպիսի՞ բացատրություն տվեց տեր Դավիթը: Նա ասում է հետևյալը. «...Պատկերամարտությունը նախ քյուզանդացիների մեջ երևեց, որի պատճառով Կենսարիայում մեծ ժողով կայացավ. հրամայեցին աստծու տանը (եկեղեցում) պատկերներ նկարել: Այդ պատճառով նկարիչները մեծամտեցին և կամեցան իրենց ավելի բարձր դասել, քան եկեղեցական բոլոր ստեղծվածքները»³: Նկարիչներն ասում են. «Մեր արվեստը լույս է, որովհետև թե՛ ծերերը, թե՛ մանուկները համահավասար դիտում

¹ Նույն տեղը, էջ 160:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 207:

³ Նույն տեղը:

են, իսկ սուրբ գրքերը քչերն են կարդում»¹: Նկարիչների այդ հայտարարությունը մեծ վեճ է առաջ բերում, որի պատճառով կրկին ժողով է հրավիրվում, որտեղ արդարացվում են ոչ թե նկարիչները, այլ գրողները: «Քննելով արդարացում են գրողներին, – գրում է Մ. Կաղանկատվացին, – կարդացողներին ու մեկնիչներին և դրանց նկարիչներից գերադաս են համարում»²:

Դրանից հետո մինչև Հայոց կաթողիկոս Մովսեսը պատկերամարտության հերձվածը չէր հայտնվում: Իսկ երբ Հայոց կաթողիկոս Մովսեսը և Կարնո եպիսկոպոս Թեոդորոսը բաժանում են Հայոց հայրապետությունը, «Մովսեսը իր կողմնակից վարդապետներով ժողով է անում և հրամայում է՝ ամենևին չհաղորդակցվել այն բյուզանդացիների հետ, որոնք հնազանդվել են Քաղկեդոնի չար ժողովին, որովհետև նրանց գործերը սուտ են: Նրանցից չպետք է ընդունել ոչ գրքեր, ոչ պատկերներ, ոչ նշխարներ»³:

Այդ ժամանակ Թեոդորոսն էլ հրաման է արձակում և պահանջում, որպեսզի իր կողմնակից հայոց եպիսկոպոսները հավաքվեն Կարին քաղաքում, որտեղ նա նրանց ասում է. «Մենք պետք է կաթողիկոս ընտրենք»: Թեոդորոսի պահանջը կատարվում է: Հավաքվածները կաթողիկոս են ձեռնադրում սյունեցի Հոհանին ու հնազանդվում քաղկեդոնական աղանդին: Ոչ ոք չի հարում ուղղափառ հավատին, բացի Ենոսից, որը գնում է Մովսես կաթողիկոսի մոտ: Այդ ամենից հետո «Հետո անունով մի քահանա, Թադեոսն ու Գրիգորը, որոնք Մովսեսի կողմնակիցներն էին, Դվինից գնացին Սոթք գավառը: Եվ որովհետև կրոնավորներ էին, բնակավեցին անպատնեքում ու սկսեցին սովորեցնել, թե եկեղեցիներում նկարված պատկերները ոչնչացրեք և աշխարհական քահանաների հետ մի շփվեք»⁴:

Այս էլ հենց նկարչական արվեստի զարգացած լինելու վերաբերյալ վկայություններից մեկն է: Եթե նկարչական արվեստը զարգացած չլիներ, ապա «եկեղեցում նկարված պատկերներ» չէին լինի, որոնք պիտի ոչնչացվեին: Սոթքում կատարվածը տեղի

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, էջ 208:

⁴ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 208:

է ունենում նաև բուն Արցախում: Մ. Կադանկատվացու վկայությամբ եկեղեցիներում նկարված պատկերները ոչնչացնելու վերաբերյալ հրամանից հետո «խռովություն սկսվեց գավառում, և լուրը հասավ Մովսես Հայրապետին: Մովսեսը իսկույն գրեց, թե «շտապ եկեք այստեղ»: Նրանք չենթարկվեցին այդ հրամանին, այլ այնտեղից գնացին ու բնակություն հաստատեցին Արցախի գավառներում»¹: Երկար վիճելուց հետո նամակ է գրվում և պահանջվում, որ «ոչ ոք թող չհանդգնի մերժել այն նկարները, որոնք եկեղեցիներում են: Եվ երբ Մովսես Հայրապետը վախճանվեց, և սկսեց իշխել հայոց Խոսրովը, երկիրը միաբանվեց»²:

Պատկերամարտները Արցախ գնալով խառնում են նահանգը: Գարդմանի իշխանը կարողանում է բռնել պատկերամարտներից նրքին (Նևուսին, Թադևոսին ու Գրիգորին)³: Երբ նրանց հարցնում են, թե «ի՞նչ պատճառով չեն ընդունում մարմնավորված աստծու պատկերը», նրանք պատասխանում են. «Դա պատվիրաններից դուրս է, և այդ բանը հատուկ է կռապաշտներին, որոնք բոլոր արարածներին պաշտում են: Մենք պատկերներին չենք երկրպագի, որովհետև Աստվածաշնչից այդպիսի պատվեր չունենք»⁴:

Սակայն նրանք տեսնելով Մովսեսի խորանի նկարակերտ լինելը ու Սողոմոնի տաճարի քանդակագործությունները, շեղուճուճուղից և հակվեցին դեպի նկարչական արվեստը:

Ամենայն հայոց տիրակալ Գրիգոր Մամիկոնյանի ժամանակ (661–682 թ.թ.) Հայաստանը շուրջ քառորդ դար քաղաքական հզորացման և տնտեսական բարգավաճման ու մշակութային վերելքի մի շրջան ապրեց: «Բնականաբար արաբների և բյուզանդացոց ընդհարումները, ինչպես նաև խազարաց արշավանքները երկրին վնաս էին հասցնում, սակայն պետք չէ մոռանալ Արևելքում ստեղծված քաղաքական նպաստավոր իրադրությունը, որը հնարավորություն էր ստեղծել Հայաստանում անկախ պետական կյանք կերտելու համար: Սասանյան Պարսկաստանը կործանվել էր, բյուզանդական կայսրությունը իր տարա-

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, էջ 209:

⁴ Նույն տեղը:

ծության կենսից ավելին կորցրել ու քայքայվել էր, իսկ արաբական խալիֆությունը դեռ չէր կազմավորվել: Այս գոյավիճակը տևեց մինչև դարի վերջը, որի շնորհիվ յոթերորդ դարի երկրորդ կեսում Հայաստանը քաղաքականապես ու տնտեսապես բարգավաճեց, իսկ մշակութային տեսակետից աննախընթաց բարձր աստիճանի հասավ, որի պերճախոս վկաներն են հարուստ մատենագրությունը և մանավանդ դասական կատարելության հասած ճարտարապետությունը (Զվարթնոց, Հռիփսիմն և այլն)»¹:

Ինչ վերաբերում է արաբական տիրապետության ժամանակաշրջանի արցախյան մշակույթին, ապա պետք է ասել, որ VIII–IX դարերի հայ ճարտարապետական արվեստի զարգացման մասին սկզբնաղբյուրները տեղեկություն չեն հաղորդում: Ըստ երևույթին համահայկական երևույթ էր արաբների տիրապետության ժամանակաշրջանում արվեստի ետ մնալը: «Հայ շինարարական արվեստի պատմությունն այդ մեկ ու կես դարի ընթացքում չունի արձանագրելու և ոչ մի փոքր ի շատե աչքի ընկնող շինություն, որ կարելի լիներ համեմատել VII դարի ճարտարապետական կոթողների հետ, – գրում է Լեոն. – թվում է, թե կյանքը բոլորովին մոռացել էր հին շինարարական ավանդույթունները, մտել էր մի տեսակ վայրենացման շրջան, երբ սերունդները զարմանքով են նայում իրենց պապերի գործերին, չկարողանալով ըմբռնել, թե ինչպես էին մարդիկ գեղարվեստ ստեղծում»²:

¹ Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 736, ծանոթագրություն 77:

² Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 478:

ՄԱՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՅԱԼԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆԻՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Նախորդ մասում արդեն նշել ենք VII դարի ողջ Հայաստանի հաջողությունների հիմնական պատճառը: Դա խաղաղությունն էր, որի պայմաններում հայ ժողովրդին բնորոշ աշխատասիրությունը տվեց իր արդյունքները: Սակայն ցանկացած ազգ ու ժողովուրդ չի կարող առաջընթաց ապրել առանց մյուս կարևորագույն բաղկացուցիչ՝ որակյալ քաղաքական էլիտայի: Սա պարզ քաղաքագիտական արսիոմ է: Իմամանուիլ Կանտը իր հայրենիքի բարգավաճումը չէր պատկերացնում առանց ազնիվ ու պարկեշտ, աշխատասեր ու պարտաճանաչ պաշտոնյայի: Նիկկոլո Մաքիավելլին գտնում էր, որ ծանր ժամանակներում օգնության են դիմում հիրավի արժանավոր մարդկանց՝ հանգիստ օրերին որպես կանոն նախընտրում են ոչ թե արժանավորներին, այլ հարուստներին և կապեր ունեցողներին: Միշտ եղել և լինելու է այդպես՝ մարդկանց, որոնք գերազանցում են մյուս քաղաքացիներին իրենց փայլուն առավելություններով, խաղաղ ժամանակներում մոռանում են: Այլոց հանրաճանաչությունից առաջացած նախանձը մեծամասնության մոտ ասելիություն է առաջացնում: Նրանք իրենց հավասար, կամ անգամ առավել են զգում նախկիններից¹:

Աղվանք-Արցախի քաղաքական էլիտայի նշանավոր ներկայացուցիչ ու հմուտ ղեկավար է հանդիսանում Զվանշիր իշխանը:

638 թվականին Աղվանքի կառավարիչ դարձավ Միհրանյան տոհմի խոշոր ներկայացուցիչ, Վարազ-Գրիգորի երկրորդ որդի Զվանշիրը և իշխեց մինչև 683 թվականը: Ճիշտ է, նա միայն Գարդմանքի տերն էր, բայց վերահսկում էր ոչ միայն Այսրկուրյան, այլ նաև գրեթե ամբողջ Անդրկուրյան Աղվանքի տարածքը: Նրա գործունեությունը վառ գույներով նկարագրում է նրա ժամանակակից, դեպքերին անհատեն Մ. Կաղանկատվացին, որը

¹ տե՛ս Никколо Макиавелли, «Государь», Минск, Харвест, 2004г. С. 577.

Զվանշիրին ներկայացնում է հերոսական սխրագործություններով: Ըստ պատմիչի Զվանշիրն ամենուր հաղթանակներ է տանում, պատվի ու մեծարման արժանանում թագավորների կողմից: Նա արաբ միապետից հեքիաթային նվերներ է ստանում, թագավորներն իրենց աղջիկներն են առաջարկում Զվանշիրին: Մ. Կաղանկատվացին Աղվանից իշխաններին ազգակցական կապերով կապում է թագավորների հետ: Նա Զվանշիրին համարյա միշտ անվանում է «Տեր»,

«Թագավորներին հավասար», «Արևելքի մեծ իշխան»¹, «Ջնչակավոր իշխան»², «Արևելքի բազմամեծար իշխան»³ և այլն: Մ. Կաղանկատվացին գրում է. «Նրան ոչ մի բանում թագավորներից պակաս չտեսանք. լի էր ամեն հարստությամբ, ուներ անթիվ ոսկի ու արծաթ, թանկագին ծիրանիններ, գեղեցիկ հանդերձներ, թանկարժեք ոսկեղեններ և ոչ քիչ լուսավայլ մարգարիտներ: Ամեն ինչ լիառատ էր ու կատարյալ: Ահա այս 33 տարի է, ինչ տներն սկսեց Աղվանքի քաջահաղթ իշխանին բազմամեծար դարձնել: Նրա չորս ժողովուրդների աշխարհակալ թագավորների կողմից պատիվների արժանացավ և չափազանց մեծարվեց՝ ոչ մի բանի մեջ պակաս չլինելով, քան այս ինքնակալները. ընդհակառակը, ըստ ամենայնի վեհ ու մեծ էր: Ոչ ոք նրելսայական կարծիքով և անմտությամբ սրա տիրակալությունը փոքր չհամարեց՝ միայն գլխին թագ, այսինքն՝ թագավորական մեծության բազմավայելույ պատվի ծայրագույն նշանը չունենալու պատճառով»⁴: Ապա մատենագիրը նշում է, որ Վարագ-Գրիգոր իշխանը նկատելով որդու՝ Զվանշիրի խրոխտ ու սիգաճեմ բնավորությունը, չքնադազեղ տեսքը, դեռ այն ժամանակ, երբ «դեռևս նոր պիտի ծնոտի վրա բուսներ նորածիլ մորուքը»⁵, որոշում է նրան վարժեցնել ռազմական արվեստին: Այդ և ուրիշ այլ պատճառներով Վարագ-Գրիգորը որոշում է Զվանշիրին ուղարկել պարսկական արքունիք: «Սա հորից վերցրեց գորքը և Սյունիքի իշխանից ու հայոց սպարապետից առաջ շտապեց հասնել այն համընդհա-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, 1969թ., էջ 150, 151 և այլն:

² Նույն տեղը, էջ 154:

³ Նույն տեղը, էջ 157:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը, էջ 135:

նուր, բյուրավոր գորածողովին»¹, որը հրավիրվել էր Տիգրանում՝ արաբների հարձակման առթիվ: «Ռոստոմ գորավարը սրան տեսավ, և սա նրա աչքում երևաց իբրև եղբայր կամ որդի. ամենքից էլ նա ցանկալի էր երևում:

Այդտեղ գորավարը իր հետ վերցնում է բազմահազար հեծյալներ, գալիս-հասնում է Տիգրան քաղաքը՝ Հազկերտ թագավորի մոտ: Արքան անմիջապես ձեռքը դնում է նրա գլխին, գովում և նրան անվանում է Աղվանքի սպարապետ»²: Դա այն ժամանակ էր, երբ Արաբական լավիֆոյությունը դարձել էր Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունը և Բյուզանդիայի ու Պարսկաստանի սարսափը: Արաբները ներխուժել էին Պարսկաստան և ձգտում էին նրա նվաճմանը:

Չվանշիրին Հազկերտ արքային ներկայացնելուց հետո պարսից գորավարը վերցնում է իր բոլոր զորքերը, իջնում Ասորեստան, անցնում Դկլյաթ գետը և հասնում Վեհկավատ գավառը: Երբ արաբները ասպատակում են պարսկական բանակի դեմ, նրանց դիմադրողների շարքում տեսնում ենք նաև Աղվանքի սպարապետ Չվանշիրին, որն «...արիաբար հոջողության էր հասնում: Սկզբում ումանց հարվածում և սրով էլ ավելի առաջ էր մղվում, որովհետև գիտեր, թե տերը իր հետ է»³: Իսկ երբ մի երկու օրից հետո՝ մեհեկան ամսից կամ Քրիստոսի ծննդյան օրը արաբները 30 հազար հեծյալներով ու տաս հազար հետևակով գրոհի են անցնում, «Աղվանքի գորավարը գորեղ մարդկանց հետ միասին մեջ է մտնում և, հակառակորդներից երկու հոգու հարվածելով, գետին է տապալում, ու ինքը վերադառնում է՝ երեք տեղից ծանր վիրավորված, և ձին էլ չորս տեղից խոցված: Այնտեղից մինչև Եփրատ գետը թշնամին արագընթաց արշավանքով հետապնդում է: Սա նույնպես նրանց դեմ կռվելով արյունաշաղախ գալիս-անցնում է գետից՝ զգեստներն ու զենքերը արյան մեջ թաթախված: Եվ երբ տեսավ, որ բոլոր մեծամեծներին ու զորքերին ինչպես խտտ հնձեցին, նա նորից արքունիք շտապեց: Իսկ երբ արքային պատմեցին նրա քաջագործությունների և ստացած ծանր վերքերի մասին, անմիջապես հրամայեց, որ նրան ապա-

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 135:

րանք տան, պալատական բժիշկները խնամեն նրան, և երկրի կողմից ընդունելություններ կազմակերպեն»¹:

Առողջանալուց հետո Ջվանշիրը ներկայանում է Հազկերտ արքային, որը ձեռքը դնում է նրա գլխին, ի լուր ամենքի նրա մասին գովեստի խոսքեր ասում, ապա զորավարական աստիճանին համապատասխան նրան շքանշաններ հանձնում, բարձրահունչ փողեր, երկու ոսկյա նիզակ, երկու ոսկեքանդակ վահան նվիրում, «որոնք միշտ ման էին տալիս նրա առաջևից: Բոլորից ավելի նրան մեծարեցին: Մեջքը կապեցին ոսկե գոտի, որն ընդելուզված էր մարգարիտով, և ոսկեդաստակ սուր. ապարանջան հագցրին բազուկները և փափագելի պսակ դրին նրա գլուխը. տվեցին նրան մարգարտով բանված զանկապաններ և նույնատիպ մարգարտաշար մանյակ կախեցին պարանոցից. նրան հագցրին ներքևը չորս քղանցքներով արջնաթույր և մետաքսառէջ սնդույսյա գրատ՝ ոսկեթեզան երիզներով: Իբրև սեփականություն գյուղեր ու ձկնառատ գետեր հանձնեցին: ...Նա, ստանալով այսքան թագավորական մեծարանքներ, ավելի առաջ գնաց»²: Դրանից հետո Ջվանշիրը նորից է մասնակցում ճակատամարտերին, որոնցից մեկի ժամանակ թավազլոր հարվածում է Իմա և Ահմադան զորավարներից մեկին, որոնք սաստիկ ցասումով բախվում էին իրար հետ, հաշտեցնում է նրանց, որի համար Խոռագատ կամ Խոռխոռագատ զորավարը շատ մեծարական հարգանքներով նրան իր հետ տարավ:

Դժբախտաբար մենք ստույգ տեղեկություններ չունենք այդ ամենի տարեթվերի մանրամասների վերաբերյալ: Հայկական աղբյուրները՝ Մ. Կաղանկատվացի, Սեբեոս և Ղևոնդ Վարդապետ, բավարարվում են միայն դեպքերի նկարագրություններով, թվականներ չեն նշում, իսկ երբեմն էլ հակասում են թե մեկը մյուսին և թե իրենք իրենց: Այսպես. Մ. Կաղանկատվացին հաղորդում է. «Հազկերտի ութերորդ տարում թշնամին նորից հարձակվեց և արքային Տիզբոն քաղաքում վեց ամիս պաշարեց: Այդ ժամանակ Խոռագատ զորավարը և Ադվանից սպարապետը դիմադրելով զորքերի հետ միասին հեռացրին: Այդտեղ քաջ Ջվանշիրը բարձրագլուխ երեք հազարով նախահարձակ է լինում

¹ Նույն տեղը, էջ 135–136:

² Նույն տեղը, էջ 136:

թշնամու վրա և սրընթաց արշավանքով տանում է նրանց, գետից այն կողմ է անցկացնում և վեց ամիս թույլ չի տալիս, որ Դկլաթ գետը անցնեն այս կողմը, մինչև որ թագավորին առնում բերում են Մեծ Դաստակերտը: Ահավոր բազմությամբ նրա վրա է կուտակվում թշնամին, բայց այնտեղից թագավորին տանում են Բեկդաղ, իսկ հազարացիները բազմաթիվ ուժերով ծովի ալիքների նման հետապնդելով առաջ են շարժվում: Այդտեղ քիչ ժամանակ լինելով, Աղվանքի սպարապետը չէր դադարում նրանց դեմ դուրս գալուց և հրապարակով իր քաջությունն էր ցույց տալիս, որը բազմաթիվ անգամ օտարազգի թշնամիների գլուխները բերելով նետում էր թագավորի առջև»¹:

Եթե հավատալու լինենք Մ. Կաղանկատվացուն, ապա այդ դեպքը պետք է որ տեղի ունեցած լինի 641–642 թվականներին, քանզի Պարսից անչափահաս Արտաշիրին սպանված ենք տեսնում 630 թվականին²: Նրան սպանող Շահ-Վարազը միայն ամիս ու կես է վայելում իշխանությունը: Նրան էլ սպանում են պարսից այն իշխանները, որոնք չէին կարող թույլ տալ, որ Սասանյանների գահի վրա նստի մի այլ ծագում ունեցող մարդ: Նրանից հետո թագավորում է Խոսրով Բ-ի աղջիկը՝ Բորան կամ Պուրանդուխտ անունով (630–631 թվականներին): 631 թվականի աշնանը մի շատ կարճ ժամանակահատված թագավորում է Խոսրովի մյուս աղջիկը՝ Ազերմիդուխտը (631–632 թվականներին): Մծբինում ապստամբած գորքը թագավոր է հայտարարում Խոսրովի թոռ Որմիզդին, որը հենց այդտեղ էլ գահընկեց է լինում: Եվ վերջապես գահակալական անվերջ պայքարից հետո 633 թվականին պարսկական գահի վրա բազմած ենք տեսնում Խոսրով Պարվեզի թոռ Հազկերտ Երրորդին, որով էլ «պիտի վերջանար Սասանյան թագավորությունը, և Պարսկաստանը պիտի ընկներ օտար տիրապետության տակ»³:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, Հազկերտ Երրորդը իշխել է ընդամենը ութից-ինը տարի, քանի որ «Սասանյանների դարավոր տիրապետության վերջնական կործանումը տեղի ունեցավ 642 թվականին՝ Նեհավենդի ճակատամարտից հետո (Նեհա-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 137:

² Տևս Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 264:

³ Լեո, նշված երկը, էջ 265:

վենդ գյուղը գտնվում է Համադան քաղաքի մոտակայքում»¹: Իսկ ի՞նչ է հաղորդում Մ. Կադանկատվացին: Նրա հաղորդմամբ պարսկական տնրությունը ամբողջովին մնջտնդից վերանում է «Հազկերտի թագավորության քսաներորդ տարում», որը «հագարացիների համաշխարհային կռիվ երեսունմեկերորդ և իմ տնր Ջվանշիրի տասնհինգերորդ տարին էր»²: Դրանից առաջ էլ Մ. Կադանկատվացին նշել էր, որ «յոթ տարի այս պատերազմներում (Պարսկաստանում մղված պարսկա-արաբական պատերազմներում, – Է.Ս.) տանջվելով կռվեց քաջ Ջվանշիրը՝ մարմնի վրա տասնմեկ ծանր վերքեր ստացած. վերջապես բաժանվելով նրանցից եկավ Ատրպատական գավառը: Պարսից զորապետը, լսելով նրա այդքան հռչակված անունը, ստիպում է նրան, որպեսզի կնության առնի իր (զորապետի) քրոջը: Բայց սա անօրեններից ոչ որի կին առնել չցանկանալու պատճառով, ուղևորվում, գալիս է իր երկիրը: Այդ առթիվ չափազանց հոգատար հայրը մեծագույն հրճվանք է ապրում»³: Նկատենք, որ Ջվանշիրը պարսիկների հետ խնամիանալուց հրաժարվում է քաջ գիտակցելով պարսկական պետության անկումը: Պարսկաստանի համար օրհասական Քաղեսիայի ճակատամարտին մասնակցել են հայկական երկու զորաբաժին՝ մեկը՝ 3000 հոգուց բաղկացած՝ Դավիթ Մամիկոնյանի որդի Մուշեղի հրամանատարությամբ, մյուսը՝ 1000 հոգուց՝ Սյունյաց Գրիգոր իշխանի հրամանատարությամբ: Այստեղ էր նաև Աղվանից զորաբաժինը, որի հրամանատարն էր Վարազ-Գրիգոր իշխանի երիտասարդ որդի Ջվանշիրը⁴ (տեղի է ունեցել 637 թվականին)⁵: Ստացվում է, որ Ջվանշիրը հոր կողմից պետք է պարսկական արքունիք ուղարկված լիներ շուրջ 630 կամ 631 թվականին: Չէ՞ որ նա իր երկիր Աղվանք է գալիս յոթ տարի այդ պատերազմներում կռվելուց հետո:

Քաղեսիայի ճակատամարտի տարեթվի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տարբեր տարեթվեր են հաղորդում, որոնք տա-

¹ «Հայ ժողովրդի պատմություն», Պրակ 3-րդ, Երևանի պետական համալսարան:

² Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 140:

³ Նույն տեղը, էջ 137:

⁴ Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 303:

⁵ Տես նույն տեղը:

տանվում են 635 թվականից 638 թվականի միջև: Ատ-Տաբարին ու Իբն ալ-Ասիբը այն վերագրում են 637 թվականի հունվարին, Բելլածորին՝ 638 թվականի հունվարին, Աբդլ ալ-Մեջիտը՝ 636 թվականին և այլն¹:

Արաբների հետ ունեցած կռիվներում իրանական բանակի պարտությունից հետո Ջվանշիրը իր ջոկատով վերադառնում է Աղվանք: Սակայն մեր կարծիքով՝ ճիշտը 637 թվականն է: Ուստի անհիմն է Կ.Վ. Տրևերի առարկումը թե՛ 638 թվականը Ջվանշիրի գահակալության տարեթիվ անվանելը, և թե՛ նույնի կողմից 636 թվականը նման տարեթիվ ընդունելը²:

Այս հաղորդումները ցույց են տալիս, որ՝ առաջին. նշված Միհրանյան տոհմի փառքը գագաթնակետին է հասցրել Վարագ-Գրիգորի նրկրորդ որդի Ջվանշիրը, որը 637 թվականին մասնակցել է Քաղեսիայի ճակատամարտին:

Երկրորդ, որ այդ ժամանակ Աղվանից աշխարհը, ողջ Հայաստանի նման, հպատակված էր Պարսկաստանին և պարտավոր էր իր գորքերով օգնել նրան պատերազմի ժամանակ: Հետևաբար այլ կերպ չէր կարող լինել նաև Արցախի դրությունը:

Երրորդ, Ջվանշիրը դեռ բոլորովին նրիտասարդ հասակում դառնում է Աղվանքի գորքերի հրամանատարը և կենդանի մնում պարսկա-արաբական գորքերի բախումների ժամանակ: Սակայն կենդանի մնալը դեռ բավական չէ: Նա նաև արժանանում է պարսից թագավորի կողմից շնորհված Աղվանքի սպարապետի աստիճանին:

Չորրորդ, Ջվանշիրը դեռ իր հոր կենդանության ժամանակ, իր ձեռքն է վերցնում ամբողջ նրկրի կառավարումը: Իր այդ գործերի համար «նրիտասարդ իշխանապետը ժողովրդական հերոս դարձավ»³: Ճիշտ է նկատում Լեոն, որ «հերոս է նա մանավանդ Մովսես Կաղանկատվացու համար»⁴: «Ամենապայծառ Ջվանշիրը մեծ ու պանծալի անվամբ պարսիկների կռիվներից վերադառնալով և, ըստ թագավորի հրամանի, իր անձով ամբողջ Աղվանքն

¹ Տես Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 72:

² Տես Կ.Վ. Տրևեր, «Очерки по истории и культуре Кавказской Албании». М.-Л., 1959г. С. 236.

³ Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 328:

⁴ Նույն տեղը:

էր ներկայացնում»¹: Ենթադրելով, որ «պարսիկների կռիվներ» ասելով մատենագիրը նկատի ուներ 637 թվականին տեղի ունեցած Քաղեսիայի ճակատամարտը, ապա պետք է նաև համոզված ասել, որ Ջվանշիրը հայրենիք է վերադառնում 638 թվականին և այդ ժամանակվանից էլ սկսում ներկայացնել ամբողջ Ադվանքը: Դրանից հետո էր, որ նա, իր գունդը վերցնելով, հոր հետ միասին դուրս է գալիս Պերոզապատ քաղաքի վերին կողմը և սկսում պաշտպանվել պարսկական հարձակումներից:

Յոթերորդ դարի 30–40-ական թվականներին արաբական վտանգից ահաբեկված Սասանյաններն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրած լինելով հարավում, համարյա չէին միջամտում Հայաստանի, Ադվանքի, Արցախի գործերին: Իսկ Սասանյանների պարտությունից և անկումից հետո Արցախի հայ ազնվականները վերականգնելով իրենց իրավունքները, նահանգի ներքին կառավարման ասպարեզում ձեռք էին բերել ինքնուրույնություն և անկախություն: Սա առանց Ջվանշիրի կամքի բնականաբար չէր կարող տեղի ունենալ: Հետաքրքիրն այն է, որ նա ուժեղացնելով տեղական էլիտայի իշխանությունը՝ ըստ էության ուժեղացրել է նաև իր ազդեցությունը երկրի կառավարման գործում:

Նշենք նաև, որ թյուր կարծիքներ են տարածվել այն մասին, թե Հայոց Ադվանքի ու Արցախի Միհրանյան տոհմի իշխանները Ծիրվանշահներն էին: «Որ Ծիրվանշահերը կարող են առաջացած լինել նույն Միհրանյան ցեղից, այս միանգամայն հնարավոր է: Բայց որ Կաղանկատվացու Միհրանյանները Ծիրվանշահներ չեն, սրա ամենամեծ ապացույցն այն է, որ այդ տոհմը միշտ ամփոփված է Արցախում, Կուրի աջ ափին, որ և նրանց երկրի համար սահման է: Պարտավը և Լեռնային Արցախը Միհրանյան իշխանների բնակության վայրերն են: ...Պրոֆեսոր Պատկանյանը բերում է տոհմագրական մի ցանկ, որ հասցնում է Միհրանյաններին մինչև IX դարը, բայց անվանում է նրանց Ադվանքում թագավորած, չգիտենք՝ ինչ փաստերի վրա հիմնվելով: Արաբ ճանապարհորդ Աբու-էլ-Կասիմը, այցելելով Ծիրվանը X դարի կեսում, հիշում է, որ այդ ժամանակ Ծիրվանշահ էր Եզիդի որդի Մուհամմեդը, մինչդեռ Միհրանյան տոհմի այդ ժամանակ-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 138:

վա ներկայացուցիչները, հենց նույնիսկ Պատկանյանի տոհմաբանական ցանկին նայելով, քրիստոնեաներ են: Դրանք նույն իշխաններն էին, որոնք ապրում էին Արցախի լեռներում, Շիրվանից շատ հեռու և բոլորովին անջատված նրանից, քանի որ այդ ժամանակ այդ լեռնաստանն ուներ իր սեփական թագավորությունը»¹:

Ընդհանրապես պիտի հիշել, որ Արշակունյաց թագավորության կործանումից հետո ևս Հայաստանը կառավարվում էր միայն հայ տիրակալների կողմից: Օրինակ, 639 թվականից Ռշտունյաց տերը Հայաստանի երկու հատվածների (բյուզանդական ու պարսկական) իշխանն էր «բառիս բուն իմաստով»²: Յոթերորդ դարում արաբական շրջանի Աղվանից իշխանները պատրիզության թագ էին կրում: Մուսվիհան Թեոդորոս Ռշտունու օրոք Հայոց իշխանի իրավասության տակ դրեց նաև Վրաստանն ու Աղվանքը, որի իշխանը մեզ արդեն ծանոթ հայագն Ջվանշիրն էր: Կրկին հիշեցնենք, թե ինչպես հասավ նա իր այդ կոչմանը: Վերը նշվեց, որ Ջվանշիրը մերժում է պարսից գորապետի առաջարկությունը՝ իր քրոջը կնության առնելու վերաբերյալ: Դրանից հետո նրբ նա վերադառնում է Աղվանք, «պարսիկ քաջերը շարժվելով գալիս են մեր երկրի վրա Ջվանշիրի ապստամբվելու պատճառով: Մինչդեռ թշնամու առաջամասերը նույն գավառի վարի կողմից շտապ դուրս են գալիս, անմիջապես ամենամեծ աճապարանքով վերագինվում, հանդուգն նախահարձակ է լինում այնտեղ ջարդելու գեղամիհնազգի³ մի ում գորապետի: Այս ժամանակ ինքը և զորքը սրահար ճարակումով շատերին կործանում, այլև նրանցից գրավում են ձիեր, ջորիներ և մեծ քանակությամբ ավար խլելով վերադառնում են: Սակայն պարսից գունդը չէր դադարում հետամտելուց: Երկրորդ ընդհարումը միմյանց հետ տնդի է ունենում մի լեռնոտ վայրում. այդ օրն էլ տիրոջ կողմից նրան հռչակվեց հաղթություն տանել: Այդ ժամանակ իսկույն ժամանում է գուժաբերը և ասում է, թե՛ «Պարսկական զորքը մտավ Պերոզ քաղաքը և գերեվարեց մորդ՝ եղբայրներիդ հետ

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 329:

² Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 329:

³ Գեղմնազգի, ըստ Աղոնցի Դեմնազգի, այսինքն՝ Գիլանի լեռներում բնակվող դեմնազգիները կամ դեյլեմազգիները:

միասին»։ Իսկապես եմ ասում, ինչպես ձագակոտոր արջ զայրագնած գազանացել էր։ Դառնացած արագ անցնում է իրեն ննթակա իր հայրենիքի սահմաններից Կուր գետի այն կողմը գտնվող Կապիճան գավառը և այնտեղ նրանց դեմ ճակատամարտում է ոչ այնպես վայրիվերո, այլ մտածված ու կշռադատված։ Իր անվախ կռվի հետևանքով գլխից վերք է ստանում, սակայն Քրիստոսի գորևղ աջի օգնությամբ այնպես կտրուկ և ուժեղ հանդես եկավ, որ թշնամուց մինչև անգամ մի մարդ էլ կենդանի չմնաց։ Այստեղից մեծ ու պանծալի անունով դադար է առնում Վրաստանի սահմաններում։ Երկրի իշխող Ատրներսեհը, որ մի մեծապատիվ մարդ էր և հռոմեական թագավորությունից ստացել էր նռակի գահերեցության տիտղոս, այդտեղ այցելում է նրան. ինքն իր ձեռքով փաթաթում է նրա վերքը և նրա քաջարի հաղթությունը համարում է մեծ ուրախություն։ Այդ ժամանակ խաղաղ և անքակտելի դաշինք են կապում միմյանց հետ, ու Ջվանշիրը օգնական գորք է վերցնում վրացիներից, աճապարում է ամենից առաջ արշավել Ուտիք. այդտեղ պարսից զորքից ում որ գտնում է, տնդն ու տնդը սրի ճարակ է դարձնում։ Եվ չափազանց շտապ հասնում է իր ձմեռանոցային քաղաքի (մատենագիրը նկատի ունի Պերոզապատը, – Է.Ս.) վրա ու նույն ձևով է վարվում...:

Դրանից հետո Ատրպատականից սկսվեցին էլ ավելի շատ զորքեր թափվել այնտեղ։ Սակայն նա բոլորովին չէր վախենում նրանցից, քանզի նրա էությունը այն էր, որ շատերի դեմ ավելի էր խիզախում, քան քչերի հանդեպ։ Ծակաշեն գավառում էլ նա երկու ինչ-որ ճակատամարտերի ընթացքին խիստ վրիժառությամբ խոցոտումով իրենց գնդերով հազարավորների կյանքին վերջ տվեց։ Թե դրանից հետո զանազան տեղերում ինչքան պարսիկներ են կոտորվել Ջվանշիրի ձեռքով, ասելու տեղը չէ»¹։

Այդ ամենի համար, որը տեղի ունեցավ 639 թվականին², հայոց ու վրաց նախարարներից ամեն մեկը ցանկանում է խնամիանալ Ջվանշիրի հետ՝ իրենց սերնդից նրան կին տալով։ Սակայն Ջվանշիրը «կին է առնում Արուիճան տոհմից Միսական

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 138–139:

² Տես, «Ադրբեջանի պատմություն» (ռուսերեն), Բաքու, 1958թ., էջ 105:

(Սյունիքի 7-րդ գավառը, – Է.Ս.) նահանգի իշխանի դատերը, որի համար Սյունիքը ընդմիշտ ուրախանում է»¹:

Հայոց Աղվանքում (Պարտավի մոտ) կրած պարտությունից հետո պարսից զորավարը հարկադրված էր հաշտության դիմելու: Նա «նամակ գրեց և ուղարկեց Սյունիքի բարձրաստիճան իշխանին ու մեծ երդումներով առաջարկեց, որ սա հաշտության գա, իսկ միջնորդը հազիվ-հազ համոզեց նրան, որպեսզի երկու կողմն էլ միակամ հաշտություն ու խաղաղություն կնքեն: Հաշտություն կնքեց և մտքում խորհելով վերադարձավ, իսկ Աղվանից սպարապետը մոր ու եղբայրների հետ գնաց իր երկիրը»²:

Օգտվելով Պարսկաստանի վրա արաբական հարձակումներից, Ջվանշիրը մտադրվում է, որ «իր իշխանությունը ոչ մեկին ենթակա չլինի: Նա խիզախ կերպով պարսից զորապետին առաջարկում է, որ յուրաքանչյուր կողմը պետք է անկախ իշխի, և ինքը եղբայրների հետ մտնում է հայրենի երկիրը: Իսկ պարսից զորավարը ուխտագնաց լինելով պատրվակներով կանչում է նրա հորը և առաջարկում, որ հնազանդվի իրեն, գնդեր է ուղարկում և Աղվանքի նահանգի համար կուսակալ է նշանակում:

Արդ՝ ի՞նչ անեին այն քաջ Ջվանշիրը և նրա Անդրանիկ եղբայրը, որոնք ինքնասեր մարդիկ էին: Վրեժխնդրությամբ լցված՝ զինվեցին, հեծան արագընթաց երիվարներ և այն երկար ճանապարհը կարճ կտրելով, շրջելով եկան Պերոզ-Կավատ քաղաքի մոտ և չորս կողմից շրջափակված մի անտառախիտ տեղում առաջին անգամ քուն մնտան: Արեգակը ծագելու հետ աշյուծի կորյունների նման ձիարձակվեցին և քաղաքը գրավեցին: Նրանց, որոնք քաղաքում կամ պարսից զորավարին ենթակա սահմաններում էին գտնվում, չարաչար կերպով պատժեցին, իրենց զինավառ զորքերով այնքան ծանր հարվածներ հասցրին պարսիկներին, մինչև որ իրենց հորը վերադարձրին»³:

Այդպիսով, մինչև 640 թվականը Աղվանքում Ջվանշիրին մենք տեսնում ենք պարսիկների դեմ մարտնչելիս: Պարսիկներին չի հաջողվում կոտրել Ջվանշիրի համառ դիմադրությունը և ամրանալ Աղվանքում՝ արաբներին դիմադրելու նպատակով: Սա-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 139:

² Նույն տեղը:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 140:

կայն այդ ժամանակ արաբներն էլ դեռ հնարավորություն չունեին հաստատապես նվաճելու Անդրկովկասը, ընդ որում նաև Հայոց Աղվանքն ու նրա անբաժան մաս Արցախը՝ նախ նոր գրաված երկրներում և հատկապես Պարսկաստանում ու Միջագետքում, ամուր հիմքեր չունենալու և երկրորդ, Բյուզանդական կայսրության տակավին պահպանվող ռազմական հզորության և Անդրկովկասի ժողովուրդների հերոսական դիմադրության պատճառով: Այս ամենին պետք է ավելացնել նաև խալիֆության ներսում տեղի ունեցող գահակալական կռիվներն ու քաղաքական տարբեր հոսանքների միջև առկա սուր պայքարը, որոնք մեծ չափով խանգարում էին արտաքին քաղաքականության հարցերի հետևողական և արագ լուծմանը: Այս բոլորով հանդերձ արաբական վտանգը ողջ Հայաստանի, նաև Արցախի համար մնում էր որպես քաղաքական ամենակարևոր հարցը: Նոր զարգացող Արաբական խալիֆությունը անարգել ընթանում էր դեպի հզորացում, ուստի նրա առաջընթացը կանգնեցնել հնարավոր չէր: Նկատենք նաև, որ արաբները Հայաստանին տիրելու համար Բյուզանդիայի հետ մրցություն ավելի խորամանկ են գտնվում: Եթե Բյուզանդական կայսրությունը, հետևելով Հայաստանի տնտեսական քայքայման և երկրի ամբողջական յուրացման իր հին քաղաքականությանը, չէր դադարում ամեն տեսակ ճնշում գործադրելուց՝ ինչպես շինական ժողովրդի, այնպես էլ ազնվականության վրա, ապա արաբները գրեթե չէին միջամտում հայ նախարարների ներքին գործերին: Եվ ոչ էլ ձգտում էին ոչնչացնել նախարարների զինված ուժերը, եթե միայն այդ նախարարները չէին հարում Բյուզանդիային: Այս հանգամանքը հայ իշխող դասակարգելի ներկայացուցիչների մեծ մասին թեքում է արաբների կողմը: Հակումը դեպի արաբները մեծացավ մանավանդ 650 թվականին, երբ խալիֆության նավատորմը, մոտենալով Կոստանդինուպոլսին, հարկադրեց Կոնստանս կամ Կոստանդին Բ կայսրին (642–668 թ.թ.) ռազմատուգանք վճարել և կնքել եռամյա զինադադար: Սակայն արաբական արշավանքների ժամանակվանից սկսած, այդ չափազանց բարդ ու լարված պայմաններում, հայ քաղաքական ընտրանու տարբեր հոսանքների ներկայացուցիչների, կրոնական ու զինվորական գործիչների միջև չկար միասնական կարծիք ու կողմնորոշում: Երբ Բյուզանդական կայսր Կոնստանս Բ-ը, հենվելով Հայաստանում

գտնվող իր գորքերի վրա և օգտվելով Ներսես Գ Տայեցու բյուզանդական կողմնորոշումից, կրկին հրահրում է քաղկեդոնական դավանանքի հարցը, 648 թվականին Դվինում գումարվում է հատուկ ժողով, որտեղ հիմնականում պետք է քննվեր Բյուզանդիայի առաջարկած քաղկեդոնականության ընդունման հարցը: Դվինի ժողովին մասնակցում էին ինչպես հայ հոգևորականության, այնպես էլ քաղաքական ընտրանու ներկայացուցիչները: Այդ ժողովում հաղթանակում են Թեոդորոս Ռշտունու կողմնակիցները, այսինքն ժողովը կտրականապես մերժում է Բյուզանդիայի առաջարկությունը՝ հրաժարվում ընդունել քաղկեդոնական եկեղեցու դավանանքը: Մեբնուս պատմիչն անդրադառնալով Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած նենգամիտ քաղաքականությանը, դառնացած գրում է, որ հայերը կոնստանս Բ-ին ուղղած իրենց պատասխան նամակում ասում էին, որ առաջներում ևս, «երբ բյուզանդացիները Հայաստանի թագավորությունը վերացրին, զորքը ոչնչացրին և տղամարդկանց ու կանանց գերեցին, մնացածներին սրի հարկադրանքով ու ահաբեկումով աշխատեցին դեպի մոլություն տանել, էլի չկարողացան»¹:

Հայ ժողովրդի պատմությունը արաբական ավելի քան երկդարյա տիրապետության ժամանակաշրջանում հանրահայտ է, այն համառոտակի շարադրված է Ստ. Մելիք-Բախշյանի «Հայաստանը VII–IX դարերում» (Երևան, 1958թ.) գրքում և այլ հեղինակների աշխատություններում: Դեպի Հայաստան արաբների կատարած երեք արշավանքների մասին խոսելուց հետո, Ստ. Մելիք-Բախշյանը հանգամանորեն քննում է հայերի քաղաքական կողմնորոշման համար մղված պայքարի հարցը: Նա բարձր է գնահատում VII դարի տաղանդավոր զորավար, նշանավոր քաղաքական գործիչ ու դիվանագետ Թեոդորոս Ռշտունու վարած քաղաքականությունը: Ստ. Մելիք-Բախշյանը փաստացի նյութերի հիման վրա ցույց տալով հայ ժողովրդի ծանր վիճակը արաբական լծի տակ, վեր է հանում մինչև անգամ Անդրկովկասի մյուս ժողովուրդների ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ: Այս աշխատությունում մենք նույնպես հատուկ տեղ ենք հատկացնում արաբական ասպատակություններին Արցախում, ողջ Հայոց Աղվանքում, Հայոց

¹ Մեբնուս, «Պատմություն», Երևան, 1939թ., էջ 122:

Արևելից նահանգների հայության դիմադրությանն ու հետևանքներին, քաղաքական ու կրոնական էլիտայի պահվածքին: Այդ ժամանակ, ինչպես տեսանք, Հայոց Աղվանքի իշխանը Ջվանշիրն էր, որը ձգտում էր ուժեղի կողմը լինել, միայն թե երկիրը օտարերկրացիների ասպատակությունների դաշտի չվերածվեր: Նա ևս պակաս դիվանագետ, գորավար ու քաղաքական գործիչ չէր, քան Թեոդորոս Ռշտունին: Ահա թե ինչու սկզբում Ջվանշիրը ենթարկվում է պարսից տիրապետությանը և հենց Պարսկաստանում էլ հերոսաբար կռվում արաբների դեմ, իսկ պարսիկների հետ գժտվելուց, արաբական վտանգի մեծությունը զգալուց ու Աղվանք վերադառնալուց հետո, նրան տեսնում ենք բյուզանդացիների ու հյուսիսեցիների կողմը: Ջվանշիրը տեսնելով, որ կոնստանս Բ կայսրը Դվինի ժողովից դժգոհ լինելով արագորեն համախմբում է իր ուժերը Հայաստանի վրա հարձակվելու համար, ընդունում է հայկական զորքերի հրամանատարի դաշնակցային հրավերը և Աղվանքի ու Վրաստանի քաղաքական-ռազմական ընտրանու հետ միասին նախապատրաստվում է դիմադրելու բյուզանդացիներին: Թեոդորոս Ռշտունուն հաջողվում է համոզել Ջվանշիրին, որ անհրաժեշտ է շուտափույթ բանակցություններ սկսել Արաբական խալիֆայության հետ: Դրա անհրաժեշտությունը հատկապես մեծացել էր 652–654 թվականներին, երբ մեծանում է բյուզանդական վտանգը:

Հայաստանը խալիֆաթի գերիշխանությունն ընդունել է 652 թվականին, երբ Թեոդորոս Ռշտունին Ասորիքի կառավարիչ, հետագայում խալիֆ Մուավիայի հետ կնքեց հատուկ պայմանագիր, որով Հայաստանը նույնիսկ պահպանում էր իր ինքնուրույնությունը: Արաբական ոչ մի չինովնիկ Հայաստան չպետք է մտներ, հայկական բերդերում արաբական զինված ուժեր չպետք է պահվեին և այլն: 652 թվականի պայմանագրի կնքումը կարևոր նշանակություն ունեցավ երկիրն առժամանակ արաբների ասպատակություններից փրկելու համար: Այդ պայմանագրի կնքումից հետո Թեոդորոս Ռշտունին նշանակվում է Հայաստանի և ողջ Անդրկովկասի կառավարիչ:

652 թվականի հայ-արաբական մերձեցմանը, ինչպես նաև պայմանագրի կնքմանը Բյուզանդական կայսրությունը չկարողացավ անմիջական միջամտություն կամ արգելք հարուցել: Ավելին, բյուզանդացիները նույնիսկ իրենց զորքերը դուրս տա-

րան Արևելյան Հայաստանի որոշ շրջաններից: Սակայն ուշադրությամբ հետևելով Հայաստանում զարգացող քաղաքական նոր իրադարձություններին, Բյուզանդիան տննդազին կերպով նախապատրաստվում էր Հայաստանն ամբողջապես գրավելուն: 652 թվականի աշնանը կայսր Կոնստանս Բ-ը, հարյուր հազարանոց բանակի գլուխ անցած, հարձակվեց Հայաստանի վրա: Այդ ժամանակ էր, որ Թևոդորոս Ռշտունին իր զինակիցների՝ Վրաստանի, Աղվանքի և Սյունիքի հավատարիմ իշխանների հետ կազմակերպելով երկրի պաշտպանությունը, ամրանում է Աղթամար կղզում, իսկ Կոնստանս Բ-ը քսանհազարանոց մի զորաբանակով շարժվում է դեպի արևելք, հասնում Դվին, և առանձին զորամասեր ուղարկում Վրաստանը, Աղվանքը և Սյունիքը նվաճելու համար: 652–653 թվականների ամբողջ ձմեռը կայսրն անցկացրեց Դվինում, իսկ 653 թվականի գարնանը ստիպված վերադարձավ Կոնստանդնուպոլիս՝ պետական կարևոր գործերը կարգավորելու նպատակով: Այդ ժամանակ արաբական յոթհազարանոց մի զորաբանակ օգնության է ուղարկվում Աղթամարում ապաստանած Թևոդորոս Ռշտունուն, որը հայկական զորքերի հետ միասին պիտի հարվածեր բյուզանդական այն զորամասին, որը կայսրի կարգադրությամբ և Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ հարձակում էր սկսել Թևոդորոս Ռշտունու վրա: Բյուզանդական զորքերը կատարյալ պարտություն կրեցին: Ահա այդ ժամանակ էր, որ արաբական խալիֆությունը փոխում է իր վերաբերմունքը Հայաստանի ու Հայոց Աղվանքի նկատմամբ և ձգտում զենքի ուժով վերջնականապես նվաճել ամբողջ Անդրկովկասը: Այդ մասին փոքր ի շատն մանրամասն ու հաջորդականորեն տեղեկություններ են հաղորդում արաբ հեղինակները, գլխավորապես Բնիագորին և Ատ-Տաբարին, որոնց վկայություններն էլ մեջ ենք բերում այստեղ: 654 թվականին Դվինը գրավելուց հետո Հաբիբը նվաճում է Նախիջևան քաղաքը, ապա անցնում Սիսաջան (Սիսական, Սյունիք): Արաբ պատմագիրներն առհասարակ շատ քաջ և պատերազմական են ներկայացնում Սիսաջան ցեղը, որոնցից Հաբիբը դիմադրության է հանդիպում: Գրավելով Վայիսի (հավանաբար Վայոց Ձորի) բերդը, արաբները մյուս սիսական բերդապահ զորքերի հետ հաշտություն են կրում՝ գլխահարկ վճարելու պայմանով: Սյունիքից Հաբիբը շարժվում է դեպի արևմուտք, իսկ Սելման կամ Սալման

իբն Ռաբիա ալ-Բահիլին արշավում է դեպի Ադվանք, նախ գրավում Բնյական կամ Բայլական քաղաքը (Փայտակարանը), հպատակեցնում իրեն, ապա շարժվում դեպի Պարտավ (Բարդա կամ Բարդաս) մայրաքաղաքը: Ահմադ իբն Յահյա իբն Ջաբրիլի վկայությամբ «Սուլեյման իբն Ռաբիան արշավեց օթման իբն Աֆանի ժամանակ Առանի վրա և գրավեց Բայլականը ու հաշտության դաշնագրով ապահովեց նրանց կյանքն ու ինչքները, ինչպես նաև քաղաքի շենքերը, պայմանով, որ ջիզա և խարաջ վճարեն: Հետո արշավեց Պարտավի վրա»: Վերջինիս բնակիչները փակում են քաղաքի դարպասները և դիմադրում թշնամուն: Արաբները պաշարում են քաղաքը և ասպատակում գյուղերը: Ստեղծված իրավիճակում ազգաբնակչությունն ավելորդ համարեց այլևս դիմադրել, ուստի և հպատակություն հայտնեց Սելվանին: Արաբական աղբյուրները հաղորդում են, որ Սալման իբն Ռաբիա ալ-Բահիլին «Բարդան նվաճեց Օսման իբն Աֆանի ժամանակ: Նա Բայլականը գրավելուց հետո արշավեց Բարդաայի վրա և բանակ դրեց Թարթուր (Թարթառ, – Է.Ս.) գետի մոտ, որը քաղաքից հազիվ մեկ փարսախս հեռավորություն ունի: Բնակիչները քաղաքի դռները փակեցին, դրա համար նա հարձակվեց շրջակա գյուղերի վրա, որտեղ բերքը քաղված էր արդեն: Հետո հաշտություն կնքեց՝ Բայլականի հաշտության հար և նման պայմաններով, և մտավ քաղաք: Այնտեղից ուղարկեց իր հեծելազորը՝ ուրիշ երկրներ գրավելու համար»: Նա իր հեծելազորով գրավում է ամբողջ Ուտի նահանգը, Շակաշենը, Մեծկվանքը, Մեծիրանքը, Հարջլանքը, Թոբադը, Շամլտորը: Արաբական աղբյուրները հաղորդում են, որ «Շամքորը, որը հին քաղաք է, նվաճեց Սալման իբն Ռաբիա զորավարը՝ Պարտավը գրավելուց հետո: Այս շեն ու բազմամարդ քաղաքը ավերեցին Արմենիայից հեռացած օրերում»²:

Սալման իբն Ռաբիան իրեն է հպատակեցնում այն տարածությունները, որոնք ձգվում էին մինչև Կուր և Արաքս գետերի խառնարանը և առանց դիմադրության տիրանում նաև Շիրվանշահի երկրների, մի քանի լեռնաբնակ ցեղերի և հասնում ընդհուպ

¹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965թ., էջ 40:

² Նույն տեղը:

մինչև Դերբենդ քաղաքը: Այդտեղ արաբներն ընդհարվում են բուլղար անունով ցեղի հետ և կռվի մեջ Սելմանը սպանվում է:

Մակար եպիսկոպոսը գրում է. «Արաբացուց ոստիկաններն ու զորավարներն այնքան չէին կասկածում և վախում դաշտաբնակ իշխող հայերից, որքան կասկածում և վախում էին լեռնաբնակ իշխաններից: Արդեն իրացրած էին ոստիկաններն Դարբանդի, Վատնեան, Ադուանից դաշտային և Շաքուայ և Շամախու դաշտային և լեռնային բոլոր գաւառները. բայց Արցախի լեռնային գաւառների հետ ոգորում էին անընդհատ, որ իրացնեին»¹:

Այնուամենայնիվ համարյա ամբողջ Անդրկովկասը, ընդ որում նաև Արցախը հպատակվում է արաբներին, իսկ Հաբեբը նշանակվում է բոլոր այդ երկրների ընդհանուր կառավարիչ: Նշված երկրներում արաբ վերնախավի ներկայացուցիչները սկզբում հայտարարում էին, թե իրենք չեն հալածում այլադավներին: Սակայն իսլամն ընդունող հպատակներին տալիս էին զանազան արտոնություններ, որոնցով և գրավում էին շատերին: Իսլամն ընդունող գյուղացին ազատվում էր գլխահարկից և որոշ ժամանակ էլ պետական գանձարանից դրամական վարձատրություն ստանում²: Արտոնություններ էին տրվում նաև իսլամացող վերնախավին ու արհեստավորներին: Խալիֆաթը նվաճած երկրների համար օրենք էր սահմանել. «Իսկական մուսուլմանները, քանի կենդանի են, ապրում են նրանց հաշվին (հպատակեցված ժողովուրդների, – Է.Ս.): Իսկ երբ մենք մեռնենք, և նրանք էլ մեռնեն, ապա մեր որդիները պետք է ապրեն նրանց որդիների հաշվին, և այդպես մինչև դարերի վերջը»³: Դա նվաճված երկրների արաբացման կուրս էր, որի հետևանքով Անդրկուրյան բնիկ ցեղերից ոմանք մահմեդականացվում էին: Սակայն նույնը տեղի չէր ունենում և տեղի ունենալ չէր էլ կարող Հայոց Ազվանքում և նրա նահանգ Արցախում: Այստեղ սխալն ու դիտավորությունն այն է, որ Արցախը VII դարի կեսերին ներկայացվում է նաև իբրև ադրբեջանցիներով բնակեցված նահանգ: Մինչդեռ այդ ժամանակ ևս այն զուտ հայաբնակ նահանգ էր, իսկ այսօր-

¹ «Պատմություն Ադուանից», Ա հատոր, 1902թ., էջ 156–157:

² Стів Крымский А. «История арабов...». М., 1918г. С. 133.

³ Аб-Юсуф, «Книга о земельном налоге». Л., 1941г. С. 242.

վա առումով ադրբեջանցի հասկացողությունը մոզոնվեց 13 դար հետո՝ խորհրդային ղեկավարության թնթսն ձեռքով:

Այդպիսով, փաստորեն Հայոց Աղվանքը ևս դաշնակցության մեջ է մտնում ժամանակի «դժոխքի»՝ արաքների հետ: Չնայած Հաբիբը նշանակվել էր գրեթե ամբողջ Անդրկովկասի կառավարիչ, բայց և այնպես գրավված երկրների, հատկապես հայկական նահանգների բարձր կառավարումը հանձնված էր ազգային էլիտային և պահպանվում էին հին կառավարման ազգային ձևերը: Թեև արաբ պատմագիրները Հաբիբից հետո էլ հիշատակում են Հայաստանի արաբ կառավարիչների անունները, բայց դրանք Պարսից մարզպանների չափ անգամ իշխանություն չունենին տեղական բնակչության հանդեպ: Բացի այդ, հայոց բերդերում արաբական գորքեր տեղակայված չէին: Միայն մի գորաբաժին, այն էլ ոչ շատ խոշոր, գտնվում էր արաբ կառավարչի մոտ, որին հայ մատենագիրները տալիս են ոստիկան անունը և որը նստած էր լինում կամ Դվինում կամ էլ Պարտավում: Այսինքն ոստիկանական այդ ուժերին ամենայն ցանկության դեպքում անգամ արաբ քաղաքական վերնախավ չի կարելի համարել: Իսլամ ազգաբնակչություն էլ Արցախում չկար, այնպես որ արաբական իշխանությունը գրեթե առիթներ չունեիր հայկական Արցախի ներքին գործերի մեջ խառնվելու՝ իրենց հավատքը պաշտպանելու պատրվակով: Սակայն այնուամենայնիվ Հայոց Աղվանքի, Արցախի ու ողջ Հայաստանի դրությունը արաբական տիրապետության շրջանում գնալով վատանում էր՝ օտար լուծը մնում է օտար լուծ: 654 թվականից ի վեր արաբները սանձարձակ կերպով կողոպտում և սվիրում էին գրավված երկրները: Հայերն իրենց սեփական ուժերով չէին կարողանում արհավիրքի առաջն առնել: Միակ ելքը դրսի օգնությանը դիմելն էր: Արաբական խստությունները այն աստիճան են նեղում հայերին, որ նորից հասունանում և ստիպողական անհրաժեշտություն է դառնում բյուզանդական կայսրի հովանավորությանը դիմելը: 659 թվականին Ներսես Գ կաթողիկոսը իր վրա վերցրեց Բյուզանդական կայսրության հետ բանակցություններ վարելու գործը և առաջարկեց Կոնստանս Բ-ին Հայաստանը վերցնել իր հովանավորության տակ, խոստանալով ընդունել քաղկեդոնականությունը: Կոնստանս Բ-ը ուրախությամբ գնում է այդ խնդրի լուծմանը: Արաբները զբաղված լինելով ներքին կռիվներով, չկարողացան

խափանել հայ-բյուզանդական այսպես կոչված մերձեցումը և բավարարվեցին Դամասկոսում գտնվող հայ պատանդներից 1175 հոգու գլխատելով: Խալիֆության ներսում ծայր առած գահակալական արյունահեղ կռիվները վերջացան Ալի Խալիֆի (656–661 թ.թ.) ապանությանը և Ասորիքի արաբների հաղթանակով: Նոր խալիֆ հռչակված Մուավիան (661–680 թ.թ.) հիմնադրեց նոր հարստություն, որը հայտնի է Օմայան դինաստիա անունով: Մուավիայից սկսած, արաբական խալիֆների կենտրոնը դարձավ Դամասկոսը: Նոր հիմնադրված հարստության շահերը պահանջում էին խալիֆության քաղաքական տիրապետության հիմքերի ամրացման համար մեղմացնել նաև վերաբերմունքը հպատակ ժողովուրդների նկատմամբ: Այդ քաղաքականության ընդհանուր սկզբունքներից ելնելով, 660-ական թվականներին Մուավիան վերականգնեց հայերի հետ ունեցած 652 թվականի հաշտության պայմանագիրը: Դա նաև այն բանի հետևանք էր, որ Բյուզանդիան շարունակ պայքարում էր ամբողջ Հայաստանին տիրելու համար:

Մ. Կադանկատվացու վկայություններով հաստատվում է, որ Չվանշիրը որոշ տատանումներից հետո արաբների նկատմամբ այնպիսի դիրք է ընդունում, ինչպես Թեոդորոս Ռշտունին: Մենք Չվանշիրին տեսնում ենք հայոց գորավարի հետ միացած՝ հունաց կայսրից հովանավորություն ու պաշտպանություն ակնկալելիս, փոխարենը խոստանալով տնտեսական, բայց ոչ քաղաքական հպատակություն: Դա այն ժամանակ էր, ինչպես նշվեց, նրբ արաբական արշավանքները դեռ լուրջ վտանգ, անհաղթահարելի կամ անդիմադրելի ուժ չէին պատկերվում: Մենք տեսանք նաև, որ Թեոդորոս Ռշտունին հարկադրաբար թողնում է բյուզանդացիներին և դաշնակցում արաբների հետ: Նկատեցինք նաև, որ այս քաղաքականության մեջ հայ գորավարի հետ կամակից ու գործակից հանդիսացավ Չվանշիրը, կամակից ու գործակից հանդիսացան վրացիները, պոնտեցիները, Աղվանքի ու Արցախի բնակիչները: Եվ ասիա 659 թվականից դրությունը կրկին փոխվում է: Նորից առաջ է քաշվում Բյուզանդական կայսրության օգնությամբ արաբական լուծը թողափելու հարցը և այս անգամ ևս մենք Չվանշիրին տեսնում ենք այդ քաղաքականության ջատագովների ճամբարում, սակայն ոչ թե իբրև ներկրորդական դեմք, այլ որպես կայսրի քաղաքական զինակից: Նկատելով

արաբա-բյուզանդական մրցավեճը, Ջվանշիրը 660 թվականին փորձում է արաբների դեմ օգտագործել բյուզանդացիներին: Մ. Կաղանկատվացին այդ դեպքերի մանրամասները հաղորդում է այսպես. «Այսպիսով արաբները հարձակվեցին հյուսիսային ու արևելյան կողմերի վրա: Նրանք տոհմերի ավագներին ներում էին, որ սրանք հանձնեն ապավինության տեղեր, և սրանցից իբրև պատանդներ առնում էին գավակներին ու կանանց, որպեսզի իրենց դեմ չապստամբվեն: Երբ Ջվանշիրը տեսավ հարավացու դաժան գորությունը, կարճ ժամանակով խաբեց նրանց, անցավ գետի այն կողմը, որտեղից անվիհեր քաջը իրեն ոգեշնչում, բորբոքում է՝ վերստին պատերազմելու նրանց դեմ, որպեսզի իր հորը նրանցից ևս ազատի: Բայց հայրը արգելեց նրա այդ մտադրությունը և ինքնակամ գնաց թշնամու մոտ: Իսկ բազմակողմանի իմաստուն Ջվանշիրը հայրոց գորավարի հետ դաշինք կնքեց և համոզում էր նրան, որ հնազանդվի բյուզանդական կայսրին: Եղբայրական համաձայնության գալով՝ Ջվանշիրը հունաց թագավորին նամակ է գրում հետևյալ ձևով՝ «Ամենահաղթ տեր, բյուզանդացիների հզոր և ողորմած թագավոր Օգոստոսափառ Կոստանդին, ծովերի ու ցամաքների աստվածարար իշխող. Աղվանքի սպարապետ և իշխող Ջվանշիրը արևելիցիներիս քեզ հնազանդող ռոջ երկրով նվաստորեն ողջունելով, երկրպագում է:

Թող հաճելի լինի քո քրիստոսասեր տերությանը՝ սիրով ընդունելու հեռավոր մարդկանց նորընծա այս հնազանդությունը, որպեսզի քո փառքի մեծ վայելչությունից նաև մեր պսակատենչ խոնարհությանը պարզևի աստվածային շնորհ ունեցող բարերարություն»¹:

Կոստանդին Բ կայսրը (642–668 թ.թ.) շատ ուրախացավ Ջվանշիրի նամակով կամ հրովարտակով, «հրճվեց. այդ օրը շատ և մեծ ուրախությամբ անցկացրեց ու իսկույն հրամայեց երդմնագիր գրել և միակամ խաղաղություն պահպանել: Մեծամեծ պարգևներ շնորհեց. ուղարկեց քանդակագարդ թիկնակով ոսկեզօծ արծաթյա գահույք, ոսկեհույս հանդերձանք և իր անձնական մարգարտագարդ պատյանով սուսերը: Նրան դարձրեց պրոտոն պատրիկ և իրավունք տվեց, որ նա ում կամենա, 1200 մարդու

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 140–141:

շնորհի պատրիկության, հյուպատոսության, Եպարքոսության, սպարապետության, Ելիստության աստիճան: Նաև Քրիստոսի կենարար խաչի մի մասը, որ իր ծոցում պարանոցին կրում էր, հանեց և ուղարկեց նրան»¹:

Կոստանդին Բ կայսրն իր հերթին նամակ է ուղարկում Ջվանշիրին, որում ասված էր. «Քեզ՝ տեր Ջվանշիրիդ, Գարդմանի տիրոջ, Աղվանքի իշխանիդ, ապուհիպատ (փոխհյուպատոս, – Է.Ս.) և առաջին պատրիկիդ, արևելքի կուսակալիդ, փրկարար խաչի աստվածային գործությունից շնորհ և ողորմություն, իսկ մեր օգոստոսափառ թագավորությունից խաղաղական և մեծ սիրով ողջույն:

Ստացանք քո ողջունագիրը, որ մեզ ցույց տվեց առ աստված տածած քո բարեպաշտ սերը, և ուրախացանք այն բանի համար, որ դու հանձն ես առել արևելյան երկրովդ հանդերձ հնազանդվել մեզ: Դրա համար մենք և մեր որդիները քեզ և քո զավակների հետ սերնդեսերունդ, առհավետ մտերմական անբակտելի սիրով ու քաղցրությամբ կապրենք»²:

Ջվանշիրն իր հերթին շատ ուրախացավ՝ ստանալով Կոստանդին Բ կայսրի նամակը: Նա «երեսնիվայր բնկավ փրկարար խաչի առջև ու սկսեց փառավորել աստծուն, որ բոլոր բարությունների տվիչն է»³: Իսկ Աղվանքի կաթողիկոսը Եպիսկոպոսներով ու երևելի մարդկանց բազմությամբ ծաղիկներ է բերում և օրհնում Բյուզանդիայից ուղարկված նվերները: Այսպիսով Վրաստանի սահմաններից մինչև Արաքս գետը տեր դարձավ միահեծան մեծությամբ: Եվ ապա. «Իր թագավորության տասնիններորդ տարում Կոստանդիանոսը՝ Ներակլի թոռը, հունական բազմաքանակ զորքերով ու շատ ընտիր զորապետներով պատրաստված եկավ Պարսկաստան ու արաբներից խլեց երկիրը՝ իր հետ ունենալով աշխարհի ճառագայթավետ լույսը՝ Քրիստոսի խաչը: Այդ ժամանակ զորագլուխներից մեկին ուղարկեց Ջվանշիրի մոտ, որպեսզի սա գա տեսության: Ջվանշիրը անմիջապես աճապարեց և հասավ Մարաստան՝ կայսեր մոտ: Այս վերջինը լսելով նրա գալու մասին, ինքը նրան ընդառաջ գնաց Քունդր գյուղը և ողջույն»

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 141:

² Նույն տեղը, էջ 142:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 141:

յամբ ընդունեց նրան: Նա անմիջապես հրամայեց նրա վրայից հանել սգազգեստները, որ հագել էր իր կնոջ մահվան առթիվ, և հագցրին նրան պալատական զգեստներ: Այս բանի վրա նա համարձակություն առնելով՝ կայսրից խնդրեց հավետնական թագավոր խաչի մասը: Նա վերցրեց փրկարար արեզակը (խաչը), նրա դեմ հանդիման կտրեց և մեղքերի փարատիչը տալով նրան, ասաց. «Սա թող քեզ ու քո որդիների համար լինի հզոր պատենեշ ընդդեմ թշնամու»: Երբ հայոց նախարարները և գորավար Համագասպը տեսան, որ այսպիսի երկնավոր պարգևը նրա մոտ է գտնվում, խիստ նախանձեցին. բայց նա ուշադրություն չէր դարձնում, այլ այնուհետև բարեսեր թագավորից հրաժեշտ է խնդրում և այն էլ ոչ իբրև ստորադաս մեկը, այլ իբրև գահակից եղբայր ընդդեմ պարսիկների: Այրարատյան ազատանու հետ նրան ճանապարհ է դնում. սա սքանչացած աստծու իր նկատմամբ եղած ներողամտության վրա, վերադառնում է իր երկիրը: Աղվանից հոգեզվարճ Ուլստանես հայրապետը լսելով նրա ժամանումը, մեծաթիվ ժողովրդի ներկայությամբ օրհնեց նրան՝ բարձրաձայն ասելով. «Ահա տները Սիոնից մեզ գորության գավազան ուղարկեց, և մենք սրանով պետք է տիրենք մեր թշնամիներին»:

Իմաստուն Ջվանշիրը մտածում է Քրիստոսի խաչի համար պահպանման վայր գտնել. ուստի և Գարդման բերդի իր բնիկ գավառում կառուցում է եկեղեցի ու շքեղ գեղազարդում ի խնդրություն և ի փառս Քրիստոս աստծու: “Եվ երբ գարունը բացվեց, Աղվանքի մեծարգո իշխանը կազմ, պատրաստ գտնվեց երկրորդ անգամ տեսնելու կայսրին և հանդիպեց նրան Վաղարշապատ քաղաքում: Նույն ժամանակ թագավորը հրամայեց, որ պալատական մեծամեծներն ու բարձրաստիճան մարդիկ ընդառաջեն նրան: Այդպես արքայաբար մտավ կայսերական մարզարանը: Կայսրը նրան տեսնելով, ուրախ համբույրով բոլոր մեծամեծներից վերև նրա աթոռը դրեց՝ առաջարկելով նստել: Այդ օրը օրենքի մեջ օրհնվեց ոսկու և արծաթի տեսակ-տեսակ գեղազարդությամբ: Հրամայեց նրան տալ թագավորական ամբողջ սպասքը, որի պատճառով սեղանակիցներն էլ սոսկացին: Դրանից հետո իր Հերակլ քաջ պապի և Նիկիտա տատի արքունական գոտին կապեցին նրա մեջքը. տվեց իր պատմունքները: Երկու դրոշակներ և որդիներին դեռահաս պատրիկներ դարձրեց: Աղվանքի առաջին

թագավորները եթե որևէ ժամանակ գյուղեր և ուրիշ տարածություններ ունեցել էին, բոլորը սերնդեսերունդ նրան հանձնեց և իրավունք տվեց, որ բոլոր արևելցիներին արքայաբար կառավարի:

Կայսրը նրանից ոչ մի գաղտնիք չուներ և նրանից լսելով բազմաթիվ խելացի խորհուրդներ, հիանում էր. վերջում ողջունելով նրան՝ ասում է՝ «Քո անձը իմ անձի փոխարեն է, իսկ իմ սիրտը քո սիրտն է, գնա խաղաղությամբ»: Այսպիսի մեծագույն հրճվանքով գալիս մտնում է իր երկիրը և վերստին հրաման է արձակում, որպեսզի այն երկրներում, որ պատկանում էին իրեն, շենքեր շինեն, ծառեր տնկեն, վայելելով ապրեն խաղաղությամբ: Նա ինքն էլ բազմաթիվ ապարանքներ և ուրիշ այնպիսի բաներ շինեց, որոնք մարդկանց վայելքների համար են. ...նա ամենաթանկագին առարկաներն ուներ, մինչև անգամ թուրքեստանցիների թագավորը նրանից հաշտություն ու խաղաղություն խնդրեց: Նրան ընծայաբերում էին ընտիր երիվարներ, ծառաներ ու աղախիններ և զանազան կենդանիների մորթիներ: Նույնիսկ Ասորեստանից, Ատրպատականից, Այրարատից ու Վրաստանից, մինչև իսկ Հնդկաստանից գալիս էին նրա մոտ նրան տեսնելու և լսելու նպատակով: Նրա բազմակողմանի հանճարեղ խելամտությունը և համեստ սերը այցելողների նկատմամբ սքանչացնող պատմություն էր դառնում ամեն երկրում: Այս բոլորը նրան ոչ մի տեղից չտրվեց, այլ կենաց փայտը (խաչը) նրա անունը հռչակեց ամբողջ տիեզերքում, իսկ բարեխնամ ծնողի օրհնությունները նրան ծաղկեցրին»¹:

Հարկ է նշել, որ այդ ժամանակ Աղվանից աշխարհը, արաբների հանդես գալու ժամանակից սկսած, դրված էր երկու հարվածների միջև: Հյուսիսից, լեռներից, նրա վրա կախվել էր մշտական մղձավանջը՝ հոն և խազար անուններով թուրք ցեղերը, իսկ հարավից՝ իսլամի սուրը:

Վաղարշապատում բյուզանդական կայսրի հետ հանդիպելուց «երկու տարի հետո»² խազիրները հարձակվում են Աղվանքի

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 143–145:

² Եթե ընդունում ենք, որ Ջվանշիրի ու բյուզանդական կայսրի այդ հանդիպումը տեղի է ունեցել 661 թվականին, ապա խազարների հարձակումը պետք է վերագրվի 663 թվականին: Չ. Բունիաթովի գրքում այն վերագրվում է 662 թվականին (տես էջ 76):

վրա՝ առ ու ավարի: Այդ ժամանակ Աղվանքի իշխանը զինվում և ներկայանում է ամենահաղթ խաչի առջև. ծնկի գալով նրզում է Իսրայելի արքայի նրզը, թե՛ «Տեր իմ, առ քո զենքն ու վահանը և ետ տուր ինձ վրա եկողներին»: Եվ վերցնելով իր գորքը՝ անցնում է Կուր մեծ գետի այն կողմը: Նրանց դեմ ճակատամարտ է տալիս և խնդրանքը անկատար չի մնում, որովհետև ճակատամարտի ժամանակ նրա արագասլաց նրիվարը գայթում է և նրան գլորում, բայց նա չկործանվեց, քանի որ տները ձեռքը մեկնեց նրան ու կանգնեցրեց: Նա վեր կենալուն պես ջարդեց հակառակորդին: Այդ օրն էլ մեծ հաղթություն տարավ՝ խոսքը ուղղելով այդ բարբարոս ցեղին. «Գնա, մտիր Ջողա դռնից ներս և նրկորդ անգամ այս կողմը մի անցիր, որովհետև տները արգելեց քո հարձակումը»: Նկատենք, որ «Աղբբեջանի պատմություն» գրքի հեղինակները Ջվանշիրի այս խոսքերը վերագրում են խազարների հանդեպ 660 թվականին նրա տարած հաղթանակի օրերին¹:

Մ. Կաղանկատվացու հաղորդմամբ «Ջվանշիրի՝ խազիրներին հաղթելուց հետո նրկու տարի անց (664–665 թվականներին, – Է.Ս.) ավարտվում է Աստծու անվան տաճարի (Գարդմանա բերդի տներունական տաճարի, – Է.Ս.) գեղեցկաշեն կառուցումը»²: Այդ ժամանակ էլ Ջվանշիրը դեռ հակում ուներ դեպի Բյուզանդիան, որը դժվար չէ նկատել նրա աղոթքի հետևյալ բառերից. «Եվ ով դու, տեր, իմ տեր, որ մանկությունից պահեցիր ինձ և շրջապատած փորձանքներից ազատեցիր, շատացրիր ինձ համար ոսկի, արծաթ, ծառաներ ու աղախիններ, շնորհեցիր ինձ գորություն, որպեսզի իմ իշխանությամբ արքայաբար կառավարեմ, այժմ էլ ընդունիր քո ծառաներին ի բարին և իմ սերունդների մեջ լցրու հանճար ու գիտություն, որպեսզի ընթանան քո ճանապարհով և աներկմիտ կերպով հնազանդվեն քո կողմից օժված Բյուզանդիայի կայսրին»³: Նկատենք նաև, որ իր այդ աղոթքում Ջվանշիրը հետաքրքիր ու հավաստի տեղեկություններ է հաղորդում իր կնոջ ու հարազատների մասին: Նա իրեն կողակից է համարում ննջեցյալ Խոսրովանուշին, ավեգարդ հայր՝ Վարազ-Գրիգորին, մայր՝ Գորիդուխտին, եղբայրներ՝ Վարազ-Պերժին ու

¹ Տես «Աղբբեջանի պատմություն» (ռուսերեն), 1958թ., էջ 106:

² Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 146:

³ Նույն տեղը, էջ 147:

Հեղուտ-Խոսքովին¹: Սյդախով, Ջվանշիրի հայր Վարագ-Գրիգորը մինչև 665 թվականը դեռ կենդանի էր՝ ավեզարդ վիճակում: Սյս փաստը նույնպես հերքում է բոլոր այն կարծիքները, թե 27 տարին քիչ է մի քանի սերունդների գահակալման համար: Ինչպես տեսնում ենք, նախկին գահակալը կարող էր կենդանի լինել, բայց գահի վրա նստած լինել մեկ ուրիշը:

Ջվանշիրը Գարդմանի բերդի տերունական տաճարում Արաց ամսի տասնմեկին² իր աղոթքն վերջացնելուց հետո «...այնտեղից իջնում է ձմեռանոց Պերոզապատ քաղաքը և ողջ տարին անցկացնում է հաճելի ու խաղաղ իր հանգիստը»³: Ջվանշիրին հեշտությամբ հաջողվում է իր կողմը դարձնել հյուսիսային ցեղերի ուժը և դրանով իսկ մեծ հեղինակություն ձեռք բերել խալիֆաթի աչքում: Հոնաց թագավորն արշավում է Աղվանից աշխարհ և սկսում կողոպտել այն: Ջվանշիր իշխանը գնում է այդ ահեղ արշավանքի դեմ և, ինչպես համարյա միշտ, տեսնում է հոներին բանակած Կուր գետի ափին: Զանի որ Մ. Կաղանկատվացու վկայություններով Ջվանշիրը Գարդմանա բերդի տերունական տաճարում իր աղոթքն ավարտելուց հետո (665 թվականի Արաց ամսի 11-ին) իջնում է Պերոզապատ և այնտեղ ողջ տարին անցկացնում հաճելի ու խաղաղ իր հանգիստը, և «մինչդեռ արի Ջվանշիրը խաղաղորեն գահակալում, և մյուս տարին լրանում էր ձմեռային օրհավասարը, հոների թագավորը բազմահազար հեծյալներով եկավ Աղվանքի վրա»⁴, ապա խազարների այդ հարձակումը պետք է որ տեղի ունեցած լինի 666 թվականին:

Մ. Կաղանկատվացին Ջվանշիրի հանդիպումները, խնամիանալը հոների հետ և թշնամիների նկատմամբ բարեկամանալը նկարագրում է այսպես. «Եվ չնայած նախապես նրա (Ջվանշիրի, – Է.Ս.) կողմից հրամայված էր, որ նրկիրը զգույշ մնա ու ամրանա, սակայն հոների ասպատակողները ոչ միայն Կուր գետի այս կողմի և Արաքսի եզերքներում եղած բուն նրկրի անատունները, այլև Արարատյան գավառներից ու Սյունիքից ձմեռ-

¹ Տես նույն տեղը:

² Արաց ամսի մեկը հունվարի 8-ն է:

³ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 148:

⁴ Նույն տեղը

նարոտ դաշտը արածելու եկած հոտերն ու նախիրները քշելով բոլորը բանակատնող հավաքեցին:

Ապա հոների թագավորը ցանկացավ Ջվանշիրին տեսնել. իր եղբորը ուղարկելով թախանձագին խնդրում է Ջվանշիրին միմյանց հանդիպել և իրենց միջև եղբայրական հաշտություն կնքել: Իսկ քաջ ու արիասիրտ իշխանը մտքով չէր անցկացնում վախենալ, այն դեպքում, երբ պարսից թագավորներից ոչ ոք չէր հանդգնում դեմ հանդիման տեսնել, թուրքստանցիների թագավորին:

Ջվանշիրը աներկյուղ ու անվախ սրտով եկավ փրկարար խաչի առջև և ասաց. «Թեպետ գնալու եմ մահվան ստվերի մեջ, բայց չեմ վախենալու չարից, որովհետև դու ինձ հետ ես, տեր»: Այնտեղից վեր կենալով արքայաշուք պատրաստությամբ գնաց նրանց մոտ: Իսկ հոների թագավորը, ընդառաջելով նրան, նավ նստած, պատրաստությամբ գալիս խաղաղ կերպով կանգ է առնում գետեզերքի հանդարտասահ խոր ջրի վրա: Միմյանց հետ հաշտ ու խաղաղ խորհրդակցում են՝ վերացնելու երկու կողմերի տարածայնությունները և մանավանդ կապվելու միասիրտ եղբայրությամբ: Նրանք դաշինք կնքեցին, և յուրաքանչյուրը վերադարձավ իր տեղը:

Իսկ իմ քաջասիրտ իշխանը հաջորդ օրը ինչ արեց. տասնյոթ մարսկանցով անցավ գետի մյուս կողմը և գնաց հոների բանակը. այնտեղ հոների թագավորի դստեր հետ ամուսնացավ և վերադարձրեց ավար տարված հարյուր քսան հազար ոչխարների հոտը, յոթ հազար ձիերի ու խոշոր եղջերավոր անասունների նախիրը և ոչ պակաս, քան հազար երկու հարյուր գերված մարդիկ: Այնտեղից խաղաղությամբ վերադառնալով ուրախ սրտով եկավ իր տեղը...

Այդ ժամանակ կարգադրեց, որ վստահելի մարդիկ ավարից վերադարձրած ամեն ինչ բաժանեն մարդկանց՝ ըստ իրենց ունեցած բաժնի:

Եվ ահա քսանութ տարի իր աշխարհակալ սպարապետությամբ՝ սկսած երիտասարդ հասակից մինչև միջահասակ տարիքը, դրվատանքներով լի, աշխարհահռչակ անունով նա իր ժամանակի երեք քառորդը անցկացնելով նախ Պարսկաստանում, ապա հոների մոտ, անթերի կերպով կատարեց այնպիսի անվեհեր քաջություններ, մինչև որ արևելքում, արևմուտքում,

հյուսիսում, հարավում, արիների ու անարիների մեջ ամենուրեք հռչակվեց և մեծ ճանաչում գտավ»¹:

Նկատենք, որ «և ահա քսանութ տարի իր աշխարհակալ սպարապետությամբ» Մ. Կաղանկատվացու վկայությամբ անառարկելի են դառնում թե՛ 638 թվականին Աղվանքում Ջվանշիրի կողմից իշխան դառնալու իրողությունը և թե՛ խազարների նոր հարձակումը Աղվանքի վրա, նրանց հետ Ջվանշիրի փնսայանալը, թշնամիների հետ բարեկամանալը 666 թվականին վերագրելը, որովհետև 666-ից 28 տարի հանելու դեպքում ստացվում է 638-րդ տարին, այսինքն այդ թվականը: Իսկ «նա իր ժամանակի երեք քառորդը անցկացնելով նախ Պարսկաստանում» արտահայտությունն էլ այն բանի վկայություն է, որ Ջվանշիրն իրոք Պարսկաստանում ապրել է յոթ տարի:

Իսկ ինչո՞վ բացատրել, որ մինչև Սյունիք ու Արարատյան գավառները անարգել ասպատակություններ կատարած վաչկատուն ցեղերի խաքանը այդքան սիրալիք է վերաբերում Ջվանշիրի հետ, նրան տեսնելու համար ուղարկում է իր եղբորը և մինչև անգամ «թախանձագին խնդրում է Ջվանշիրին միմյանց հանդիպել և իրենց միջև եղբայրական հաշտություն կնքել»: Ինչո՞վ բացատրել խաքանի զիջումները Ջվանշիրին, նրան փնսայացնելը և այլն: Մեզ թվում է, որ թե՛ Ջվանշիրի կողմից խազարների հետ հաշտություն ստեղծելն ու նրանց հետ խնամախանալը և թե՛ խազարների կողմից Ջվանշիրի նկատմամբ ցուցաբերած սիրալիք վերաբերմունքը երկու կողմերի համար էլ հետևանք էր արաբական լուրջ վտանգի: Այդ վտանգը նրանց հարկադրում է նման փոխադարձ կապերի մեջ մտնելու և միասնական ուժերով արաբների դեմ հանդես գալու: Ուստի սխալ ենք համարում Ջ. Բունիաթովի այն ենթադրությունը, թե՛ իբր Ջվանշիրը հարկադրաբար է ընդունում խաղաղություն հաստատելու վերաբերյալ խաղարների առաջարկությունը, իսկ «Ջվանշիրի ամուսնությունը խազարների խաքանի աղջկա հետ, իհարկե, նրա կողմից խաքանատին հպատակվելու և նրանից կախվածության մեջ լինելու վկայություն է»²: Ջ. Բունիաթովը նման անընդունելի կռահումներ է կատարում դրանից առաջ կատարված մյուս անհիմն

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 148–150:

² Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 77:

ենթադրությունները իբրև ճշմարտություն հրամցնելու նպատակով: Նա ջանում է համոզել, թե իբր խազարները 100–150 տարի իշխել են Աղվանքին: Իսկ մեկ ու կես դարը լրացնելու համար Բունիաթովին տարելով են պետք: Որ խազարներն այդ ժամանակ Աղվանքը չէին նվաճել և իրենցից կախման մեջ չէին գցել, նկատվում են հետևյալ իրողություններից. առաջին, «հոների ասպատակողները» Կուր գետը անցնում են միայն «Արաքսի եզերքներում» և այդտեղով էլ բարձրանում հասնում Սյունիք ու Արարատյան գավառները և նույն տեղերով էլ քշում տանում նրանց հոտերն ու նախիրները: Այդպիսով, ըստ մատենագիրների հաղորդումների, թշնամին Հայոց Աղվանք չի մտնում՝ նախ սարսափելով Ջվանշիրի ուժից և ապա՝ չջանկանալով թշնամանալ նրա հետ:

Երկրորդ, ընդունված չէ, որ հաղթող երկրի թագավորը ընդառաջի, նախով զանազան պատրաստություններով դիմավորի պարտված երկրի տիրակալին: Իսկ մենք հոների թագավորին տեսնում ենք նավ նստած, խաղաղ կերպով Ջվանշիրին դիմավորելիս և նրա հետ «հաշտ ու խաղաղ խորհրդակցելիս»:

Երրորդ, անցյալներում ընդունված էր, որ հաղթող երկրի տերերն ու զորավարներն են տիրանում պարտված երկրի կանանց ու աղջիկներին և ոչ թե ընդհակառակը: Իսկ մենք այստեղ տեսնում ենք, որ խաքանի աղջիկը տրվում է Ջվանշիրին: Վերջինս հակառակորդից պարտված լինելու դեպքում երբևք չէր արժանանա նման պատվի ու հարգանքի: Դա մեծ վիրավորանք կհամարվեր խաքանի համար:

Չորրորդ, հանրահայտ է, որ պատերազմի ժամանակ հաղթող բանակը երբևք ավարը չի վերադարձնում պարտվող երկրին: Խաքանը 120.000 ոչխար, 7000 ձի ու խոշոր եղջերավոր անասուն, ոչ պակաս քան 1200 գներված մարդիկ վերադարձնում է Ջվանշիրին, որովհետև դրանք կռվով չէին վերցվել, այլ խաքանի զորքերը դրանց քշել տարել էին Արաքսի ափերից՝ առանց Ջվանշիրի հետ հանդիպելու ու կռվելու: Բացի այդ, խաքանը վերադարձվող ավարը միաժամանակ համարում էր օժիտ իր աղջկա համար:

Սակայն հոների ձեռնտվությամբ Աղվանից աշխարհը չէր կարող բոլորովին թոթափել արաբական լուծը: Երբ Ջվանշիրի համար աներկբա դարձավ, որ իսլամի տիրապետությունն իրականում ուժեղ է, մինչդեռ Բյուզանդական կայսրությունը շարու-

նակ գնում էր դեպի թուլացում, նա էլ, Թեոդորոս Ռշտունու նման, գնում է Դամասկոս՝ անձամբ տեսակցելու ամիրապետի հետ: Այդ տեղի է ունեցել Թեոդորոս Ռշտունու մահից հետո (իշխող կարծիքն այն է, որ Ռշտունին մահացել է 656 թվականին): Մ. Կաղանկատվացու վկայությամբ «հարավցիների (արաբների) ...թագավորությունը Ասորեստան փոխադրվելու վեցերորդ տարում» բյուզանդացիների կայսրը «վերցնում է իր զորքերի մնացորդները, շտապում է ծովերով ու ցամաքներով անցնել արևմտյան կղզիների հեռավոր սահմանները»¹:

Այդ ժամանակ, «որովհետև նրան (Ջվանշիրին) տրվեց անդիմադրելի գորություն, աշխարհը կառավարելու իմաստություն, նրկրային քաղցրություն և մարդկային հեզություն, ուստի այս չորս առանձնահատկություններով և աշխարհի չորս անկյան վրա ընդհանուր իշխանություն ունենալով, տեսավ բյուզանդացիների կայսեր ընկճումը հարավային թագավորի կողմից, որ իբրև բոց հրով լափեց նրա բազմամարդ քաղաքներն ու հրապարակները:

Եվ արևելյան մեծ իշխան Ջվանշիրը բազմահոգ է դառնում իր իշխանության համար. նախ զգաստ է լինում, որ հարավի բազմությունը նրկիրը ոտքի տակ չառնի ու տրորի: Եվ չնայած կարող էր թուրքեստանցիներից իրեն օգնական անթիվ զորք հանել, սակայն հանձն առավ մտնել հարավի թագավորի (Օմանյան խալիֆի, – Է.Ս.) ստրկական լծի տակ»²: Եվ ապա. «Երբ հարավի բռնակալը (Մուավիան, – Է.Ս.) տեղեկանում է մեր իշխանի (Ջվանշիրի, – Է.Ս.) այն բարձրապատիվ հարգանքի մասին, որ նա ուներ բյուզանդացիների թագավորի մոտ, կամ թե ինքն է կարգադրողը թուրքեստանցիներին և կարող է նրանց պատերազմի դուրս բերել կամ արգելել խնամիական կապերի շնորհիվ, այստեղ սուկալի նախանձ է բորբոքվում գոռոզ տիեզերակալի սրտում: Ուստի վստահելի պատգամավորների միջոցով ծանր երդումներ ու անչափ պարգևների խոստումներ է ուղարկում, որպեսզի Ջվանշիրը գնա նրա մոտ»³:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 151:

² Նույն տեղը, էջ 151:

³ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 151–152:

Այդպիսով, Չվանշիրը իր կողմը գրավելով հյուսիսային ցեղերի ուժը, միանգամայն այլ կարևոր քաղաքական-ռազմական գործոն է դառնում խալիֆայթի աչքերում: Կատարվածի քաղաքական նշանակությունը իսկապես շատ մեծ էր: Արաբական ուժը փշրվում էր միայն Կովկասյան լեռների ցեղերի հետ ընդհարվելիս: Չվանշիրի կատարածը խալիֆայթի համար անչափ ծանրակշիռ էր՝ քանզի հենց իրենք միշտ միջոցներ էին որոնում խազարների ու հոների հետ խոսելու ոչ թե զենքով, այլ հաշտության ու համաձայնության լեզվով: Այսինքն այնպես, ինչպես իրականացրեց Չվանշիրը: Վերջինս էլ բավական հմուտ կերպով օգտագործում էր այս քաղաքական հանգամանքը: Ահա թե ինչու Չվանշիրը ընդունում է Մուավիայի հրավերը և գնում Դամասկոս: Մ. Կաղանկատվացին Չվանշիրի այցը խալիֆին, վերջինիս կողմից մեծարվելու մանրամասները նկարագրում է այսպես. «Նա (Չվանշիրը, – Է.Ս.), Զրիստոսի խաչի մեծահույս բարությանների վրա վստահ լինելով, պատրաստում է մեծ քանակությամբ ընծաներ և նախապատրաստվում է նրանցով ողջունել տիեզերակալին: Նախ այցելում է այն եկեղեցին, որ իր ապավիճության համար կառուցել էր Գարդման բերդում: Այնտեղ սրտառույց հառաչանքով Աստծուն խնդրում է այցելության, ինչպես մեծ Դավիթն է ասում. «Իրավունքի և արդարության ստեղծող, մի մատնի ինձ իմ նեղիչների ձեռքը»: Եվ այս մտքով հրաժեշտ տվեց մեծահաղթ խաչին, զինվեց՝ մեկնելու օտար երկիր: Հայոց զորավարը, բոլոր նախարարների հետ միասին ընդառաջ դուրս գալով նրան, մեծ ուրախությամբ ընդունում և մեծ պատիվներով ու շքով ճանապարհ է դնում: Երբ մտնում է Ասորեստան, տեսնում է, որ թագավորի հրամանով գավառների պետերը և քաղաքների մեծամեծները՝ յուրաքանչյուրն իր սահմաններում պատվում են իրեն. ամենուրեք կազմ ու պատրաստ երիվարներ, օթևաններ. մինչև որ մեծ շքով հասնում է թագավորի պալատը:

Այդ ժամանակ թագավորը հրամայեց մերձավոր մեծամեծներին նրան ընդառաջ ելնել՝ տանելով այն երիվարները, որոնք անձամբ թագավորն էր հեծնում: Եվ այսպես շքեղաշուք պատվով բերում մտցնում են կռվող բազմախումբ բանակը: Նրա բարձր անվան պատճառով ամբողջ խառինճաղանջ ամբողջ տեսնելու էր շտապում՝ խմբված ճանապարհին: Իսկ հարավի թագավորը արևածագին, իր սովորական ժամից առաջ, զարթնեց

քնից, և ուրախ սրտով ու բարի ողջույնով հանդիպելով արևելքի իշխանին, միշտ ուրախ էր նրա գալստյան համար: Այդ պատճառով նրա ընդունելությունը ամենակատարյալն էր, որովհետև երկրի կուսակալներից ոչ մեկի նկատմամբ այդպիսի արքայական մեծարումներ չեն եղել, մանավանդ երբ փորձեց նրա խոհական հանճարամտությունը: Որովհետև թեպետ բազմաթիվ իշխաններ ու շատ ժողովուրդների առաջնորդներ ենթարկվում էին նրա իշխանության, բայց դրանցից և ոչ մեկին այնպես առանց կասկածների գաղտնիք չէր հայտնում, ինչպես Ջվանշիրին. այդ պատճառով նա թանկագին պարգևներ է շնորհում նաև նրանց, որոնք Ջվանշիրի հետ ժամանել էին: Դրանից հետո արևելքի իշխանը խաղաղ ողջույնով հրաժեշտ է խնդրում: Իսկ հարավի արքան անկեղծ ու սերտ սիրո հաստատունության համար երդումներ է կնքում, մեկնում է նրան նաև իր աջը, որ երբեք տիեզերակալ գոռոզը սովորություն չունեն որևէ օտարազգի մարդու նկատմամբ այդպիսի բան անել:

Այս ամենից հետո մեծավայելուչ փառքով ուղարկվում է ընդհանուր հանդիսարանից: Քալիս-հասնում է Արարատյան գավառը, որտեղ նրան ընդառաջ է ելնում ամբողջ ազնվականությանը հանդերձ Մամիկոնյան տոհմից քաջ Գրիգորը և բերում է նրան իր Արուճ¹ գյուղաքաղաքը: Այնտեղ ժամանեց սուրբ աղավնին՝ եկեղեցու սյունը՝ հայոց մեծ հայրավետ Անաստասը: Մեծ հավատացյալ իշխանը երբ նրան տեսավ, հոգեզվարճ բերկրանքով լցվեց. խոնարհվեց և նրանից օրհնվեց, ինչպես սուրբ հրեշտակից: Նույն շուքով գալիս-հասնում է Գարդման գավառը և անմիջապես մտնում է իր ապավինության օթևանը՝ (տաճարը): Այնուհետև սկսեց թանկագին նյութեր գործադրել նրա հրաշագեղ անպատմելի պայծառությունը զարդարելու համար: Մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց ու պաստառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը՝ տիեզերքի լույսը պահպանողը, արծաթապատեց և հրաման տվեց քանդակագարդել: Սրանից հետո գրեթե երեք ամբողջ տարի պանծալի իշխան Ջվանշիրը հարավի թագավորի նկատմամբ հանդես բերեց անկեղծ տիրասիրություն»²:

¹ Արուճը այժմյան Թալիշն է՝ Թալինի համայնքում:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 151–153:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, Մուսվիհա խալիֆը, նկատի ունենալով Ջվանշիրի հեղինակությունը և հաշվի առնելով Աղվանքի ռազմավարական դիրքը՝ խալիֆության հյուսիսային սահմանները բյուզանդական ու խազարական հնարավոր հարձակումներից պաշտպանելու գործում, պահպանում է Աղվանքի ներքին ինքնուրույնությունը և նախկին կարգերը: Աղվանքը խալիֆությանը միայն հարկ էր վճարում: Իսկ վարչական ինքնուրույնությունը, հայ քաղաքական ու կրոնական էլիտայի ղեկավար դերը պահպանվում էր:

Նկատենք նաև, որ Ջվանշիրը ամեն անգամ Հայոց երկրի սպառնագողների հետ է՝ թե՛ Բյուզանդիային հպատակության գիր ուղարկելիս, թե՛ խալիֆին այցելելուց: Այլ կերպ լինել չէր էլ կարող, որովհետև նա հայերիս զարթոնքն ու հզորությունն էր ապահովում: Աղվանքի բնիկները հայեր լինելով, Միհրանի հաջորդներին էլ քրիստոնեության բերեցին, և ձուլվեցին տեղի հայ բնակչության հետ: Դրան նպաստում էր նաև պարսկական արքունիքի թուլացումը բուն Պարսկաստանում: Նման պայմաններում Աղվանքում բուն դրած պարսկական տոհմը չէր կարող մեծ ու ազդեցիկ կշիռ ունենալ և ստիպված լիներ հարմարվել հայկական միջավայրին:

Նույնիսկ Գարդմանը, որ դարձել էր Պարսկաստանից եկած Միհրանյանների օրրանն ու տիրույթը, այս տոհմին բերում է քրիստոնեացում, հայացում, ձուլում շրջապատի հայկական ուժեղ ու անկասելի միջավայրի հետ: Դրա փայլուն ապացույցներից է նաև Ջվանշիրի կյանքի վերջին տարիների գործունեությունը: Իր կյանքի վերջին տարում (683 թվականին) մենք նրան տեսնում ենք հակահայկական ու հակաքրիստոնեական աղանդների դեմ համառ պայքարելիս, հայ սրբերի մասունքները հայտնաբերողներին խրախուսելիս և այլն: Մ. Կաղանկատվացու հաղորդումներով 680-ական թվականներին «Աղվանքի ազգալիզժ գլխավորները խառնակությամբ պղծվեցին. նախ թագավորագնի՝ Կողթի՝ (Արցախի 14-րդ գավառի, – Է.Ս.) տիրոջ տունը, Դաստակերան (Շիկաշեն կամ Շակաշեն, – Է.Ս.)¹, ճնշմիան, Մամշե-

¹ Շակաշենը Ուտիքի 7-րդ գավառն էր, որն ընդգրկում էր Ջակամ (Ջագամ-Ջեգամ) գետից մինչև Կուրակ գետն ընկած տարածությունը:

դուն¹ և Կուր գետի այն կողմը Հեջերի² տունը, ուստի գավառի Գիսում գտնվող Վարագ-Պերոժի տունը, որ դաքնարի տիտղոս ուներ: Սրաժականում (գյուղ՝ Ամարաս ավանի մոտ, – Է.Ս.) նստող Վարաժնի սարկավագատունը և Տվերակի տունը: Սրանց անսանձ լրբությունը և ապօրինի ամուսնությունը երանելի հայրապետ Ուխտանեսը անեծքով արգելեց: Դրանք, դարձի չգալով, իրենց գործած չարիքների մեջ ամենքն էլ բնաջնջվելով՝ վերացան երկրից»³:

Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև Զվանշիքի վերաբերմունքը Մեսրոպ Մաշտոցի ու նրա աշակերտների նահատակության և Գիսում գտնված սուրբ խաչի գյուտի վերաբերյալ: Մեծկողմանքի եպիսկոպոս Դավիթը լսելով Իսրայելի տնսիլքների մասին, գնում և այդ մասին պատմում է Աղվանաց Ուխտանեսին: «Այդ առթիվ կաթողիկոսը (Ուխտանեսը, – Է.Ս.) հրամայում է մեծ ժողով անել: Նաև կանչեցին Արցախի կողմերի, որին Մեծիրանք էին կոչում, եպիսկոպոս քաջ Հովելին»⁴ և կաթողիկոսը նրանց հանձնարարում է գտնել սուրբ մատուցները: «Դավիթն ու Հովելը, կամավոր կերպով ընդունում են հայրապետի պատվերները և հրաժեշտ տալով սուրբ հոգու առաջնորդությամբ գալիս են Մեծկողմանքի Ռոստակ գավառը՝ Չղախյան հովիտը՝ Ասպարիսաձև դաշտակը Տրտու գետի ափին, որը գտնվում է Մեծիրանքի վիճակում: Եկան տեղավորվեցին նշանավոր անտառում՝ մի քիչ բարձր տեղում՝ սարավանդակ վայրում: Այնտեղ կար մի փայտաշեն մատուռ՝ խեցիներով երեսպատված, խաչանիշ զարդարանքներով դրվագված, պատերը զարդափայլ գեղեցկությամբ հորինված: Արդ՝ երբ այդ լուրը տարածվեց, աճապարանքով հավաքվեցին անվանի մարդիկ, քրեպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ, հարյուրների գավառապետներ, ղեկավարներ ու մեծամեծներ, գործակալներ, տղամարդկանց ու կանանց ժողովրդական բազմություններ, որ-

¹ Ճնշմիանը և Մամշեղունը իշխող ազգատոհմների անուններ են, ինչպես Վարաժնի ու Տվերակի տները:

² Հեջերի նաև գավառի անուն է, որ այժմ կոչվում է Ուջարի և գտնվում է Ծիրվանի տափարակում: Ըստ Ս. Երեմյանի՝ այս գավառը կոչվել է նաև Դաշտ ի Բազկան:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 166–167:

⁴ Նույն տեղը, էջ 159:

պնսզի բոլորը մասնակցեն աստծու սքանչելիքի ցուցադրությա-
նը»¹: Երևք օր պաս պահելուց հետո սկսեցին փորել տնսիլքի տե-
ղը: Իսկ երբ սկսում են քանդել արևելյան կողմի փայտաշեն հար-
կը, սեղանի տակից հանկարծակի քաղցր ու անուշ բուրմունք է
տարածվում: «Երբ տաս թիզ փորեցին, գտան երկու արծաթյա
արկղեր, որոնց վրա դրված էր կապարն կնիք, կնիքի վրա հաս-
տահեղույս մեխերով մեխված էր մի ոսկեձույլ տալստակ, իսկ
սրա վրա գրված էր ասորերեն ու հայերեն:

...Ապա եպիսկոպոսները Իսրայելի և պատվավոր քահա-
նաների հետ միասին առանձնանում և բաց են անում սրբության
տապանակների մատանու կնիքը. այնտեղ գտնում են Քրիստոսի
փրկարար խաչի մի մասը»²: Ապա այդ մասին Դավիթն ու Հովելը
թուղթ են գրում Ջվանշիր իշխանին և Ուլստանես կաթողիկոսին,
որը սկսվում է այսպես. «Աստվածային, հոգևոր համ ունեցող
համբլորներով լցված և հոգու շնորհներից պարզև ընդունած ով
արևելցիների աստվածային եպիսկոպոս Ուլստանես և բա-
րեյանամ, քաջագուն, հավնտ փառավոր, զորեղ, իշխանաց իշխան
տեր Ջվանշիր՝ Ադվանքի իշխան, և ձեզ հետ միատեղ բոլոր նա-
խարարներիդ:

Դավիթ և Հովել նվաստ եպիսկոպոսներից տիրոջ միջոցով
ողջույն»³:

Դավիթն ու Հովելը թղթում պատմում են «հրաշավառ
թաքցրածների հայտնաբերումը և սուրբ խաչի գյուտը»⁴ և
գտնում, որ այն «պետք է լինի Ամարասի սուրբ լուսատու եկեղե-
ցում»⁵: Ստանալով թուղթը Ջվանշիրն ու Ուլստանեսը պատաս-
խանում են. «Գրված ու շարադրված հրովարտակի պատճենը
ստացանք. սրա պատճառով չափազանց գոհ մնացինք անզոջա-
ցող աստծուց... Ուլստանես նվաստ կաթողիկոսը և Ադվանքի գո-
րավար ու իշխան Ջվանշիրը տիրոջով ողջունում են:

Աստծուց մեզ կենսատու փրկություն հասնելու պատճառով
մենք հավնտ գոհացանք նրա անսպառ պարզևներով. իսկ ինչ վե-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 160–161:

² Նույն տեղը, էջ 161–162:

³ Նույն տեղը, էջ 163:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը:

րաբերում է այդ սուրբ խաչին, որ մեր մեջ հայտնվեց, երևացրեց, բացվեց, լուսավորեց մեր աչքերը. այս է պատճառը, որ մենք չդադարող բերանով և անհանգիստ լեզվով օրհնեցինք մեր տներ Հիսուս Քրիստոսին՝ բարերարին, հրաշագործին, պարգևներին, որ մեզ շնորհեց սուրբ հոգու անապատական պարգևները»¹:

Ինչ խոսք, որ պարսկական տոհմը Աղվանքում ազդեցություն ունենալու դեպքում կամ Ջվանշիրն ու Ուխտանեսը հայազն չլինելու պարագայում այդքան չէին ուրախանա հայատառ ու ոսկեձույլ տախտակի և սուրբ խաչի հայտնաբերմամբ: Նրանք հայազն չլինելու դեպքում «անհանգիստ լեզվով» չէին օրհնի Հիսուս Քրիստոսին և վերջինիս իրենց տները չէին համարի: Հայազն իշխանն ու կաթողիկոսը արտահայտում էին Աղվանքի հայության կամքը: Ահա թե՛ ինչու նրանք մինչև անգամ պահանջում են, որպեսզի Դավիթն ու Հովելը «այդ գանձը սուրբ նշանով միասին» վերցնեն ու մեծ զգուշությամբ տանեն իրենց մոտ՝ Պարտավ՝ երկրպագելու համար: Նրանք «ստանալով Արևելքի գորավարի (Ջվանշիրի, – Է.Ս.) ու սուրբ կաթողիկոսի (Ուխտանեսի, – Է.Ս.) նամակի օրհնակը, անմիջապես շեշտակի արագությամբ վերգրին սրբերի գտնված գանձն ու եպիսկոպոսների և Իսրայելի հետ անհապաղ ժամանեցին Պերոժ-կավատ մեծ քաղաքը, որովհետև Արևելքի մեծ իշխան Ջվանշիրը և եպիսկոպոսապետ Ուխտանեսը բոլոր նախարարներով հանդերձ այնտեղ էին նստում: Դրանք հռչակավոր հանդեսով ընդունեցին լուսապայծառ շնորհները ու բազմամբոյս հրապարակում երկար ժամանակ երկրպագում էին»²:

Այդպիսով, 683 թվականին Ջվանշիրի և Ուխտանեսի խրատասանքով հայտնաբերվում է այն խաչը, որ «սուրբ Մաշտոցը ծածկել էր Ուտի գավառի Գիս անվանված գյուղում»³: Հայտնվում է «մի արծաթյա ժանգառագույն, հնացած տապան, որ միատեղ ուներ հայերեն, լատիներեն ու ասորերեն գրություններ»⁴:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 165:

² Նույն տեղը, էջ 165–166:

³ Նույն տեղը, էջ 168:

⁴ Նույն տեղը, էջ 169:

Այս հաղորդումներում արժանահավատ տեղեկություններ ենք տեսնում նաև Ուխտանեսի ու Ջվանշիրի մահվան և Եղիազարի կողմից Աղվանից հոգևոր աթոռին տիրելու մասին: Մ. Կաղանկատվացու նրկի նրկորոդ գրքի ԼԳ գլխում, իսկ դրանից առաջ էլ ԼԱ գլխում պարզ ասված է, որ Ջվանշիրը և Ուխտանեսը լսելով գյուտերի մասին լուրը, «անմիջապես նամակ են գրում աստծու մարդ Իսրայելին, որ իրենք ևս կմասնակցեն ու ցանկանում են հասնել նավակատիքի նշանի տոնակատարությանն ու սուրբ խաչի օծմանը»: Սակայն նրանցից ոչ մեկն էլ «նավակատիքի նշանի տոնակատարությանը» մասնակցել չի կարողանում: Չնայած Ուխտանեսը «մեծ ուրախությամբ համաձայնվեց այդ բանին և պատրաստական կերպով ձևավորեց նվիրական տոնը կազմակերպելու անհրաժեշտ բաները ըստ խաչագարդ պայծառության օրինակի»¹, սակայն նույն հաղբյուրի հաղորդմամբ նա «սաստիկ ծուլությամբ»² չկարողացավ «հասնել գործի կատարմանը»³: Մենք կարծում ենք, որ բանը «սաստիկ ծուլության» մեջ չէր, այլ սաստիկ հիվանդության: Նման եզրակացության համար հիմք է ծառայում Մ. Կաղանկատվացու հետևյալ հաղորդումը. «Դրանից հետո վախճանվում է նաև սուրբ հայրապետը (Ուխտանեսը, – Է.Ս.). նրան հաջորդում է Եղիազարը, որը մի բարի ու ազնիվ մարդ էր: Սա Շաքիի նպիսկոպոսն էր, որ Ուխտանեսի վախճանվելու ժամանակ այդ կողմը ժողովի էր եկել այլ նպիսկոպոսների հետ. մի քանի աղանդավորներ նրա ժողովի գալը պարսավում էին»⁴: Բացի այդ, նրբ Ուխտանեսը չի կարողանում գնալ «նավակատիքի նշանի տոնակատարությանը», այդ ժամանակ «աստվածային տեսիլք նրևաց Եղիազար պատրիարքի վրա, որպեսզի չդանդաղի գնալու և օծելու Քրիստոսի խաչը: Նա բոլորին իր հետ վերցնելով, առավոտյան վեր է կենում և շտապելով հասնում է նշանակված եկեղեցին, որը գտնվում էր Գիսավան նահանգի թեմում»⁵: Եվ ապա. «Յայգապաշտամունքից հետո ժողովը Պերոժ-Կավատ քաղաքի առաջնորդ ընտրեց մի

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը, էջ 167:

⁵ Նույն տեղը, էջ 172:

ումն վանականի, որին կամեցան կաթողիկոս դարձնել: Այդ ժամանակ պիղծ սատանան ամենքի առաջ ամենքի աչքի առջև գետինն զգեց նրան՝ ամբաստանության թուղթ մեջտեղ բերելով: Եվ հենց այդտեղ քվեարկվելով... այն պարկեշտ Եղիազարը նույն ժողովից ստանում է առաքելական պատիվ, նրբ դեմ բարեբախտ Ջվանշիրը աստծու կամքով աշխարհիկ իշխանությունն էր վարում այս անցողիկ կյանքում»¹: Վերջինիս վկայություն է նաև այն, որ «Եղիազար հայրապետը... Ջվանշիր իշխանի հավանությանամբ Իսրայելին հապճեպ հրամանագիր է ուղարկում, որպեսզի Քրիստոսի ջրնաղապյուտ խաչը իրեն հասցնի»²:

Ըստ մատենագրի այս հատորդումների, Եղիազարը կաթողիկոս էր կարգվել դեռևս Ջվանշիրի կենդանության ժամանակ: Ուստի պատահական չէ, որ Ջվանշիրի մահից հետո նրկրի մեծամեծերը «հավաքվեցին մեծ արքեպիսկոպոս Եղիազարի մոտ և խորհրդակցեցին Աղվանքի խաղաղության ու շենության մասին»³ և Ջվանշիրի տեղը նստացրին Վարագ-Տրդատին:

Մենք այստեղ հետաքրքիր և միզուցն նաև եզակի ներդաշնակցություն ենք նկատում հայ քաղաքական և կրոնա-եկեղեցական ընտրանու միջև, որն էլ ամենայն հավանականությամբ ապահովել է Աղվանաց և Արցախ նրկրների բարգավաճումը մ.թ. VII դարում: Ճիշտ էր Ն. Մաքիավելլին պնդելով. «Տարածանությունները ... որպես կանոն ի հայտ են գալիս խաղաղությամբ և անգործունեությամբ, իսկ սպառնալիքներն ու պատերազմը, հակառակը՝ միավորում»⁴:

Այդպիսով, Ջվանշիրի իշխանության տարիներն Աղվանքի ու Արցախի համար հարաբերական խաղաղության տարիներ էին: Արցախի և ողջ Հայոց Աղվանքի անդորին նպաստում էր նաև այն, որ Ջվանշիրի իշխանության ժամանակաշրջանում արաբա-բյուզանդական պատերազմները տեղի էին ունենում մեծ մասամբ Հայաստանից դուրս, որի շնորհիվ էլ կոտորածի ու ավերածության չէր ենթարկվում նաև Արցախը: Իսկ 680 թվականին մահանում է խալիֆ Մուավիան: 677 թվականին Օմանյան-

¹ Նույն տեղը, էջ 167:

² Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 171:

³ Նույն տեղը, էջ 179:

⁴ Ն. Մաքիավելլի, նույն տեղը, էջ 457:

ների Բյուզանդիայից կրաց պարտությունը, Մուավիայի հետագա մահը, ոտքի հանեցին հակաօմայան խոշոր ուժերին, որոնք գահի համար մի քանի տարի շարունակ արյունահեղ կռիվներ էին մղում: Անդրկովկասի ժողովուրդները, ընդ որում նաև արցախցիները, օգտվելով խալիֆության ներսում առաջացած խառը դրությունից, 683 թվականին միացյալ ուժերով ապստամբություն բարձրացրին, թոթափեցին արաբական լուծը և հրաժարվեցին հարկատվությունից: Այդ ապստամբության շնորհիվ Արցախը մինչև 689 թվականը կատարյալ անկախություն էր վայելում (683 թվականին Ջվանշիրը մահանում է): Ողբերգական էր նրա վախճանը: Նա սպանվում է այդ թվականի աշնանը՝ Պարտավի իր դղակի պարտեզում: Մ. Կաղանկատվացին Ջվանշիրի սպանությունը տվել է այսպես. «...Երբ տոթակեզ օրերը անցան, և մոտեցավ խաչի մեծ նավակատիքի բարձր տունը, այն կողմերից (Սիսավան գավառից, – Է.Ս.) մեկնեց, եկավ-անցավ Ուտի գավառի Պարտավ քաղաքը՝ իր գեղազարդ տաճարը, որպեսզի այնտեղ հանդիսավոր տոնին պարգևաբաշխ մեծարանքներով աստծուն նրկրպագություն մատուցի: Եվ մինչդեռ մեծահռչակ Ջվանշիրը մեծ ուրախությամբ հանգստանում էր, անօրեն ու վատանուն մի մարդ, որ Կայենի ախտի մեջ էր ընկղմվել, խարդալս խաբեությանը իրեն համախոհ ընկեր պատրաստեց: Նա ոչ նրա բարեկամությունը, ոչ իր հոր տանը նրա կողմից մեծ պարգևներով տրված պատիվները հիշեց. այլ մտածեց նրան սպանել: Նենգամտությամբ նրան հրապուրեց՝ պատրվակելով անառակությունը. փաստապատիր խոսքերով նրան համոզեց դուրս գալ գարշելի զվարճության: Եվ երբ իշխանը տաճարից ծաղկանոցների այգեպատ ճանապարհը դուրս եկավ, գիշերվա առաջին ժամն էր: Նա իր մոտ միայն առանց վահանի մի թուր ուներ, իսկ նրա թիկնապահների սպառազինված ջոկերը անհոգ ու անտարբեր պալատի դռներում քնով էին տարված:

Չարանենգ Ենիբը՝ Վարագոյին դավաճանողը, վերցնելով արքունական վաղակավորը (կարճ սուր), պողպատյա սուսերը ու ոսկեկումբ վահանը՝ դավադրաբար առաջևից էր գնում՝ պատճառաբանելով, թե ինքը շարժվում է զինակրի օրինակով: Ինքը՝ անօրեն նենգավորը, ծածուկ զինավառված, պատմուճանի տակից հագել էր զրահները: Երբ հասնում են բուչրաստանի մեջտեղը ու մոտենում են ցանկապատի թնքվածքին, որ շրջապատում

էր արքունիքի լայնատարած բակը, ինչպէս որ ամեն հարցում իմաստութեամբ լցված էր անհաղթ Ջվանշիրը, այս դէպքում էլ իմացավ սպանողի ստորագոյն դավադրական նենգությունը: Եվ երբ լսեց հազած զրահի ձայնը, իշխանը վախենալով սրտաբեկ եղավ. նա կարծեց, թե մեծ թվով մարդիկ խմբված մտադրվել են իրեն սպանել: Եվ լռելայն կամեցավ վերադառնալ պալատ: Իսկ անօրեն սպանողը, սուսերը կիսով չափ դուրս քաշած պահելով, հանկարծակի թիկունքի կողմից հարվածում է քաջ իշխանին և ծանր վիրավորում, որովհետև սա իր վրա զրահ չունէր, բայց արագ չի կարողանում իշխանին հաղթել: Սա ևս արագորեն, ինչպէս մռնչագող աշուժ, կամեցավ սուսերով գործի անցնել, սակայն բարձրալը ուժը խլել էր նրանից՝ մատնելով նրան հենց նրա մտերիմ սիրելու ձեռքը: Առաջին անգամ, երբ սուսերով հարձակվում է անօրենի վրա, այս վերջինը, վահանը առաջ տալով, կանգնում է, զենքը թաղելով վահանի մեջ, ամենևին չի կարողանում նորից դուրս քաշել և ամբողջովին մնում է այնտեղ: Իսկ նա, լցվելով վայրենի գազանությամբ, զայրագնած վիրավորում է իշխանի ամբողջ մարմինը ինչպէս թունավոր օձ և կրծող ցասումով թրակտուր արած, վաղակավորով խոցոտած անխնայաբար գետին է տապալում իմ տիրոջը: Տիրասպանը համարում է, թե նա արդեն շունչը փչել է, մինչդեռ պարզվեց, որ նրան կիսամահ է արել. ինքը գաղտնի դուրս է գալիս և գնում է իր տունը՝ կենդանի, որ իր վրա կասկած չտանեն, որպէս թե ինքը անտեղյակ տանը քնած է եղել:

Եվ ահա, այնուհետև կատարված իրողությունը իմացվում է, չարագոյժ աղմուկն ու խառնաշփոթությունը տարածվում է, և ամբողջը խմբվում է: Իսկ ոճրագործին իր հարագատներից մեկը հայտնում է նրա գործած ոճրի մասին, և սա անմիջապէս հեծնում է երիվարը ու փախչում...

Բայց դեռ նա շունչը չէր փչել, որովհետև մի քանի օր կենդանի մնաց, ուստի իր որդիներից յուրաքանչյուրին գանձ ու աստիճան տալով, նրանց նշանակեց իրենց բաժինների վրա և, ծանր վերքերից թուլանալով, վախճանվեց»¹:

Սովետական հետազոտողների մի մասը այդ սպանության մեջ տեսնում են «դասակարգային պայքարի պողթկումներից մե-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 173–175:

կր»¹ կամ Առանի՝ բյուզանդասիրությանբ տոգորված իշխանների դավադրության արդյունքը: Լեոյի կարծիքով Ջվանշիրը սպանվել է մի կազմակերպված խմբի ձեռքով, «բայց այդ մի դավադրություն չէր քաղաքական կամ փառասիրական նպատակներով»: Թեև կադանկատվացին վեր է հանում իր հերոսի կրոնական ջերմունքնությունն ու բարոյական արժանիքները, բայց հենց նրա պատմածներից էլ երևում է, որ Ջվանշիրը միանգամայն հեռու չէր ցուփ կյանքից: Ամառը, նա, սովորականի պես, զվարճանում էր Արցախի գեղանկար հովոցներում, երբ Պարտավի տափարակը դատարկում էր դժոխային տոթերի պատճառով: Բայց հենց որ մեղմանում էր ջերմությունը և աշնանային լիառատությունն էր թագավորում դաշտերի անձայր այգեստաններում՝ տափարակ էր իջնում: Այս բանը տեղի էր ունենում սովորաբար խաչի տոնին, ասել է՝ սեպտեմբերի կեսին: «Մեծ տոնին ներկա լինելու համար էր նա դաշտ իջնում, բայց այս չէր արգելում, որ նա միաժամանակ և գիշերային գինաբուքների մեջ գտնվի, իր ապարանքից հեռու: Մի այդպիսի գիշեր Պարտավի այգիների միջով տուն վերասառնալիս՝ Ջվանշիրը հենց իր բաժակակիցների հարձակմանն ենթարկվեց, և որովհետև միայն սուր ուներ իր հետ, իսկ վահան չէր վերցրել, ուստի չկարողացավ պաշտպանվել և սպանվեց»²: Ջվանշիրի սպանությունը քաղաքական կամ փառասիրական նպատակներով դավադրություն չհամարելու Լեոյի այս կարծիքը մենք չենք բաժանում:

Բնականաբար, Ջվանշիրի կարգի քաղաքական-ռազմական գործչի սպանությունը անհետևանք չէր կարող մնալ՝ տարածաշրջանի քաղաքական իրավիճակի փոփոխության առումով:

Այսպես, Վարազ-Տրդատի գահ բարձրանալուց անմիջապես հետո խազարների բազմաքանակ բանակը, Ալփիլիթների հրամանատարությամբ, հարձակվում է Աղվանքի վրա՝ Ջվանշիրի սպանության համար վրեժ լուծելու պատրվակով: Վարազ-Տրդատ Առաջինը, հուսալով Աղվանքն ապահովել խազարների նոր հարձակումներից, որոշեց խաքանի հետ բանակցելու ուղար-

¹ К.В. Тревер, «Очерки...». С. 249.

² Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 330–331:

կել վստահելի մեկին: 681 թվականին խազարների մոտ է ուղարկվում կաթողիկոս Եղիազարը:

Մ. Կաղանկատվացու երկի երկրորդ գլխի ԼԹ՝ գլուխը սկսվում է այսպես. «Գոռոզ Մահմադի հարավի թագավորության վաթսուներկուերորդ տարում խորհրդակցության տնդի ունեցավ Աղվանքի իշխան Վարագ-Տրդատի համաձայնությամբ այս վերջինի, իր ազգակից նախարարների ու Եղիազար կաթողիկոսի միջև. ասում է. «Ահա այն հարկերը, որ մեզ վրա դրվեցին արաբական դաժան ցնդի կողմից, մեզ չափազանց նեղում ու տարակուսանքի մեջ են գցում: Երկրորդ անասելի աղտը այն է մեզ համար, որ ամեն տարի հոնների գորքերը ասպատակում են մեր երկիրը: Եվ այսպիսով՝ երկու կողմերի թշնամիների բռնության հետևանքով մեր երկիրը ավերում ու աղքատանում է: Իմ մերձավորներ ու սիրելիներ, եկեք մի եպիսկոպոս ընտրենք մեր երկրից մեր խաղաղության համար, որպեսզի գնա և աստճու շնորհիվ երկու աշխարհակալների տրամադրությունը ուղղի դեպի հաշտություն ու անքակտելի բարեկամություն, որպեսզի այսուհետև մեր մտքում նրանց հանդեպ քնն ու թշնամություն չունենանք:

Եվ երբ այս բանը քննեցին իշխաններն ու նախարարները անմիջապես ընտրեցին ու մեծ աղաչանքներով ուղարկեցին Մեծկողմանք գավառի իմաստուն ու պարկեշտ եպիսկոպոսին, որի անունն էր Իսրայել: ...Նա կատարեց հնազանդության ու սիրո պատվիրանը, հանձն առավ շուտափույթ ճանապարհ ընկնելու գնալու հոնների հեռավոր երկիրը: Ապա պատրաստեցին, կապեցին նվերներ ու ընծաներ. նույն ձևով նրան ու նրա ուղեկիցներին ճանապարհի ուտելիքն ու ծախս տվին, և նրանք այնտեղից մեհեկան ամսի տասնութին ճանապարհ ընկան»¹: Նշենք, որ հարավի թագավորության 62 տարվա սկիզբը 622 թվականն է, երբ Մուհամմեդը փախչում է Հաթրեք քաղաքը (հետագայում Մեդինա) և այդ ժամանակից էլ սկսում է մահմեդական թվականը (հիջրեթ)²:

Այդպիսով, Վարագ-Տրդատը մատնանշված խորհրդակցությունը հրավիրել է 683 թվականին՝ իշխանության գլուխ անցնելու առաջին իսկ տարում: Հետևաբար այդ թվականի սեպտեմբեր

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 184–185:

² Տես Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 269:

բեր-հոկտեմբեր ամիսներին էլ պետք է տեղի ունեցած լինի խազարների հարձակումը, քանի որ նրանք «որպես թե Ջվանշիրի արյան դիմաց վրեժխնդիր են լինում»¹: Իսկ վրիժառու հարձակումը չէր կարող Ջվանշիրի սպանությունից տարիներ առաջ կամ հետո կատարվել: Բացի այդ, քանի որ Իսրայել եպիսկոպոսը, մեծ նվերներով ու ընծաներով Աղվանքից Հոնաստան է ուղևորվում մեհական ամսի 18-ին, իսկ մեհականն էլ հայոց 7-րդ ամիսն է, որ անշարժ տոմարով համապատասխանում է փետրվարին, քանի որ Վարագ-Տրդատը իշխան է ընտրվել այն բանից հետո, երբ անցել էր Ջվանշիրի սպանության տրտմությունը, երբ «սուզը փարատվեց, և ծանր աղետը մի փոքր մոռացվեց»², իսկ սուզը փարատվել ու աղետը մի փոքր մոռացվել կարող էր միայն սպանությանը հաջորդած ամիսներին և ոչ թե տարիներին, քանի որ խազարների հետ բարեկամություն հաստատելու միջոցառումներին նվիրված խորհրդակցությունը տեղի է ունեցել Վարագ-Տրդատի իշխանության գլուխ անցնելու առաջին ամիսներին կամ 683 թվականի վերջերին, որովհետև Ջվանշիրը սպանվում է այդ թվականի սեպտեմբերին, կասկածանք չի մնում, որ Իսրայել եպիսկոպոսը Աղվանքից ուղևորվում է խազարների երկիրը 684 թվականի փետրվարի 18-ին: Իսկ այս ամենը հիմք են տալիս պնդելու, որ իրոք, խազարների հարձակումը Աղվանից երկրի վրա, տեղի է ունենում 683 թվականի վերջերին: Ջվանշիրի սպանությունից հետո է, որ խազարները հարձակվում են Աղվանքի վրա՝ կարծելով թե՛ նորընտիր իշխանի մատը խառն է նրա սպանության մեջ և այդ պատրվակի տակ, ինչպես նշվեց, երկիրը կողոպտելու իսկական նպատակով: Այս առթիվ ամեն տեսակի կասկածները փարատվում են Մ. Կաղանկատվացու հետևյալ վկայություններով. «Երբ Վարագ-Տրդատը գրավեց հռչակավոր մայրաքաղաք Պարտավը (այսինքն՝ երբ իշխանության գլուխ անցավ, – Է.Ս.), այդ նույն ժամանակ հոնների գորավար ու մեծ իշխան Ալփիլիթվերը վերցրեց իր բազմաթիվ գորքերը և քաջերի երկիր Գովգի գանազան տեղերից նրա մոտ եկած մարդկանց զենքերով ու զարդերով զինավառված, զորավետներ դրոշակներով, տեգավորների, աղեղնավորների ու սպառազինված, զրահավորված, սաղավար-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 180:

² Նույն տեղը, էջ 179:

տավոր հեծյալների գնդերով ասպատակեցին Աղվանք՝ Կովկաս մեծ լեռան ստորոտներով, Կապադակի¹ գավառի ավաններով, որպես թե Ջվանշիրի արյան դիմաց վրեժխնդիր են լինում: Իսկ ինքը՝ գորավարը, իր թիկնապահ գնդով դաշտերում ու հովիտներում ման գալով, Կուր գետով անցավ Ուտի գավառը: Եվ ահա այստեղ հավաքեցին այդ երկրի մարդիկ ու անասունները, ավարեցին ու գերեցին ամեն ինչ: Իսկ իրենք նորից դարձան ու բնակություն հաստատեցին դաշտի կողմերում, Լփնիքի սահմանների մոտերքը:

Իսկ երբ Աղվանքի իշխան Վարագ-Տրդատը տեսավ գորքի այդ ահագին քանակությունը, որ ասպատակելով անխնա գերում ու քանդում էր ամեն ինչ, տխրեց ու տարակուսանքի մեջ ընկավ: Ապա մեծ եպիսկոպոսապետ Եղիազարին հոների իշխանի մոտ պատգամավոր ուղարկեց՝ նրա միջոցով առաջարկելով իր անկեղծ հավատարմությունն ու բարեկամությունը, որ նրա նկատմամբ տաժում է իբրև սիրելի եղբոր, միաժամանակ հայտնում է, որ իրենք մասնակից չեն եղել Ջվանշիրի սպանությանը, այլ այդ անասելի ոճիրը կատարվել է մի վատանում ու չնչին մարդու ձեռքով: Այս ամբողջը Աղվանքի կաթողիկոսը խոսեց հոների մեծամեծների (հյուդական) առաջ: Նա ավելացրեց նաև այլ անիմանալի աստվածային խոսքեր... Ապա կաթողիկոսը հոների իշխանին անկեղծ սրտով թիկունք ու օգնական է դարձնում Վարագ-Տրդատի իշխանությանը, իսկ նա մեկնում է այնտեղից և անցնում, գնում է իր երկիրը»²:

Այդպիսով, անընդունելի է Կ.Վ. Տրևերի կարծիքն այն մասին, թե իբր «խազարները Ալբանիայի վրա արշավեցին 684 թվականին՝ որպես վրիժառություն Ջվանշիրի սպանության համար»³: Անընդունելի են նաև Լեոյի և ուրիշների կարծիքներն այդ առթիվ: Լեոն գրում է. «Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը 680 թվականին ենթարկվեցին մի ուրիշ մեծ վտանգի: Թուրքական այն զեղերը, որոնք ապրում էին Կովկասյան լեռնաշղթայի

¹ Կապադակ գավառը, որ կոչվել է նաև Ոստան-ի-մարգաբան, գտնվել է Շաքի գավառի հարավ-արևելյան կողմում: Այդտեղ էր գտնվում Աղվանքի թագավորության մայրաքաղաքը հնագույն շրջաններում, այժմ կաբալա գյուղը:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 179–181:

³ К.В. Тревер, «Очерки...». С. 249.

մյուս կողմում և միշտ պատուհաս էին Այսրկովկասյան խաղաղ ազգաբնակչության համար, իրենց արշավանքներից մեկը կրկնեցին այդ տարի: Դրանք խազարներն էին, որոնց հետ պատերազմի բռնվեցին հարձակման ենթարկված երկրները: Մեծ կոտորածներ ու խառնակություններ եղան և մի մեծ ճակատամարտի մեջ սպանվեցին թե Գրիգոր Մամիկոնյանը և թե ուրիշ շատ նախարարներ, նաև վրացիների ու աղվանների կողմից: Այս տակնուվրայություններն անհաստատ, խառնաշփոթ դրություն են ստեղծում «այաստանում»¹:

Մեկ անգամ ևս ընդգծում ենք, որ Ջվանշիրի սպանությունը, Վարազ-Տրդատի կողմից Աղվանքում իշխանության գլուխ անցնելը և խազարների հարձակումը Աղվանքի վրա տեղի են ունենում միևնույն տարում՝ 683 թվականի երկրորդ կեսին: Ջվանշիրի սպանության հետևանքով շատ խռովություններ տեղի ունեցան Աղվանքում, «որովհետև բազմությունը զինված, կուտակված էր դառնը, իսկ մեծամեծ նախարարները ժողովված էին, և ամբողջ երկիրը, միատեղ վայնասունով լցված, ողբում էր...»²:

Հիշեցնենք, որ Ջվանշիրը մահվանից առաջ իր տիրույթները բաժանում է որդիների միջև: Նրանք էլ երկպառակչական կռիվներ են մղում միմյանց հետ՝ թուլացնելով երկիրը: Ահա թե ինչու Ջվանշիրի ողբերգական սպանությունից հետո Աղվանքում 683 թվականին գահ է բարձրանում նրա եղբորորդի Վարազ-Տրդատը:

Մ. Կաղանկատվացու հաղորդմամբ երբ տրտմությունն անցնում, սուգը փարատվում և ծանր աղետը մի փոքր մոռացվում է, Աղվանքի տոհմերի իշխանները, կուսակալները, նահանգապետները, նախարարները և երկրի բոլոր իշխողները (այսինքն ողջ տիրող էլիտան) հավաքվում են արքնպիսկուպոս Եղիազարի մոտ և խորհրդակցում «Աղվանքի խաղաղության ու շենության մասին: Եվ սրտացավ շրջահայեցողությամբ հոգալով երկրի իշխանության մասին՝ համաձայնվեցին անմիջապես ավագ ընտրել մի ուն նախարար, որ մեծարված էր կայսերական պատվով, ստացել էր ապիհյուպատ պատրիկության աստիճան: Սրա

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 320:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 175–176:

անունն էր Վարազ-Տրդատ, որ Ջվանշիրի եղբայր Վարազ-Պերոժի որդին էր: Երկրի իշխաններն ու կաթողիկոսը սրտով ու միակամ շտապում էին մեծ փութաջանությամբ գործը սրտով ու միակամ գլուխ բերել: Բոլոր մեծամեծները միատեղ կենարար խաչաձև դրոշակները պարզած, փողերի ձայներով անունը հռչակելով՝ վերցրին նրան, կանգնեցրին ոսկեկայա վահանի վրա, բազմիցս վեր էին թռցնում և ներբողական ճառեր ասում:

Եվ այսպես մեծ ուրախությամբ հանձնեցին նրան հայրենական գահի առաջին իշխանի աթոռը՝ օգնելով ու նպաստելով նրա նոր իշխանությանը: Սրանից առաջ արդեն քաջ այր Վարազ-Տրդատը իր հզորիմաց հանճարով բոլորին նկատմամբ մեծ սեր ու բարեկամություն էր արտահայտում. իսկ նրբ իշխանություն ձեռք բերեց, չնայած որ նրա նախանձորդ ազգակիցներից ոմանք նրա դեմ չարությամբ լցված էին, բայց նա շնորհիվ իր իմաստալից ու քաղցր խոսքերի նվաճեց և իրեն գրավեց բոլորի սիրտը: Երկայնամիտ հեղուկությամբ հնազանդեցրեց երկիրը նրա սովորական ու նախնական իշխանության սահմաններով: Եվ այս ուղղությամբ առաջ գնալով՝ գրավեց հռչակավոր մայրաքաղաք Պարտավը»¹:

Աղվանքի իշխանի պաշտոնը զբաղեցնելուց հետո Վարազ-Տրդատը «Օրստօրն առաջ էր ընթանում իր կառավարման գործում: ...Արաբների հզոր և արքայակերպ իշխանից գերագույն պատիվ է ընդունում՝ լինելու իշխան արևելքի վրա, կառավարելու Աղվանքի ամբողջ թագավորությունը, Ուտիքի գավառը և բոլորին իր իշխանությանը ենթարկելու՝ մշտուրալս ցնծությամբ հաղթող ու հզոր լինելով իր սահմաններում»²:

Վարազ-Տրդատի իշխանության ժամանակ Աղվանից և Արցախ աշխարհները, այնպիսի վիճակում էին, ինչպես ողջ Հայաստանը: Աղվանքը իր Արցախ նահանգով վարկ էր վճարում թե՛ հոներին, թե՛ բյուզանդացիներին և թե՛ արաբներին: Ինչպես նախորդիվ տեսանք Աղվանքին ամենից շատ նեղում էին յազարները, որոնց հարձակումներից ու կեղեքումներից ազատվելու նպատակով Վարազ-Տրդատը մտածում է նրանց քրիստոնեացնելու միջոցով բարեկամացնել իրենց հետ: Այդ ծրագիրը սկզբում

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 179–180:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 181–182:

պատկերում է հաջողությամբ: Աղվանքում սրբակեցության համբավ ձեռք բերած Իսրայելի եպիսկոպոսը ուղարկվում է Հոնաստան, որին և հաջողվում է քրիստոնյա դարձնել նրա թագավորին ու իշխաններին: Վարագ-Տրդատի՝ խազարների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին առանձին ուսումնասիրություն է նվիրել ակադեմիկոս Ս.Տ. Երեմյանը¹: Այդ մասին մեզ վկայություններ է թողել Մ. Կաղանկատվացին: Նշվեց նաև, որ 683 թվականին Վարագ-Տրդատը խորհրդակցություն հրավիրեց և մասնակիցներին համոզեց, որպեսզի Մեծկողմանք գավառի եպիսկոպոս Իսրայելին ուղարկվի հոնների երկիրը՝ նրանք քրիստոնեացնելու և Աղվանքի հետ բարեկամացնելու պատվիրանով կամ հանձնարարականով: Տեսանք նաև, որ Իսրայելը 684 թվականի փետրվարին կատարում է «հնագանդության ու սիրո պատվիրանը, հանձն առնում շուտափույթ ճանապարհ ընկնելու ու գնալ հոնների հեռավոր երկիրը»² և գնում է: Իսրայելի ղեկավարած պատվիրակությունը Պարտավից դուրս է գալիս 683 թվականի դեկտեմբերի 23-ին և տեղ հասնում վեց շաբաթ հետո՝ 684 թվականի փետրվարի 8-ին: Այդ մասին մանրամասն տեղեկություններ է թողել Մ. Կաղանկատվացին, որի երկում ասված է. «Նրանք (Իսրայելը և նրա ընկերները, – Է.Ս.) այնտեղից (Պարտավից, – Է.Ս.) մեհեկան ամսի տասնութին ճանապարհ ընկան: Հանգիստ դուրս գալով Պերոզ-Կավատ քաղաքից՝ հեռացան, անցան Կուր մեծ գետը. Աղվանքի սահմանները կտրեցին-անցան. տասներկու օր գնացին-հասան Լփնիքի քաղաքներից մեկը, որտեղ նրան ընդառաջ ելան քաղաքի բոլոր բնակիչները և ուրախությամբ ընդունեցին, ինչպես վայել է ընդունել եպիսկոպոսին, մանավանդ որ մոտեցել էր աստվածահայտնության տերունական տոնը: Մտնելով քաղաք՝ իջևանեց և անմիջապես տոնը կատարեց: Այդտեղից

¹ Տես «Моисей Каланкатуйский о посольстве Албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу», Записки Института Востоковедения АН СССР, т. 8, 1939г.

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 185:

գնացին, անցան Ճիղբերի¹ երկիրը, որ գտնվում է Մեծ լեռան² ստորոտում»³:

Չմեռվա հյուսիսային քամիների բարձրացրած անասնի բուր ու մրրիկի պատճառով Իսրայելն այդտեղ երեք օր արգելափակվում է: Նա չէր կարողանում աչք բացել ու նշմարել անցման ճանապարհը: Ապա մի կերպ նա ճամփա է ընկնում դեպի Վարդեգրվակ կոչված լեռը, որը ըստ Մ. Բարխուդարյանի հաղորդման Չողի Խաչմազի շրջանի Խալթան կոչվող սարահարթն է, և «երկար ժամանակ գնալով հասան վաղեմի թագավորանիստ կայանը, այն տեղը, ուր նահատակվեց Մեծ Գրիգորի թոռ սուրբ Գրիգորիսը՝ Աղվանքի կաթողիկոսը: Ապա մի քանի օրից հետո հասնում են Չորա պահակը, որը Դերբենդի մոտ է:

Այնտեղ նպաստավոր մեծարանքների արժանանալով բնակիչներից՝ նրանք այդպես երկար ճանապարհ կտրելով եկան-հասան Վարաչան⁴ հոյակապ քաղաքը մեծ պասի սկզբում: Հոնաց մեծ իշխանը, նրա գալուստը իմանալով, ողջունով ընդառաջ գնաց, մեծ ուրախությամբ ընդունեց, խոնարհվեց նրա առաջ և, հայրապետական սրբությանը պատիվ անելով, կատարում էր նրա պատվերները: Եվ երբ սուրբ մեծ պասի օրերը պայծառորեն սկսվեցին, բնակիչները մեծ սիրով ընդունեցին նրան, նա ու իր մարդիկ պատիվներ էին ստանում բոլորի կողմից, մանավանդ ավելի բարեխնամ իշխանից ու ազնվական մեծամեծներից: Այդ փայլուն ընդունելությունը և սրբության նկատմամբ տածած սերը տեսնելով՝ եպիսկոպոսը չափազանց ուրախանում ու մեծապես գոհանում է Քրիստոսի անպատմելի պարգևներից: Եվ այդպես երկար ժամանակ հանգստանում է տանջալից չարչարանքներից, այնտեղ լսում է անբաստանություն ու տեսնում է թշվառացած ցեղի երեսպաշտ կրոնը: Ողբում ու տրտմում է անասնի չարիքների ու երկդիմի հավատքի համար այն մարդկանց, որոնք իրենց աստվածապաշտ էին անվանում,

¹ Ճիղբերն ապրում էին Լփնիքից հյուսիս, Պիրիքիթելի-Ալազանի խորածորներում:

² Մեծ լեռը Կովկասյան լեռնաշղթան է ընդհանրապես:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 185:

⁴ Վարաչանը հոնների մայրաքաղաքն էր: Այն տեղադրվում է այժմյան Բույնական քաղաքի մոտ գտնվող Կոսֆիր-Կումուլս վայրում:

մինչդեռ հենց նրանք այդ գորությունից հրաժարվել ու օտարացել էին»¹:

Այդ ժամանակ հոների իշխանը կամ թագավորը Ալփիլիթվերն էր, որը խիստ ոգևորված, իր մեծամեծերով ու աշխարհախումբ բանակով հաճույքով լսում էր Իսրայելի վարդապետությունն ու «քաղցրուսույց խրատը», փառաբանում Աստծուն և ասում. «Արդ՝ իսկությանբ հավատում եմք, որ տերը սրա միջոցով մեզ ուղարկեց իր շնորհների մխիթարությունը, որպեսզի մեզ ազատի խավարային գործերից ու սատանայական ամեն ընթացքից»²: Հոների իշխանը, մեծամեծներն ու աշխարհախումբ բանակը մխիթարությամբ հնազանդվում են «քրիստոսի լծի ծառայությամբ», անկեղծորեն, սրբությամբ ու պարկեշտությամբ իրենց զարդարում են զատկի պահքին, «պատվ ու աղոթքներով գիշեր-ցերեկ հոգևոր նախանձալսնդությամբ ամեն մարդ իր ընկերոջից ավելի շտապում էր սուրբ եկեղեցուն երկրպագելու՝ մոռանալով նախկին որկրամոլական սովորությունը, որը եպիսկոպոսը լուսատու խրատների շնորհներով նրանց մտքից մաքրեց: Անմիջապես հնազանդվելով սուրբ եպիսկոպոսի հրամանին՝ աստվածասեր իշխանը (Ալփիլիթվերը, – Է.Ս.) շտապ կերպով հանձն է առնում իր մերձականերով տարեց-տարի մեծ պասը սրբությամբ կատարել, որովհետև ինքը չափազանց բարեմիտ մարդ էր: Անմիջապես լինում է աստվածային պատվիրանի հրամանակատար. ինքը բարեպաշտ դառնալով հալածում է անհավատներին»³:

Ալփիլիթվերը աստիճանաբար ջանում է արգելել մեռելներին վրա տեղի ունեցող խելագար լացը և դիվանական սրակոծությունը, գարշելի ու պիղծ է հայտարարում հայրենական (հոնական) պաշտամունքը և պահանջում պաշտել միայն «կենդանի Աստծուն, նրկնքի ու նրկրի արարիչին, միածին որդուն ու սրանց համազոր հոգին»⁴: Նա իր նրկրի զանազան տեղերում եկեղեցիներ էր կառուցում և բարձրացնում «Աստծու քահանաների պատիվը»: Ալփիլիթվերը, ամբողջ բազմության հետ միասին, դար-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 185–186:

² Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 193:

³ Նույն տեղը, էջ 193:

⁴ Նույն տեղը, էջ 194:

ծավ քրիստոսասեր և «հեռացան սուտ ու փուտ պիղծ պաշտամունքից»: Հոնների բարեպաշտ իշխանը այնուհետև հրամայեց քանդել բոլոր մեհյանները: Այդ գործը հանձնարարվում է արհեստի մեջ հմուտ Մովսեսին, քրմապետների խմբերին, որոնք «դիվական պղծանոցները բոլորը միասին հրդեհելով, ոչնչացրին: Ինքը՝ եպիսկոպոսը, վեր կացավ մի բարձր տեղ կուռքերի հանդեպ ծունր դրեց, խաչակնքեց, և ապա բարձրացավ մի ուժգին հողմ, սաստկապես վրա հասավ ու վառեց բարձր մեհյանները և զոհարանների խալամները զագրելի մորթիների հետ միասին: Այդտեղից մեծ ուրախությամբ դարձան քաղաքը և լուսազգեստ մկրտություն ընդունեցին: Եվ այդ օրը տոների տոն ու տոնախմբումների տոնախմբություն դարձրին իշխանն ու մեծամեծները»¹:

Այդ ամենից հետո հոների իշխան Ալփիլիթվերը խորհրդակցում է իր նախարարների հետ, որպեսզի Իսրայել եպիսկոպոսը մնա իրենց երկրում և այնտեղ հայրապետական այթոռ հիմնի: Նա իր տերության բոլոր մեծամեծների ու նախարարների խորհրդում ասում է. «Տգիտական մթացուցիչ ոգիների ինչ-որ խավար վաղուց պարփակել էր մեզ. այդ պատճառով չէինք կարողանում ամբողջ տիեզերքի արդար լույսը նկատել: Արդ՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը իր քաղցրությամբ այս եպիսկոպոսին մեզ համար կյանքի առաջնորդ ուղարկեց, որը խոսքերով ու գործերով կշտամբեց և անարգեց մեր անօրենությունները ու մեզ ճանաչել տվեց ամենին ստեղծող աստծուն և նրա սքանչափաշ գործությունը, որին ամբողջովին իսկ ճշմարիտ կերպով հավատալով խոստովանեց իմ հոգին: Եվ ահա հավատացինք մի աստծուն՝ երկնքի ու երկրի արարչին: Մեզ համար օրինակ պետք է վերցնենք այս կրոնին հավատացող ամբողջ աշխարհը և բյուզանդացիների մեծ թագավորությունը: ...Ահա աստծու պատգամների ուսուցիչը այս մարդն է՝ Իսրայել եպիսկոպոսը. եկեք աղաչենք սրան, որպեսզի մնա մեր երկրում և լուսավորի մեզ»²:

Հոների իշխանի առաջարկությունը միաձայն ընդունվում է: Այդ մասին Իսրայելիին հայտնելու համար նրա մոտ է ուղարկվում Ավչի անունով մի ավագ իշխան, որն ուներ թարխանության

¹ Նույն տեղը, էջ 200–201:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 201–202:

աստիճան և Չաթկասարի սենեկապետն էր: Հայտնելով խորհրդակցության խնդրանքի մասին, պատվիրակը միաժամանակ ասում է. «Եթե հոնների մեծ իշխանն ու բոլոր մեծամեծներս քո միջոցով ճանաչեցինք մեր տեր արարչին իբրև մեզ հայր, ուստի միշտ հավատում ու նրկրագում ենք սուրբ երրորդությանը: Աղաչում ենք քո սրբությանը (քեզ), որպեսզի համաձայնվես մեզ եպիսկոպոս և ուսուցիչ լինել՝ մեր Վարաչան քաղաքում հայրապետական այթռ հաստատելով»¹: Ապա նա հաղորդում է իր տիրոջ հետևյալ պատվիրանը. «Ես՝ Իլիթվերս, քեզ հետ տիրոջ ուխտ կկապեմ և հեթանոսական ամբողջ պաշտամունքը հոնների երկրի երեսից արմատախիլ կներպով կբնացնջեմ, իսկ հավատի չեկող կախարդ գուշակներին հրով կայրեմ: Այն անձը, որ իբրև հեթանոս կշրջի մեր երկրում, կամ գաղտնի կուռքերի գոհ կմատուցի, սրով կսպանեմ: Թող նույն աստվածապաշտությունը առաջ գնա և քարոզվի Քրիստոսի անպատմելի պարգևների մասին»²:

Իսրայել եպիսկոպոսը պատասխանում է, որ ինքը առանց Աղվանքի մեծ հայրապետ Եղիազարի իրեն իրավունք չի վերապահում նման քայլի դիմելու, որովհետև այդ իրավունքը նրան է պատկանում, իսկ ինքը բարեկարգ թեմ ունի և չի կարող իր հոտը թողնել ու մնալ հոնների երկրում: Պատգամավորը մի քանի անգամ կրկնում է խնդրանքը, որից հետո Իսրայել եպիսկոպոսը ժամանակ է խնդրում վերադառնալու հայրենիք՝ իր «բարեպաշտ որդի Վարագ-Տրդատի՝ Աղվանից իշխանի և սուրբ կաթողիկոսի մոտ» և խորհրդակցել նրանց հետ: Իսրայելն ասում է. «Եթե աստծուն և նրանց հաճելի լինի, աստված կկատարի այդ խոսքը: Իսկ այդ պատիվը, որ խոստանում ենք, ինձ չի պատկանում. բայց եթե ծանրամահ տանջանքներով ձեր կողմից տառապանքի ենթարկվեմ տիրոջ համար, այդ կհամարեմ ինձ պատիվ և շատ կուրախանամ: Բայց դուք պետք է ձեր այդ միտքն ու մտադրությունը գրավոր կներպով հայտնեք ամբողջ Աղվանքի ժողովրդին և Եղիազար հայրապետին. սուրբ Եղիշեից սկսած մինչև այսօր աստվածաբանակ քաղաք Երուսաղեմի կողմից, միայն հյուսիսարևելքին է վիճակվել առաքելական այթռ ունենալ և տիրոջ եղբայր սուրբ Հակոբից ձեռնադրությունն ընդունել: Իսկ դուք այդ

¹ Նույն տեղը, էջ 202:

² Նույն տեղը:

թեմի սահմանն եք. առանց իմ բոլոր հայրերի, եղբայրների և աթոռակիցների կամքի ու խորհրդի այդ ինչպե՞ս կլինի, որովհենտև նոր է այն գործը և նշանակությունը կարևոր»¹:

Հոները կատարում են Իսրայել եպիսկոպոսի պատվերը՝ նամակներ ու խնդրագրեր են ուղարկում թե Աղվանքի իշխան Վարագ-Տրդատին ու հայրապետ Եղիազարին և թե Հայաստանի սուրբ եպիսկոպոս Սահակին ու Հայաստանի գորապետ իշխան Գրիգորին: Երբ Մեծկողմանքի եպիսկոպոս Իսրայելը վերադառնում է Հոնաստանից, հոների իշխանը իր երկրի գլխավորներից երկու հոգու՝ Խուրսան Իրթգինին ու Խազր Չաթին պատրաստում, ուղարկում է նրա հետևից իբրև բարեկամության պատգամավորների և խնդրում, որպեսզի Իսրայելը վերադառնա ու դառնա հոների հոգևոր առաջնորդ: Վարագ-Տրդատի ու Եղիազարի հասցեյով ուղարկված հրովարտակում կարդում ենք. «Հոգեղեն աչքերի տեսությամբ ընդունեցինք ձեր կողմից առաքվածին՝ Աստծու այր Իսրայել եպիսկոպոսին և դրա միջոցով ողջունում ենք ձեզ Աղվանքի մեծ հայրապետ Եղիազար և մեր սիրելի եղբայր Աղվանքի աշխարհակալ իշխան Վարագ-Տրդատ: Որովհենտև դուք մեզնից խնդրում էիք մարմնավոր խաղաղություն, իսկ մենք հոգևոր ողջույնով տեսանք դա ինչպես աստծու պատկեր և դրա (եպիսկոպոսի) սուրբ վարքի ու նորասքանչ հրաշքների միջոցով, որ բարձրյալը ցույց տվեց, ճանաչեցինք մեր արարչին ու ստացանք մեր հոգիներին խաղաղություն: Եվ արդ՝ ձեզանից խնդրում ենք, որ նույն իրեն՝ Իսրայելին, տաք մեզ եպիսկոպոս ու առաջնորդ, որի միջոցով շատերս հավիտնական փրկություն գտանք, և որպեսզի մեր ու ձեր միջև անքակտելի բարեկամություն հաստատվի: Ողջ եղեք տիրոջով»²: Իսկ միևնույն նպատակով Հայաստանի եպիսկոպոսապետ Սահակին ու գորապետ իշխան Գրիգորին գրած հոների իշխանի նամակում կարդում ենք. «Աշխարհի գոյության սկզբից անգիտությամբ մառախապատ մեզով խավար մեր հայրերը մեռան: Իսկ աշխարհի համար եկած փրկությունը վերին Աստծու՝ երկիր իջած Քրիստոսի մասին մենք ադոտ կերպով լսեցինք իբրև լուր: Այդ երկիրը արշավելու շնորհիվ և Աղվանքի ձեր պետությանը մոտ գտնվելով՝ տեսանք, որ

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 203:

² Նույն տեղը, էջ 203–204:

դուր և ամբողջ տիեզերքը ունեք միևնույն հավատքը, մեր սրտում էլ բարի նախանձ հաստատվեց: Եվ Քրիստոսի՝ մեր Աստծու խոսքը լրիվ կատարվեց: Նրա ավետարանը քարոզվեց հյուսիսայիններին սահմաններում, իսկ այդ բոլորը բովանդակապես մենք սովորեցինք մի լավագույն մարդուց՝ Իսրայելից, որ եղել է Մեծկողմանքի եպիսկոպոս:

Եվ այժմ մեզանում կատարած հրաշքների մասին դուք լսել եք ձեզ մոտ եկածներից: Խնդրում ենք մեր հայցումը կատարել ավտոմատ, այն է՝ նրան ուղարկել մեզ համար եպիսկոպոս: Եվ ձեզանից՝ սուրբ հայրապետ Եղիազարից¹ խնդրում ենք՝ ձեզ նրան գործակից ու հավատակից ճանաչելով, երկուսիդ էլ աղերսում ենք, որպեսզի կատարեք մեր հոգևոր խնդրանքը. նրա մեզ մոտ լինելով խուժադուժ ցեղերի գորքների արշավանքները դեպի ձեր երկիրը կարգելափակվի, երբ մենք և դուք մի հավատի լինենք. ողջ եղեք»²:

Հայաստանի Գրիգոր իշխանն ու Սահակ քահանայապետը ստանալով այդ հայցումը, շատ ուրախանում են և հոներին պատասխանում. «Հայոց կաթողիկոս Սահակից, ամբողջ քահանայական միաբանությունից, հայոց իշխան Գրիգորից և բոլոր եկեղեցիների աշխարհակալներից տիրոջ միջոցով ողջույն:

Աստծուց ձեզ հասած կենսատու փրկության համար, ինչպես որ մեզ պատմվեց, անչափ ուրախությամբ գոհացանք Քրիստոսի անզոջալի պարգևներով. և այն նամակը, որ դուք՝ Աստծու

¹ Մ. Կաղանկատվացու երկի Բ գրքի ԽԴ գլխում աշխարհաբար սխալ է թարգմանվել «...և ձեզանից՝ սուրբ հայրապետ Եղիազարից խնդրում ենք...» նախադասությունը: Մյուսեղ «Սուրբ եպիսկոպոսապետ Սահակը», որին ուղղված է Իլիթվերների նամակը, դարձված է «սուրբ հայրապետ Եղիազար»: Իսկ գրաբարում ասված է. «Եւ ի սրբոյ հայրապետ Աղուանից խնդրեալ է մեր»: Իլիթվերների պատվիրակներն ուզում են ասել, որ «մենք խնդրել ենք նաև Աղվանից հայրապետ Եղիազարից»: Մինչդեռ աշխարհաբարի թարգմանիչ Վ. Առաքելյանը իր կողմից ավելացնում է. «ձեզանից» բառը և բոլորովին փոխում նախադասության իմաստը: Հավանաբար թարգմանչի համար նման շփոթության պատճառ է հանդիսացել «հայրապետ» բառի վերջում սխալմամբ թառած Դ դիմորոշ հոդը, որն այստեղ բոլորովին ավելորդ է և սրբագրման կարիք ունի:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 204:

նորընծա ծառաներդ, գրել եք մեզ, ստացանք. սրանով ճանաչեցինք արարչի բարերարությունը...

Ապա իմացանք, որ նրա անունը տարածվելով լցրեց տիեզերքը, ձեր գրածներից ու պատգամավորներից լսեցինք, թե ինչպես Իսրայել նախկոպոսի միջոցով սրտանց դարձ կատարեցիք... Բայց ինչ վերաբերում է այն բանին, որ մեզանից պահանջում եք Իսրայել նախկոպոսին, ձեր այդ մտադրությունը մեծ է, որովհետև հոտը չի կարող առանց հովվի լինել: Եվ արդ՝ ծանր ու դժվարին է մեզ համար ձեր խնդիրքը չկատարել, սակայն պատճառներ կան. նա մեր աթոռի իշխանության տակ չէ, այլ ենթակա է Ադվանքի տան աթոռին: Մենք կամենում ենք ու մեծ ցանկություն ունենք, որ նա միշտ ձեզ մոտ լինի, բայց այդ իրավունքն ու իշխանությունը պատկանում է մեր աթոռակից Եղիազարին՝ Ադվանքի հայրապետին, այդ նրա գործն է: Արդ՝ ճանաչեցեք կենդանի աստծուն, որ կյանք է տալիս մարդկանց... Իսկ մենք կարոտալի սրտով անմոռաց կհիշենք ձեզ մեր եկեղեցիներում. ողջ եղեք»¹: Այս պատասխանը հետաքրքիր է նաև նրանով, որ հստակ ընդգծում է VII դարում գործող եկեղեցական հերարխիան: Այսինքն՝ եկեղեցական ընտրանին անվերապահ ենթակա էր սուրբորդինացիոն նորմերին: Հստակ է նաև, որ հայոց թեմերը պահպանում էին միմիանց նկատմամբ իրենց անկախությունը՝ հարգելով վեհափառության ինստիտուտի լեգիտիմության բնույթն ու էությունը:

Հոնների պատվիրակներ Իրթզին Խուրասանն ու Խազր Չաթը սկզբում տեղ են հասցնում Հայոց կաթողիկոսին ու իշխանին հասցնյազրված թողաթը, ապա Հայաստանից վերադառնում Ադվանք ու ներկայանում Վարագ-Տրդատին ու Եղիազարին՝ Պարտավ մայրաքաղաքում: Նրանք խնդրում են, որպեսզի Իսրայելը տրվի իրենց, սակայն փաստորեն մերժողական պատասխան են ստանում: Ադվանքի տիրակալները հոնների պատգամավորներին պատասխանում են. «Դա չի կարող աստծուց իրեն վստահված իր հոտը ամբողջովին թողնել և ձեզ մոտ լինել. այլ մենք կիրամայենք, որ զնա ու գա ըստ իր կարողության, ձեզ հաստատի Քրիստոսի հավատի մեջ և անխախտ պահի մեր բարեկամությունը, որ տածում ենք միմյանց նկատմամբ: Այդ բանին մենք էլ

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 205–206:

ենք համամիտ, որովհետև եթե դա միջնորդ լինի մեր ու ձեր միջև, մեր միջից թշնամությունը կվերանա, և կհաստատվի սեր ու խաղաղություն»¹:

Հոների պատգամավորները լսելով այդ մերժողական պատասխանը, տագնապահար են լինում և ասում. «Մեզ մոտ գալն ու գնալը թող ուշ-ուշ չլինի, հավատի դրված հիմքը նորից չքանդվի, և նա մեզ որք չթողնի, որովհետև ուրիշ վարդապետի մենք չենք լսի ու հնազանդվի»²:

Վերը նշվեց, որ Իսրայելը Արցախի Մեծկողմանք գավառի եպիսկոպոսն էր: Այստեղ ավելացնենք, որ Իսրայելը փոխարինել է Դավիթ Հայրապետին, որը մահացել է 683 թվականի վերջերին: Մ. Կաղանկատվացու վկայությամբ «այդ ժամանակներում Մեծ Կյանքի հայրապետ Դավիթը վախճանվեց. ... Հոտը անհովիվ մնաց և եկեղեցին սուգի մեջ ընկավ: Այդ ժամանակ Աղվանքի բարեպաշտ իշխանը (Վարագ-Տրդատը, – Է.Ս.) խորհրդակցեց հավատարիմ զորավարի ու կաթողիկոսի (Եղիազարի, – Է.Ս.) հետ՝ բոլոր եպիսկոպոսներով, նախարարներով, որպեսզի շուտափույթ հասնեն աստվածային խորհրդի կատարմանը», այսինքն ընտրեն նոր եպիսկոպոս: Վարագ-Տրդատը առաջարկում է Արցախի Մեծկվանք գավառի եպիսկոպոս ընտրել Իսրայելին, նրան բնութագրելով որպես «առաքինազգեստ մարդու»³: Իսրայելը թեև ուզում էր «մի պահ հանձն չառավ, բայց քանի որ իշխանասատ հրամանով ստիպում էին նրան, չհամառեց, չընդիմացավ: ... Ձայն բարձրացրեց և ասաց, «Թող Աստծու կամքը կատարվի»»⁴: Դրանից հետո Վարագ-Տրդատը նրա հետևից նախարարական ավագներից մարդիկ է ուղարկում, որպեսզի նրան շտապ կերպով բերեն իր մոտ: Ուղարկված նախարարական ավագները գնում հասնում են «Միջնարցախ գավառը» (Արցախի լեռնային մասը) և նրան գտնում Գլխովանքի իր մենաստանում: «Միջնարցախ գավառում» տեղի է ունենում թեմական քահանաների ժողով, որի մասնակիցները հավանություն են տալիս երկրի իշխանի առաջարկությանը և նրա պատվիրակներին ու Իսրայել-

¹ Նույն տեղը, էջ 206:

² Նույն տեղը:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 182:

⁴ Նույն տեղը:

լին այնտեղից վավերական հրովարտակներով ճանապարհ դնում Պարտավ: Նրանք «գալիս-հասնում են Կաթողիկոսի և Աղվանքի իշխանի մոտ: Նրանց են ներկայացնում սրբասուն Իսրայելին՝ կրոնական կարգով զգեստավորված: Սրանք բոլորին ուղարկում են գովասանագիր և հրովարտակներ են առաքում յուրաքանչյուր կողմի գորավարին ու նախարարներին: Կաթողիկոսը նրան պատվելով ձեռնադրում է Մեծկողմանքի գավառի եպիսկոպոս և մեծ բազմությամբ ու հանձնարարական թղթով ճանապարհ է դնում իր գավառը»¹:

Իսրայելը մեծաշուք մեծարանքներով է ընդունվում իր աթոռակիցների, երկրի գլխավորների ու ժողովրդի կողմից, որովհետև նա «ավելի լավ էր արտահայտում իր վարդապետությունը, քան իր նախորդները»²:

Իսրայելի միջոցով հոների հետ խաղաղության պահպանումը Վարագ-Տրդատի առաջին միջոցառումը հանդիսացավ, սակայն դրանով երկիրը չի փրկվում նրանց ավերիչ ասպատակություններից: Ն. Ակինյանը նշում է, թե՛ հայտնի չէ՝ Իսրայելը հետագայում կրկին այցելվո՞ւ է խազարներին, թե՛ ոչ³: Հավանական ենթադրությունն այն է, որ Իսրայելը այնուհետև չի այցելում խազարների աշխարհը, այլապես խաղաղությունը շուտ չէր խախտվի: Վարդան պատմագրի հաղորդմամբ «Հուստինիանոս Երկրորդի (685-711 թ.թ.) գահակալության առաջին տարում խազարներ անվանվող հյուսիսային ժողովուրդը գրավում է Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը»⁴:

Ինչպես տեսանք, Ջվանշիրի մահից հետո, թեևկուգ և կարճ ժամանակով, խազարների հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու գործում դրական դեր խաղաց նաև Աղվանքի կաթողիկոս Եղիազարը: Այստեղ ավելագնենք, որ նա «հայրապետական աթոռ կանչվեց Շաքիի եպիսկոպոսությունից: Սուրբ Մեսրոպի կողմից Գիս գյուղում թաղված խաչը սա գտավ և նույն կենսատու փայտից մի մաս առավ, դրեց հարյուրքսան դահեկա-

¹ Նույն տեղը, էջ 182–183:

² Նույն տեղը, էջ 183:

³ Տես Ն. Ակինյան, «Մովսես Դախտուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմությունն Աղուանից», էջ 324–329:

⁴ Վարդան, էջ 87:

նոց ոսկու մեջ և վրան գրեց. «Եղիազարիսն է»: Նաև կարգ սահմանեց Գիսուն յաաչի օրը տոնել¹:

Ինչպես նշվեց, Աղվանից մեծամեծերի ջանքերը՝ յազարների հետ յաղաղություն ստեղծելու ուղղությամբ, մեծ արդյունքներ չտվեցին: Աղվանքը նոր ասպատակությունների ենթարկվելուց զատ, մնաց նաև նրանց հարկապահանջության տակ: Մեր կարծիքով, եթե Աղվանքի իշխող ընտրանին կհաստ թողնված նման դիվանագիտությամբ երկիրն ասպատակություններից փրկելու նպատակ էր հետապնդում, ապա հոնաց տիրակալներն էլ քրիստոնեությունը ձևականորեն ընդունելու միջոցով ջանում էին սիրաշահել Աղվանքի քրիստոնյա հայ բնակչությանը և նրանց գրավել իրենց կողմը: Դրա վկայությունը հենց վերը նշված հոնական հարկապահանջության ուժեղացումն է և ավերիչ ասպատակությունները: Այդ ամենից դժվար չէ նկատել նաև հայության լավագույն ներկայացուցիչ Մովսես Կաղանկատվացու հայրենասիրական ու ազգասիրական ջերմ զգացմունքներն ու ձգտումները: Ինչպես տեսանք, նրա ամբողջ մտասևռումն ուղղված էր այն բանին, որ հյուսիսային ժողովուրդները քրիստոնյա դառնան և միավորվեն հայ եկեղեցու հովանու ներքո: Մ. Կաղանկատվացու համար Հայաստանն իր Հայոց Արևելքից կողմանքով առհասարակ տիեզերական աշխարհ է, իսկ սուրբ Գրիգորի մատունքները բաղձալի այն սրբություններն են, որոնց համար Իսրայել եպիսկոպոսը ամեն ջանք գործադրում է մի մաս ձեռք բերելու Հայոց Աղվանքի ու նրա Արցախ նահանգի համար:

Նկատենք, որ նման նկարագրությունները բխում են պատմիչի քրիստոնեական հավատի նկատմամբ տաժաժ ջերմնեղանդությունից: Բացի այդ, պատմիչը նպատակ է ունեցել Աղվանից աշխարհը ներկայացնել իբրև քրիստոնեության տարածման օրրաններից շատ կարևոր մի նրկրամաս, որտեղ դեռ վաղուց այցելել էին այդ կրոնի նշանավոր տարածողները, քարոզել են քրիստոնեական ուսմունքը և շատերն էլ հենց այնտեղ են նահատակվել ու թաղվել: Նշխարների գյուտերը, հանդիսավոր թափորներով փոխադրելը, երկրի եկեղեցիներում ու վանքերում դրանք տեղավորելը, մանավանդ հայ ժողովրդի այն մասի համար, որ դեռևս չէր ընդունել քրիստոնեությունը, Աղվանից եկեղեցու հեղի-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 269:

նակության բարձրացման, քրիստոնեության արմատավորման, վանքեր ու եկեղեցիներ այցելելու, նրանց նկատմամբ ժողովրդի պարտավորությունների կատարման առնչությամբ՝ հսկայական նշանակություն ունին այդ ժամանակ: Որպեսզի պատմիչը իր երկրամասի եկեղեցու հեղինակությունը բարձրացնի և ապացուցի նրա առաքելական, լուսավորչական ծագումն ու էությունը, պատմում է, թե ինչպես Աղվանքի իշխան Վարագ-Տրդատը Իսրայել եպիսկոպոսին ուղարկում է Այրարատյան աշխարհը, որպեսզի նա այնտեղից սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներից բերի Աղվանք: Եվ Իսրայել եպիսկոպոսի երկար թախանձանքներից ու Նեղինն մեծ տիկնոջ (Աղվանից Ջվանշիր իշանի քրոջ) բազմաթիվ միջնորդություններից հետո Այրարատյան աշխարհի իշխանն ու հայոց կաթողիկոսը վերջապես Գրիգոր Լուսավորչի ծնոտից մի մաս են տալիս, եպիսկոպոսն էլ տանում ու հանդիսավորությամբ տեղադրում է Աղվանքի Գլխավանքում: Պատմիչը այստեղ միաժամանակ նշում է, որ Լուսավորչի մասունքների բաժանումը արգելված էր, սակայն Աղվանքի եկեղեցու համար արվեցին այդպիսի մեծ շնորհ ու բացառություն¹:

Ինչպես նկատվում է վերը շարադրածից, իշխան Ջվանշիրը իր շուրջ կենդանի կառավարման ընթացքում կարողացել էր Աղվանքը նմանեցնել ունիտար պետության: Տեսնում ենք նաև, որ նույնը փորձում էր պահպանել իշխան Վարագ-Տրդատը: Հայտնի է, որ մտավորականության դերը ցանկացած պետական կառուցվածքի պարագայում մեծ է՝ լինի այն ֆեոդերալ, թե ունիտար: Սակայն հայտնի է նաև, որ վերջինիս դեպքում ճանաչված, հարգված մտավորականը ի գորտ է նաև քաղաքական, կրոնական ընտրանու որոշ գործառնություններ ստանձնելով՝ դժվարին, օրհասական օրերին օգնել իր երկրին: Մենք հենց այդպես ենք ընկալում Մովսես Կաղանկատվացու անձը, նրա պահվածքը հայոց պետականության ու քրիստոնեության հանդեպ: Պետականության, իշխանության կազմակերպման միջոցը յուրաքանչյուր երկրում ունի իր առանձնահատկություններն, որը կարող է ի հայտ գալ հենց նույն պետական օղակների միևնույն գործառնությունների թուրքմբռնումից, սկզբունքների անհամատեղելիությունից և այլն: Պետական ապարատի այսպիսի իրավիճակներ ստեղծվում

¹ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 183–184:

են տվյալ երկրի կազմավորման ու զարգացման, կամ գոյատևման պատմական պայմաններից, նրա մշակույթի առանձնահատկություններից, տնտեսությունից ու ընկերային կյանքից: Հայ ժողովրդի համար հենց այսպիսի բարդագույն պայմաններում էր ստեղծագործում Մեծ պատմիչը: Նրա գոյությունը պետական էլիտայի շրջանակում, երևելի դեմքերին անձամբ ճանաչելը, դրա հիման վրա նրանց նկարագրելը անգին են դարձնում թողած գիտական ժառանգությունը: Նրա քաղաքական ու կրոնական ընտրանու գործունեության նկարագրումից կարելի է նկատել, որ VII դարի երկրորդ կեսին Այսրկուրյան Աղվանքի տիրակալները չէին իշխում Անդրկուրյան Աղվանքի երկրների վրա: Իսկ այդ ժամանակվա Լփնիք-Ալբանիայի տիրակալները Հայաստանից նահանգներ խլել չէին կարողանում ու չէին էլ կարող, քանի որ նրանք ևս քաղաքական տնտեսական հպատակվում էին թե՛ արաբներին, թե՛ խազարներին և թե՛ բյուզանդացիներին:

Այդ ժամանակ նախկին Ընդհանուր կամ Միասնական Աղվանքը նախ պարսկական, ապա՝ արաբական վարչա-քաղաքական հպատակություն էր և իրար խառնված Հայկական Աղվանքը, Լբնիան ու Չողան լուծված չէին մի ընդհանրության մեջ և մինչև վերջ էլ չլուծվեցին: Լբնիան, Լփնաց աշխարհը կամ Լփնիքը համարվում էր Կովկասյան լեռնական այն գեղի երկիրը, որի «տեղը որոշակի հայտնի չէ. Ալիշանը Ծիրվանի մեջ է դնում, Պլինիոսն այդ գեղն անվանում է լուբիենի և դնում է Աղվանից հարևան»¹:

Միևնույն ժամանակ հարստության տիրակալները հիմնականում Հայոց Աղվանքի տիրակալներն էին և ոչ թե՛ ընդհանուր Աղվանքի: Չիշտ է, նրանք խալիֆներից ու կայսրերից մեկ-մեկ իրավունք էին ստանում տիրելու Ընդհանուր կամ Միասնական Աղվանքի վրա, սակայն դրանք գործնականորեն չէին կենսագործվում: Անուսկոռ լեզվով մյուս իրավունքների պարզևսումը Հայոց Աղվանքի իշխաններին սիրաշահելու և նրանց իրենց կողմը գրավելու նպատակ էր հետապնդում:

Ամբողջ Աղվանքի, նաև Արցախի համար շարունակում էին մեծ վտանգ ներկայացնել արաբներն ու բյուզանդացիները,

¹ Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1971թ., էջ 190, ծանոթագրություն 21:

որոնց միջև հարաբերությունները 680-ական թվականների կեսերից կրկին լարվում են: Հուստինիանոս Բ-ը (685–695 և 705–711 թ.թ.) գահ բարձրանալուց անմիջապես հետո (սուսքն առաջին շրջանի տիրակալության մասին է), լայն գործողություններ ձեռնարկեց արաբների դեմ, նախկինում Բյուզանդիային պատկանող հողերը վերանվաճելու համար: Այս նպատակով նա 689 թվականին¹ դեպի Հայաստան է ուղարկում մի հսկայական բանակ՝ Լևոնտիոս զորավարի հրամանատարությամբ, որը մեծ ավերածություններ է կատարում նաև Հայոց Աղվանքում: Բյուզանդական զորքերին կարգադրված էր հայերի հետ վարվել որպես թշնամիների հպատակությունն ընդունած ու քաղկեդոնական եկեղեցու սկզբունքներին հակառակվող ժողովրդի: Ղևոնդ պատմիչի վկայությամբ բյուզանդական զինվորները մտնելով հայկական նահանգները, անխնա կոտորում էին բնակչությանը, կողոպտում նրա ունեցվածքը, ավերում բնակավայրերը, հատկապես չլնայելով արաբահպատակություն ընդունածներին: Ստեփանոս Ասողկի վկայությամբ, բյուզանդացիներն այս կռիվների ժամանակ քարոքանդ են արել 25 գավառ և գերի տարել 8000 մարդ²: Այդ ժամանակ արաբները ոչ միայն չէին կարողանում դիմադրել բյուզանդացիներին, այլև 689 թվականին կնքված պայմանագրով Հայաստանը զիջում են Բյուզանդիային և ավելացնում նրան իրենց տալիք հարկը: Հակառակ Անդրկովկասի ժողովուրդների ցույց տված համառ դիմադրությանը, Բյուզանդիային հաջողվում է 689 թվականին նվաճել ամբողջ Անդրկովկասը, ընդ որում նաև Արցախը: Այդ թվականին Բասենում կանգ առած Հուստինիանոսի բանակը բաժանվում է երեք մասի և ուղարկվում Աղվանք, Վրաստան ու Հայաստան: Հուստինիանոսը իր մոտ է հավաքում այդ երեք երկրների քաղաքական-եկեղեցական ընտրանուն, որոնք ականա հարկադրված են լինում կատարելու հպատակվելու վերաբերյալ նրա հրամանը: Կայսրը դրանցից ընտրում է պատանդներ և ուղարկում Կոստանդնուպոլիս: Միևնույն ժամանակ վերջին ներկայացուցիչ վարագ-

¹ Ըստ Լեոյի, այդ հարձակումը տեղի է ունենում 688 թվականին (տես Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 321):

² Տես Ստեփանոս Ասողկի, «Պատմություն տիեզերական», Փարիզ, 1959թ., էջ 101:

Տրդատն իր Գագիկ և Վարդան որդիների հետ միասին հետագայում Կոստանդնուպոլիս են կանչվում, որի մասին կլսուսվի ստորև: Այստեղ նկատենք, որ կայսրը այդ ժամանակ տանում է միայն կաթողիկոս Սահակ Չորեփորեցուն և հինգ եպիսկոպոսների՝ մեր կարծիքով հենց այն դիտավորությամբ, որ նրանց միջոցով հայերին հարկադրի ընդունել քաղկեդոնականությունը: Հայտնի է, որ այդ ժամանակ Բյուզանդական կայսրությունն վարում էր քաղկեդոնության բռնի տարածման քաղաքականություն:

Իսկ արաբական խալիֆությունը Բյուզանդիայի դեմ տարած մի քանի հաղթանակներից հետո որոշում է կրկին վերանվաճել Հայաստանն ու ողջ Անդրկովկասն ընդհանրապես: Մուհամմեդ իբն Մրվանը 696 թվականին գորքի մի մասը թողնելով Դվինում, շարժվում է դեպի Դերբենդ՝ խազարներին ու հոններին զսպելու, որտեղից նրանք մուտք էին գործում Անդրկովկաս: Հայերը, օգտվելով նրա ժամանակավոր բացակայությունից, ապստամբում են և ջարդում Դվինում կանգնած արաբական զորքերին: Ըստ Մ. Կաղանկատվացու հաղորդումների իբն Մրվանը կարողանում է վերադառնալ Հայաստան և վրեժ լուծել հայ քաղաքական ընտրանուց, գրավել նրանց ամրոցները:

698 թվականին Աբդ էլ-Մելիք խալիֆի եղբայր Մուհամմեդ իբն Մրվանի ղեկավարությամբ արաբական մի խոշոր բանակ ներխուժեց Հայաստան: Երկու տարվա ընթացքում նա կարողանում է նվաճել ամբողջ Անդրկովկասը: 700 թվականին Մրվանը Հայաստանի կառավարիչ նշանակեց Աբդուլլային, Պարտավում նստեցրեց իր ներկայացուցիչ Աբդլմելիք էմիր Սումինին, իսկ ինքը վերադարձավ Սիրիա: Այդ արշավանքով Աղվանքը և ամբողջ Անդրկովկասը վերջնականապես նվաճվեցին և ընկան արաբական խալիֆության լծի տակ: Արաբների համար ևս հայ քաղաքական-եկեղեցական ընտրանին խիստ վտանգ էին ներկայացնում: Ահա թե ինչու յոթերորդ դարը վերջանում է նրանով, որ արաբական կառավարությունը իրեն ապագա խռովություններից և ապստամբություններից ապահովելու նպատակով կռիվ է հայտարարում ընտրանուն՝ նրան ոչնչացնելու կամ գոնե կատարյալ ուժասպառության հասցնելու համար:

Սակայն կրկին դառնանք Բյուզանդիա: Հայոց Աղվանքը դեռ հարկատու էր նաև նրան: Այդ պատրվակով Աղվանքի իշխան Վարազ-Տրդատը, իր որդիների հետ միասին, 705 թվակա-

նին կանչվում է Կոստանդնուպոլիս: Լեոն գրում է. «705 թվականին Կ. Պոլսի գահի վրա նորից հաստատվեց Հուստինիանոսը, որ թեև գրկվել էր իր քթից, բայց հավատարիմ էր մնացել իր դաժան բնավորությանը: Աղվանից աշխարհի հարկատվությունն ապահովելու համար նա Կ. Պոլիս կանչեց Վարազ-Տրդատին, որ զնաց իր Գագիկ և Վարդան որդիների հետ: Կայսրն արգելեց նրանց իր մոտ»¹:

Այդպիսով, Վարազ-Տրդատը 705 թվականին տարվել է Բյուզանդիա, որտեղ և մնացել է հինգ տարի ու լաբբությունաբ կարողացել է վերադառնալ հայրենիք 710 թվականին²:

Այստեղ տեղն ենք համարում կանգ առնել նաև Վարազ-Տրդատին ու նրա որդիներին Բյուզանդիա տանելու դրդապատճառների և մի շարք այլ հարցերի վրա: Ինչպես վերը նշված Լեոնի, այնպես էլ ըստ Մ. Կաղանկատվացու հաղորդումների Վարազ-Տրդատը Բյուզանդիա է մեկնում հարկատվության հարցով, իսկ այնտեղից էլ չի կարողանում վերադառնալ հիվանդության պատճառով: Սակայն այս հաղորդումները մեզ չեն բավարարում: Մեզ թվում է, որ բյուզանդական կայսր Հուստինիանոսը նրան Կոստանդնուպոլիս է հրավիրում հարկահանության հարցը լոկ պատրվակ ընդունելով, իսկ իրականում Վարազ-Տրդատը հրավիրվում է իբրև պատանդ պահվելու համար: Այլապես ինչո՞ւ պետք է նա հրավիրվեր իր որդիների հետ միասին: Իսկ կայսրին անհրաժեշտ էր նախ՝ Վարազ-Տրդատին ու նրա որդիներին պատանդությունից ազատելու կողմնակիցներին օգտագործել, նրանց միջոցով քաղկեդոնական շարժումը ուժեղացնել և արաբների դեմ հաղթանակ ձեռք բերել: Երկրորդ, կայսրը կասկածում էր նաև Վարազ-Տրդատին: Եթե վերջինիս նա չկասկածեր, ապա հինգ տարի անց նրան պատանդությունից արձակելով, որդիներին կրկին չէր թողնի իր մոտ: Այնուամենայնիվ հարկ ենք համարում այստեղ մեջ բերել Մ. Կաղանկատվացու երկում տեղ գտած հաղորդումներն այն մասին, որ «Պարսից թագավորության իսպառ անկումով և հարավային ցեղի, այսինքն՝ արաբների գորեղանալով՝ աշխարհի, մանավանդ արևելյան կողմերի, հարկատվության չափերը սաստկացան. Աղվանքի Վարազ-Տրդատ իշ-

¹ Նույն տեղը, էջ 331:

² Տես նույն տեղը:

խանր երեք պետության էր հարկ տալիս՝ խազարներին, արաբներին և բյուզանդացիներին: Իսկ ավելի խիստ նեղություն նրան հասավ բյուզանդացիներից, որովհետև իր որդիներով կայսրի կողմից արգելափակված էր մայրաքաղաքում. որդիներին պատանդ տալով՝ իշխանը, այնտեղ հիվանդագավ ու մնաց: Երկրի բնության մասին ասում են, թե ժանտաբեր է, և երբ օտար մարդիկ գարնանը մուտք են գործում այնտեղ, անմիջապես հիվանդանում, ու այդ պատճառով մազերն ու մորուքները թափվում են: Եվ Վարագ-Տրդատը երկար մնաց այնտեղ. մի օր այնպես եղավ, որ բյուզանդացիների թագավորը ընտրեց թանկագին քարեր և Աղվանքի իշխանին կանչելով ցույց տվեց նրան, իսկ նա խորամանկելով ասաց. «Իմ տանը դրանցից ավելի թանկագինները կան, ես դրանք կտամ ձեր աստվածապսակ անձին, որովհետև իսկ և իսկ ձեզ է վայել»»: Այդ ժամանակ իշխանի Բյուզանդիայում մնալու հինգ տարին էր: Այս բանի համար... դուրս պրծավ, եկավ հասավ իր երկիրը»¹:

Վերջին այս տողերում մենք նկատում ենք վերը կատարված մեր եզրակացությունների հիմքը: Եթե Վարագ-Տրդատը հիվանդության պատճառով մնացած լիներ Բյուզանդիայում, ապա կայսրին չէր ասի, այն էլ խորամանկելով, թե «իմ տանը դրանցից ավելի թանկագինները կան, ես դրանք կտամ ձեր աստվածապսակ անձին»: Վարագ-Տրդատն այդ ասում է կայսրին կաշառելու և գերությունից ազատվելու նպատակով: Իսկ եթե դա այդպես չլիներ, մատենագիրը չէր ասի թե «այս բանի համար (այսինքն թանկագին քարեր կաշառք խոստանալու միջոցով, – Է.Ս.) դուրս պրծավ, եկավ հասավ իր երկիրը»:

Բյուզանդիայից Վարագ-Տրդատի վերադարձի և ձևակա-նորեն Աղվանքում կրկին իշխան կարգվելու մասին կլստվի ստորև, իսկ այստեղ նշենք, որ 705 թվականին նրան փոխարինում է Միհրանյան տոհմից Ծերոն: Այդ ժամանակ էլ հենց բյուզանդական կայսր Հուստինիանոս Բ-ը վերսկսում է պատերազմը արաբների դեմ: Վերջիններիս կողմից կասկածանքը դեպի հայ քաղաքական էլիտան ու նրանց զինված ուժերը ավելի են մեծանում, մանավանդ, որ արաբները տեսնում էին թե ինչպես Արևմտյան Հայաստանի նախարարները և Արևելյան Հայաս-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 243:

տանից ու Հայոց Աղվանքից այնտեղ փախած ազնվականներից շատերը իրենց ուժերով միացել են բյուզանդացիների հետ՝ արաբների դեմ կռվելու համար: 682 թվականի, հատկապես 703 թվականի ապստամբությունները ցույց տվեցին, որ քանի դեռ գոյություն ունի հայկական բանակը, արաբական տիրապետությունը Հայաստանում, Աղվանքում ու Արցախում, ամուր չի կարող լինել: Հայ ժողովուրդը, միշտ էլ հենվելով իր զինված ուժերի վրա, կարող էր ապստամբել արաբական խալիֆոսության դեմ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, արաբները որոշում են վերացնել հայ ընտրանուն ու նրանց բանակը: Հայոց Աղվանքում (հատկապես նրա տափաստանային մասում) արաբները դրսևորվում էին որպես դաժան տներ: Նրանք ամեն ջանք գործադրում էին վերը նշված իրենց ծրագիրը կենսագործելու համար: 705 թվականին, նոր խալիֆ Վիլիթ Առաջինի (705–715 թ.թ.) հանձնարարությամբ, Նախիջևանի կաշըմ (կասըմ) կառավարիչը հատուկ հրավեր ուղարկեց հայ ընտրանու ներկայացուցիչ նախարարներին, որպեսզի նրանք ներկայանան իրեն: Ընդվորում գործերով՝ իբր ցուցակարգվելու և թոշակ ստանալու համար: Նախարարների մի մասը միամտաբար ընդունում է կաշըմի հրավերն ու գնում Նախիջևան: Սակայն այնտեղ նրանց բոլորին հանկարծակի կալանավորեցին ու փակեցին քաղաքի և նրանից ոչ հեռու գտնվող Խրամ գյուղի եկեղեցիներում: Ապա եկեղեցիների դռներն ու լուսամուտները փակելով, հրկիզեցին բոլորին: Ստ. Օրբելյանի վկայությամբ, այդ ոճրագործության զոհերը դարձան մեր ընտրանու 800 ներկայացուցիչներ: Այդտեղ սպանվեցին նաև Արցախի անվանի մարդկանցից մի քանիսը, որոնք կասկածյալ էին հակաարաբական գործողությունների մեջ: Այդ ամենի վերաբերյալ Մ. Կաղանկատվացու նրկում կարդում ենք. «Հայոց հարյուր քառասունվեց թվականին (697 թվական, – Է.Ս.) Հայաստան է գալիս Մահմեդ Երկրորդը. այսնեղից Աղվանքով շտապում և մտնում է Չող: Իսկ ապստամբված հայերը արաբներին արգելափակում են Դվինում և դրանցից վաթսուներկու հազար կոտորում են՝ Բյուզանդիայից շատ զորքեր բերելով: Հենց նույն տարում սուրբ Գրիգորի տոհմը վերջացավ: Մահմեդը Չողից վերադարձավ, եկավ, նրեք տարի պաշարեց Սևան ծովապատ բերդ-կղզին. ապա գրավեց այն և կղզում ում որ գտավ, սրածեց: Այնտեղից անցնելով Հայաստան՝ կոտորեց բյուզանդական ու հայկական

գորքերը: Իսկ նրանց համար, որոնց չկարողացավ բռնել, հանդիսավոր երդումով դարան պատրաստեց. դավով ու խաբեությամբ իր մոտ հավաքեց հայոց իշխաններին և տանելով Նախիջևան քաղաքը, ութ հարյուր մարդ էլ Խրամում այրեց, իսկ նրանցից մնացածներին սրածելով կոտորեց: Եվ նրանց այս կորստյան պատճառն այն էր, որ ընդհանրապես մոլորության շունչն էր նրանց մեջ շնչում, արհամարհանքով ծաղրում էին հայրապետին, քահանաներին, կրոնավորներին, ձանձրացնում ու նեղություն էին պատճառում նրանց:

...Սրանից հետո Աղվանքի իշխան Ծերոյին ազնվականների հետ միասին տարան Տարոն. իսկ այնտեղից էլ՝ Ստորիք: Այս ժամանակ հայոց հարյուր հիսուներեք թիվն էր (704 թ., – Է.Ս.)»¹: Վերջին միտքը նույնությամբ կրկնում է Մ. Բարխուդարյանը, նշելով, որ Ծերոյին կալանավորած տարել են Արաբիա 704 թվականին²:

Նախիջևանի արյունահեղությունից հետո ևս հայ ղեկավար ընտրանին ոչ միայն չանհայտացավ ու չվերացավ ասպարեզից, այլև չկորցրեց իր նախկին նշանակությունը: Արաբական կառավարությունը հարկադրված եղավ հաշվի առնել այդ հանգամանքը և փոխել իր վերաբերմունքը: Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հայ ընտրանու և գործի մի մասի կոտորածը խոր զայրույթ էր առաջ բերել ամբողջ երկրում, ընդ որում նաև Հայոց Աղվանքում ու Արցախում: Մուսուլմանների չարագործությունն այնքան մեծ բողոքի տեղիք է տալիս, որ Վիլիթ Առաջինը թեև ինքն էր հրահանգել նախարարական տոհմերի ոչնչացումը, ստիպված եղավ ետ կանչել իր ոստիկանին և նրա փոխարեն նշանակել Աբդուլ-Ազիզին, որը սկսեց վարել բոլորովին այլ քաղաքականություն: Ամենից առաջ նա հրովարտակներ ուղարկեց երկրից փախած ազնվականներին, կոչ անելով մոռանալ անցյալը, վերադառնալ իրենց տեղերն ու ձեռնամուխ լինել խաղաղ աշխատանքի: Նրա կոչին արձագանքում են շատերը: Մակայն Աբդուլ-Ազիզը այդ բոլորը փաստորեն կատարում էր իր դիրքերը Հայաստանում, Հայոց Աղվանքում ու Արցախում ամրապնդելու նպատակով:

¹ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 246–249:

² Տես Մ. Բարխուդարյան, «Պատմություն Աղուանից», հատոր Ա, էջ 124:

տակով: Մ. Կաղանկատվացու երկում նշվում է, որ Շնրոյին Ասորիք տանելու «Այնու տարին Ասորիք տարան Շիրակի տիրոջը: Երկու տարի հետո արաբական իշխան Մրվանը անցավ Ալանք, բայց չկարողացավ մտնել այստեղ: Խազիրների իշխանը ութսուն հազար զորքով գրավեց Աղվանքը: Այդ ժամանակ հայոց հարյուր հիսունութ թվականն էր (709 թվականը, – Է.Ս.)»: Սակայն շուտով խազարները դուրս են քշվում երկրից, քանի որ «Երկու տարի հետո՝ հայոց հարյուր վաթսուն թվականին (711 թվականին, – Է.Ս.) Աղվանք եկավ արաբ իշխան Աբդլ-Ազիզը և նստեց Պարտավում: Այնտեղ նրա առջև բերին Մանկիկ ու Միրդագատ եղբայրներին, որոնք ազնվական տոհմից էին. քրիստոնեական հավատքի համար բազմաթիվ ու տնասկ-տնասկ տանջանքներ կրելով՝ երանելի Մանկիկը, նահատակի անուն ժառանգելով, պսակվեց Քրիստոսի կողմից: Նրա թանկագին մասունքները դրվեցին Պարտավի սուրբ Գրիգոր մեծ եկեղեցին: Իսկ նրա եղբայր Միրդագատը, չլիմանալով տանջանքներին, բազմամարդ ժողովի առջև ուրացավ Քրիստոս աստծուն, ապա զոջաց, հետո դառն ու հորդահոս արտասուքներով հաշտեցրեց նրան, որին խռովեցրեց (Քրիստոսին): ...Նույն տարին (711 թվականին, – Է.Ս.) Աբդլ-Ազիզը անցավ Կուր գետի այն կողմը»:

Այդ ժամանակ Հայոց Աղվանքի իշխանը, թեկուզ և ձևականորեն, կրկին Վարազ-Տրդատն էր, որը 710 թվականին վերադարձել էր Բյուզանդիայից և գլխավին անձնատուր եղել արաբներին: Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Նա արևելյան երկիրը (Աղվանքը) հանձնեց արաբներին և հարկ էր տալիս միայն նրանց»¹:

Այդպիսով, դառը փորձից ելնելով, Վարազ-Տրդատը վերջնականապես հանգում է այն հաստատ համոզմանը, որ ամենից իրականն արդեն արաբական ուժն է, ուստի և վերջնական հպատակություն հայտնելով արաբներին, երկիրը հանձնում է նրանց՝ կարծելով, որ գոնե դրանով երկիրը կազատվի հոների ու բյուզանդացիների կեղեքումներից: Սակայն արաբները Վարազ-Տրդատից Հայոց Աղվանքը ձեռք բերելու կարիքը չէին էլ զգում, քանի որ առանց այդ էլ նրանք արդեն իշխում էին այնտեղ: Այդ ժամա-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 243:

նակ ամբողջ Աղվանքը Արցախի հետ միասին պատկանում էին արաբներին:

Հուստինիանոսը, լսելով Վարազ-Տրդատի անձնատուրության մասին, արաբական խալիֆին, նրա երկու որդիներին փակեց լույսից զուրկ մի բանտախցում: Սակայն դրանով Հայոց Աղվանքը Բյուզանդիային վերադարձնել հնարավոր չեղավ: Աղվանից աշխարհը միանգամայն բախտակից էր դարձել ողջ Հայաստանին: Հայոց Աղվանքում ևս հայ քաղաքական ընտրանին իր տեղական իշխաններով ստացել էին երկրորդական նշանակություն և գործում էին արաբների անմիջական իշխանության ու խիստ հսկողության տակ: Վարազ-Տրդատի իշխանությունը ևս ձևական էր դարձել:

Ինչ վերաբերում է վերջինիս որդիներին, ապա նրանց մասին Մ. Կաղանկատվացու երկում ասված է. «Իսկ Աղվանքի իշխան Վարազ-Տրդատի որդիները՝ Գագիկն ու Վարդանը, որոնք Բյուզանդիայում պատանդներ էին, թագավորի բարկության հետևանքով տասներկու տարի մնացին մի մթին գնդանի մեջ. պատճառը արևելյան երկիրը (Աղվանքը) նրանց հոր կողմից արաբներին տալը եղավ: Երբ բյուզանդացիների թագավոր Հուստինիանոսը վախճանվեց (711 թվականին, – Է.Ս.) թագավորել սկսեց Վարդան Փիլիպիկոսը, որ հայ ազնվականներից էր. սա հիշեց նրանց, որոնք խավար բերդում կենդանի արգելափակված էին. թագավորը հրամայեց անտանելի տանջանքներից դուրս բերել նրանց, որոնց տեսողությունը խավարը ծածկել էր: Ապա քիչ քիչ լույսի մեջ հանելով՝ թագավորը պարզևներ տվեց և ուղարկեց իրենց երկիրը: Գագիկին շնորհեց տիեզերքի լույս կենսատու խաչից մի մաս: Նա եկավ և մեծ պարզև տվեց Աղվանքի կաթողիկոս Միքայելին»¹: Սա այն տեր Միքայելն էր, որը ժողով է հրավիրում և արգելում ամուսնությունը արյունակիցների միջև: Նույն աղբյուրը հաղորդում է, որ «Միմոնից հետո Աղվանքի հայրապետական աթոռն է նստում երջանիկ Միքայելը և ապրում է երեսունհինգ տարի: Սրա օրոք Աղվանքի իշխանները ամուսնանում էին իրենց արյունակիցների հետ. այսպես՝ Վախտանգի որդի Վարազմանի թոռ Վարազոն իր թոռակից Վարդանուհուն է առնում: Տեր Միքայելն արգելում է նրան, ասելով, թե մի հանդգնիր առ-

¹ Նույն տեղը, էջ 244:

նել, որովհետև թռռնակիցներ եք: Իսկ նա, կորստյան միտք հղանալով, գրում է վրաց կաթողիկոս Թալիլեին, որ այս վերջինը օրհնի իր անօրինական ամուսնությունը: Իսկ այն չարափառ մարդը, այսպես է առաջարկում. «Եթե դուք ընդունում եք իմ դավանանքը, օրհնված եք, իսկ եթե մնում եք աղվանից ավանդություններին հավատարիմ, ձեր գործն է»: Այդ ժամանակ Աղվանքի կաթողիկոս Միքայելը իրեն նյթակա նկեղնու ուխտի ժողով է անում և իր մոտ է կանչում հռչակավոր Սողոմոնին, որ մաքենացիների¹ սուրբ ուխտի առաջնորդն էր, իսկ այդ ուխտը իր ժամանակին Հայաստանի պարծանքն էր: Եվ նրանց բոլորին հավաքեցին Շամքորի բերդ վանքում, որոնք միաբան ժողովով նզովեցին Վարազդյի տունը: Միևնույն ժամին արաբները հասան և մոր գրկում սրով փողոտեցին նրա մի որդուն, իսկ մյուս որդուն ձին տարավ, սպանեց: Ժողովականները նամակ գրեցին վրաց եպիսկոպոս Թալիլեին. թե՛ «ինչո՞ւ հանդգնեցիր սուրբ առաքյալների աշակերտների կողմից տրված կանոնները քանդել, որոնք (աշակերտները) հավաքվելով Անտիոքում Պողոս Սամոստացուն վտարեցին սուրբ նկեղնուց և սահմանեցին կանոնական օրենքներ. «թե ոչ ոք չպետք է հանդգնի իր արյունակցի հետ ամուսնանալ, և դա սուրբ Աթանասի կանոնական հրամանն է, որ այդպիսի ամուսնությունը ոչ թե ամուսնություն է, այլ պոռնկություն: Նաև երանելի Բարսեղն է այս առթիվ խոսել: Արդ՝ մենք ուղղափառ ժողովս քեզ նզովեցինք բոլոր հերձվածողների հետ, իսկ արդարադատ Քրիստոսին կմատուցենք բազմապատիկ փառք»²:

Տե՛ր Միքայելին հանձնված «տերուական խաչը կանգնեցրին, որի վրա այսպես է գրված. «Քրիստոս աստված, հիշիր քո կամավոր չարչարանքները սրա վրա, որոնք դու կրեցիր մեր փրկության համար: Ընդունիր այս խաչը, որը դու տվիր քո երկյուզածներին, ներիր իմ՝ Աղվանքի կաթողիկոս Միքայելիս հանցանքները, ողորմիր այս երկրին՝ ամեն կարգի փորձություններից փրկելով, որպեսզի քո գալստյան օրը արժանի լինենք կանգնելու

¹ Մաքենացիների վանքը գտնվում է այժմյան ՀՀ Մարտունու համայնքում և գոյություն ունի VIII դարից:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 244–245:

քո աջ կողմը: Նաև աղաչում եմ քո ծառա Գագիկի, սրա քույր Մարիամի և մեծ ոսկերիչ Վարազդյի համար»¹:

Այդպիսով, այստեղ նկատում ենք, որ Վարագ-Տրդատն ունեցել է նաև Մարիամ անունով աղջիկ:

Վերը նշվեց, որ Աբդյ-Ազիզը 711 թվականին անցնում է Կուր գետի այն կողմը: Դրանից երեք տարի հետո (714 կամ 715 թվականին) Աղվանք է ժամանում Մսիլմանը, ավերում Դերբենդը և մտնում Խազիք, «որտեղից չկարողացավ դուրս գալ»²: Այդ ժամանակ հնչում է մեկ Առանշահիկի փառավոր անուն ևս, որը Աղվանքի ազնվական իշխան Վաչագանն էր, որի մասին Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Առանշահիկ Վաչագանին՝ Աղվանքի ազնվական իշխանին, որը քաջ, կորովի աղեղնավոր էր»³: Խազիքը մտած Մսիլմանը այս Առանշահիկ իշխանին է թողնում «ամեն ինչով կազմ ու պատրաստ բանակը»⁴: Խազարներն ընկնում են այդ Առանշահիկի հետևից ու պարտվում: «Այսպես ազատվելով Մսիլմանը գնում է Վրաստանի կողմով»⁵:

Միհրանյան տոհմը այդ դեպքերից հետո (821 թվականին) գրեթե սպառվում է և իր տեղը գլխավին զիջում Առանշահիկներին: Մ. Կաղանկատվացու երկի հաղորդումներով «երբ լրացավ հայոց երկու հարյուր յոթանասուն թիվը (821 թվականը, – Է.Ս.), Փղիպյան Ներսեհ իշխանը սպանեց Վարագ-Տրդատ Ստեփանոսյանին և նրա որդուն մորթեցին մոր գոգում, ու նրա ամբողջ ունեցվածքը հափշտակեցին: Այս Վարագ-Տրդատը Միհրական տոհմից էր, որոնք որդեգ-որդի առնելով ժառանգեցին Աղվանքը: Սա Աղվանքի առաջին իշխան Վարագ-Գրիգորից սկսած ութերորդն էր»⁶:

Հիմք ընդունելով Մ. Կաղանկատվացու երկում տեղ գտած այս հաղորդումները, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել հետևյալ հարցերի վրա: Ստեփանոսյան Վարագ-Տրդատի և նրա որդիների հարցի շուրջ շփոթ են ստեղծել շատերը: Վարագ Առա-

¹ Նույն տեղը, էջ 244:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 250:

³ Նույն տեղը:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը:

⁶ Նույն տեղը, էջ 255:

քնյանի թարգմանությամբ, առաջաբանով և կազմած ծանոթագրություններով 1969 թվականին Երևանում «Հայաստան» հրատարակչության կողմից հրատարակված Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» երկի անվանագանկից պարզ երևում է, որ այդ երկը հրատարակչության պատրաստողները 683–705 թվականներին Աղվանքի իշխան և 705–710 թվականներին Բյուզանդիայում պատանդ մնացած Վարազ-Տրդատին (Վարազ-Պերոժի որդուն) շփոթել են Վարազմանյան Վախթանգի որդի, 821 թվականին սպանված Ստեփանոսյան Վարազ-Տրդատի հետ: Առաջին Վարազ-Տրդատի անունը ակնարկված ենք տեսնում երկի 179-րդ, 180-րդ, 181-րդ, 183-րդ, 184-րդ, 202-րդ, 203-րդ, 228-րդ, 241-րդ, 243-րդ, 244-րդ, 265-րդ էջերում: Իսկ Ստեփանոսյան Վարազ-Տրդատի անունը երկում ակնարկվում է երկու անգամ՝ 255 և 266-րդ էջերում: Սակայն երկը հրատարակչության պատրաստողները անվանագանկի 255 և 266-րդ էջերում տեղադրել են առաջին Վարազ-Տրդատին: Այսինքն նրան շփոթել են Ստեփանոսյան Վարազ-Տրդատի հետ: Այժմ կրկին դիմենք երկի համապատասխան էջերում մատենագրի հաղորդումներին: Երկի 179–180-րդ էջերում կարդում ենք. «...Երկրի (Աղվանքի, – Է.Ս.) բոլոր իշխանները հավաքվեցին մեծ արքեպիսկոպոս Եղիայի մոտ և խորհրդակցեցին Աղվանքի խաղաղության ու շենության մասին: Եվ սրտացավ շրջահայեցությամբ հոգալով երկրի իշխանության մասին՝ համաձայնվեցին անմիջապես ավագ (իշխան, – Է.Ս.) ընտրել մի ուն նախարար, որ մեծարված էր կայսերական պատվով, ստացել էր ապիհյուպատ պատրիկության աստիճան: Սրա անունն էր Վարազ-Տրդատ, որ Զվանշիրի եղբայր Վարազ-Պերոժի որդին էր»: Երկի 246-րդ էջում կարդում ենք վերն արդեն արված մեր մեջբերումը. «...Ավելի խիստ նեղություն Աղվանքի իշխան Վարազ-Տրդատին հասավ բյուզանդացիներից, որովհետև իր որդիներով կայսրի կողմից արգելափակված էր մայրաքաղաքում: ...Եվ Վարազ-Տրդատը երկար մնաց այնտեղ: ...Այդ ժամանակ իշխանի Բյուզանդիայում մնալու հինգ տարին էր»: Երկի 244-րդ էջում կարդում ենք. «Իսկ Աղվանքի Վարազ-Տրդատի որդիները՝ Գազիկն ու Վարդանը, որոնք Բյուզանդիայում պատանդներ էին, թագավորի բարկության հետևանքով տասներկու տարի մնացին մի մթին գնդանի մեջ»: Վերջին անգամ այս նույն Վարազ-

Տրդատի անվանը նրկում հանդիպում ենք 265-րդ էջում, որտեղ ասված է. «Վարդը սնրում է Վարագ-Գրիգորին՝ Աղվանքի առաջին իշխանին, որը սերնց չորս որդի՝ Վարագ-Պերոժին, Ջվանշիրին, Հնգուտ-Խոսրովին և Վարագվանին»:

Սրանցից այժմ ըստ կարգի կբերենք ավագ որդուց սերվածների անունները, որոնք հայտնի են հայերին... դրանք են՝ Վարագ-Պերոժը, Վարագ-Տրդատը, Վարդանը, Ներսես-Դժնդակը...»: Այդպիսով, նրկի թե՛ 180-րդ և թե՛ 265-րդ էջերի հաղորդումներից պարզ երևում է, որ առաջին Վարագ-Տրդատը եղել է Վարագ-Պերոժի որդին կամ Վարագ-Գրիգորի թոռը, Ջվանշիրի եղբորորդին:

Ինչ վերաբերում է նրկի 255 և 266-րդ էջերին, ապա նրանցում ասված է. «Եվ Վարագվանի որդի Վարագ-Տրդատին աստված կյանք շնորհեց, իսկ նրա որդի Ստեփանոսը վաղաժամ մեռավ. նրա (Ստեփանոսի, – Է.Ս.) եղբայր Վարագվանը սխալվելով ընկղմվեց կուր գետը, որը եղավ նրա գերեզմանը: Իսկ ժառանգ մնաց նրա (Վարագվանի ու Ստեփանոսի, – Է.Ս.) եղբայր Ջվանշիրիկը: ...Սյունյաց իշխան Վասակը Բաբանին բերեց Պարսկաստանից... Նույն տարին (821 թվականին, – Է.Ս.) Փղիայան Ներսես իշխանը սպանեց Վարագ-Տրդատ Ստեփանոսյանին և նրա որդուն մորթեցին մոր գոգում, ու նրա ամբողջ ունեցվածքը հարիշտակեցին: Այս Վարագ-Տրդատը Միհրական տոհմից էր...» (էջ 255):

Մինչև այստեղ ուսումնասիրողները Վարագ-Տրդատներին ու նրանց զավակներին շփոթելու հիմք չունեն: Սակայն մատենագրի նույն նրկի 266-րդ էջի տողերը հիմք են դառնում աղավաղումների համար: Ի՞նչ է ասված այդտեղ. «Ներսեսի որդին էր Գագիկը, Գագիկի որդին՝ Ստեփանոսը, իսկ սրա քույրն էր Սպրսամիկը: Այս Վարագ-Տրդատին և իր որդի Ստեփանին սրանց ազգական Ներսես Փղիայանը միևնույն ժամին Խորածորում սպանեց, որ կոչվում է Դադոյի վանք¹: Ապա այն աղետներից՝ սպանվածի կինը զինվում է այրական քաջությամբ, վերցնում է իր ողջ մնացած դուստր Սպրամին, գիշերային տաժանելի

¹ Դադոյի վանքը գտնվում է Արցախի Խաչեն գավառում: Այժմ էլ կոչվում է Դադիվանք, որ հայ ճարտարապետության նշանավոր հուշարձաններից մեկն է (տես Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 291):

ճամփորդությանը գնում է Խաչենի բերդը: Իր տան մասին բարիք մտածելով Սպրամին ամուսնացնում է Սահլի որդի Ատրներսենի հետ. Խաչիլը Հայկի տոհմից էր և Սյունիքի տերը. սա բռնությանը գրավել էր Գեղամա գավառը, սրա որդի Ատրներսենը հանդիպեց զգաստ կնոջ, որոնք (Սպրամը և իր մայրը) երկյուղած էին աստծու հանդեպ, բարեպաշտ կյանք էին վարում և սիրելի էին ամբողջ երկրում»¹:

Այդ մասին Լեոն գրում է. «...Հենց նույն տարին, երբ Բաբանը բերվեց Սյունիք, Ներսեհ անունով մի իշխան, որ Սյունեցի է անվանված, սպանեց Միհրանյան տոհմին պատկանող Վարագ-Տրդատ իշխանին և նրա որդի Ստեփանոսին՝ Դադոյի վանքի Խորածորում, Վերին Խաչենում: Սպանությունը կատարվեց արու սերնդին հարվածելու հաշվով: Ստեփանոսը դեռ մանուկ էր, և նրան մորթեցին մոր գոգում»²:

Այդպիսով, ըստ մատենագրի հաղորդած տեղեկությունների մի դեպքում Ստեփանոսյան Վարագ-Տրդատը ուներ Ստեփանոս անունով որդի, որը վաղաժամ մեռնում է, մյուս դեպքում՝ ուներ Ստեփան անունով որդի, որին Խորածորում սպանում է նրա ազգական Ներսեհ Փիլիպյանը՝ Վարագ-Տրդատին սպանելու նույն ժամին: Ինչպես տեսնում ենք, հակասություններն այստեղ ակնառու են, ուստի հարցը ենթակա է լուրջ ուսումնասիրության: Հավանականն այն է, որ Ներսեհ Փիլիպյանը միևնույն ժամին սպանում է Ստեփանոսյան Վարագ-Տրդատին ու նրա որդի Ջվանշերիկին: Նման ենթադրության համար հիմք է ծառայում այն հաղորդումը, որ Ստեփանոսյան Վարագ-Տրդատը ունեցել է երեք որդի՝ վաղաժամ մահացած Ստեփանոսը, Կուր գետում սխալմամբ ընկղմված Վարագմանը և «ժառանգ մնացած» Ջվանշերիկը: Մ. Կաղանկատվացու երկում այս Ջվանշերիկի մասին այնուհետև ոչինչ չի ասվում: Ուստի եթե Բաբենի Սյունիք գալու առաջին տարում Վարագ-Տրդատի հետ սպանվում է նրա որդին, ապա մենք ենթադրում ենք, որ այն կարող է լինել միայն Ջվանշերիկը:

Անհավանական է թվում նաև Սպրամին Ստեփանոսյան Վարագ-Տրդատի դուստր ճանաչելը, քանի որ մատենագիրը այդ

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 266:

² Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 419:

մասին ուղղակի ոչինչ չի հաղորդում: Ինչպես տեսանք, Ստեփանոսյան Վարազ-Տրդատի հետ միևնույն ժամին սպանվում է սխալմամբ նրա որդի անվանված Ստեփանը: Իսկ այնուհետև մատենագիրը նշում է, որ «սպանվածի կինը զինվում է այրական քաջությամբ, վերցնում է իր ողջ մնացած դուստր Սպրամին... գնում է Խաչեն բերդը»: Մակայն խոսքը ո՞ր սպանվածի կնոջն է վերաբերում՝ Ստեփանոսյան Վարազ-Տրդատի¹, թե՞ Ստեփանի: Ամենայն հավանականությամբ Ստեփանի կնոջ ու նրա Սպրամ դստեր մասին է այստեղ խոսքը: Ինչ մնում է Ստեփանի անձնավորությանը, ապա այդ ևս ենթակա է լուրջ ուսումնասիրության:

Մեզ հետաքրքրող հարցի հստակ պարզաբանմանը չի օգնում նաև հետևյալ ծանոթագրությունը. «Միհրանյան դինաստիայի վերջին իշխանը եղավ Վարազ-Տրդատը, որը 822–823 թվականներին սպանվեց Ատրնեքսեհի կողմից: Ապա իշխանությունն անցավ Սահլ Սմբատյանին: Կադանկատվացին նրան կոչում է «Եռանշահիկ»»: Իսկ թե որտեղից են քաղված 822–823 թվականները Ատրնեքսեհի կողմից նրա սպանվելու մասին տեղեկությունները, ծանոթագրությունը կազմողները և աղբյուրները լռում են:

Վարազ-Տրդատ Ստեփանոսյանից հետո Աղվանքում Միհրանյան տոհմի ներկայացուցիչ այլևս չի երևում: Իրոք որ Վարազ-Տրդատ Ստեփանոսյանի ու նրա զավակ Ջվանշերիկի սպանությունը կազմակերպվում է Միհրանական տոհմի արու սերնդին վերջ տալու միտումով: Մ. Կադանկատվացին արժանահավատ աղբյուրներով ցույց է տալիս Միհրանյանների սպառումը, որոնք չեն դիմանում Արցախի Առանշահիկների մրցակցությանը և վերջին հաշվով, ինչպես տեսանք, IX դարի սկզբին նրանց վերջին ներկայացուցիչ օրիորդ Սպրամն ամուսնանում է Արցախ-Խաչենի տեր Ատրնեքսեհի հետ՝ դրանով իր տոհմը շարունակելու հույսով, բայց ապարդյուն: Մատենագիրը իրավամբ վկայում է, որ Աղվանքի տերերը ի սկզբանե Առանշահիկներ էին, հետո եկան Միհրանյանները, վերջում խնամիացան Առանշահիկներին՝ բայց և այնպես սպառվեցին: Ա.Շ. Մնացականյանը գրում է.

¹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965թ., էջ 145, ծանոթագրություն 97:

«Ջվանշիրի ժամանակ վերարժարծված հայկական ոգին էր անմիջապես շարունակելու վաչագան Երրորդի ավանդները, որոնք ընդհատվել էին նրա (Ջվանշիրի) նախորդների կողմից: Ավելին, ժամանակի ընթացքում կուտակված և շուրջ մեկ դար զսպված ազատասիրական տրամադրությունները ավելի քան հախտոն տեսք էին ստեղծել: Ջվանշիրը մերվել էր հայերին, և նրա հզորությունը՝ վերջիններիս զարթոնքն ու հզորությունն էր»¹:

Անդրադառնալով արաբների և հյուսիսային ցեղերի Ադվանք կատարած ասպատականություններին, նշենք, որ խալիֆ Եզիդ Երկրորդի (720–724 թ.թ.) ժամանակ (722–723 թ.թ.) խազարները երեսուն հազարանոց բանակով նորից են հարձակվում Ադվանքի վրա և հաղթում արաբներին: Նույն թվականին Եզիդ Երկրորդը Հայաստանի կառավարիչ է նշանակում ալ-Ջարախ իբն-Աբդուլլահ ալ-Խաբամուն, նրան տալիս է 25 հազարանոց մի բանակ և հրամայում հարձակվել խազարների վրա²: Սակայն խազարներն իմանալով արաբական այդպիսի մեծ բանակի հարձակման մասին, նահանջում են Դերբենդի կողմերը: Ալ-Ջարախը մոտիկանում է Պարտավին, բանակին որոշ ժամանակ հանգիստ տալիս, ապա անցնում Կուր գետը և մոտիկանում Դերբենդին: Խազարները նրա դեմ հանում են 40-հազարանոց մի բանակ՝ խաբանի որդի Բարժիկի հրամանատարությամբ³: Տեղի ունեցած ճակատամարտում խազարները պարտվում են, ալ-Ջարախը այդտեղից վերադառնում է մեծ ավարով ու մեծաթիվ գերիներով:

Սակայն 725–726 թվականին Խալիֆ Հիշամը (724–743 թ.թ.) Ջարախին ազատում է իր պաշտոնից և նրա փոխարեն Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակում իր եղբորը՝ Աբդ էլ-Մելիքին: Դրա հաջորդ տարում (726–727 թ.թ.) խազարները, խաբանի որդու հրամանատարությամբ, հարձակվում են Ադվանքի վրա, բայց պարտվում և ետ են շարտվում: 729 (կամ 730թ.) թվականին Հիշամը Աբդ էլ-Մելիքին ետ է կանչում և

¹ Ա.Շ. Մնացականյան, «Ադվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ», էջ 146:

² Տես ձՕ-ՕաձաձԵ, II, 1453, Էձի ձԵ-ԱճԵԾ, 5, 83–84.

³ Տես Белами. С. 510. Ибн Асам, л. 180а (Ըստ վ. Բարտոլդի խաբանի տղայի անունը Բարժինգ էր):

կրկին նրան փոխարինելու ուղարկում ալ-Ջարալսին, որը շուտով նոր արշավանք է սկսում խազարների դեմ: Սակայն վերջիններս 730–731 թվականներին 300-հազարանոց բանակով, Բարժիկի հրամանատարությամբ, հակահարձակման են անցնում, մտնում Ադվանք: Ալ-Ջարալսին Բարդայով նահանջում է Արդաբիլ և այդտեղ սպասում հակառակորդին: Շուտով Արաքսի ափին տեղի է ունենում երկու բանակների հանդիպումը, որտեղ արաբները պարտվում և կրկին նահանջում են դեպի Արդաբիլ: Այստեղ ևս նրանք պարտվում են, իսկ ալ-Ջարալսին սպանվում է¹: «Պատմություն Ադվանից աշխարհի» երկի տվյալներով ալ-Ջարալսին սպանվում է հայոց թվականության 179-րդ տարում, այսինքն 730 թվականի մարտի 26-ին կամ 731 թվականի մարտի 14-ին: Խազարները նվաճում են նաև Արդաբիլ քաղաքը, տղամարդկանց կոտորում, իսկ կանանց ու մանուկներին գերեվարում: Ղևոնդը խազարների այդ արշավանքը նկարագրում է այսպես. «Նրանք անցնելով ճորա պահակով (Դերբենդով, – Է.Ս.) մազբույթների հողով հարձակվում են Փայտակարանի (Բայլականի) վրա: Նրանք անցնում են Արաքս գետը, մտնում Պարսկաստան, ավերում Արտավեստը (Արդաբիլը)...»²:

Խազարների այս ասպատակությունները գայրոյթ են առաջ բերում խալիֆական արքունիքում: Հիշամ խալիֆը արաբական զորքերի գլխավոր հրամանատար է նշանակում Սաիդ իբն Ամրա ալ-Լսարաշին, որն անմիջապես 30 հազարանոց բանակի գլուխ անցած հարձակվում է խազարների վրա և վանալ լճի մոտ ջարդում նրանց: Խազարները նահանջելով դեպի Բերդաս, ճանապարհին ավիրում են բոլոր ամրոցները: Սաիդը գալիս հասնում է Բերդաս և բնակչությանը կոչ անում ընդհանուր ուժերով դուրս գալ խազարական վտանգի դեմ: Հատկապես նա դիմում է Ադվանքի մայրաքաղաքի հարուստներին և խնդրում ժլատ չգտնվել միջոցների հարցում: Ապա Սաիդը ուղևորվում է Բայլական, ագատում այն և սկսում խազարներին դուրս քշել ամենուր: Խազարները հարյուր հազարանոց բանակով նույն Բարժիկի հրամանատարությամբ հակահարձակում են գործում

¹ Sīu al-Mas̄kīn. C. 79, at-Ṭabari, II, 1521, az-Zahabi. C. 56, Iḅn al-Asir, 5, 118.

² Ղևոնդ, էջ 72:

Բայլականի մոտ, բայց պարտվում են: Սաիդը Բարժիկին ձիուց ցած է գլորում, գլխատում և գլուխը ուղարկում Հիշամին: Դրանից հետո խալիֆ Հիշամը Սաիդ իբն Ամրա ալ-Սարաշին ետ է կանչում և նույն տարում (730–731 թվականին) Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ նշանակում Մասլամ իբն Աբդ ալ-Մելիքին, որն անմիջապես հարձակվում է խազարների վրա և ձմեռամուտին հասնում Դերբենդի մոտերքը: Սակայն 731–732 թվականին խազարները նորից են հարձակվում Աղվանքի վրա, բայց այս անգամ ևս Դերբենդի մոտ ջախջախվում են:

Խալիֆությունը ձգտում էր իսպառ վերացնել տեղական քաղաքական ընտրանին: Ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ Արցախում, արաբական տիրապետությունը ամրապնդելու նպատակով, ութերորդ դարի 30-ական թվականներին 150-հազարանոց մի բանակ, Մուհամմեդ իբն-Մրվանի գլխավորությամբ, մտավ Անդրկովկաս: Երկրամասի ժողովուրդների շուրջ 90-ամյա համատեղ պայքարը՝ ընդհանուր թշնամու դեմ, վերջացավ պարտությամբ: Արաբները բարբարոսաբար էին վերաբերվում տեղացիների հետ: Նրանք փորձում էին հայերին դավանափոխ անել, ոչնչացնում էին քրիստոնեական ձեռագրերը և հայկական հուշարձանները: Նահանգում արաբացման քաղաքականություն էր տարվում: Ութերորդ դարի 30-ական թվականներին Մուղանը նվաճելու ժամանակ տաս հազար մուղանցիներ գերվեցին, ստրկացվեցին և բաժանվեցին արաբական գորավարների միջև: Այդ նույն Մուհամմեդ իբն-Մրվանը կամ Մրվան իբն-Մուհամմեդը խալիֆ Հիշամի (724–743 թ.թ.) կողմից նշանակվում է Հայաստանի և Ատրպատականի ոստիկան, որն այդ պաշտոնում մնում է 732–743 թվականներին և բռնությամբ խաղաղություն հաստատում իրեն ենթակա տարածքներում: Մ. կաղանկատվացու նրկի տվյալներով նկատում ենք, որ «հայոց հարյուրութսուն թվականին (731 կամ 732 թվականին, – Է.Ս.) Մսիլամը դարձյալ շինում է Դերբենդը արաբների համար, բայց Աղվանքի կաթողիկոսարանը չի քանդում, որ դեռևս գոյություն ունի այնտեղ»¹:

Այդպիսով, ութերորդ դարից սկսած արաբներն իրենց տիրապետության հյուսիսային սահմանների ապահովության հա-

¹ Մ. կաղանկատվացի, նշված նրկը, էջ 250:

մար կատաղի պատերազմներ էին մղում նաև Կովկասյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ապրող ժողովուրդների դեմ, պատերազմներ, որոնք շարունակվեցին մինչև Մրվան ոստիկանի ժամանակը: Նրա օրոք արաբները կարողացան հաստատվել Դերբենդի նշանավոր լեռնանցքներում, որն ամրացվելով այնուհետև դարձավ խալիֆության ռազմական հենակետը Կովկասի հյուսիս-արևելյան սահմանագլխին: Նկատենք նաև, որ արաբները Հյուսիսային Կովկասից կատարվող հարձակումների դեմ իրենց զորքերի հետ միասին դուրս էին բերում նաև հայկական հեծելազորը՝ օգտագործելով հայ քաղաքական ընտրանու միջև եղած հակասություններն ու թշնամանքը: Ինչպես նշվեց, դրանով արաբները հետապնդում էին նաև հայոց ռազմական ուժերը ջլատելու և քայքայելու նպատակ:

Ութերորդ դարի կեսերին հայերիս դժբախտություններ էին սերմանում նաև այլ ցեղեր: Հայոց Աղվանքի համար այդ ժամանակ մեծ վտանգ դարձավ Եզիդ ոստիկանի մի ձեռնարկում: Արմենիայի ոստիկան Եզիդ իբն-Ուսայդ ալ-Սուլամին, որը մոր կողմից հայ էր (նրա մայրն էր Սիսականի իշխանի դուստրը), կամենալով ապահովել արաբական սահմանները հյուսիսից, խազիրների խաքանի մոտ խնամախոսներ է ուղարկում և խնդրում նրա քրոջ ձեռքը: Խաքանը համաձայնվում է և Եզիդին հարս ուղարկում իր քրոջը՝ Խաթունին: Վերջինս ծննդաբերության ժամանակ մահանում է: Խաքանը կասկածելով, որ նրան սպանել են, փորձում է վրեժ լուծել: Նրա Ռ-աժթարխան գորավարը, անցնելով Կովկասյան լեռներից հարավ, գրավում և ավիրում է Աղվանից աշխարհը, բայց մինչև Կուր գետը, և յոթ գավառ՝ Վրաստանում: Ալ-Յակուբին, Ատ-Տաբարին և Իբն ալ-Ասիրը խազարների այդ հարձակումը վերագրում են 763–764

թվականներին¹: Բարեբախտաբար խազիրների վոհմակը Կուրն անցնել և Հայոց Աղվանքը ասպատակել չի կարողանում, չնայած Եզիդն էլ չէր կարողանում վճռական գործողությունների դիմել նրանց դեմ:

Հայոց երկու հարյուր թվականից (751 թվականից) հետո մինչև 784 թվականը Աղվանքի սահմաններում տեղի ունեցած դեպքերը Մ. Կաղանկատվացու երկում ներկայացվում են

¹ Տես Ատ-Տաբարի, 111, 313, ալ-Յակուբի, 2, 446, Իբն ալ-Ասիր, 5, 437:

հետևյալ ձևով. «Այդ ժամանակներում աշխարհի չորս կողմը սփռվեց, տարածվեց հարավային ազգի (արաբների) դաժան ու մորմորեցնող բռնակալությունը, որը, ինչպես հուր, լափեց մարդկանց ամբողջ վայելչությունն ու փառքը. և ըստ սուրբ Պողոսի խոսքի, այն ապստամբության հայտնի ժամանակը եղավ, թե՛ դատավորը հասել է դռան մոտ և մերձ է ահարկու ժամը՝ չարի անաչառ օրը: Այսպես իսմայիլյան գազազած հազարացիք իրենց համար գրավեցին աշխարհի առատությունը. թե՛ ծով, թե՛ ցամաք հնագանդվեցին Նեռի կարապետների՝ կորստյան գավակներին: Այս մեծ գրկանք եղավ Աղվանքի համար, որովհետև Պարտավ մայրաքաղաքը արաբները խլեցին Աղվանքի իշխաններից՝ համաձայն իրենց անառակ ազգապղծության: Ինչպես իրենց իշխանության առաջին աթոռը հաստատեցին Ասորիքի Դամասկոսում, նույն ձևով այստեղ Աղվանքում՝ Պարտավում նստեցրին փոխարքա՝ կողոպտելու այս երկրի բարիքները. արքունի մարդկանցից մեկը եկավ բնակվեց Պարտավում: Իսկ հայերը իրենց երկրի հոգսերի համար իրենց կաթողիկոս տեր Եսայուն եպիսկոպոսների հետ միասին ուղարկեցին նրա մոտ...

...Միաժամանակ և Աղվանքի կաթողիկոս տեր Սողոմոնը խորհրդակցեց իր եպիսկոպոսների հետ, նա էլ լուծեց իր աթոռակալների կապանքները...

Եվ վարագմանի որդի վարագ-Տրդատին աստված կյանք շնորհեց, իսկ նրա որդի Ստեփանոսը վաղաժամ մեռավ. նրա եղբայր վարագմանը սխալվելով ընկղմվեց կուր գետը, որը եղավ նրա գերեզմանը: Իսկ ժառանգ մնաց նրա եղբայր Ջվանշերիկը: Այսքանը մինչև այստեղ» (Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 254–255):

«Մինչև այստեղ»-ը մենք հասկանում ենք մինչև 784 թվականը, նկատի ունենալով, որ Աղվանքի կաթողիկոս տեր Սողոմոնը աթոռակալում է ընդամենը կես տարի, այն էլ այդ թվականին:

Կարծում ենք, եկել է տեղը խոսելու Աղվանքի վարչական կառուցվածքի մասին:

«Բանն այն է, որ Հայաստանը արաբական խալիֆոսության մեջ առանձին նահանգ չի եղել, այլ Աղվանքի (Առան) և Արևելյան Վրաստանի (Ջուրգան) հետ կազմել է մեկ վարչական միավոր, որը կրել է Հայաստան անունը՝ Արմենիա: Արմենիայի ոստիկանի նստավայրն էր Դվինը, սակայն 789 թվականին Դվինի

կողքին ուստիկանն ունեցավ նաև երկրորդ նստավայրը՝ Պարտավր: Ղևոնդ պատմիչը վկայում է, որ Սուլայման ուստիկանը (789 թվին) նստեց Պարտավում և ահա սա էլ համարվում է Դվինի կողքին Պարտավի երկրորդ մայրաքաղաք դառնալու սկիզբը»¹:

Ճիշտ է, Արմենիան կամ Էրմենիան վարչական տեսակետից (մանավանդ հարկային) միաձույլ էր, բայց նրա բաղկացուցիչ երեք երկրներն էլ ունեին իրենց տեղական կառավարիչները՝ փոխարքա էմիրները կամ պատրիկները: «Տարկավոր է հատկապես ընդգծել, որ շատ հաճախ նույն անձնավորությունը միաժամանակ լինում էր փոխարքա և տեղական ուստիկան, որի հետևանքով Արմենիայի կամ մյուս նահանգների ցուցակներում շփոթությունը մշտական է»²: Ռազմական և այլ նկատառումներով արաբ խալիֆները երբեմն Արմենիան միացնում էին հարևան նահանգների հետ և կազմում մեկ փոխարքայություն, որի փոխարքան ունենում էր սուկ ռազմական իրավասություններ: Արմենիայի սահմանները հյուսիսում հասնում էին Կովկասյան լեռներին, հարավում՝ Արևելյան Տիգրիսին, արևելքում՝ Կասպից ծովին, իսկ արևմուտքում՝ Սև ծովին, Ճորոխին ու Եփրատին: Ընդհանուր Աղվանքն այնպես էր միաձուլված մայր Հայաստանին, որ շատ աշխարհագիրներ այն ընկալում էին որպես Հայաստան, և ինչպես տեսանք, վերջինիս սահմաններն էլ ընդարձակվում էին մինչև Կովկասյան գլխավոր լեռնաշղթան:

Ինչ վերաբերում է վրաստանին, ապա այն որպես առանձին երկիր, չէր հիշատակվում՝ IX–X դարերի արաբական աշխարհագիրների կողմից: Ամբողջ Անդրկովկասն անվանվում էր Արմենիա (Հայաստան): Աշխարհագիրներից շատերը նույնիսկ Կովկասյան լեռնաբնակ գեղերից մի քանիսին զետեղել էին Հայաստանի մեջ: Քուռ գետը համարվում էր զուտ հայկական ներքին գետ: Իբրև Հայաստանի բնական հարստություն, արաբ աշխարհագիր էլ-Իստահրին հատկապես հիշատակում է Բաքվի նավթը: «Արմենիա» կամ «Էրմենիա» փոխարքայությունը բաժանված էր չորս մեծ մարզերի, որոնցից առաջինը կազմում էր Աղվանքը: Արցախի դաշտային գավառները մտնում էին Աղվան-

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 743, ծանոթագրություն 103:

² Լեո, նույն տեղը:

քի մարզի մեջ, իսկ լեռնային գավառները՝ Սյունիքի մեջ: Վերջինիս իշխանը, թեևուզ վասալական կախման մեջ էր գտնվում Հայաստանի արաբական կառավարչից ու խալիֆից և հարկատու էր նրանց, այնուամենայնիվ ուներ ներքին որոշ արտոնություններ: Օրինակ, նա իրավունք ուներ գործ պահել: Սյունիքը որպես «Արմենիայի» մի մաս, ութերորդ դարի սկզբներին իր հողով ու ջրով և հողի ընդերքով հայտարարվեց խալիֆության սեփականությունը:

Այդպիսով, թեևուզ Արցախի դաշտային գավառները մտան Աղվանքի մարզի մեջ, իսկ լեռնային գավառները՝ Սյունիքի, ամբողջ նահանգը մնում էր հայաստանյան նահանգ: Արաբական աշխարհագիրներից մի քանիսը Հայաստանը բաժանում են երեք, իսկ ուրիշները՝ չորս մասի: Աշխարհագիր Իբն-Խորդադբին «Առաջին Հայաստանի» մեջ ցույց է տալիս Սիսաջանը, Արբանը կամ Առանը, Թիֆլիսը, Բերդաան, Բայլաքանը, Կաբալան և Ծիրվանը¹: Այս տարածքների կենտրոնում գտնվող Արցախը չի հիշատակվում՝ այն Աղվանքի և Սյունիքի միջև բաժանված լինելու պատճառով: Այդ բաժանումների համաձայն ամբողջ Աղվանքը մտնում էր Առաջին և Երկրորդ Հայաստանների մեջ: Ամբողջ «Արմենիան» բաժանվել էր չորս մասի՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայաստանների: Պարտավը համարվում էր Հայաստանի գլխավոր քաղաքներից մեկը, որի մասին արաբ հեղինակները հիացմունքով էին խոսում: Այժմ նրանից մնացել է մի գյուղ՝ Բարդա անունով: Ութերորդ դարի երկրորդ կեսին Աղվանից քաղաքական ընտրանին ընդմիջտ զրկվում է իր ադամինատրատիվ կենտրոնից՝ գեղեցիկ մայրաքաղաքից: Այն ամբողջապես անցնում է արաբներին, ընդունում իսլամի տիրապետությունը՝ գլխահարկ տալու պայմանով:

Այդպիսով, արաբական վարչական բաժանումների ժամանակ ամբողջ Աղվանքը, սկսած Դերբենդից, մտնում էր Հայաստանի մեջ, որի գլխավոր քաղաքներն էին համարվում Դվինը և Պարտավը:

Ատրպատականը, Աղվանքը, Հայաստանը, Վրաստանի մի մասը և Փոքր Ասիայի տարածքի մի մասը կազմում էին խալիֆության չորրորդ վիլայեթը: Սակայն Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը ունեին իրենց որոշակի սահմանները: Այ-

¹ Տև Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 366:

Մակդիսիսն Աղվանքի սահմանների վերաբերյալ հայտնում է հետևյալը. «Ինչ վերաբերում է Աղվանքին, ապա այն կազմում է ամբողջ մարզի (Արմենիայի – Է.Ս.) երրորդությունը՝ նման թերակղզու՝ ծովի և Արաքս գետի միջև, իսկ Մալիք (Կուր – Է.Ս.) գետը նրկայնությամբ բաժանում է մարզը: Նրա (Աղվանքի – Է.Ս.) մայրաքաղաքը Բարդան է, իսկ քաղաքները՝ Բայլականը, Շամբորը, Ջանգան (Գանձակ, Քանգա, – Է.Ս.), Բարդիդջը, Շամախին, Շիրվանը, Բարուն, Շաբրան, Բաբ ալ-Աբվաբը, Լանդժան, Կաբալան, Շաքին, Մանազկերտը և Տեբլան» (àè-Ì óèàä-äàñè. Ñ. 374.): Իբն Հաուկալի հաղորդմամբ «Աղվանքի տերիտորիան ձգվում էր Բաբ ալ-Աբվաբի սահմաններից մինչև Թիֆլիսի սահմանները»¹: Ալ-Իսթահրին գրում է. «Աղվանքի սահմանները Բաբ ալ-Աբվաբից մինչև Թիֆլիսի սահմաններն են և մինչև այնտեղ, որը հայտնի է Խաղժիրան (Նախիջևան, – Է.Ս.) անունով, որը մոտ է Արաքս գետին: Աղվանքում Բարդայից ու Բաբ ալ-Աբվաբից նշանավոր քաղաքներ չկան»²:

Այդպիսով, Աղվանքի կազմի մեջ էր մտնում նաև Արցախը, իսկ ամբողջ Աղվանքն էլ մտնում էր Արմենիայի մեջ: Ու նաև նկատենք, որ արաբական տիրապետության ողջ ժամանակահատվածում (ութերորդ դարի սկզբից մինչև իններորդ դարի կեսերը) ամբողջ Արմենիայում իշխում էին հայ քաղաքական ընտրանու ներկայացուցիչները՝ իշխաններ ու պատրիկներ, չհաշված կարճ ժամանակահատվածները: Դրանում դժվար չէ համոզվել ծանոթանալով հայոց իշխանների ցուցակին ու նրանց իշխած տարեթվերին: Ահա այն.

Սմբատ Բագրատունի՝ 693–726 թվականներ:

Աշոտ Բագրատունի՝ 732–748 թվականներ:

Մուշեղ Մամիկոնյան՝ 748–753 թվականներ:

Սահակ Բագրատունի՝ 753–770 թվականներ:

Սմբատ Բագրատունի՝ մինչև 775 թվականը:

Աշոտ Բագրատունի՝ 775–781 թվականներ:

Տաճատ Անձևացի՝ 781–785 թվականներ:

Աշոտ Մսակեր՝ մոտավորապես 790–826 թվականներ:

Սմբատ Բագրատունի՝ մինչև 855 թվականը:

¹ Ēaí Ōaóèàè. Ñ. 346.

² àè-Ēñðàòðè. Ñ. 181.

Ընդ որում վերջինիս փոխարինած Աշոտ Բագրատունին 855–862 թվականներին իշխանաց իշխան էր, իսկ 884 թվականից՝ թագավոր Հայոց: Այդպիսով, սխալ է այն ենթադրությունը, թե իբր արաբական նվաճումից հետո ավարտվեց հայոց իշխանների գոյությունը: Նման սխալ ենթադրության համար հավանաբար հիմք է ծառայել նաև այն թյուրիմացությունը, թե իբր Արմենիայի (Հայաստան, Վիրք և Աղվանք) կառավարիչը հատուկ անուն չի ունեցել, թե իբր նրանք VII–IX դարերում ուստիկան են կոչվել: Մինչդեռ այդ դարերի հայ պատմիչներից ոչ մեկը Արմենիայի արաբ կառավարչին ուստիկան չի անվանել, «այլ յուրաքանչյուրն իր նախասիրված բառն է օգտագործել»¹: Օրինակ, ութերորդ դարի հնդհնակ Ղևոնդը արաբ կառավարչին անվանում է հրամանատար (հրամանատար աշխարհիս Հայոց) կամ զորավար, իսկ նրանց պաշտոնը՝ հրամանատարություն: Թովմա Արծրունին արաբ կառավարիչներին կոչել է վերակացու, մեծ հազարապետ կամ զորավար, իսկ նրանց պաշտոնը՝ վերակացություն կամ զորապետություն: Աղվանից պատմության մեջ զործածական է «իշխան» բառը: Արաբները խալիֆության նահանգների կառավարիչների համար հաստատուն անվանում չեն ունեցել: Գործածական էր «ամիր»-ը (իշխան, հրամանատար), «ամիր»-ը (զործակալ, գլխավոր հարկահան, փոստի վերակացու), «ուալի»-ն (վերակացու): «Անունների այս բազմազանությունը հետևանք էր խալիֆայության նահանգների, որպես վարչական միավորների փոփոխական վիճակի, քանզի տարբեր նահանգներ, ըստ օրվա խալիֆայի հայեցողությանը, կարող էին միացվել ու անջատվել: Ուստի արաբական ժամանակաշրջանում Արմենիայի արաբ կառավարիչը հաստատուն անուն չի ունեցել թե արաբերենում և թե հայերենում»²: Ուստիկան բառը (Արմենիայի արաբ կառավարիչ իմաստով) հայ մատենագիրներից առաջինը գործածում է Հովհաննես Դրասխանակերտցին՝ X դարում: Իսկ հետո այն օրինականացնում է Միքայել Չամչյանը՝ իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ:

¹ Տես Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 745, ծանոթագրություն 106:

² Նույն տեղը:

Ինչ վերաբերում է արաբական տիրապետության ժամանակաշրջանում գոյություն ունեցած վարչական կառավարման համակարգին ընդհանրապես, ապա պետք է ասել, որ յուրաքանչյուր վիլայեթի գլուխ կանգնած էր ամիրը՝ խալիֆի փոխանորդը, որը միաժամանակ հանդես էր գալիս իր մարզի (վիլայեթի) բանակի հրամանատարի պաշտոնում:

Ամիրապետի ձեռքում էր կենտրոնացված վիլայեթի ամբողջ քաղաքացիական ու ռազմական իշխանությունը: Նա էր ղեկավարում վիլայեթի ամբողջ վարչական ապարատը, հանդիսանում քաղաքական ընտրանու միանձնյա ղեկավար: Նա այն իրականացնում էր դիվանի միջոցով, որը գտնվում էր վիլայեթի գլխավոր քաղաքում: Ամիրապետի ենթակայության ներքո հատուկ պաշտոններ էին զբաղեցնում հարկահանության կառավարիչը, հոգևոր դատավորը և ուրիշներ: Խալիֆության և վիլայեթների միջև կապ պահպանելու նպատակով դեռ Մուավիա Առաջինի ժամանակ (661–680 թ.թ.) փոստի աշխատանքը բարելավվում է: Սկսում են օգտագործվել մինչև անգամ աղավնիներ: Մ. Կադանկատվացու երկում հետաքրքիր տեղեկություն է հաղորդվում խալիֆի փոխանորդի գրասենյակի աշխատանքի մասին. «Եվ ամիրումնի Դարպասի մասին այս սովորեցինք, թե դռան աջ կողմը նստում է Շուրտայաց ավագը, որ բոլոր դահճապետներից մեծ ավագ է, իսկ ձախ կողմը՝ դատավորն ու գանձի ամիրան, որոնք դատում էին և հավաքում ամբողջ աշխարհի հարկային վճարումները: Օրվա իններորդ ժամին ներկայանում էին և վաղորդայնին պատվեր էին ստանում ու մարդկանց համար օգտակար գործեր էին կատարում»¹:

Եթե օմայանների ժամանակ արաբները գրեթե չէին խառնվում Ադվանքի ներքին գործերին, սահմանափակվում էին հարկահանությամբ, ապա Աբբասյանների ժամանակ Բարդան խլվում է «ադվանից ազնվականներից» և վերածվում Ադվանքի մարզի (վիլայեթի) մայրաքաղաքի: Այդ ժամանակվանից էլ քաղաքը արաբների խիստ հսկողությանն է ենթարկվում: Մանսուր խալիֆի ժամանակ, երբ Ադվանից վիլայեթում կառավարիչ էր Եզիդ իբն Ուսայդը, Բարդան ունեցել է իր դրամանոցը՝ «Բարդա» կնիքով դրամը: Ադվանքում արաբական դրամանոցները

¹ Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 258:

գործում էին Բարդայում, Դերբենդում, Շենախում: Արաբական առաջին դրամը Աղվանքում դիրհեմն էր, որը դրամահանվել է 707–708 թվականներին: Իսկ Աբբասյանների առաջին դրամը Աղվանքում հանդես է գալիս 757–758 թվականներին և Բարդայում դրամահանվում սկսած 759–760 թվականներից:

Հայաստանի տարածքային կառավարման մասին սահմանափակվեցնք այսքանով, ամրագրելով միայն, որ արաբական տիրապետության շրջանում բուն Աղվանքի տարածքում առաջանում են Շաքիի, Շիրվանի ու Դերբենդի ամիրությունները:

Այդպիսով, ինչպես տեսանք, Հայոց Աղվանքում Միհրանյան իշխանական տոհմը սպառվում և տնդիք է տալիս արաբական տիրապետությանը՝ կյանքի ու մահվան պայքարով լցնում արաբական տիրապետության ուսումնասիրվող շրջանը, որը սկսվելով ութերորդ դարի սկզբից, շարունակվում է ընդհուպ մինչև իններորդ դարի կեսը: Նախորդիվ նկատեցինք, որ արաբական տիրապետության հաստատման համար առաջին արշավանքներից մինչև ութերորդ դարի սկզբները ամբողջ Հայաստանի նման Արցախում ևս պահպանվում էին մարզպանական շրջանի հասարակական հարաբերությունները: Հայ քաղաքական, եկեղեցական վերնախավը թեև վասալական կախման մեջ էր գտնվում արաբական խալիֆից ու հարկատու էր նրան, այնուամենայնիվ ուներ նաև ներքին որոշ արտոնություններ, որոնք արտահայտվում էին նախ և առաջ գործ պահելու իրավունքով: Նկատենք, որ արաբներն իրենց ամբողջ տիրապետության ընթացքում ի վիճակի չեղան ոչնչացնել հայկական ռազմական ուժն ու նախարարական համակարգը:

Հայոց Արևելից կողմանց Առանշահիկ թագավորական տոհմն ապրեց իր ավանդական լեռնաստանում՝ Արցախում և Միհրանյանների հետ ունեցած մրցապայքարից հաղթանակով դուրս եկավ: Գարդմանքում հիմնավորված Միհրանյան տոհմի գերիշխանության օրոք Առանշահիկները ամրացել էին Արցախում և վերջինիս գավառներում ճյուղավորվելով, արդեն իրենց նոր ընձյուղներն ունեին: Պարտավում նստած խալիֆության կուսակալ Աբդի-Մելիքի դիվանի համար կազմված ցուցակում կարդում ենք. «...Անմիջապես ստույգ կերպով իմացանք, նախ ես՝ Աղվանքի իշխան Շերոս, աղվանից սպարապետ Ջվանքոն, Վարդան պատրիկը և նույնի եղբայր Գագիկը, Վախթանգ Վարագ-

մանյանը, որի նախնին Միհրական տոհմից քաջ Վարդանն է, որը Աղվանքի արքա Վաչագանի ժամանակ արքայի կողմից Աղվնում ժողովի նախագահ եղավ, բնակվեց Գարդմանում. արքաների զարմից Պատրիկ Քարոյանը, որի տոհմը միննույն Վաչագան արքայի հրամանով բնակվեց Աղբերդ գավառում¹. սրա նախնիները քաջ Վաչագանն ու Վաչեն էին, որոնց անունները ըստ կարգի կան ցուցակում. Բաբ Հրահատյանը, որի տոհմը Ատրպատականի իշխաններից է՝ բնակված կապաղակում². Վահան Վարագ-Հոհանյանը՝ մադինացիների զարմից, որոնք հավատքով հակոբյան են և եկան, բնակվեցին կամբեջանում. Ռոստոմ Վարագ-Աքոյանը, որի տոհմը Պարսկաստանի Ստահր գավառից է, բնակվեց Ուտի գավառի կաղանկատուք ավանում. Զարմիհր Վարագ-Քուրդակյանը և Մահմադ Շերոյանը՝ Դղմունքի տերերի որդիները, որոնք բնակվել էին Աղվանքի արքայատուր Դղմահողքում: Այս բոլորը արձանագրվեցին Աբղյմելիք Ամիրմունիի դիվանում այն պատճառով (705 թվականին, – Է.Ս.), որ եթե սրանցից մեկնումեկը գտնվի երկաթնակ եղած, սրով ու գերությամբ բնաջնջվի» (Մ. կաղանկատվացի, նշված երկը, էջ 236–237):

Նկատենք, որ ցուցակը կազմելու նպատակը Աղվանից ողջ ընտրանուն՝ անկախ նրանց տոհմային պատկանելիությունից, քրիստոնեական հավատին հարազատ պահելուն էր միտված: Այս ցուցակը ևս ապացույց է առ այն, որ Աղվանքը հայկական էր, նրա ընտրանին նույնպես: Իսկ Առանշահիկների Արցախում ամրանալու և ութերորդ դարի սկզբին այնտեղ արդեն իրենց ընձյուղներն ունենալու վկայություններ են «արքաների զարմից Պատրիկ Քարոյանը, որի տոհմը միննույն Վաչագան արքայի հրամանով բնակվեց Աղբերդ գավառում», «Զարմիհր Վարագ-Քուրդակյանը և Մահմադ Շերոյանը՝ Դղմունքի տերերի որդիները, որոնք բնակվել էին Աղվանքի արքայատուր Դղմահողքում» արտահայտությունները: Պատրիկ Քարոյանի և Զարմիհր Քուրդակյանի արքայական Առանշահիկ տոհմից լինելու փաստին

¹ Աղբերդի գավառը կոչվել է նաև Քաղաղաշտ, Քալածոր, որը համընկնում է Աղդաշի և Մինգեչաուրի շրջաններին: Հայկական Աղբերդը հետագայում դարձել է Աղդաշ (տես Մ. կաղանկատվացի, նշված երկը, էջ 289, ծանոթագրություն 255):

² Կողթը Արցախի 14-րդ գավառն էր:

մենք հանդիպում ենք «Երդմնաթղթի» մեջ, ուր գրված է. «թագավորական տոհմից Քարոյան Պատրիկը... Ջարմիրի Վարագ-Քուրդակյանը՝ թագավորական ցեղից»¹: Սրանց տիրույթները հիշվում են Պատրիկ Քարոյանի համար՝ Աղբերդը, Ջարմիրի Քուրդակյանի համար՝ Դղմահողքը: Առաջինն ընդունելով Մեծիրանք ու Մեծկվենք գավառները՝ մինչև Ծար կամ Սոթք, իսկ երկրորդը՝ Դողն իր արվարձաններով, ապա ստացվում է, որ այս երկու Առանշահիկ ճյուղերը տարածված էին ամբողջ Արցախի վրա՝ հարավ-արևելքից մինչև հյուսիս-արևմուտք: Նման եզրակացությունների համար հիմք են ծառայում Մ. Կաղանկատվացու հետևյալ վկայությունները. նախ՝ որ Սիմոնին ներկայացնում է որպես Հոշո եպիսկոպոս և դնում Ամարասի Սահակ եպիսկոպոսի կողքին²: Երկրորդ, այլ կերպ ինչո՞վ կարելի է բացատրել, որ հետագայում Արցախի այս երկու գավառներում էլ համարյա միաժամանակ բարձրանում են Աբու Մուսն ու Սահլ Սմբատյան մեծ Առանշահիկները: 714 թվականին հնչում է մեկ ուրիշ Առանշահիկի՝ Աղվանքի ազնվական իշխան Վաչագանի փառավոր անունը: Իսկ IX–X դարերը նշանավոր են արաբական բռնապետության վերացմամբ և Արցախի ու հայոց Հյուսիս-Արևելից մյուս նահանգների իշխանությունն իրենց իսկական տերերի՝ հայերի ձեռքն անցնելով: Արաբական տիրապետության թուլացման հետևանքով Հաթերքի, Ջրաբերդի, Մեծկվանքի ու Վարանդայի Առանշահիկ իշխանները այնքան են հզորանում, որ IX դարի սկզբին Արցախի իրենց իշխանական շառավիղները տարածում են բովանդակ Աղվանքի բոլոր ուղղություններով: Իններորդ դարի առաջին տասնամյակները նշանավոր էին նրանով, որ Միհրանյան և Առանշահիկ տոհմերի միջև ժառանգական մրցակցությունը հասնում է իր գագաթնակետին: Միհրանյան տոհմը թուլանում ու սպառվում է, իսկ Առանշահիկները դառնում են երկրի լիիրավ տերերը: Արաբական տիրապետության ժամանակ Միհրանյանների ստեղծած քաղաքական ընտրանին վերջնականապես քայքայվում, և իր դիրքերը զիջում է Առանշահիկ երևելի իշխաններին, որոնցից էր նաև Սահլ Սմբատյանը: Ճիշտ է նկատում Ա.Շ. Մնացականյանը, որ ադրբեյջանցի պատմաբան-

¹ Նույն տեղը, էջ 234:

² Տես նույն տեղը, էջ 233:

ների կողմից գգուշությամբ սքողված է Առանշահիկ իշխանական տոհմի ծագման հարցը՝ ստեղծելով այն տպավորությունը, որ նրանք իբր թե աղվաններ են եղել՝ հակառակ Մ. Կաղանկատվացու բացահայտ վկայությանը:

Հայտնի է, որ Սահլ Սմբատյան Առանշահիկը Հայոց Աղվանքում ասպարեզ է մտնում IX դարի 20-ական թվականներին: Մենք այդ անվանն ու նրա քաջագործություններին հանդիպում ենք շատ աղբյուրներում: Մ. Կաղանկատվացու երկում նշվում է, որ «երբ լրացավ հայոց երկու հարյուր յոթանասուն թիվը (821 թվականը – Ը.Ս.), Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը և, մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Շիկաքար, Եռանշահիկ իշխանը և իր քաջագոր եղբայրները իրենց գորքերով լուսադեմին նրա վրա տվին, նրանց բոլորին միասին դիաթավալ արին, գիրուցան դարձրին և, ինչպես աշուծի ժանիքներից, գերիներին խլեցին»¹: Կան նաև տեղեկություններ այն մասին, որ Սահլ Սմբատյանը խալիֆության դեմ դուրս է գալիս դրանից էլ առաջ՝ 820 թվականին: Երբ իբն Եզիդ Նալիդը (իբն Մազյադը) Մամուն խալիֆի կողմից նշանակվում է Աղվանքի, Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ (820 թվականին), ապա նրա ճանապարհի վրա ապստամբություն է ծագում Շաքիի մոտ, որը ղեկավարում էր Սահլ Սմբատյանը: Նա շառավիղն էր այն Զարմիրի Առանշահիկի, որը հրաշքով փրկվել էր Միհրանյանների խարդավանքից²:

Այդպիսով, Սահլ Սմբատյանը Առանշահիկ հայ էր: Նախ, Մ. Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» երկում նշում է, թե «հայոց երկու հարյուր ութսունվեց թվականին տասներկու հազար հեծյալներ, հանկարծահաս լինելով Բաղդադից, արշավում են Աղվանք: Այդտեղ հոգ է տանում Սահլի Սմբատյանը, որ զարմիրական արքաների տոհմից էր»³:

Հետո Սահլ Սմբատյանի հայ լինելու վերաբերյալ ամեն տեսակի կասկածանքները լրիվ փարատելու նպատակով Մ. Կա-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 255:

² Տես «Արարատ», 1897թ., էջ 162:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 258–259 (երկի ռուսական թարգմանությունից այդ հատորումը դուրս է մնացել):

դանկատվացին վկայաբերում է. «Սահլը Հայկի տոհմից էր»¹: Իսկ հանրահայտ է, որ Հայկը հայոց ազգի էպոնիմն է:

Ա.Շ. Մնացականյանը գրում է. «Ադրբեջանցի պատմաբանները, մասնավորապես Չ. Բունիաթովը սխալվում են նաև Սահլ Սմբատյանի հարցում, դարձյալ այն տպավորությունն ստեղծելով, որ նա ոչ թե հայ է եղել, այլ աղվան: ...Բայց նրա հայ լինելը վեր է ամեն կասկածից: Դրան չի հակասում նաև հենց իրենց վկայակոչած լրացուցիչ այն տեղեկությունը, թե նա Չարմիրհի սերունդներից էր, իսկ Չարմիրհը այն միակ Առանշահիկն էր, որին Միհրանյանները չսպանեցին՝ որպես իրենց փեսայի. իսկ սպանվածները և ինքը՝ Չարմիրհը Առանշահիկներ էին: Մինչդեռ Սահլ Սմբատյանի հայ լինելը փաստարկվում է նաև հենց Ադրբեջանում հրատարակած մի շարք վավերագրերի ու վկայությունների շնորհիվ: Այսպես օրինակ, Բունիաթովի գրքի 4-րդ հավելվածում Աբու-լ-ֆարաջից կատարված թարգմանության մեջ կարդում ենք. բայց նրան (այսինքն՝ Բաբեկին) ճանաչեց Սահլ իբն Սմբատ հայ իշխանը և վերցրեց գերի: Հինգերորդ հավելվածում, Մասուդիից, ասված է. նրանք հասան հայ իշխաններից մեկի՝ Սահլ իբն Սմբատի գավառը: Ալ-Մակդիսիից մեջ բերված թարգմանական տողում գրված է. «Սակայն, քրիստոնյա Սահլ իբն Սմբատը, հայ իշխաններից մեկը, ճանաչեց նրան»²:

Այդ ամենից հետո Չ. Բունիաթովը հանդգնում է Սահլ Սմբատյանի հայ և Առանշահիկ լինելը «ժխտելու» փորձ կատարել և նրան ներկայացնել իբրև աղվան և ընդհանրապես ժխտել Առանշահիկների և հետագայի հայ իշխանների հայկական ծագումը: Սահլ Սմբատյանին աղվան համարելով, Չ. Բունիաթովը ձգտում է Սյունիքում նրա ունեցած տիրույթներն էլ ներկայացնել բուն Աղվանքի մաս: Այլ կերպ ասած, Հայոց Սյունիք նահանգը նա բուն Աղվանքի սահմանների մեջ է առնում: Անուղակի ձևով այդ նույն նպատակն են հետապնդում նրա «О местонахождении средневековых городов Базз и Шаки» հոդ-

¹ Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 266:

² Ա.Շ. Մնացականյան, նշված աշխատությունը, էջ 83–84:

վածում շարադրված մտքերը¹: Չ. Բունիաթովը նման հեքիաթներ է հորինում ենթադրելով, որ այն ամենը, ինչ որ աղվանական կհամարվի, կճանաչվի նաև ադրբեջանական, քանի որ բուն Աղվանքից մաս է կազմել և Ադրբեջանական ԽՍՀ-ը և այժմյան Ադրբեջանը:

Ինչ վերաբերում է Բագրատունիների տան պատկանելությանը, ապա իրոք որ կան պատմաբաններ, որոնք Սայլին Բագրատունի են համարում: Հր. Աճառյանը նրա հայր է ճանաչում Սմբատ Բագրատունի Խոստովանողին, հայոց այն սպարապետին, որը կրոնական ջերմեռանդ արիության սքանչելի օրինակ ցույց տվեց Մուլափաքի խալիֆի մոտ²: Հրաժարվելով դավաճանել իր կրոնական համոզմունքին, նա մնաց բանտում: Աճառյանի համար նման ենթադրության հիմք են ծառայել հայոց սպարապետի վեց որդիների անունը՝ Աբաս, Աշոտ, Սմբատ, Շապուհ, Մուշեղ և Սահլ³:

Մ. Չամչյանը նշում է, որ երբ Բաբելը շարժվում է Հայաստանը նվաճելու համար, Արարատ լեռան մոտ Բաբելի և Սմբատ Բագրատունու միջև երկար ու արյունահեղ ճակատամարտ է տևել ունենում, որից հետո Բաբելի կողմնակիցները փախուստի են դիմում: Բաբելին նահանջելու ժամանակ հասնում է Սմբատի որդի Սահլը և գերեվարում նրան:

Վ.Ա. Աբազան գրում է. «Խալիֆները հավատացել են Բագրատունիների տոհմի նվիրվածությանը, հաստատ հավատացել են, երբ Սահլ Բագրատունին Բաբանին (Բաբելին, – Է.Ս.) ուղարկել է Բաղդադ...»⁴: Գրեթե նույնն է ասում Ա.Ն. Գրեներ. «Երբ 835 թվականին ուն Բաբել մտածում է իր հայրենիքը արաբներից ազատելու մասին և ուժեղ ապստամբություն է կազմակերպում, հայերը օգնում են խալիֆի զորավար Աֆշինին... և ոճրագործին հանձնում նրա ձեռքը: Այդ վարմունքով, որը դարձ-

¹ Տես «Краткие Сообщения Института Народов Азии», 1961г. С. 89–93.

² Տես Հր. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հատոր Դ, էջ 374:

³ Տես նույն տեղը, էջ 545:

⁴ В.А. Абаза, «История Армении». С. 60.

յալ կատարվում է Բագրատիտականներից մեկի միջոցով՝ Սահլի կողմից, այդ տոհմը ձեռք է բերում արաբների համակրանքը»¹:

Հր. Աճառյանի վերը նշված ենթադրությունը հերքելու փորձեր են կատարում Ա. Ալպոյաճյանը, Հ. Բյուրտյանը և ուրիշներ: Ա. Ալպոյաճյանը գրում է. «Ումանք առանց ապացույցի կը նույնացնեն իր հայրը Սմբատ սպարապետին հետ և զայն Բագրատունի կհամարեն, սակայն կասկածելի է»²: Ինչ խոսք, որ Սահլ Սմբատյանը Սմբատ Բագրատունու զավակը լիներ չէր կարող, քանի որ առաջինը պատմության մեջ 820 թվականին արդեն աչքի էր ընկնում իր քաջագործություններով, իսկ երկրորդը՝ Սմբատ սպարապետը 855 թվականին քշվում է Բաղդադ, որտեղ և իր կրոնը չուրանալու պատճառով «Նոստովանող» անունն է ստանում: Հայոց սպարապետի հետ արքայ էր քշվել նաև Սահլը, որոնց արյունակցական կապերի մասին պատմիչները ոչինչ չեն ակնարկում: Որ Սմբատը Սահլի հայրանունն էր, երևում է փաստերից: Օրինակ, արաբական աղբյուրները նրան ճանաչում են որպես «Սահլ իբն Սմբատ» կամ Սանբար, Շանբար: Իսկ այդ նշանակում է Սմբատի որդի Սահլ: Միխայիլ Ասորին Սահակ է հիշում. «Բաբենկն անցաւ յերկիրն Հայկազոյն Սահակայ»: Կամ. «Սահակ իշխանն Հայագուն ըմբռնեաց...»³: Իսկ, ինչպես տեսանք, հայ պատմիչները նրան հիշում են որպես և Սահլ Սմբատյան և «Սահլ որդի Սմբատայ»⁴:

Ն. Ադոնցն էլ այս ամենը մի կողմ է թողնում և գրում. «Կաղանկատվացու խոսքը, թե Սահլը Եռանշահիկ է և կամ Զարմիրհական տոհմից էր, արժեք չունի: ...Ոչ Աղվանքի և ոչ Սյունյաց իշխանական տոհմերի մեջ չէ պատահում Սմբատ անունը նախքան նրանց Բագրատունիների հետ խնամիրություն հաստատելը» (Նիկ. Ադոնց, «Պատմական ուսումնասիրություններ», էջ 128): Այնուհետև, ըստ Ադոնցի, Կաղանկատվացի «Եռանշահիկ ասելով հասկանում է հին Հայկազոյան տունը, որ, սակայն, իր իսկ

¹ А.Н. Грен, «Династия Багратидов в Армении». С. 60.

² Արշակ Ալպոյաճեան, «Պատմական Հայաստանի սահմանները», Գահիրէ, 1950թ., էջ 165:

³ Միխայիլ Ասորի, «Ժամանակագրութիւն», Յերուսաղէմ, 1879թ., էջ 365:

⁴ Վարդան Վարդապետ, «Հաւարումն պատմութեան», Վենետիկ, 1862թ., էջ 79:

վկայությամբ, տեղի տվեց Միհրական տոհմին: ...Ի՞նչ եղավ Ջարմիրի սերունդը, հայտնի չէ»¹:

Այնուամենայնիվ Ադոնցը չի կարողանում ժխտել Սահլ Սմբատյանի տեղացի ու հինավուրց Արմիրհական-Առանշահիկ լինելը՝ նրան բնութագրելով «իւր գնախնական ազգս Հայկազ-նեայց»:

Սահլ Սմբատյանին Բագրատունի համարողները հիմք են ընդունում նաև Թ. Արծրունու «Սահլ Սմբատայ որդի, Շաքեոյ տեր»² վկայությունը: Ն. Ադոնցը հենվելով այս վկայության վրա, պնդում է, որ «Սահլի ընտանիքը ներկայացնում է Ատրնետրսնի Կույրի եղբորորդիներին, որոնք նկան Շաքի: Ապա, ուրեմն, գործ ունենք Բագրատունյաց մի ճյուղի հետ, որ հաստատված է Շաքի, որ է արդի Նուխի քաղաքի շրջանը»³: Մ. Բարխուդարյանն էլ գրում է. «Բուն հայկազյան մեծ իշխանական Առանի տոհմից էր այս բնիկ և իշխանական ցեղը, որ բնակվում էր Վերին Խաչենի Ծար գյուղաքաղաքում՝ Սիսական-Ոստանում, և իշխում էին արաբացվոց ժամանակ Վերին-Խաչեն, Վակունիս, Սող և Գեղամա լճի արևելյան գավառներին»⁴:

Վերը մեջ բերված կարծիքն այն մասին, թե Սահլ Սմբատյանը իշխում էր «սկզբում ամբողջ Արցախյան նահանգին» (Մ. Բարխուդարյան), անհիմն չեն: Ինչպես տեսանք, Թ. Արծրունու հաղորդմամբ արաբները Սահլին իրավունք էին վերապահել իշխելու ամբողջ Ադվանքի վրա, իսկ Մ. Կաղանկատվացու նրկի տվյալներով Սահլ Սմբատյանը նաև ամբողջ Սյունիքի ու Գեղամա գավառի տերն էր: Նրանում կարդում ենք. «Սահլը Հայկի տոհմից էր և Սյունիքի տերը. սա բռնությամբ գրավել էր Գեղամա գավառը»⁵: Նա նաև մինչև 830-ական թվականները տիրում էր մի ընդարձակ տարածքը, որի հիմնական մասը կազմում էր Արաքսի ձախ ափը: Արաքսի եզերքի հողերը նույնպես պատկանում էին Սահլին:

¹ Նույն տեղը:

² Թ. Արծրունի, «Պատմություն տանն Արծրունեաց», էջ 310:

³ Նիկ. Ադոնց, «Պատմական ուսումնասիրություններ», էջ 128:

⁴ Մ. Բարխուդարյան, «Պատմություն Ադուանից», հատոր Ա, էջ 135–136:

⁵ Մ. Կաղանկատվացի, նշված նրկը, էջ 266:

Իսկ երբ Ամարասը ասպատակել էին Խուրամյանները (Բաբելի աղանդավորները՝ ինքը Բաբելը), Շիկաքարի բերդում Սահլ-Սահակի տունը (բերդը) պաշարել էին արաբները, և դա նա էր՝ Սահլը, որը առավոտյան դեմ հարձակվում է բերդը պաշարողների վրա, կոտորում նրանց: Այս ամենը հաստատվում են Միխայիլ Ասորու, մասամբ նաև Մ. Կաղանկատվացու երկի վկայություններով: Ասորին հաղորդում է. «Եվ չոգաւ Սահակ և կոտորեցավ զբազումս ի Տաճկաց, և Քուրտանքն պատծալ էին զբերդն Սահակայ, և նա դարձեալ ի կոտորածնն՝ եգիտ պաշարեալ գտուն իր և կոտորեաց զնոսա, և սակաւք ի նոցանէ զերծեալք եկին»¹:

Արաբալեզու պատմիչ Բար Վերբայուսը այդ մասին ավելի մանրամասն է պատմում: Նրա վկայությամբ արաբները, Ամարասն ասպատակելուց հետո, գնում են Շիկաքար բերդի վրա, ուր գտնվում էին Սահլի կինը, ծծկեր երեխան, հոգևորական աներձագը և ուրիշ հարազատներ: Գիշերվա կեսին հոգևորական աներձագը Սահլի նիզակն առած ելնում է ամրոցից, հարձակվում պաշարողների առաջնորդի վրա և սպանում նրան: Սահլն ու նրա քաջ եղբայրները առավոտյան վրա են հասնում, ջարդում արաբներին ու գերյալներին ազատագրում: Այդ տեղի է ունենում ձմռանը²: Այսպիսով, Սահլ Սմբատյանի տիրապետության շրջանակը հանդիսանում էր Սյունիքի արևելյան մասը և Արցախը՝ առանց Դիզակի: Սակայն դրա մեջ մտնում էին նաև Սահլի որդու՝ Ատրներսեհի տիրույթները Խաչենում: Ըստ Մ. Կաղանկատվացու երկի տվյալների, Սահլի որդի Ատրներսեհը «շինում է

¹ Միխայիլ Ասորի, «Ժամանակագրություն», Յերուսաղեմ, 1871թ., էջ 365:

² Տես «Բազմավեպ», 1958թ., էջ 72–74, Վերապատմություն ըստ Ն. Բյուրսյանի մեջբերումների:

Հանդի բերդը¹ և ապարանք է կառուցում Վայկունիք² գյուղում, որտեղ կա արքունական բաղանիք»³:

Ճիշտ է, Սահլը ենթակա էր արաբական խալիֆի ներկայացուցիչներին, սակայն այդ ենթակայությունը մի տեսակ ձևական բնույթ ուներ: Նա խալիֆի ներկայացուցիչներին փաստորեն չէր ենթարկվում: Բալագորու վկայությամբ «պատրիկ Սահլ իբն Սմբատը հարձակվեց Հայաստան եկած խալիֆի կուսակալ Հայդար իբն Բաուս ալ-Աֆշինի վրա, սպանեց նրա քարտուղարին, իսկ իրեն՝ կուսակալին մեծ դժվարությամբ հաջողվեց փրկվել»⁴: Նույնի վկայությամբ, ինչպես վերը նշվեց, երբ Աղվանքում կուսակալ կարգված Մուհամմեդ իբն Սուլեյմանը մտնում է Սահլի մարզը, վերջինս գիշերով հարձակվում է նրա վրա և փախուստի մատնում: Մ. Կաղանկատվացու երկի տվյալներով և Դասխուրանցու հաղորդումներով, երբ 837 թվականին արաբ զորապետներից մեկը քսան հազարանոց բանակով մտնում է Աղվանք, Սահլ Սմբատյանը, նրանց տեսնելուն պես, «իրեն գործակից է վերցնում մեծ նահատակ Գնորգեոսին, վրա է տալիս, ինչպես որ արծիվը խոյանում է տկար թռչունների մեջ, ցաք ու ցրիվ է աճում այս ու այն կողմ, դիտապաստ փռում է դաշտերը և ետ շարտում»⁵:

Սահլը չէր կարողանում տանել ոչ միայն արաբական ոտնձգությունները, այլև բոլոր նրանց, որոնք խալիֆության դեմ պայքարելով հանդերձ, լպիրշ վերաբերմունք էին ցուցաբերում հայ ժողովրդի նկատմամբ: Կրկին նշենք, որ երբ 837 թվականի վերջին Աֆշինից պարտված Բաբելը ապաստան էր որոնում Սյունիքում և Արցախում, նրան ձերբակալում և Բաղդադ է ուղարկում Սահլ Սմբատյանը: Մ. Կաղանկատվացու երկում

¹ Հանդի բերդը կամ Հանդաբերդը գտնվում է Արցախի Ծար (Վերին Խաչեն) գավառում (այժմյան ԼՂՀ Շահումյանի համայնք՝ Բնլբաջար), տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 291:

² Վայկունիք գյուղը (բնագրում Վայրունիք) գտնվում է նույն Ծար (Վերին Խաչեն) գավառում և հայտնի է եղել իր հանրային ջրերով: Տես նույն տեղը, էջ 291:

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 266:

⁴ Բալագորի, էջ 21:

⁵ «Արարատ», 1897թ., էջ 162, տես նաև Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 259:

կարդում ենք. «Հայոց երկու հարյուր ութսունվեց թվականին (837 թվականին, – Է.Ս.) տասներկու հազար հեծյալներ, հանկարծա-
հաս լինելով Բաղդադից, արշավում են Աղվանք: Այդտեղ հոգ է
տանում Սահլի Սմբատյանը, որ գարմիրհական արքաների տոհ-
մից էր. նա իրեն գործակից է վերցնում մեծ նահատակ Գեորգիո-
սին, վրա է տալիս... Նույն տարին (837 թվականին, – Է.Ս.)...
ձերբակալում է ապստամբ Բաբանին, որը մարդախողտող, աշ-
խարհավեր, արյունարբու գազան էր, և հանձնում է ամիրմուն-
նիի ձեռքը: Իր վաստակների դիմաց արքունիքից մեծ վարձատ-
րություն է ստանում: Իրավունք է ստանում Հայաստանի, Վրաս-
տանի ու Աղվանքի վրա՝ բոլորին տիրելու արքայական իշխա-
նությամբ»¹:

Այս մասը կարելի էր սրանով էլ ավարտել, եթե բոլորը բա-
ժանելին այն ճշմարիտ կարծիքը, որ բախտախնդիր իշխանները
Բաբեկին օգտագործում էին որպես դահիճ, հայասպան: Ապս-
տամբած բոլոր գավառներում ապստամբությունները ճնշել
ցանկացողները դիմում էին միայն այդ դահճի օգնությանը: Ահա
թե ինչու Բաբեկի նախկին դաշնակիցները հայ քաղաքական
ընտրանու ներկայացուցիչները՝ զայրացած նրա գործողություն-
ների վրա, ապստամբում են նրա դեմ և նույնիսկ ձերբակալում
ու հանձնում արքունիքին: Բոլոր գավառներում ժողովրդական
ապստամբությունները դահիճ Բաբեկի օգնությամբ ճնշելու
վկայություններ են հետևյալ փաստերը. 821 թվականին Հայաս-
տանն ասպատակում է «աշխարհավեր արաբ Սևադան, որը
հայտնի էր Ավառանշան անունով. սա ավարի ենթարկեց ամ-
բողջ Աղվանքը, գնաց Սյունիք և ամրացավ Շաղատ ավանի Բեր-
դատեղում, որը Ծղիկք գավառում է: Սյունյաց իշխան Վասակը
Բաբանին բերեց Պարսկաստանից, կոտորեց նրանց և փախստա-
կան դարձրեց: Նույն տարին էլ վախճանվեց Սյունիքի իշխանը, և
նույն ժամանակ Բաբանը ամուսնացավ Սյունիքի իշխան Վա-
սակի դստեր հետ»²:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 258–259, ևս. Դադյան, «Մովսես Կաղանկատվացու Աղունիաց պատմության երկաթագիր (Ա խումբ) օրինակից մի պակաս հատուած», «Արարատ», 1897թ., էջ 162:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 255:

Նկատի ունենալով, որ Սևադան աշխարհավեր գազան էր, իսկ Բաբելը (Բաբանը) հրավիրվել էր նրան հաղթելու և երկրից դուրս շարտելու նպատակով, որը և կատարվում է, առանձին հեղինակներ այն սխալ եզրակացության են եկել, թե իբր նա դրական կերպար է՝ ժողովրդի շահերի պաշտպան: Սակայն բանը նրանում է, որ Բաբելը աշխարհավեր գազանների դեմ պայքարում և նրանց հաղթելու դեպքում ինքն էր շարունակում նրանց գազանություններն ու վայրագությունները: Հենց այդպես էլ եղավ Սևադային հաղթելուց հետո: Այլապես արաբ Սևադային ու նրա համախոհներին կոտորելուց ու փախստական դարձնելուց հետո «երկար ժամանակ Բադաց¹ գավառը» ինչո՞ւ չենթարկվեց Բաբելին կամ ինչո՞ւ էր մատենագիրը նրան անվանում «անօրեն Բաբան»: Այդպես է անվանում, որովհետև նա եկավ «Պարսկաստանից, գրավեց ու ավերեց երկիրը, սրածեց Բադաց գավառի կանանց ու մանուկներին: Այդտեղից Բաբանը հաշորդ տարին անցավ Գեդարքունի գավառը ու բնակիչներից մոտ տասնհինգ հազար հոգու սրի քաշեց և այրեց մաքենացիների մեծ մայրաքաղաքը. բացի ջրաղացից ոչ մի բան չմնաց. այս ժամանակ հայոց երկու հարյուր յոթանասունվեց թվականն էր (827 թվականը)»²:

Նկատենք, որ Բաբելը առաջին անգամ Պարսկաստանից Սյունիք է եկել 821 թվականին, իսկ երկրորդ անգամ՝ 826 թվականին: Առաջինն ապացուցվում է նրանով, որ Սուլեյմանը Թահիրին փոխարինելու է գալիս 821 թվականին՝ երբ լրացավ հայոց երկու հարյուր յոթանասուն թիվը: Նույն տարում էր, որ նա «արաբ ընտիր մարդկանց հետ» Պարտավից գաղտնի դուրս եկավ և ավարի ենթարկեց Ամարասի գավառը և ամրացավ Մեծիրանքի սահմանում գտնվող Ծիկաքարում: Այնուհետև, 821 թվականին էր, երբ Հայաստան ասպատակած աշխարհավեր արաբ Սևադային հաղթելու համար Սյունյաց իշխան Վասակը Բաբանին բերել է տալիս Պարսկաստանից: Այդ ժամանակ էր, որ Սևադան ամուսնանում է Բագրատունյաց տոհմի մի օրիորդի

¹ Բադաց կամ Բադք գավառը Սյունիքի 9-րդ գավառն է՝ 925 քառակուսի կմ տարածությամբ (տես Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 290):

² Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 255–256:

հետ, որի անունը Արուսյակ էր և սկսում նվաճողական պատերազմները:

Ինչ վերաբերում է Բաբելի երկրորդ այցը 826 թվականին վերագրելուն, ապա մենք նման եզրակացության համար հիմք ենք ընդունում այն, որ Գեղարքունի գավառում նրա կատարած կոտորածը, մաքենացիների մեծ մայրաքաղաքի ավերումը տեղի է ունեցել հայոց երկու հարյուր յոթանասունվեց, այսինքն 827 թվականին, իսկ նա այդ ամենը կատարել է Բաղաց գավառը գրավելուց և երկիրն ավերելուց մեկ տարի հետո («սրածեց Բաղաց գավառի կանանց ու մանուկներին: Այդտեղից Բաբանը *հաջորդ տարին* անցավ Գեղարքունի գավառը...»), ապա կնշանակի նա Պարսկաստանից երկրորդ անգամ Սյունիք է գնում 826 թվականին: Այդ փաստի համար հիմք է ծառայում նաև այն, որ Աշոտ Մսակերը մահացել է նույն թվականին: Այդ ժամանակ է, որ նրան փոխարինած Սմբատ սպարապետը (որդին) դաշնակցում է Հոլ ոստիկանի կամ խալիֆի հետ, իսկ Սևադան Սյունիքում նոր ասպատակություններ է սկսում: «Հայոց երկու հարյուր յոթանասունվեց թվականից երկու տարի հետո (829 թվականին, – Ը.Ս.) Բաբանը սպանեց Տավուսինին¹ և հալածական դարձրեց մոտ հարյուր հիսուն հազար մարդ: Սյուս տարին (830 թվականին, – Ը.Ս.) Բաբանը սպանեց Ղեթի որդի Աբրահամին: Նույն տարին սիրո և խաղաղության դավաճանները, որոնց անուններն էին Դավոն և Շապուհ, սպանեցին Աբլասաղ կոչված Ստեփանոսին, որը բերեց Բաբանին և կոտորեց բաղակացիներին, որոնք նիզակներով ու սրերով կոտորեցին Բերձոր գավառն² ու Ուշիքի³ ավան-

¹ Տաուսին Ալ-Մամունի զորավարներից էր՝ Մուհամմեդ իբն Նյումայիտ Ալ-Տուսին, որի դեմ Բաբելը 829–830 թվականներին պատերազմում, հաղթում ու սպանում է (տես «Բազմավեպ», 1958թ., էջ 18):

² Բերձորը կամ Բերդաձորը Արցախի երրորդ գավառն է, որ բռնում էր այժմյան Լաչինի համայնքի տարածությունը, ինչպես նաև Շուշիի շրջանի արևմտյան մասը, ուր այժմ էլ գտնվում է Բերդաձորը (տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 290):

³ Ուշիքը գյուղ է, որ Ստ. Օրբելյանը տեղադրում է վայոց ձորի գավառում (տես «Պատմություն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910թ., էջ 513): Մ. Կաղանկատվացին Հակարին, Կառնակաշը (Գառնակաշ), Տափատը համարում է Ուշիքի ավաններ, իսկ Մ. Բարխուդարյանը Հակարին և Գառնակաշը տեղադրում է Բերձոր

ները՝ Կառնակաշը, Հակարին և Տափատը: Եվ Բաբանից ապստամբվածները նահանջելով դիմադրական պատերազմով ամրացան Գորոզ¹ բերդում և տասներկու տարի տիրեցին Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պազկանք, Մյանք և Տրի գավառներին: Դրանից հետո Աբլասադի սպանողներին նրա մերձավորները բռնեցին ու չարաչար կերպով սպանեցին: Հիսայի անվանված Աբու Մուսնն՝ Աբլասադի քնորդին, որ մի խաղաղասեր մարդ էր, գրավեց հիշյալ գավառները ու իշխեց բոլորի վրա: Նույն տարին (830 թվականին, – Է.Ս.) Բաբանը Պարսկաստանից եկավ (սա արդեն Բաբելի երրորդ այցն էր Սյունիք և Արցախ, – Է.Ս.), անցավ Արաքս գետից այս կողմ և բնակվեց Ամարաս գավառում. սկսեց խաղաղության բանակցություններ վարել, որպեսզի հնազանդվեին իրեն. ումանք ժամանակավոր զոջումով հնազանդվեցին և հետո դավելով անհնազանդ դարձան: Այդտեղից Բաբանը վերադարձավ իր երկիրը՝ Պարսկաստանի Ատրպատական, իր տեղը թողեց ինչ որ Ռոստոմ անունով մի գորավար գորքի հետ միասին և նրան պատվիրեց չպատերազմել բերդի դեմ, այլ սիրով գրավել, որպեսզի հնազանդվեն: Իսկ Ռոստոմը անտեսեց Բաբանի պատվերը, դուրս եկավ պատերազմելու բերդում ամրացվածների դեմ: Այն ժամանակ բերդեցիները... ծանր հարվածներով ջարդեցին պարսկական զորքը»²:

Նկատենք, որ վերը մատնանշված Վերին Վայկունիք, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պազկանք, Մյանք և Տրի վայրերը Արցախի գավառներն էին, որոնցից առաջինը Արցախի երկրորդ գավառն էր, որը կոչվում էր նաև Ծար, Ծարա երկիր: Այն հայտնի էր իր հանքային ջրերով, որոնք կոչվում էին Բաղանիք արքունականք: Իսկ Սիսականը նույն Ծղուկն է՝ ներկայիս Սիսիանը, երրորդը՝ Հաբանդ-Ամարասը, Դիզակն է, չորրորդը՝ Պազկանքը

(Բերդաձոր) գավառում: Սա նշանակում է, որ Բերձորը նույնպես ունեցել է Ուշիք անունով գավառակ (տես նույն տեղը):

¹ Գորոզի ամրոցը գտնվում էր այժմյան Տումի գյուղի տեղում (տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 291): Այն հայտնի է արաբական տիրապետության ժամանակներից և եղել է Դիզակի մեծ իշխանների նստավայրը:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 256:

(Վարանդան), իսկ հինգերորդը՝ Մխանց գավառը, Արցախի յոթերորդ գավառն է՝ Կարկառ գետից հարավ¹:

Մյուս է ենթադրությունն այն մասին, թե իբր Բաբելը չէր ցանկանում արյունահեղություններ սարքել Աղվանքում և մտածում էր իր թիկունքը ամրապնդել խաղաղ կերպով, որի համար էլ իր գորավարին խորհուրդ էր տվել բռնության չդիմել ամարասցիների նկատմամբ: Բաբելը խաղաղության մասին խոսում էր հարկադրաբար, զգալով, որ Արցախի հայ ժողովուրդը ասելով ատում է իրեն և որին զենքի ուժով վերացնել հնարավոր չէ: Արցախցիները համախմբվել էին իրենց առաջնորդներ Սահլ Սմբատյանի և Եսայի Աբու-Մուսնի շուրջը և նրանց ղեկավարությամբ պայքարում էին հայասպան Բաբելի ու նրա համախոհների դեմ: Այդ ժամանակ Բաբելը Աղվանքում հանձին իր նախկին դաշնակիցներ Սահլ իբն Սմբաթի և Եսայի Աբու-Մուսնի, կորցրել էր իր հենարանը:

Ճիշտ է նկատում ակադեմիկոս Ս. Երեմյանը, որ Բաբելի պարտության գործում մեծ դեր է խաղացել Սյունիքի և Արցախի գյուղացիության դժգոհությունը, որոնք պարտավոր էին Բաբելին ապահովել մթերքներով և առաջին հերթին հացահատիկով: «Երբ գյուղացիների մոտ պաշարները վերջանում են, Բաբելը սկսում է մթերումներ կատարել բռնությամբ»²: Ահա թե ինչու գյուղացիությունը ապստամբում է Բաբելի դեմ և ջախջախում նրա բանակը Ամարասում:

Արաբական զորքը ծանր պարտություն է կրում ոչ միայն Արցախում, այլև Կոստանդնուպոլսի մոտ: «Հայոց երկու հարյուր ութսուն թվականին էր (831 թվականին, – Է.Ս.), երբ արաբ Մամունը կամեցավ արշավել Բյուզանդիա: Նա հարյուր նավ է պատրաստում և նավերը լցնում է մոտ հարյուր հազար ուժեղ մարդիկ ու դուրս բերելով ծով՝ կամենում է պաշարել Կոստանդնուպոլիս մեծ քաղաքը: Այդ ժամանակ իմաց է տրվում բյուզանդացիներին, որոնք իսկույն դուրս են գալիս ծովի մի այլ կողմով ցամաքից շրջապատելով պաշարում են Բրիստոսի խաչի թշնամիներին և կործանիչ հարվածով իսպառ ոչնչացնում են նրանց:

¹ Տես նույն տեղը, էջ 291:

² Ս.Ս. Երեմյան, «Հայ ժողովրդի պայքարը Արաբական խալիֆայության դեմ», էջ 499:

Հենց իրեն՝ Մամունին, սպանելով՝ մեջտեղից վերացնում են: Նույն հաղթությամբ առաջ ընթանալով ծովում՝ նավերի մեջ գտնված բազմությունը սրի ու ջրի ճարակ են դարձնում այնպես, որ նրանցից ոչ մի մարդ չի մնում: Այս... ծանր հարված եղավ արաբների համար»¹:

Այդ հարվածի շնորհիվ է, որ արաբները դրա նախորդ տարում Արցախում կրած պարտության համար վրեժ լուծելու փորձ չեն կատարում: Կոստանդնուպոլսի մոտ կրած ծանր պարտությունից երեք տարի հետո միայն (834 թվականին) «մի ոմն Բադալի ամիրա արաբների ամիրումնի կոչված իշխանի հրամանով եկավ հասավ Նախճավան քաղաքը. այստեղ նրա կողմից Հոհան անունով մի պատանի է բռնվում և, դեպի Բրիստոս ունեցած հավատի պատճառով ծանր տանջանքներ կրելով, նահատակվում է սուրբ քառասունքին, սուրբ պասի օրվա մոտերքը»²:

837 թվականին բյուզանդական Թեոփիլոս կայսրը (829–842 թ.թ.) ստիպված էր մի նոր արշավանք սկսել արաբների դեմ, որի պատճառը Բաբելկն էր: Բանը նրանում էր, որ արաբական խալիֆ Մուհամմեդ էլ-Մոթասիմը (833–842 թ.թ.) խուրամյանների դեմ մի մեծ բանակ է ուղարկում՝ Աֆշինի հրամանատարությամբ: Բաբելկը դեսպան է ուղարկում Թեոփիլոսի մոտ և օգնություն խնդրում: Վերջինս կատարում է Բաբելկի խնդրանքը և մի մեծ բանակի գլուխ անցած արշավում դեպի Սիրիա, ապա՝ Հայաստանի վրայով շարժվում դեպի արևելք: Սակայն Բաբելկի դեկավարած հակախալիֆական ապստամբությունը օգուտ չտացավ Թեոփիլոս կայսրի այս հաղթական առաջխաղացումներից: Բաբելկը Աֆշինից պարտվում և ապաստան է որոնում Սյունիքում ու Արցախում:

Այդպիսով, միանգամայն անհիմն են Բաբելկին արդարացնելու աղբբեջանցի պատմաբանների ջանքերը: Վերջիններիս նաև թվացել է, թե Բաբելկը հայ դաշնակիցներ չունի և իբրև այդպիսիք եղել են միայն ալբանական իշխանները՝ Սյունիք, Արցախ, Շաքի, Բայլական և այլ մարզերի տերերը: Սակայն այդ մարզերի տերերը հայեր էին՝ Սահլ Սմբատյանը, Եսայի Աբու-Մուսեն, Վասակ Սյունի և ուրիշներ: Հայտնի է, որ Բաբելկի վոհ-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 257:

² Նույն տեղը, էջ 258:

մակները հասել էին հայ պատրիկներից մեկի՝ Սահլ իբն Սունբաթի մարզը: Իսկ Աբու Խանիֆա Դինավարի հաղորդումից հայտնի է, որ Բաբելը Երասխն անցավ և փախավ Հայաստան:

Լնոն գրում է. «Բաբանը, Աֆշինից հաղթված, իր ամրությունները կորցրած, ապաստան էր որոնում, և ավելի լավը չէր կարող գտնել, քան Հայաստանի այն ամուր լեռնաստանում – Սյունիք և Արցախ, – ուր նա ուներ ազգակցական կապեր, ծանոթություններ և, գուցե, նույնիսկ գաղափարական կողմնակիցներ»¹:

Եթե Սահլ Սմբատյանը դժգոհ էր Բաբելից, ապա ոչ թե նրա համար, որ նրանք դաշնակիցներ չեն եղել կամ Սահլը կաշառվել էր Աֆշինից, այլև այն պատճառով, որ Բաբելը զագանաբար կոտորում էր Արցախի, Սյունիքի և Ուտիքի հայ բնակչությանը: Ճիշտ է, Յակուբիի հաղորդմամբ Աֆշինը մի միլիոն դրամ էր խոստացել Հայաստանի և Ատրպատականի իշխաններին, եթե նրանք կգտնեն և կբռնեն Բաբանին, իսկ Ատ-Տաբարու հաղորդմամբ էլ Աֆշինը միաժամանակ հրամայել էր հայ իշխաններին, որպեսզի իրենց լեռներում խիստ հսկողություն ունենան ճանապարհների վրա և անցնողներին բռնելով իրենց իմաց տան, սակայն Սահլի կողմից Բաբելին բռնելը սուկ դրանցով չպետք է բացատրել: Ատ-Տաբարիի, Իբն ալ-Իբրիի և Ալ-Մակդիսիի վկայություններով, ի պատասխան Սահլ Սմբատյանի արդարացի բողոքների, Բաբելը բռնում է նրան և «աչքի առաջ էլ կեղտոտ գործ կատարում նրա մոր, քրոջ և կնոջ հետ, որովհետև այդ դեր միշտ էլ այդպես էր վարվում մարդկանց հետ, եթե նրանց գերի էր վերցնում իրենց կանանց հետ»: Եվ ապա. «Երբ Բաբելը իմացել է, որ պատրիկներից որևէ մեկը գեղեցիկ աղջիկ կամ քույր ունի, մարդ է ուղարկել նրա հետևից, պահանջել: Եվ եթե պատրիկն ուղարկել է նրան, ամեն ինչ լավ է վերջացել, իսկ եթե հրաժարվել է, Բաբելը նրա վրա հարձակվել է գիշերը, խլել կնոջը, բռնագրավելով նաև պատրիկի ամբողջ ունեցվածքը և ամեն ինչ ու սրանք բռնությամբ հասցրել է իր կալվածքը»²:

Արաբ մատենագիր Մասուդիի վկայությամբ, Սահլ Սմբատյանը ապաստան է տալիս հետապնդող արաբներից թաքնված Բաբելին, սակայն վերջինս անբարոյական վերաբեր-

¹ Լնո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 423:

² Տես «Հանդես ամսօրյա», 1907թ., էջ 141:

մունք է ցուցաբերում նաև նրա անձի ու ընտանիքի անդամների նկատմամբ: Բաբելը արաբներից փախչելով թաքնվում է Ատրպատականից Հայաստան տանող ճանապարհի վրա գտնվող մի քարանձավում և նրանում մնում այնքան ժամանակ, մինչև սպառվում են կենսամթերքները: Նրա հետ քարանձավում էին գտնվում նաև նրա երկու եղբայրները (Մուսավիան ու Աբդուլլահը), մայրը և մի քանի սպասավորներ: Բաբելի կինը՝ Իբնատ ալ-Կալանդանիան համոզում է նրան Սյունիքով փախչել Բյուզանդիա: Ատ-Տաբարին գրում է. «Բաբելը իր երկու եղբայրների..., իր մոր և իր կանանց մեկի հետ, որի անունն էր Իբնատ ալ-Կալանդանիա, դուրս եկավ ճանապարհը և ուղեվորվեց Հայաստանի կողմերը»:

Այդ ժամանակ նրանց վրա հարձակվում է արաբական մի ջոկատ: Բաբելին, Աբդուլլահին ու ծառաներից մեկին հաջողվում է թաքնվել, իսկ Մուսավիան, կինը և մայրը, մյուս ծառաների հետ միասին, գերվում են: Իսկ երբ ուտելիքը թաքստոցում լրիվ սպառվում է, Բաբելն ու նրա եղբայր Աբդուլլահը ճանապարհը շարունակում են և հասնում Շաքիի մոտերքը՝ Սահլ Սմբատյանի կալվածքը: Վերջինս ճանաչում է նրան և հրավիրում իր տունը: «Իմ ամբողջը քո տունն է, – ասում է Սահլը Բաբելին, – իսկ ես՝ քո ծառան: Այս ձմեռ մնա այստեղ, իսկ հետո կվճռես քո հետագա անելիքը»: Այդպիսով, թմրացնելով Բաբելի զգոնությունը, հարմար պահի Սահլը կանչում է իր դարբնին ու դառնալով Բաբելին, ասում. «Ուտերդ մեկնիր, տիրակալ»: Սահլը կարգադրում է շղթայակապ անել նրան: Բաբելը հարցնում է. «Այդ ի՞նչ է, Սահլ, դավաճանությո՞ւն»: Սահլը պատասխանում է. «Դու, ոչ-խարների ու կովերի հասարակ հովիվ, քո ի՞նչ գործն է պետական կառավարումն ու քաղաքականությամբ զբաղվելը»: Ասում է և կարգադրում նրան շղթայակապ անել՝ իր հետ եղածների հետ միասին ու մարդ ուղարկում Աֆշինի մոտ հայտնելու, որ Բաբելը ձերբակալված է և գտնվում է իր մոտ:

Լսելով այդ լուրը, Աֆշինը Սահլի մոտ է ուղարկում 400 ձիավոր՝ իր օգնական Բումադայի (Բուզբարա) գլխավորությամբ: Սահլը Բաբելին ու նրա հետ ձերբակալվածներին հանձնում է արաբներին, ինքն էլ նրանց հետ ներկայանում Աֆշինին: Վերջինս անչափ ուրախանում է և Սահլին մեծամեծ նվերներ տալիս: Աֆշինը Սահլին պատվո զգեստ ու պսակ է հագցնում,

գորք է անցկացնում նրա առջնվով, զիջում է խարաջը, որից հետո բաց է թողնում:

Այդպիսով, սխալ են Սահլի կողմից Բաբենկին դավադրաբար բռնելու և Աֆշինին հանձնելու վերաբերյալ առանձին հեղինակների կարծիքները: Նա դա արել է քաղաքական դրդապատճառներից ելնելով՝ այն էլ տղամարդավարի: Լեոյի «Երկերի ժողովածու»-ի նրկորոդ հատորում ասված է, թե իբր Բաբենկին իր պալատը հրավիրելուց հետո «Սահլը իմաց է տալիս Աֆշինին, որը և մարդիկ է ուղարկում Բաբանին ձերբակալելու համար»¹: Նման եզրակացության համար Լեոն հիմք է ընդունում ատ-Տաբարու հետևյալ ենթադրությունը. «Սահլը մի օր ասում է Բաբանին. «Տեղս ախորժալի է, իսկ ամրոցի օդը քնգ համար ծանր է, առավոտյան ժամին գնանք որսի: Բաբանը համաձայնություն է տալիս: Որսատեղում դարան մտած էին Աֆշինի մարդիկ, որոնք և ձերբակալեցին նրան: Իսկ Աբդուլլահը, որ ապաստանած էր Իսայ իբն-Յուսուփ իբն Ստեփանոսի մոտ², նույնպես ձերբակալվեց Աֆշինի հրամանով և հանձնվեց արաբներին»³: Վերը մեջ բերվեց Մ. Կաղանկատվացու երկի վկայությունը, ըստ որի «Սահլի Սմբատյանը ձերբակալում է ապստամբ Բաբանին»⁴:

Այդպիսով, Բաբանը ձերբակալվում է Սահլ Սմբատյանի կողմից նրա ամրոցում և ոչ թե դավադրաբար, այն էլ Աֆշինի մարդկանց կողմից որսի ժամանակ: Եթե Բաբենկը այդպես լինելով ձերբակալված, ապա Սահլ իշխանը չէր ստանա Աֆշինի խոստացած միլիոնը⁵: Իսկ Վարդան Բարձրաբերդցին գրում է, որ «Սահլ որդի Սմբատայ ըմբռնե զԲաբան և առնու յԱշնէն պարգևս հազարացն հազար կշիռ արծաթոց և այլսս հարիւր հազար առնու ի նմանէ»⁶:

Այլ-Մասուդին հերքելով ատ-Տաբարու կարծիքը, նշում է, որ Սահլը Բաբենկին ձերբակալել ու շղթայակապ է արել այն բանից

¹ Լեո, նշված ժողովածուն, էջ 424:

² Ենթադրվում է, որ սա այն իշխանն էր, որ հայտնի է Թովմա Արծրունու և Մ. Կաղանկատվացու Պատմություններում «Երիցու որդի Եսայի», բայց ավելի հաճախ՝ Աբու-Մուսն անուններով:

³ Տաբարի, «Հանդես ամսօրյա», 1906թ., էջ 215:

⁴ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 259:

⁵ Տե՛ս Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 424:

⁶ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 424:

հետո, երբ ճաշի ժամանակ Բաբելը զարմանում է Սահլի կողմից իր հետ մեկ սեղանի շուրջ նստելու վրա: Նույնը հաստատում են Ադ-Դինավարին (էջ 400), Յակուբին (2, 578), իբն Իբրին (էջ 241–242): Նրանք ևս կարծում են, որ Բաբանին գնրի է վերցրել Սահլը: Արաբ հեղինակների ասածը հաստատում է Մ. Դալխուրանցին (էջ 450–460): Իսկ Վարդան Պատմիչը նույնպես հաստատում է, որ «ապստամբ Բաբանին բռնում է Սահլը» (էջ 101): Ուստի սխալվում են Մ. Սիրիեցն ու իբն Իբրին նաև ենթադրելով, որ Բաբանին բռնել է Իսա իբն-Ստեփանոսը (Եսայի Աբու-Մուսեն): Սխալվում է նաև «Սիասետ նամե»-ի հեղինակը՝ կարծելով թե Բաբելը բռնվել է Աֆշինի կողմից (էջ 227):

Մեկ անգամ ևս ընդգծում ենք, որ Սահլ Սմբատյանը Բաբանին Աֆշինի խոստացած միլիոնի համար չէ, որ ձերբակալում է: Բաբելյանների հայաստան գործողությունների ու հայաստաց վարքի մասին խոսվեց վերը: Այստեղ ավելացնենք Իսֆարահի վկայություններն այդ մասին. «Երկու սեռի Բաբելյանները տարվա մի գիշերը երաժշտությամբ ու գինով հավաքվում են սարը՝ ամեն տեսակ պիղծ գործեր կատարելու համար: Ապա հանգցնում են լապտերներն ու կրակը և նրանցից ամեն մեկը գնում է այն կնոջ մոտ, որն իրեն բաժին էր ընկել վիճակահանությամբ»: Խորամանկ հավատի մասին Ալ-Ջաուզին գրում է. «Նրա էությունն է մարդու հակումը դեպի որևէ բավականություն կամ հեշտասիրություն, ինչպես նաև արհամարհանքը հասարակության մեջ մարդու վարքի ամեն տեսակ նորմաների դեմ...»¹: Իբն ալ-Ասիրն էլ գրում է. «Նրանց տղամարդիկ ապրում են իրենց մայրերի, քույրերի ու աղջիկների հետ՝ որպես կանանց հետ՝ դրա համար էլ նրանց համարում են խորամանկներ»²:

Ահա թե հասարակական ինչպիսի բարոյականություն էին տարածում Բաբելն ու նրա համախոհները: Հասկանալի է, որ հայ ժողովուրդը նմանների հետ հաշտվել ու հարմարվել չէր կարող և այդպես էլ վարվեց: Բաբելը հայերի ձեռքով ձերբակալվեց, ուղարկվեց Բաղդադ, որտեղ և տանջալից մահվան ենթարկվեց: Աֆշինը լալիֆ Մութասիմին հայտնում է Բաբելի և նրա եղբոր գերվելու մասին: Խալիֆը հրամայում է նրանց ուղարկել լալի-

¹ Տես ալ-Մասուդի, Մուրուջ, 7, 125–126:

² Նույն տեղը, էջ 232:

Ֆուրջան մայրաքաղաք: 838 թվականի հունվարի 4-ին նրանք տարվում են Սամարա: Խալիֆի մոտ տեղի ունեցած կարճ հարցաքննումից հետո Բաբելը, խալիֆի կարգադրությամբ, քառատվում է, գլուխն ուղարկվում Խորասան (բնակչությանը սարսափեցնելու նպատակով), իսկ իրանը՝ խաչվում Սամարայում:

Այդպիսով, իններորդ դարի 30-ական թվականներին ոչ միայն Արցախը, այլև ամբողջ «Հայաստանը Բաբելյան արյունոտ շահատակությունների թատերաբեմ էր դարձել»¹: Ուստի սխալ է հակաարաբական պայքարի քողի տակ Բաբելի գլխավորած շարժումը առաջադիմական, իսկ Բաբելին՝ հայ ժողովրդի բարեկամ դիտելն ու ներկայացնելը: Ճիշտ է, Բաբելի ապստամբությանը մասնակցում են Հայոց Աղվանքի, հատկապես Արցախի և Սյունյաց աշխարհի հայ գյուղացիների ու քաղաքական վերնախավի ներկայացուցիչներ, որոնք ապստամբության հաղթական վերելքի պահերին դրդված իրենց իրավունքների վերականգնման ակնկալություններով՝ օգնում և աջակցում էին Բաբելին: Սակայն երբ նրանց համար պարզ դարձավ բաբելյան հակահայկական շարժման ընկերային էությունը, արցալսցիներն ու սյունեցիները սկսեցին աստիճանաբար հեռանալ, և ի վերջո, շարժման վայրեջքի ընթացքում կարողացան բռնել բացահայտ թշնամական դիրք Բաբելի նկատմամբ: Դրա փայլուն վկայությունները վերը շարադրվածներն են, հատկապես մեծ արցալսցի Սահլի կողմից Բաբանին բռնելն ու մահվան ուղարկելը: Միանգամայն ճիշտ է նկատում Լեոն, նշելով, որ ասպատակություններ կատարելով «Բաբանը, իհարկե, նկատի ուներ իր գործի օգուտը»²: Եվ ապա. «Հայաստանը բաբելյան արյունոտ շահատակությունների թատերաբեմ էր դարձել»³: Անշուշտ Լեոն Հայաստան ասելով նկատի ուներ նաև նրա Հայոց Արևելից կողմանց հայկական նահանգներ Արցախն ու Սյունիքը:

Բաբելին ձերբակալելու համար արքունիքից ստացած պարզևներով ու պաշտոններով Սահլը ամենևին չի կաշառվում, արաբների դեմ մղվող պայքարը չի դադարում: Յակուբի վկայությամբ հակաարաբական ապստամբություն է տեղի ունենում

¹ Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 420:

² Լեոն, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 420:

³ Նույն տեղը:

838 թվականին: Նրա վկայությամբ այն ժամանակ, երբ Հայաստանի նոր կառավարիչ կարգված Մուհամմեդ իբն Սուլեյման ալ-Ազդիին տեղ հասավ, Սահլը արդեն Առանում ապստամբել և միահեծան տեր էր դարձել: Եվ պատահական չէր, որ հետագայում Բուղայի կողմից ձերբակալված հայ իշխանների մեջ էր նաև «Սահլ որդի Սմբատայ», ինչպես նաև նրա որդի, Խաչենի տեր Ատրնեքսեհը: Մ. Կադանկատվացու երկում կարդում ենք. «Ատրնեքսեհին այլ իշխանների հետ տարան Պարսկաստան. այնտեղ նա մնաց շատ տարիներ...»:

Նկատենք, որ մինչև օրս վիճելի է մնում Սահլ Սմբատյանի արու գավակների մասին հարցը: Իշխող կարծիքն այն է, որ նա ունեցել է նաև Մուավիա անունով որդի, որի մասին մատենագիրներից միայն Ատ-Տաբարին է տեղեկություն հաղորդում: Նրա հաղորդմամբ Սահլն ունեցել է Մուավիա անունով տղա, որը ձերբակալված Բաբեկին տարել է Աֆշինի մոտ և նրանից ստացել 100.000 դիրհեմ: Սակայն մատենագիր-պատմագիրը չի վկայում, այլ հաղորդում է իր լսածը, որը առանձին ուսումնասիրողների անհավանական է թվում: Իսկ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» գրքի 181-րդ էջի 245-րդ ծանոթագրությունում էլ նշվում է. «Սահլը հետագայում Բուղայի կողմից արքայացի Սամարա՝ իր Մուավիա որդու հետ: Այս վերջինը հաջորդեց նրան որպես իշխան»: Ինչպես տեսնում ենք, այս ձևակերպման մեջ էլ հակասություն է նկատվում: Ինչպե՞ս է նա հաջորդում հորը, երբ նրա հետ միասին արքայվում է Սամարա: Այս հարցը կարոտ է լուրջ ուսումնասիրության:

Սահլ Սմբատյանին ձերբակալելու առումով Լեոն նշում է, որ երբ Բուղան Թիֆլիսից գնում է Պարտավ, ապա սկսում է հաշիվ տեսնել Աղվանից քաղաքական ընտրանու հետ: «Լեոնային մասի (Արցախ և Ուտի) հայ իշխաններին մեկը մյուսի հետևից ձերբակալել տվեց և բանտարկեց իր բանակում: ...Խաչեն բերդի տերը, մեզ ծանոթ Ատրնեքսեհ իշխանը, իր ազգակիցների հետ նույն վիճակին ենթարկվեց: Ձերբակալվեց և նրա հայրը, Սահլ իշխանը, Բաբանին բռնողը...»: Այդ տեղի է ունենում 855 թվականին: Սահլին Սամարա տանելուց հետո աղբյուրները նրա մասին ոչինչ չեն հաղորդում:

Տեղն ենք համարում նաև նշել, որ Նիկ. Ադոնցը փորձում է Համամ-Հովհաննեսին նույնացնել Սահլ Սմբատյանի որդի ան-

վանված Մուավիայի հետ: Դրա համար նա վկայակոչում է Մեծիրանց սուրբ Հակոբ վանքի¹ մի արձանագրություն՝ ընդօրինակված Խաչիկ վարդապետի կողմից, որն ասում է. «ՅԲ թուականութե(ա)ն Հայո(ց) ի ժամանակ Հովանիսի Աղուան(ից) իշխանի...»²: Եվ ապա.

«ՅԲ թուականութ...
են Հայոքի ժամանակ...
Յովանիսի Աղվան...
Իշխան ևս Սողոմ...
Մեծ արանց եպիսի...
կանգնեցի զ...»:

Պատմաբան-հնագետ Ա. Բարխուդարյանը այն վերծանում է այսպես. «ՅԲ թուականությանս հայոց ի ժամանակս Յովանիսի Աղուանից իշխանի, ևս Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս կանգնեցի զսուրբ խաչս»³: ՅԲ 302-ն է կամ 853–854 թվականը: «Այս ժամանակ Աղուանից իշխանն էր Մուավիան: Թվում է, որ Հովհաննես Մուավիայի հայ անունն է, ուրեմն Սահլի որդին»: Ն. Ադոնցը ուրիշ աղբյուրներով ևս փորձում է հաստատել, որ այդ ժամանակները և Հովհաննեսն է Աղվանից իշխանն եղել և Մուավիան՝ Տերանց տեր, կամ իշխան: Ապա արաբական մատենագիրների կողմից հաճախ անվանարկվող անծանոթ անունների աղավաղումներից ենթադրում է, որ նրանց մոտ «Համամը» աղավաղվելով դարձել է Մուավիա:

Սակայն դրանք անհիմն ու անհավանական ենթադրություններ են, իսկ դեռ 838 թվականից Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի տեր Հովհաննեսի կյանքն ու գործունեությունը կարոտ է մանրագնահին ուսումնասիրության: Այս Հովհաննես իշխանը նույնպես Առանշահիկների տոհմից էր: Մ. Կաղանկատվացու երկում նրա մասին կարդում ենք. «Հայոց 287 (838 թվականին, – Է.Ս.) իշխանանց իշխան Հովհաննեսը, որ տեր դարձավ Հայաստանին, Վրաստանին ու Աղվանքին, արքունիքից կրկին անգամ

¹ «Սուրբ Հակոբ» վանքը կառուցվել է VII դարում (տես «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթ, 5 մարտի 1972թ., № 55):

² «Արարատ» 1897թ., էջ 163:

³ Ա.Շ. Մնացականյան, նշված աշխատությունը, էջ 77:

խնդրեց երեք երկրները՝ Բուլղարը, Խոյտան, Փատգոսը»¹: Դա այն ժամանակ էր, երբ «խազիքի կողմից մորեններ եկան, որ զարմանալի կերպով ավելի մեծ էին, քան ճնճողուկը, և Աղվանքի մի մասի բուսականությունը ոչնչացրին»²:

Աղբյուրների հաղորդումների համաձայն մեծ դիրք է ունեցել նաև Առանշահիկ Վարազ-Պերոժը, որի նկատմամբ, սակայն, այն սխալ կարծիքն է տարածվել, թե նա նորոգել է Գիսի հին եկեղեցին: Նրա մասին Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Այլև՝ երկար ժամանակ անցնելուց հետո Վարազ-Պերոժ անունով Առանշահիկ տոհմից մի ազնվական իշխան կամեցավ նորոգել հին եկեղեցին, բայց չէր կարողանում գմբեթի աղյուսաշար գազաթը քանդել...»³:

Հնտաքրքիր կերպար էր նաև հայ էլիտայի մեկ այլ ներկայացուցիչ՝ Եսայի Աբու-Մուսնն: Նա ժամանակակիցն էր՝ Դիզակի Առանշահիկ քաջ ու անվախ իշխանների, մասնավորապես՝ Սահլ Սմբատյանի: Նրա մասին մասնակի ակնարկների կարելի է հանդիպել Մ. Կաղանկատվացու⁴, Հովհաննես Դրասխանակերտցու⁵ և Ստեփանոս Ասողիկի⁶ մոտ: Բավականին մանրամասն տեղեկություններ հաղորդվում են նաև Թովմա Արծրունու կողմից: Իսկ Լեոն գրում է. «Նրա հայրը... քահանա էր, մի բան,

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 259 (Բուլղարը հավանորոնն Պարխարն է կամ Բուլղարը, որ ընկնում է Ճորոխի երկարությամբ: Տես АДОНИ, «Армения». С. 62. Ըստ երևոյթին սրա հետ է կապվում պատգոսական բառը, որ նշանակում է սահմանամերձ երկրի կուսակալ, իսկ Փատգոսը հավանորոնն Հայաստանի արևմտյան ծայրերկրամասերից մեկի անունն է: Ըստ Ադոնցի՝ Պատգոս փնիլեվի գրականության մեջ ծայրերկիր է նշանակում (պրովինցիա), տես Ադոնց, նշված տեղը, էջ 215: Խոյտան անհայտ է մնում: Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 291, ծանոթագրություն 280):

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 259:

³ Նույն տեղը, էջ 71:

⁴ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 256, 259:

⁵ Տես Հովհաննես Դրասխանակերտցի, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1912թ., էջ 127:

⁶ Տես Ստեփանոս Ասողիկ, «Պատմություն տիեզերական», ՍՊԲ, 1885թ., էջ 107:

որ, իհարկեմ, չէր արգելում, որ նա լինի տիրապետող ազնվական տոհմից»:

Արաբական աղբյուրները այդ նրեցի (Եսայու հոր) անունը Հովսեփ են անվանում, իսկ Եսայու որդուն՝ Մուսն կամ Մովսես: Այդ է պատճառը, որ «Աբու-Մուսն» արաբական ձևն է, որ նշանակում է Մուսնի կամ Մովսեսի հայր: Արաբական աղբյուրները նրան հիշում են նաև «Իսա իբն-Յուսուֆ Աբու-Մուսն» անունով: Իբն-Յուսուֆ նշանակում է Հովսեփի որդի: Եսայի Աբու-Մուսնն պատմության մեջ հայտնի է նաև «Երիցու որդի» անունով¹:

Նկատենք, որ Մոկացու կողմից ակնարկվում է «Վաչագան Գորոզուաց իշխանը», որը հանդիսանում էր Եսայի-Աբու-Մուսնի թոռը կամ Մովսես իշխանի որդին: Վաչագանը նույնպես դառնում է Դիզակի տերը և նստում էր Գտիչ-Գորոզում, որի պատճառով և կոչվում էր «Վաչագան Գորոզուաց»:

Մակար Եպիսկոպոսի «Աբու-Մուսն... Դիզակի Մովսես իշխանի հայրն էր և Գագիկ թագավորի պապն»² արտահայտությունից էլ հասկացվում է, որ Մովսես իշխանը ունեցել է նաև Գագիկ անունով գավակ:

Մինչդեռ Մակար Եպիսկոպոսը սխալվում է: Այդ Գագիկը ոչ թե Աբու-Մուսնի թոռն էր, այլ որդին, որը նրևում է Տուսի գյուղի հարավային կողմում՝ «Տանմոտի» բարձրության վրա գտնվող եկեղեցու լուսամտոտի գլխավերևի քարին, որն այժմ գտնվում է ԼՂՀ երկրագիտական թանգարանում, ուր կա հետևյալ փորագրությունը.

«Ի ՆԽԹ թվ և ի

թագավորութիանս,

տնառն Գագիկայ (Ադուանից) որդոյ

Աուսնի ես Ոսկի դուստր Մուսէի շինեցի տուն աստուծոյ ի փրկությունի հոգու իմո և ծնողաց իմոյ»³:

Միևնույն անունների մի ճյուղը (Փայտակարան-Բայլականի տերերը) խնամիրությամբ կապվել են Դիզակ-Վարանդայի իշխանության տան հետ: Բայլականի իշխան Աբլասադը Դիզակի տեր

¹ Տես Թ: Արծրունի, նշված աշխատությունը, էջ 289:

² Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանց, «Պատմություն Ադուանից», Ա հատոր, 1902թ., էջ 157:

³ «Սովետական Ղարաբաղ», 27 հուլիսի 1969թ., № 175:

Եսայի Աբու-Մուսնի քննիչն էր: Իսկ որո՞նք էին Աբու-Մուսնի տիրույթների սահմանները: Այդ մասին աշխարհագրական տեղեկություններ շատ չեն մնացել: Հնագիտական մի քանի տվյալներ հիմք են ծառայում հավանական համարելու, որ Աբու-Մուսնի բնակավայրը եղել է այժմյան Հադրութի համայնքի Տուվի գյուղը՝ Դիզափայտ լեռան հյուսիսային ստորոտներում, նախկին Շուշիի գավառի հարավային ծայրին (տես Մ. Բարխուդարյան, «Արցախ», Բաքու, 1895թ., էջ 421): Լեռն բազմակողմանիորեն ուսումնասիրելով Եսայի Աբու-Մուսնի տիրույթների վերաբերյալ եղած աշխարհագրական տեղեկությունները, գրում է. «Մնում էր Հարավային Արցախը, լեռնային մի աշխարհ, որ ամփոփում էր իր մեջ այժմյան Դիզակ և Վարանդա գավառների մի մասը Քիրս և Դիզափայտ լեռների շրջանում: Այդտեղ իշխում էր Եսային... Այս Եսայի Աբու-Մուսնի կալվածքները, ինչպես երևում է, շատ ընդարձակ էին, քանի որ նա, բացի իր տոհմային կարողությունից, իր քննի Աբլասադից ժառանգություն էր ստացել և Միհրանյան տոհմի կալվածքներից շատերը: Այս հանգամանքի շնորհիվ էր, անշուշտ, որ Աբու-Մուսնն, մյուս լեռնային իշխանների համեմատությամբ, ռազմական խոշոր ուժի տեր էր»¹:

Մ. Կադանկատվացու երկում Աբու-Մուսնն ներկայացվում է որպես «այր խաղաղության» և միաժամանակ նշվում է նրա այն քաջագործությունների մասին, որոնք նա կատարել է իրեն պարտադրված պատերազմներում: Մ. Կադանկատվացու երկում Եսայի Աբու-Մուսնի անվանը հանդիպում ենք 840 թվականին վերաբերող դեպքերը նկարագրելիս: Այդ ժամանակ «սարսափելի ծանր ձմեռ եղավ, տանջալից կոտորած բերեց բազմաթիվ անասունների ու հովիվների: Այդ օրերում եկան բաղկանացիներ² և մեծ վնաս հասցրին Սիսվան, Տրի ու Ամարաս գավառներին: Եսայի կոչված Աբու-Մուսնն դուրս եկավ նրանց դեմ ու կոտորեց»³: Իսկ դրանից երկու տարի անց (842 թվականին) «եկավ խազր Փատգոսը, որը մի մոլեգին ու անողորմ մարդ էր, բայց նույն տարին մեռավ, իսկ նրա որդին եկավ ու գրավեց Ադ-

¹ Լեռ, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 446:

² Պետք է լինեի բաղասականցիներ, այսինքն Բաղասական երկրից եկածներ:

³ Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 259:

վանքը սրով ու գերությանբ և բազմաթիվ եկեղեցիներ այրեց ու գնաց Բաղդադ: Ապա այնտեղից արքունի հրամանով վերադարձավ և փողով Արշակաշեն գավառում 295 թվականին (846 թվական, – Է.Ս.) կառուցեց Գանձակ քաղաքը: Սրանից հետո արշավում է Սյունիք, գրավում է Բաղաց սահմանները գալիս իջնում է Աղահեջ¹ գավառը, Արքուգետ կոչված մի ավան և իսկույն հրամայում է այրել եկեղեցին, որ անվանադրված էր սուրբ Գրիգորի անունով: Այդ ժամանակ... ճերմակ ձիով մի հեծյալ դուրս է գալիս եկեղեցուց բլուրի աչքի առջև և ընթանում է դեպի բանակը: Այդ անօրեն մարդուն շփոթության մեջ է գցում բանակով հանդերձ և փախուստի է մատնում դեպի Եղջյուր Լսոյի կոչվող սարը. այստեղ մի դաժան փոթորիկ մրրկելով շրջապատում է նրանց, և միայն ձիերին ապավինած՝ փախչում ազատվում են. իսկ բեռնավորվածներն ու ավարը լեռների վրա անհայտացան, և գերվածները... հանգիստ մնացին»:

Նկատենք, որ թե խազր Փատգոսը և թե Աղվանքը նվաճող ու Սյունիքն ավերող նրա որդին մուտք չեն գործում Արցախ: Մեր խորին համոզմամբ դա բացատրվում է Արցախի Առանշահիկ իշխաններ Եսայի Աբու-Մուսնից ու Սահլ Սմբատյանից ունեցած սարսափով: Նույն պատճառով ընդհուպ մինչև 855 թվականը, Արցախի իշխաններից ոչ մեկին ձերբակալված չենք տեսնում թշնամու կողմից: Մ. Կաղանկատվացու երկում նշվում է, որ «հայոց թվականության երեք հարյուր տարելիցին (851 թվական, – Է.Ս.) հայոց և աղվանից հավատացյալ իշխանների մեղքերի տուգանքները լրացան. այս տարում նրանք բռնվեցին արաբների ձեռքով և կապված շղթայված տարագրվեցին իրենց տներից, բռնի կերպով գնացին Բաղդադ»²: Անվանարկվող անունների մեջ Արցախյան որևէ իշխանի, քաղաքական էլիտայի այլ ներկայացուցչի անուն չի նկատվում: Հայաստանի մյուս իշխանների նման Արցախի իշխանները 850 թվականին հարկն ուղարկեցին, բայց արաբ ոստիկանին թույլ չտվեցին մտնելու իրենց գավառնե-

¹ Աղահեջը Սյունիքի 6-րդ գավառն է, որ բռնում էր այժմյան Լաչինի համայնքի տեղը: Հետագայում (ինչպես նաև հիմա) կոչվում էր նաև Քաշաթաղ կամ Խոժոռաբերդ (տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 291, ծանոթագրություն 281):

² Նույն տեղը, էջ 260:

րը: Արտաքին թշնամիները Արցախի ղեկավարության համար այլևս լուրջ վտանգ չէին ներկայացնում:

Եսայի Աբու-Մուսնի սխրագործությունները ի հայտ են գալիս հատկապես Բուդայի արշավանքների ժամանակ: 852 թվականին «Հայաստան եկավ Բուդան»¹: Չար ու ֆանատիկոս Աբբասյան, թուրք զորքերի գլխավոր հրամանատար Բուդա Շարաբին Հայաստան է ուղարկվում (Մութավաքիլի կողմից)՝ հայերին սուկալի եղանակով պատժելու հանձնարարականով: Դրա պատճառը Սասունում և այլ տեղերում արաբների կրած խայտառակ պարտություններն էին: Սակայն Բուդային տրված հանձնարարությունը միայն Հայաստանի հարավային նահանգներին ու շրջաններին չէր վերաբերում, այլ ընդհանրապես ամբողջ արաբական Այսրկովկասին, ընդ որում Հայոց Աղվանքին ու Արցախին: 852 թվականի գարնանը Հայկական Բարձրավանդակի հարավային սահմանների վրա հանդես է գալիս թուրք-արաբական միացյալ բանակը և սկսում մահ սփռել հայոց աշխարհում: 853 թվականի գարնանը Բուդան հարձակում սկսեց Հայաստանի հյուսիսային ուղղությամբ՝ առաջին հարվածն ուղղելով Սյունիքի վրա: Սյունյաց իշխանները մեկնեցին Բաղաց բերդը, իսկ Վասակ իշխանը սկզբում գնաց Դվինի կողմերը, ապա Ուտիքի Գարդման գավառը և ապաստան գտավ Կտրիճ իշխանի մոտ, որը դավաճանում է Վասակին, բռնում նրան և ուղարկում Բուդային:

Այնուհետև արաբական բանակը արշավում է Թիֆլիսի ու Ծանարների երկրի վրա: Վերջիններիս դեմ մղված կռիվներում պարտություն կրելով, Բուդան շուտ եկավ դեպի Արցախի կողմերը: Արաբական աղբյուրները հաղորդում են, որ Բուդան մտնում է Շամքոր քաղաքը՝ «Մուտասիմի մավլան» և իբր թե այն փրկում եղած ավիրումներից, վերաշինում: «Երբ կառավարիչ կարգվեց (Բուդան, – Է.Ս.) Արմենիայի, Շիմշաթի և Ադրբեյջանի վրա հիջրի 240 թվականին (2 հունիսի 854 – 21 մայիսի 855): Նա վերաշինեց քաղաքը և Ալ-Մուտավաքիլիա անվանվեց»²: Նույն գրքի 249-րդ ծանոթագրությունում նշվում է, որ խազարական արշա-

¹ Նույն տեղը, էջ 261:

² «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965թ., էջ 85:

վանքների ժամանակ քանդված Շամբոր քաղաքը Բուղան վերաշինում է 854 թվականին և այն բնակեցնում պահակագործով¹: Իսկ Պարտավ հասնելուն պես նա ձեռնամուխ եղավ Արցախի և Ուտիքի իշխանների ձերբակալմանը: Դեռևս Թիֆլիսում եղած ժամանակ, Բուղան մի զորաբաժին էր ուղարկել Ուտիքի Գարդման գավառը: Վասակ իշխանին մատնած Գարդմանի կտրիճ իշխանը անմիջապես պաշարվել էր իր բերդում, ապա՝ անձնատուր եղել: Իր ազգակիցների հետ նույն բախտին էր արժանացել նաև Խաչենի բերդի տեր Ատրներսեհ իշխանը: Այնուհետև ձերբակալվում են Ատրներսեհի հայր, Բաբեկին ձերբակալած Սահլ Սմբատյանը, Ուտիքի Ստեփանոս Կոն իշխանը, որի ամրոցը գտնվում էր Տուս գյուղում: Այդպիսով, Նյուսիսային Արցախը հպատակվում է Բուղային²:

Ի՞նչ տեղի ունեցավ Հարավային Արցախում, որը, ինչպես նշվեց, ամփոփված էր ապագա Դիզակ ու Վարանդա գավառների մի մասում՝ Քիրս և Դիզափայտ լեռների շրջանում և որտեղ իշխում էր «Երիցի որդի» անվանված Եսային՝ Եսայի Աբու-Մուսեն: Հենված Արցախի դժվարամատչելի լեռնաստանին և իր զինվորության ուժի վրա, անվախ ու խիզախ արցախցու տիպար Աբու-Մուսեն վճռում է դիմադրել Բուղայի ոհմակին: Թովմա Արծրունին չի սխալվում Աբու-Մուսեին համարելով «Արծրունի հերոսներից բարձր հերոս»: Դիմելով Արցախի հերոս պաշտպաններին, Աբու-Մուսեն ասում է. «Միթե՞ ծանարներից խեղճ ենք մենք, որ տեղի տանք բռնավորին, կամ միթե՞ մեր լեռները պակաս ամուր են ծանարների լեռներից, իսկ մեր կիրճերը պակաս հեշտություն են ներկայացնում թշնամուն նրանց մեջ փակելու համար»:

Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո, Աբու-Մուսե իշխանն իր զորքերն ու ժողովուրդը հավաքեց Գթիչ անունով բերդը³: Թովմա Արծրունու վկայությամբ Բուղան

¹ Տես նույն տեղը, էջ 182:

² Տես նույն տեղը, էջ 446:

³ Գթիչ բերդը կառուցված է մի բարձր սարի գագաթին: Ենթադրվում է, որ այն Շուշիի գավառի Տոդ գյուղի սարն է: Նման ենթադրության համար հիմք է ծառայում այդ սարի վրա կանգուն մնացած վանքը, որը տեղացիներն անվանում են Թեշ կամ Թեշա վանք: Դա նույն Գթիչ կամ Գթիչ անունն է: Այն անվանվում է նաև «Գտավանք կամ Գտչավանք:

Աբու-Մուսնին հրամայում է «գալ և հնազանդվի»: Աբու-Մուսնն Բուդային պատասխանում է նամակով, որը մեջ ենք բերում առանց կրճատումների: Ահա այն. «Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ ընդ աշխարհ իբրև առ հնազանդս, և զգնդութիւնս տառապելոց բառնալ և ի դիւր հանել իբրև զխնամարկուս, և ոչ աւագակաբարո աւ երել, և սրով և գերութեամբ յաւեր դարձուցանել: Եւ դու թէ ոստիկան խաղաղութեան էիր եկեալ յարքունուստ՝ զշինութիւն պարգևաբաշխէիր սոցա, և ոչ զաւերս և զխռովութիւն: Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և իցեմ կենդանի՝ կացից ընդդեմ զօրութեամբ և ուժով տեսոն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան, այլ տեսից զքեզ զհնու և աղնկամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զօրս քո՝ արի ել աստի և գնա ի սահմանաց իմոց: Ապա թէ փութաս ելանել ի կենաց աստի առ զայրուցս կատաղութեան քո և զոսկերս գրուես յանապատս և լինել կերակուր զագանաց երկրի և թռչնոց երկնից՝ կամք քո լիցին, և ես քաւեալ իմ յարեմէ քումմէ, մանաւանդ զի բարեպաշտութիւն մեծ համարիմ սատակել զթշնամիսդ Աստուծոյ, որպէս Մովսէս զԱմադէկ, և Յեսու զՔանտնացիսն, և Սամուէլ զԱգագ և Դաւիթ զԳողիաթ¹ և համանգամայն իսկ որպէս սաստակեցին Իսրայէլացիքն զայլայգգիսն, և հաճեցաւ ընդ նոսա Աստուած. նոյնպէս արարից ընդ քեզ և ընդ զօրս քո: Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատախտութիւն ընդ քեզ. ի ձեռս քո է խաղաղութիւն և խռովութիւն: Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիւ և ճակատա-

Գտնվել է Արցախի հռչակավոր Թթիշ ամրոցի մոտ, այժմյան Տոդ գյուղի թիկունքում» (տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 289, ծանոթագրություն 248): Մի արձանագրության մեջ այն անվանվում է նաև Կտիչ: Ներկայումս ընդունված է Գթիչ անունը: Գթիչ վանքը կառուցվել է 1241 թվականին: Այդպիսով, վանքն իր անունը ստանում է բերդից (տես Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, էջ 447: «Գտիչ կամ Գնտչայ վանք-Դիզակ գ. մեջ Թաղլար գյուղի հանդեպ, Ղուրու-չայ գետակի աջ կողմին վանք, հիմնված 1241թ.» (Տ. Առաքելյան, «Հանրագիտարան-բառարան», Թիֆլիս, տպարան «Էպոխա», 1915թ., էջ 415):

¹ Այդ անունները բերված են Աստվածաշնչից: Բուդայի մոտ հայեր շատ կային: Նրա մոտ էր գտնվում նաև կրոնասեր Սմբատ սպարապետը:

մարտ: Եւ դու նպատակ՝ և աղեղն իմ խոցոտիչ, դու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, դու ոսոյս՝ և զօրք իմ դատապարտիչք. քո պատերազմ՝ և մեր յաղթութիւն, քո մարմին՝ և իմ նիզակ, քո պարանոց՝ և իմ սուտեր. քո ստացուածք և մեր ժառանգորդք, քո ատար՝ և մեր ատարառութ. դու աւագակ՝ և մեր կողոպտիչք, դու եղեգն՝ և մեր հուր դիւրածախ, դու յարդ՝ և մեր հողմեր դրութիւն, դու ծաղիկ՝ և մեր խորշակ թառամեցուցիչք, դու անդ պաղալից՝ և մեր կարկուտ ապականարար, դու զեշ՝ զօրքն իմ պատառիչ գագան, որ պատառեն գառագաստ սրտի քո. դու խաղալիկ՝ և մեր մանկունք, ի ձեռն առնալ զգօրութիւն քո՝ խաղալով խաղամք ընդ քեզ և ամենայն հպարտութիւն ամբարհատութեան քո. դու երէ վայրի՝ և մեր որսորդ, դու թռչուն՝ և մեր ի բարձանց ի վայր իջուցանմք և վարմ ձգեալ. դու վիշապ ծովական՝ և մեր կարդ ի քիսս քո ի վեր ձգելով զքեզ ի խորոց անդնդոց. և դու իբրև գեղջերու առանց եղջեր՝ և մեր արծուիք ի վերոյ քո, կուրացուցիչք աչաց քոց և գէշ զքեզ արկանել ձագաց քնոց և աղուեսուց ի ծակս բնակեցելոյ: Եւ ահա դարձեալ ասեմ, չկայ ինչ քո, և զի մի կրիցնս գոր ինչ խօսեցայ ընդ պատգամաւորս քո, և աւելի քան որոգել ջանար ընդ մեզ՝ զգոյն ընդունեցիս վտանգաւորս»¹:

Գոռոզ Բուդան արհամարհում է Արցախի անվախ ու հայրենասեր ղեկավարի նամակը և պաշարում Գթիչ բերդը: Սակայն լեռնային անմատչելի բերդի շուրջը ընդացող կռիվները շուտով համոզեցին Բուդային, որ Աբու-Մուսնն ունի կանոնավոր զինված բանակ և հայրենիքի համար գոհվելու պատրաստակամութիւն: Բուդան իր զորքի մի մասը կենտրոնացնում է բերդի հյուսիսային կողմում, մյուս մասը՝ արևելյան: Արաբները բերդի դեմ պատնեշներ են կանգնեցնում, քարակոյտեր շինում, բարձր պարիսպներով շրջապատված ապարանքներ տնդադրում և պաշարողական դրոյթուն ստեղծում: Պաշարումը տևում է մեկ տարի, որի ընթացքում կատաղած Բուդան 28 անգամ հարձակվում է Գթիչի վրա: Սակայն նրա բոլոր գրոհներն էլ ետ են մղվում: «Հենրոս արցախցիները, տաղանդավոր զորավար Եսայի իշխանի գլխավորությամբ Գթիչ բերդը դարձրին մի հզոր ամրոց»²:

¹ Թովմա Արծրունի, «Պատմություն վասպուրականի», էջ 178–179, Լեռ, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 447–448:

² Ստ. Մելիք-Բախշյան, Պրակ 3, էջ 99, Լեռ, նշված ժողովածուն, էջ 448:

Բուդան հարկազրկված էր զեկուցելու խալիֆ Մութավաքիլին՝ Գթիչը գրավելու դժվարությունների մասին: «Մի խոշոր անհաջողություն Բուդային այնքան մեծ տրտմություն պատճառեց, որ նա փակվեց իր վրանում տասն օր, ոչ որի չէր ընդունում»¹:

Սպարապետ Սմբատը մտնում է Բուդայի վրանը և նորից արհուրթյան ոգի ներշնչում հուսահատված ու ահը սիրտն ընկած օտար հրամանատարին: Մութավաքիլ խալիֆն էլ Բուդայից պահանջում է չհուսահատվել, չնկճվել հոգեպես, չդադարեցնել կռիվը մինչև որ բոլորը չհպատակվեն: Քաջալերվելով և ոգևորվելով խալիֆի ու Սմբատի ցուցումներով, Բուդան նորից գործադրեց բոլոր հնարավորությունները բերդը գրավելու համար: Սկսվեց նրա ձեռնարկած վերջին և գլխավոր հարձակումը, որին մասնակցում էր Արցախում գտնվող արաբական զորքերի ողջ ընտրանին: Նկատենք, որ Թովմա Արծրունու հաղորդմամբ այդ ժամանակ Արցախում արաբական զորքերի թիվը հասնում էր 200 հազար հոգու²: Բուդան «ամբողջ բանակին հրամայում է մեծամարտի մեջ մտնել: Եվ ահա աղմուկ ու աղաղակ է բարձրանում. մեծաթիվ զորքի փողերը, դափերը, տավիղները, զենքերը, սրերը և ամբողջ ռազմական հանդերձանքը այնպիսի աղմուկ են առաջացնում, որից լեռները կարծես թե պիտի փլվեին: Բուդան իր զորքը հանել էր մինչև լեռների բարձունքները, որոնց հետ կային բազմաթիվ դրոշակներ, ամեն մի դրոշի ներքո հազար հեծյալ կար, այնպես որ... ոչ մի պետությունում հնարավոր չէր հանդիպել նման սարսափելի տեսարանի: ...Նրանցից սուսկալի թնդյուն էր բարձրանում... և մեծ սարսափ առաջանում»³:

Այն ժամանակ, երբ թշնամին փողահարությամբ և թմբուկներով հասել էր պաշտպանվող սարի գագաթին, Աբու-Մուսնի չորս թևի բաժանված բանակի մեծ մասը դեռ անշարժ էր: Երբ արաբները ընդհուպ մոտեցան բերդին, արցախցիները ներկվեցին և հարձակվեցին ռոտի վրա: Սկսվեց ահավոր ճակատամարտը: Բերդի պաշտպանները քաջաբար դիմադրում էին, ծանր կորուստներ պատճառում թշնամուն: Բուդայի ձեռնարկած գլխավոր հարձակումը (նրա ողջ ռոտիսը արդեն շարժման մեջ էր)

¹ Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 448:

² Տես Թովմա Արծրունի, նշված տեղը, էջ 148:

³ Նույն տեղը, էջ 147–148:

նույնպես ձախողվեց: Բերդը զենքով նվաճելու հույսը կտրած Բուդան բանակցելու դիմեց: Քաջ Աբու-Մուսնն կրկնեց մեկ տարի առաջ գրած իր նամակի մտքերը, այն է, որ զենք բարձրացնելով արաբների դեմ, ինքը ինքնապաշտպանության դեր է կատարել և երբեք չի մտածել ապստամբել արաբական տիրապետության դեմ: Վերջապես Աբու-Մուսն իշխանը և Բուդան համաձայնության եկան առանձին-առանձին պատգամավորներ ուղարկել խալիֆի մոտ՝ բացատրություն տալու համար: Պատերազմական գործողությունները դադարեցվեցին: Երկու կողմերն էլ սպասում էին խալիֆի հրամանին: Աբու-Մուսնն չէր ըմբռնել, սակայն, որ պատասխան էր սպասում «բարոյական այլանդակություն Մութավաքիլից»: Խաբված հայ զորավարը ծուղակն ընկավ: Մութավաքիլը կարգադրում է, որպեսզի Աբու-Մուսն իշխանը ներում ստանա, ապստամբ չճանաչվի, բայց ներկայանա Բուդային: Պայմանի համաձայն Բուդան հայ քաջին վնաս չպետք է պատճառեր: Խաբված Աբու-Մուսնն «իջավ իր արծվի բույնից, արձակեց իր քաջ զորքերը, զնաց արաբական բանակը, ուր ընդունվեց զինվորական պատիվներով: Բայց ոչ մի հանդիսավորություն, ոչ մի շուք չէր կարող, իհարկե, փոխել իրերի իսկական դրությունը – այն, որ Բթիչի հերոսը գերի էր, թեև պատվավոր գերի, Բուդայի մոտ»¹:

Աբու-Մուսնին գերելուց հետո, Բուդան Գթիչից իջավ Պարտավ, լեռների իշխաններին մեկ գիշերվա մեջ շղթայակապ արեց, բարձեց ուղտերին և ուղարկեց խալիֆին: Իշխանների հետ միասին խալիֆի մոտ էին ուղարկվում Մամիկոնյան Թուրդիկ իշխանի որդի Գրիգորը, իշխան Ներսեհը, Մյունյաց իշխաններ Գրիգորն ու Փիլիպեն, հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին՝ Բուդայի, ցավոք, հավատարիմ խորհրդականը: Կապկավածների խմբից առանձին, ձևականորեն ոչ իբր գերի, արաբական պահակի ուղեկցությամբ, Բաղդադ ուղարկվեց նաև Աբու-Մուսնն²: Դա, իբր, պատիվ էր համարվում՝ նրա քաջագործությունների համար: Բացի այդ, Աբու-Մուսնն ստացել էր սուր, թանկագին հանդերձանքներ, նժույզներ, առանձին վրան և այլն:

¹ Տես Թովմա Արծրունի, նշված աշխատությունը, էջ 183:

² Նույն տեղը, էջ 184–185:

Նա Բաղդադում անմիջապես ձևակերպվեց որպես բանտարկյալ և բանտում պահվում էր իբրև պատերազմական գերի:

Այդպիսով, Եսայի Աբու-Մուսնն իր գլխավորած պայքարով «ամենախոշոր մխիթարական երևույթն էր կազմում Հայոց աշխարհի այդ ժամանակվա արյունոտ նահատակների մեջ»¹:

Չնայած արցախցիները Եսայի Աբու-Մուսնի ու Սահլ Սմբատյանի ժամանակ չկարողացան ամբողջովին թողափել արաբական լուծը, բայց դրանով մեծ հարված հասցրին խալիֆությանը, նպաստեցին վերջինիս հիմքերի խարխալմանը և հետագայում Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանում ինքնուրույն թագավորության ստեղծմանը: Չնայած Եսայի Աբու-Մուսնն խաբվեց և անձնատուր եղավ, բայց փաստորեն արաբական զորքերը Արցախում լիովին ջախջախվեցին: Արցախի լեռներում կրած խայտառակ պարտությունից հետո արաբների բարոյական միակ փրկությունը Հայաստանից հեռանալն էր: Սա կարծես յուրովի՝ Արցախյան Ավարայրն էր:

Շարադրվածքից կրկին նկատում ենք, որ Առանշահիկների տոհմը իր գոյությունը պահպանել է նաև հաջորդ դարերում և Աղվանքի տնօրինությունը կրկին իր ձեռքը վերցրել: Միևրանյանների կողմից նվաճված Գարդմանի իշխանությունը, իններորդ դարի կեսերին կրկին գտնվում էր հայ քաղաքական ընտրանու ձեռքերում: Բուղայի արշավանքի ժամանակ Գարդմանի տերը հայազգի իշխան Կտրիճն էր: Հովհաննես Դրասխանակերտցին Բուղայի մասին գրում է. «Գնայր յԱրևելս յաշխարհն Գարդմանաց առ իշխան աշխարհին, որ Կտրիճն անուանիւր»: Կամ «...Գնայ ի գաւառն Գարդմանայ... ըմբնէ անտի և զիշխանն Գարդմանայ զԿտրիճն...»²:

Այդպիսով, սխալ է ակադեմիկոս Ա.Ե. Կոբնսկու կարծիքն առ այն, թե՛ արևելյան Անդրկովկասում հնագույն ժամանակներից մինչև արաբական տիրապետության անկման օրերը հանդես եկած բոլոր թագավորների ու իշխանների միջև ոչ մի տարբե-

¹ Լևո, «Երկերի ժողովածու», հատոր 2, 1967թ., էջ 446:

² Հովհաննես Դրասխանակերտցի, «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1912թ., էջ 126–127:

րություն չի եղել՝ ոչ ազգային, և ոչ էլ վարչական պատկանելության առումով¹:

Անհիմն են նաև «Ադրբեջանի պատմություն» գրքի տողերն այն մասին, թե «Արցախը Ալբանիայի կարևոր մարզերից մեկն էր, որը ընդգրկում էր Լեռնային Ղարաբաղի մի մասը և Միլի տափաստանը»²: Այստեղ միանգամից երկու կոպիտ սխալ է թույլ տրվել: Նախ՝ այն, որ Արցախն իր մեջ ընդգրկել է ոչ թե միայն ԼՂԽՄ-ն, այլև այսօրվա ԼՂՀ-ն իր ազատագրված հայկական տարածքներով և ավելին: Եվ երկրորդ, որ I–IX դարերում ևս Արցախը հայկական նահանգ է եղել: X դարի արաբ հեղինակ իբն Վադիի ալ-Իսպահանին, «որը երկար ժամանակ մնացել է Արմենիայում, նշում է, որ իշխանությունների քանակով և տարածությամբ Արմենիայից ընդարձակ և կամ ավելի բարգավաճ երկիր չկա: Նա ասում է, թե իշխանությունների թիվն է 118... (իմա՝ քաղաքական ընտրանու թիվը, – Է.Ս.) և պարունակում է 18 հազար գյուղ»³: Նույնի վկայությամբ Առանը առաջին երկիրն էր Արմենիայում և ուներ 4000 գյուղ⁴:

Արաբական աղբյուրների այս հաղորդումները ավանդական և նախնադարյան Արմենիային չեն վերաբերում: XII–XIII դարի արաբ հեղինակ Յակուտ ալ-Համավու «Քիթաբ մուջամ ալ-բուլգան»-ի («Աշխարհագրական բառագրքի») տեղեկություններով «Արմենիան մի ընդարձակ երկրամասի անուն է, որը տարածվում է դեպի հյուսիս: ...Ասված է թե կա Մեծ և Փոքր Արմենիաներ. մի կողմից Պարտավից մինչև Բաբ ալ-Աբվաբ և մյուս կողմից մինչև Ռումի երկիրը և Կաբկի (Կովկասյան լեռներ, – Է.Ս.) լեռներն ու Սարիրի տիրոջ երկիրը:

Ասում են ումանք, թե Մեծ Արմենիան բաղկացած է Խլաթից և նրա շրջակայքից: Իսկ Փոքր Արմենիքն՝ Թիֆլիսից ու նրա շրջակայքից:

¹ Տևս А.Е. Крымский, «Страницы из истории Северного или Кавказского Азербайджана» (Классическая Албания), Сборник С.Ф. Ольденбургу. Ленинград, 1934г. С. 290, 294 – 295.

² «Ադրբեջանի պատմություն», լուսերև, 1958թ., էջ 78:

³ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 18:

⁴ Տևս նույն տեղը:

Ասողներ էլ կան, թե գոյություն ունեն նրեք, մինչև չորս Արմենիաներ: Առաջինը կազմում է Բայլականը, Կաբալան (Կապադակ, – Է.Ս.) և Ծիրվանը՝ իրենց ենթակա շրջաններով: Երկրորդը կազմում են՝ Ջուրգանը, Սուդդաբիլը, Բաբ Ֆիրուզ-Կուբազը և ալ-Լաբզը: Երրորդը կազմում են Բասֆուրջանը, Դաբիլը, Սիրաջը, Թայրը, Բադրավանդը և Անաշավան: Չորրորդի մեջ կա Մարգարեի ընկերներից Մաֆվան իբն ալ-Մուաթթալի գերեզմանը: Այդ գերեզմանը Հիսն Ջիադի մեջ է... Չորրորդի մեջ է նաև Ծիմշաթը, Կալիկալան, Արճեշը, Բաջունայիսը»¹:

Ընթերցողին Արմենիայի սահմաններն ավելի պարզ ու հասկանալի ներկայացնելու և մատնանշված Առանն ու Արցախը նրա անբաժան մաս լինելը ավելի հստակ հրամցնելու նպատակով, հարկ ենք համարում նշել, որ արաբ հեղինակները «Արմենիա» աշխարհագրական անունը գործ էին ածում՝ տալով նրան նոր բովանդակություն: Ինչպես տեսանք, նրանք Արմենիայի մեջ մտցնում են նաև Կասպից ծովից, Կուր գետից մինչև Կովկասյան լեռներն ընկած մարզերը: Նկատենք, որ արաբների աշխարհագրական ըմբռնումը Հայաստանի մասին ուներ լոկ վարչական հիմք, որովհետև, ինչպես տեսանք, նրանց Հայաստանի և Արմենիա անվան տակ ճանաչված մյուս ներկրամասերը գտնվում էին մի կառավարչի իշխանության ներքո և կազմում վարչական մի ընդարձակ միավոր:

Ինչ վերաբերում է վերն ակնարկված տեղանուններին ու նրանց սահմաններին, ապա Բասֆուրջանը Վասպուրականն է, Սարաջը և Թայրը՝ Ծիրակն ու Տայքը, Ֆիրուզ-Կուբազը՝ Պերոգապատը և այլն: Ումանց կարծիքով Յակուտիի ակնարկությունը Հայաստանի բաժանումների մասին քաղված են Յակուբիի, Աբուլ-ֆիդայու, Բելագորու, Իբն Խորդադբենի, Հավկալի և Իգրիսի աշխատություններից: Օրինակ, Յակուբին «Քիթաբ ալ Բուդանի» մեջ Հայաստանը բաժանում է նրեք մասի, որոնցից առաջինը պարունակում է Դաբիլ, Կալիկալա, Խլաթ, Ծիմշաթ և Սավադ քաղաքները: Երկրորդ մասը պարունակում էր Պարտավ, Բայլական, Կաբալա, Բաբ ալ-Աբվաբ քաղաքները, իսկ երրորդ մասը՝ Ջուրջան, Թիֆլիս, Մեզջիթ Ջիլկարնայն քաղաքները: Աբու լի-

¹ «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Երևան, 1965թ., էջ 16–17:

Ֆիդային (1273–1333 թ.թ.) նշում է, որ Հայաստանի առաջին մասը պարունակում է Կալիկալա, Խլաթ, Ծիմշաթ քաղաքները և դրանք շրջապատող տարածքները, նրկորդ մասը՝ Ջուրգանը, Թիֆլիսը, Բաբալանը և դրանց շրջակա հողերը, իսկ նրբորդը՝ Պարտավը, Բայլականը և Բաբ ալ-Աբվաբը: Իններորդ դարի հեղինակ Բելագորին կամ Ալ-Բելաժորին Արմենիան բաժանում է չորս մասի, որոնցից առաջինը պարունակում է Սյունիքը, Ադվանքը և Արևելյան Անդրկովկասը՝ մինչև Կասպից ծովը՝ իր մեջ ընդգրկելով Սիսականը, Ծիրվանը, Բայլականը և Պարտավը: Երկրորդ մասը պարունակում է վրաստանն ու Արևմտյան Անդրկովկասը մինչև Սև ծով՝ ներառյալ Կողքիսը և Լազիկան. երրորդ մասը՝ Վասպուրականը, Դվինը, Ծիրակը, Բագրևանդը, ընդ որում նաև Նախիջևանը. չորրորդ մասը՝ Ծիմշաթը, Կալիկալան, Խլաթը, Արճնշը, Բաջունայսը կամ Արևմտյան Հայաստանը: Իբն Խորդադբեն Հայաստանը նույնպես բաժանում է չորս մասի և առաջին մասում ցույց տալիս Թիֆլիսի ու Կասպից ծովի միջև գտնվող նրկրները, երրորդում՝ Արաքսի հովիտն ու Վասպուրականը, իսկ չորրորդում՝ Վանա շրջանը և Եփրատյան գավառները: Նա բացորոշ կերպով Արմենիայի մաս է համարում Դարբանդը. Բալանջարը, Կովկասյան անցքերը, Ծանարքը, Ալանների ու Աբխազների նրկրները և այլն:

Արմենիայի չորս մասի բաժանումը արաբ հեղինակները վերցրել են բյուզանդական վարչական բաժանումից, որը, սակայն, տարբեր հեղինակների մոտ տարբեր բովանդակություն է ստացել: Իբն Հավկալն ու Իդրիսին էլ Արմենիան ներկայացնում են նրկու մասով՝ առաջին մասը իբրև Ներքին Հայաստան՝ Դվին, Նախիջևան և Կարին քաղաքներով, իսկ երկրորդը՝ Արտաքին Հայաստան՝ Բերկրի, Խլաթ, Ոստան և Արճնշ քաղաքներով¹:

Այդպիսով, միանգամայն ճիշտ է նկատում ակադեմիկոս Ս.Տ. Երեմյանը, որ զարգացած միջնադարի ժամանակաշրջանում ևս Կուր գետի աջափնյա տարածությունը, ընդ որում նաև Արցախը, մտնում էր Հայաստանի կազմի մեջ²:

¹ Այդ ամենի մասին տես «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան նրկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1965թ., էջ 132–133:

² Տես «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 1, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1971թ., էջ 40:

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԸՆՏՐԱՆՈՒ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայկական և այլ բազմաթիվ աղբյուրներից օգտվելով մենք եկել ենք այն համոզման, որ Այսրկուրյան Աղվանքի, ընդ որում նաև Արցախի բնակիչները մ.թ.ա. յոթերորդ դարի վերջերին ու VI դարի սկզբներին էթնիկորեն ձևավորվել և մնացել են հայեր: Պատմահայր Մովսես Խորենացու ժամանակ (V դարում) ևս տակավին իշխում էր այն ըմբռնումը, թե Հայոց Աղվանքը և նրա հայ բնակչությունը իր լեզվական, կրոնական, մշակութային ու ցեղակցական կապերով ամբողջովին մի միասնություն էր ներկայացնում հայկական Սյունիքի հետ: Իր էթնիկական կազմով միաձույլ՝ հայկական էր ոչ միայն Արցախը, այլև ամբողջ Հայոց Արևելից կողմանքը: Իսկ եթե հայկական առանձին նահանգներում ապրում էին նաև փոքրաթիվ ոչ հայ բնակիչներ, բնականաբար այդ չի նշանակում թե նրանք էին այս հարցում վճռական դեր խաղացողները: Հինգերորդ դարի մատենագիրների վկայություններով հայկական Այսրկուրյան նահանգներում բնիկները միայն հայեր էին, իսկ Լփնաց, Ճգբաց, Վատաց, Գավաց, Գգուրաց, Խրսանաց, Հեճմատակաց, Փասխաց կամ Փոսխաց, Փյոքվաց, Թավասապարաց և այլ ցեղերի համար մշտական բնակավայր էր համարվում Ալբանիան՝ Անդրկուրյան Աղվանքը: Հինգերորդ դարում այդ ցեղերի թագավորը Լբնիների ցեղի առաջնորդն էր¹: Եվ դա պատահական չէր, քանի որ Եղիշեի ժամանակ ալբանական միության ղեկավար ուժը Լփնիք կամ Լբնիներն էին²: Այդ ցեղը հունահռոմեական աղբյուրներում անվանվում է Լուպենիներ կամ Լոբենիներ և տեղադրվում կովկասյան լեռների փեշերին:

Որ Արցախում և Սյունիքում տիրապետող լեզուն հայերենն էր, վկայում է նաև VII–VIII դարերի հնդիսակ Ստեփանոս Սյունեցին: Նա հայ ընթերցողին ասում էր. «Ե դարձնալ զքո լեզուիդ

¹ Տես Եղիշե, նշված երկը, էջ 79:
² Տես նույն տեղը:

գիտելն զբովանդակ զբառն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայնցին և զԽոթայինն և զՉորրորդ-Հայնցին և զՍպերացին և զՄիւնին և զԱրցախայինն. այլ մի միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլև աւագտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեացի»¹:

Ստեփանոս Սյունեցու վկայություններից դժվար չէ նկատել, որ Արցախի և Սյունիքի լեզուներն իբրև բարբառներ տարբերվում էին թե՛ իրարից և թե՛ մյուս նահանգների լեզուներից: Մ. Կաղանկատվացին բազմաթիվ առիթներով օգտագործում է զուտ հայկական ծագում ունեցող հետևյալ անձնանուններն ու աշխարհագրական անունները. «Շիկաքար», «Չարաբերդ», «Նորայր», «Ջուանշիրիկ», «Մխանգ» տոհմ, «Մխանք» գավառ, «Մեծ կողմանք», «Բերդոյ վանք», «Լաչենոյ բերդ», «Հոռոմիկ», «Դավթակ», «Գագիկ» և այլն²:

Մ. Կաղանկատվացու երկում խոսվում է Արցախի հայկական դպրոցների և հրի ճարակ դարձած հայերեն գրքերի մասին: Հետաքրքիր է նաև այն պարագան, որ Արցախում հայերեն խոսքը հայերեն գրով տարածվելուց ու ամրապնդվելուց զատ, եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցները կրթում էին ոչ միայն ազատների ու ղեկավար ընտրանու, այլև աղքատների երեխաներին: Մ. Կաղանկատվացու վկայությամբ Արցախի Պազկանք գավառի գյուղերից մեկում աշխատավարձով դաս էր տալիս մի աբեղա: Նա գրում է. «Մի այլ աբեղա հյուր եկավ (Արցախի Պազկանք գավառ, – Է.Ս.), ու մենք կարգադրեցինք ճաշ տալ նրան. մինչդեռ նա հաց էր ուտում, իսկ մի մանուկ գինի էր մատուցում բաժակով, գյուղում աղմուկ-աղաղակ բարձրացավ: Մենք բոլորս նրան մենակ թողեցինք ու գնացինք դեպի աղմուկը: Մեր գնալուց հետո հյուրը վեր է կենում, բաժակն առնում ու զնում է: Բաժակը տանում վաճառում է, արժեքն էլ առած դպրոց է մտնում ու վարձով սովորում»³:

Այդպիսով, ըստ այս տեղեկության, մինչև աբեղայի հայտնվելն էլ գյուղում հայկական դպրոց գոյություն ուներ, ուր

¹ Ի . Ասի օ, «Աեի օեե օժաեեեեե օ օժի օի օեե օի օեի օաժաե», Ի օժժի օժա, 1915ա. Ո. 187.

² Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, Թիֆլիս, 1912թ., էջ 409–441:

³ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, Երևան, 1969թ., էջ 55:

վարձով աշակերտներ էին կրթում: Այդտեղ հայկական դպրոցներ էին բացվել դեռևս 415 թվականին՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից: Մ. Կաղանկատվացու հաղորդումն այն մասին, որ Ամարասի մոտակա գյուղերից մեկում հայտնվում է մի աբեղա, մտնում դպրոց և սկսում ռոճիկով դաս տալ, մինչ այդ գյուղում դպրոց լինելու վկայություն է: Բայց ո՞վ էր վճարում գյուղական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը՝ արքունի գանձարանը¹, թե՞ ժողովուրդը, մատենագիրը չի պատասխանում: Մեր կարծիքով այն վճարում էր ժողովուրդը՝ դպրոցականների ծնողները: Ինչ վերաբերում է դպրոցական ցանցին, ապա դրա մասին կարելի է մոտավոր պատկերացում կազմել մատենագրի այն հաղորդումից, որ Վաչագան Բարեպաշտը Արցախ և Ուտիք գավառներում կառուցել էր տարվա օրերի թվով եկեղեցիներ ու վանքեր, ապա դրանք վերածել դպրոցների կամ կրթական օջախների: Աղվեմի ժաղովի կանոնների ԺԶ կետը սահմանում է երեցի ու նրա աշակերտների փոխհարաբերությունները, նրանցից որևէ կողմի թույլ տված օրինազանցության դեպքում՝ պատժի չափերն ու ձևերը: Ոչ միայն Աղվանքի դպրոցներում, այլև եկեղեցիներում ու արքունիքում ևս գործածական լեզուն հայերենն էր: Լեոն գրում է. «Եվ եթե հարց դնենք, թե ի՞նչ տեսակ դպրոցներ էին դրանք և ո՞րն էր նրանց լեզուն, – հազիվ թե կարողանանք որևէ բավարար պատասխան գտնել առանց հայ դպրոցը և հայերեն դասախոսությունը Աղվանքում հաստատված ընդունելու: Այս տեսակ մի վճռի ճշտությունն ապահովում է հենց այդ ժամանակներից մնացած մի վավերագիր, որ հաստատում է, թե հայոց լեզուն էր գործածականը թե արքունիքում, և թե եկեղեցում: Այս վավերագիրը հնագույն գրությունն է, որ պահվել է Աղվանից եկեղեցու սկզբնավորությունից ի վեր»¹:

«Գրության» ուսումնասիրությունից դժվար չէ համոզվել, որ «Աղվանից հոգևորականությունն այդ ժամանակ, այն է՝ V դարի վերջում կամ VI դարի սկզբում արդեն շատ գեղեցիկ կերպով յուրացրել էր հայերենը և գործ էր ածում այն իբրև սեփական մայրենի լեզու»²: Եվ եթե այս ամենին քաջ տևողյակ պատմաբանը նաև նշում է, որ «հինգերորդ դարի վերջերում Աղվանքը կիսով

¹ Լեո, «Երկերի ժողովածու», հատոր 2, Երևան, 1967թ., էջ 154:

² Նույն տեղը:

միայն ազգային ինքնությունություն պահպանած մի երկիր էր», «մյուս կեսով նա արդեն հայացած էր կամ հայանալու վրա էր»¹, ապա նկատի ունեն Անդրկուրյան Աղվանքը: Կրթությունը, եկեղեցական արարողություններն ու արքունական գործավարությունը ամբողջովին հայերեն վարվող Հայոց Աղվանքում հայկական տարրը գերիշխող պիտի լիներ: Լեոյի տողերն այն մասին, թե VI դարի սկզբում հայ ազգայնական գաղափարը Աղվանքում դեռ նոր էր հաղթանակ ձեռք բերում և «Աղվանից ինքնատիպ և խորհուրդավոր ազգին բերում էր ապաստանացում և վերջնական ձուլման անխուսափելիությունը»², վերաբերում են Անդրկուրյան Աղվանքին և նրանում ապրող ցեղերին: Հայկական ազդեցությունը Անդրկուրյան Աղվանքի ցեղերի վրա սկսել էր ուժեղանալ հատկապես 387 թվականից սկսած: Սյդ ամենը հաստատում է ակադեմիկոս Ս.Տ. Երեմյանը նշելով, որ Աղվանքի մարզպանության ժամանակ (387–510 թ.թ. ընթացքում) նրա «ընդարձակ տերիտորիայի վրա ապրում էին տնտեսական-մշակութային զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող ժողովուրդներ ու ցեղեր: Արցախ ու Ուտիք նահանգներում ապրում էին հայերը, որոնք խոսում էին հայոց լեզվի «Արցախային» բարբառով և վերջինս Մովսես Խորենացին (բ, ը) համարում է արևելյան ծայրամասը «հայկական խոսից»: Ութերորդ դարի սկզբին Ստեփանոս Սյունեցու կողմից հիշատակվող «Արցախյան բարբառը» ևս համարվում է «եզերական»՝ ծայրամասային»³:

Ինչպես տեսնում ենք, հարգարժան ակադեմիկոսի խոսքը վերաբերում է Անդրկուրյան Աղվանքին («բուն աշխարհն Աղուանից»):

Վաչագան Բարեպաշտի եկեղեցական միջոցառումների առթիվ Մ. Կաղանկատվացու վկայությունները միաժամանակ ցույց են տալիս, որ Արցախը գտնվելով Հայոց Աղվանքի թագավորի ծառայության տակ, լինելով նրա սեփական տիրույթներից մեկը, աղվան բնակիչներ չի ունեցել: Ճիշտ է նկատում Ա.Շ.

¹ Նույն տեղը, էջ 143:

² Նույն տեղը, էջ 155:

³ Ս.Տ. Երեմյան, «Մառը և հայագիտության հարցերը», Հայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 1966թ., էջ 89:

Մնացականյանը, թե «այլապես այդ երկրները (Արցախը և Կամբեճանը, – Է.Ս.) կդիտվեին որպես ուղղակի Ադվանք»¹:

Գարգարներին և ուտիններին Արցախի բնակիչներն են անվանում Չ. Յամպոլսկին ու Չ. Բունիաթովը, որոնց, հատկապես վերջինիս նպատակը Արցախը հնուց ի վեր ադրբեջանական մարզ ներկայացնելն է, որը չի դիմանում որևէ քննադատության: Ա.Շ. Մնացականյանը ցույց է տալիս, որ թյուրիմացության մեջ գտնվողների համար հիմք են ծառայել նաև օտար աղբյուրներում եղած մի քանի կցկտուր տեղեկությունները, որոնք ճիշտ չեն մեկնաբանում առանձին հեղինակներ: Հատկապես դրանք սխալ է մեկնաբանում Չ. Բունիաթովը: Նա VI դարի ասորի հեղինակ Չաքարիա Հռնտորի այն հաղորդումը, ըստ որի տարբեր ժողովուրդներով տարբեր երկրներ են համարվել Հայաստանը, Վրաստանը, Առանը, Սյունիքը, Բազկանը և այլն², միանգամայն այլ կերպ է մեկնաբանում:

Հասկանալի է, որ այդ հաղորդման մեջ առկա է աղաղակող թյուրիմացություն՝ Առանի և մասնավորապես Սյունիքի կապակցությամբ, թյուրիմացությունը ճշմարտության տեղ ընդունելով կամ դիտավորյալ, Չ. Բունիաթովը գրում է. «Նկատի ունենալով, որ Գրուզանը (Իբերիան, Վրաստանը) և Առանը VI դարում ունենին իրենց լեզուն և իրենց թագավորները, կարելի է հավաստել, որ ոչ Գրուզանը, ոչ Առանը էթնիկապես կամ քաղաքականապես Հայաստանի մաս չեն եղել: Այդ միասնությունը-գուտ եկեղեցական էր և դա հռչակված էր այբանական, իբերական ու հայկական եկեղեցիների ժողովում՝ հրավիրված Դվին քաղաքում 527 թվականին, սակայն 607 թվականին նույն Դվինում տեղի ունեցավ այդ եկեղեցիների անջատումը հայկականից»³: Ընդ որում Չ. Բունիաթովը իր համար ամենից կարևոր է համարում այն հանգամանքը, որ Չաքարիա Հռնտորը նշում է, թե «Առանն ունեցել է իր լեզուն, որը միանգամայն չէր նմանվում գրոնիկոնում նրա կողմից մատնանշված լեզուներից և ոչ մեկին»⁴: Այդպիսով, Չ.

¹ Ա.Շ. Մնացականյան, նշված աշխատությունը, էջ 64:

² I . I' eäoëääñeäy, «Nëðeeñeëä eñòì ÷ í eëe í í eñòì ðeë í äðì äí ä ÑÑÑÐ», I .-È., 1941ä. Ñ. 165–166.

³ Տես Չ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 93:

⁴ Չ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 93–94:

Բունիաթովի խոստովանությանը իր համար կարևորը աղբյուրներում եղած թյուրիմացություններն են և ոչ թե ճշմարտությունները: Նման թյուրիմացություն ու պատմության իրական փաստերին անտեղյակության արդյունք է նաև Ն.Վ. Պիգուլսկայայի հետևյալ արտահայտությունը, որից Չ. Բունիաթովը նույնպես ամուր կառչում է. «Չնայած հայկական ազդեցության ուժեղացմանը, VI դարում այդ մարզը (Առանը, – Չ.Բ.) դեռ պահպանում էր մայրենի բարբառը»¹: Այդ թյուրիմացությունները իբրև հավաստի տեղեկություններ մեջ բերելուց հետո Չ. Բունիաթովն իր պարտքն է համարում միայն ավելացնել, որ «հայկական ազդեցության ուժեղացումը զգալի չափով արտահայտվել է նրանում, որ Առանում արաբական ասպատակությունների, իսկ առաջ իրանա-բյուզանդական պատերազմների ժամանակ, վերաբնակվել են մեծ թվով հայեր, որոնք, խառնվելով տեղի բնակիչների հետ, մեծ աջակցություն են ցույց տվել գրիգորյանական եկեղեցուն՝ նրա ուսմունքն ու դոգմաները տարածելու գործում: Սակայն, չնայած դրան, Բարդայի շրջակայքում աղվանական խոսքը պահպանվել է ոչ միայն VI դարում, այլև IX–X դարերում»²: Սակայն նա այդքանով չի բավարարվում: Չ. Բունիաթովն իր գրքի հաջորդ էջերում Առանի բնակչության լեզուն մինչև XIII դարը համարում է արբաներենը: «Նույնիսկ XIII դարում, – գրում է նա, – Առանի բնակչությունը հայոց լեզու չէր իմանում և խոսում էր իր մայրենի լեզվով (գոյություն չունեցած արբաներենով, – Է.Ս.)»³:

Սլալ է «Ադրբեջանի պատմություն» գրքի հեղինակների հայտարարությունն այն մասին, թե «հնարավոր է, որ արբանական լեզվի մնացորդներ են հանդիսանում ուտիների և Ադրբեջանական ՍՍՀ հյուսիսային շրջաններում մինչև այժմ ապրող մյուս ժողովուրդների լեզուները»⁴:

Չհնգներորդ դարում և նրանից հետո Աղվանքը բաղկացած էր երկու հիմնական մասերից – Անդրկուրյան Աղվանք՝ իր այլալեզու ցեղախմբերով և Հայաստան-Աղվանք՝ իր հայերենով: «Ան-

¹ Նույն տեղը, էջ 94:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, էջ 100:

⁴ «Ադրբեջանի պատմություն» (ռուսերեն), Բաքու, 1958թ., էջ 51:

տեսնել այս փաստերը և ընդունել, թե VI դարում Աղվանքում կար մի լեզու և այն էլ աղվաներեն, – գրում է Ա.Շ. Մնացականյանը, – նշանակում է մեղանչել ճշմարտության առաջ: Այսպիսի անստույգ տվյալների հիման վրա է, ահա, որ հորինվել է ոչ միայն Ուտիքի, այլև Արցախի՝ առաներեն-աղվաներեն լեզվի երբեմնի գոյության և նրա բռնի հայացման հեքիաթը»¹:

Ջիա Բունիաթովը, ինչպես նշվեց, օգտագործում է առանձին հեղինակների կողմից որոշ թյուրիմացություններ, իսկ երբեմն էլ գիտակցաբար աղավաղում-աղվանացնում առանձին մտքեր: Օրինակ, նա կառչում է նաև Կ.Վ. Տրևերի այն սխալ եզրակացությունից, թե իբր Առանշահիկների հայկական հինավուրց տոհմի ու Միհրանյանների փոխհարաբերությունների հարցի հետազոտողները գործ ունեն «ֆեոդալական Ալբանիայի վրա գերագույն իրավունքներ նվաճելու համար՝ հայացած ալբանների և հայկական ֆեոդալական տոհմերի միջև եղած պայքարի արձագանքների հետ»²: Տրևերի ենթադրությունները այս խնդրի վերաբերյալ անհիմն են, զուրկ են գիտական հիմքից: Աղվանքին տիրած Միհրանյան տոհմի կողմից կատարված արյունահեղ դավադրությունները Կ.Վ. Տրևերը համարում է հայացած աղվանների ձեռքով կատարված դավադրություններ: Նախորդ մասի մեր ողջ շարադրանքից կարելի է եզրակացնել, որ դա ամենևին այդպես չէ:

Ավելի արտառոց է Վ.Վ. Բարտոլդի տեսակետը, որը հանձին Միհրանյանների տեսնում է «ալբանական ազգային, սակայն պարսկական ծագում ունեցող դինաստիայի վերականգնումը»: Նկատենք, որ Կ.Վ. Տրևերը այս անհեթեթությանը հեզանքով պատասխանում է. «Հազիվ թե «պարսկական ծագում ունեցող դինաստիան» կարելի լինի կոչել ազգային և ալբանական»³: Դրանով մեծանուն գիտնականը հերքում է նաև իր վերն ասածը, ապացուցում մեր պնդումները խնդրո առարկայի շուրջ:

Այդպիսով, չի կարելի Միհրանյաններին ալբաններ, ալբանական իշխաններ, ինչպես նաև Առանշահիկներ անվանել: Որոշ

¹ Ա.Շ. Մնացականյան, նշված աշխատությունը, էջ 44:

² Է.Ա. Օժաճձ, «I +adde i i enoi de e eoeuodda Eaaeaçnei é Aeaai èe», I .-E., 1959a. N. 235.

³ Նույն տեղը:

ժամանակ անց Միհրանյանները փոխում են իրենց կրոնը և ընդունում քրիստոնեությունը: Տեղական բնակչության հետ ստեղծված խնամիական կապերը, տեղացիների էթնիկական անկոտրելի դիմադրությունը, հայկական միջավայրի ազդեցության ուժեղացումը, հայ գրի ու գրականության իշխող դիրքը լրիվ քայքայեցին Միհրանյաններին և դրին հայացման անդառնալի ուղու վրա: Աստիճանաբար հայացած Միհրանյան տոհմը ի վերջո դուրս մղվեց ղեկավար դիրքերից և իր տեղը զիջեց հայ իշխաններին ու գորավարներին: Միհրանյանները հայերին զիջում են նաև երկրի կենտրոնական մասերը՝ Արցախը, Ուտիքը, Գարդմանը, Անդրկուրյան Հայքը:

Ճիշտ է, VII դարում Հայոց Արևելից կողմանքը (հայկական Արցախ, Ուտիք և Փայտակարան նահանգները) ղեռնս պոկված էին մայր հայրենիքից և մտցված աղվանից մարզպանության մեջ, սակայն այդ ժամանակ ևս, Արցախը և Ուտիքը ունեին մշակութային ու եկեղեցական որոշ ինքնուրույնություն, և տեղական ու նահանգային քաղաքական ընտրանին որոշ չափով իրեն ազատ էր զգում: Աղվանից աշխարհում գրվում էր հայոց գրականության մի զգալի մասը, այդտեղ կենտրոնացած էին դպրոցներ, հայերենը պաշտոնական, կրոնական արարողությունների և դպրոցների լեզուն էր: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Աղվանքում ապրողները արյունակից հայեր էին, որտեղ թագավորներն ու իշխանները խոսում էին հայերեն: Մ. Կաղանկատվացու երրորդ գրքի բովանդակության ու աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ մատենագրի աղբյուրը նաև իր մայրենի հայոց լեզվով է գրված: Մ. Կաղանկատվացու երկի երրորդ գրքի «Ը» գլխում, որը ներկայացնում է հայոց կաթողիկոս Եղիայի Աղվանքի 705 թվականի ժողովից պահանջած թուղթը, կարդում ենք. «...Մեր առաքելական հավատը նախ սուրբ Եղիշայից հիմնադրվեց, ապա սուրբ Գրիգորիսից հաստատվեց և մինչև այժմ իր ուղուց չէր շեղված: ...Սուրբ Գրիգորի... ուղղափառությունը աշակերտել ենք և այժմ կաշակերտենք քեզ՝ հայոց կաթողիկոս տեր Եղիայիդ... Թող Աղվանքի հայրապետության ձեռնադրությունը մեր երկրի միաձայնությամբ սուրբ Գրիգորի աթոռի միջոցով լինի, ինչպես որ էր սուրբ Գրիգորից սկսած, որովհետև քրիստո-

ննությունը մենք այնտեղ ընդունեցինք...»¹: Իսկ Հայոց կաթողիկոս Հովհաննեսի նամակը՝ VI դարի երկրորդ կեսին Աղվանքի կաթողիկոս տեր-Աբասին, զգուշացում է քրիստոսատյացներից:

Մ. Կաղանկատվացու երկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ VII դարում ևս, ինչպես և առաջ աղվան տարրը աննշան դեր էր խաղում: Դրա վկայություններից է նաև այն փաստը, որ կաթողիկոսական աթոռը շարունակ զբաղեցնում էին հայերը: Բանի որ Ջ. Բունիաթովը այս ճշմարտությունը ևս ժխտելու անպտուղ փորձեր է կատարում, ուստի և թեկուզ առանձին կաթողիկոսների վերաբերյալ կրկնություն ստացվի, այնուամենայնիվ այստեղ մեջ ենք բերում Աղվանքի հայրապետների անունները և նրանց որոշ գործերը՝ ըստ Մ. Կաղանկատվացու, որոնք նա լսելով չէ, որ ներկայացրել է, «այլ փոքր ի շատն ցույց տալով բացահայտել է, որպեսզի նրանք, որոնք հետաքրքրվում են այս հարցով, իմանան»²: Մ. Կաղանկատվացին գրում է. «Արդ՝ մեր մեջ լուսավորության առաջին տարածողը եղավ սուրբ առաքյալ Թադևոսի աշակերտ սուրբ Եղիշան, որ ձեռնադրվեց Երուսաղեմում սուրբ Հակոբի ձեռքով: Սա եկավ և լուսավորիչ դարձավ երեք երկրների՝ Չողի, Լիփնիքի, Աղվանքի, ուր և վախճանվեց նահատակությամբ: Ապա տեր սուրբ Գրիգորիս Պահլավիկը՝ Հայոց լուսավորիչ Մեծ Գրիգորի թոռը՝ եղավ հայրապետ, որը երկու տեսակ փառքով մնաց նույն աթոռի վրա: Հետո Երուսաղեմից եկած Աղվանքի կաթողիկոս սուրբ Շուփհաղիշոն, տեր Մատթեոսը, տեր Սահակը, տեր Մովսեսը, տեր Պանդր, տեր Ղազարը, տեր Գրիգորը, տեր Զաքարիան, տեր Դավիթը, սուրբ Հովհանը, որը նաև եղավ հոների տեր հայրապետական շնորհով. բայց ինչպես լինելը չզիտենք: Տեր Երեմիան՝ սրա ժամանակ երանելի Մեսրոպը գիր ստեղծեց Աղվանքի համար... Տեր Աբասը, որ հայոց թվականության սկզբից (ըստ Դվինի եկեղացական ժողովի՝ 552 թվականից, – Է.Ս.) հայրապետական աթոռը փոխադրեց Պարտավ՝ իշխելով քառասունչորս տարի Մեծիրանք կոչված եպիսկոպոսությունում: Սրա ժամանակ սովորություն դարձրին հանձնարարական թղթում անվանել Աղվանքի, Լիփնիքի և Չողի կաթողիկոս: Այս առթիվ Դվինի ժողովից գրեցին, որ-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 234–235:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, Թիֆլիս, էջ 267–268:

պնագի ասվի, թե մարդկային և աստվածային էությունը մեկ է, և «Սուրբ Աստված» կապակցությանը ավելացվի «անմահ և խաչվեցիր»: Որովհետև նրանք սովորեցին Կոստանդնուպոլսի հայրապետ Պրոկոի առաջարկից, որ Եփեսոսի ժողովի նրկու հարյուր սուրբ հայրերը միացրին Սուրբ Երրորդությանը: Եվ Ալեքսանդրիայի հայրապետ Տիմոթեոսից ու Պետրոս Անտիոքացուց հետո, նրբ սրանք եկան Անաստաս կայսեր մոտ, Միջագետքի եպիսկոպոս Հակոբի ձեռքով ավելացվեց, և վերոհիշյալ հայրապետներն էլ սահմանեցին, որ ուղղափառները ասեն. «անմահ որ խաչվեցիր» ինչպես որ իսկ և իսկ կա: Աբաս հայրապետը չէր սահմանել այս ասելու, որովհետև սովորություն չկար, և ոչ էլ նրկրոմ հերձվածներ կային, չնայած որ սրա քննության անհրաժեշտությունը կար: Ապա հետո Եզր կաթողիկոսի ժամանակ Գարդմանի եպիսկոպոս Ստեփանոսը գնաց Եզրի մոտ, բանակցեց նրա հետ, և Գարդմանն ու Արգախը ընդունեցին այս ավանդությունը, որը մինչև այժմ բոլորս պահպանում ենք:

Տեր Վիրոն իշխեց նրետունչորս տարի: Սա հայոց, վրաց և Աղվանից գերիներին ազատեց Շաթ խազրից. սա Խոսրով արքայից խնդրեց նրկրի կուսակալների գրությունների վրա իբրև Գարդմանի պատիվ գրել «տեր և իշխան Աղվանքի», որը մինչև այժմ էլ գրում են:

Տեր Ջաքարիա, մի սուրբ մարդ էր, որ իշխեց տասնհինգ տարի. սա նրաշխավորեց Պարտավ մեծ քաղաքի համար և իր աղոթքներով գերությունից ազատեց բազմաթիվ մարդիկ: Սյունիքի համար եպիսկոպոս ձեռնադրեց Վրթանես անունով մեկին...:

Տեր Հովհան, սա իշխեց քսանհինգ տարի, հայրապետական աթոռ կանչվեց Ամարասի եպիսկոպոսությունից:

Տեր Ուլստանես, իշխեց տասներկու տարի, սա ազգապղծության համար անիծեց Աղվանքի նախարարներին, որոնք ոչնչացան:

Տեր Եղիազար, իշխեց վեց տարի. Հայրապետական աթոռ կանչվեց Շաքիի եպիսկոպոսությունից: Սուրբ Մեսրոպի կողմից Գիս գյուղում թաղված խաչը սա գտավ և նույն կենսատու փայտից մի մաս առավ, դրեց հարյուր քսան դահեկանոց ոսկու մեջ և վրան գրեց. «Եղիազարինն է»: Նա կարգ սահմանեց Գիսում խաչի օրը տոնել:

Ներսես, Գարդմանի եպիսկոպոսությունից. իշխեց տասն-յոթ տարի: Սա խելքը թոցրեց, կամեցավ իր սեփական Աղվանքի տունը տակն ու վրա անել՝ թեքվելով քաղկեդոնական աղանդի կողմը. սակայն մարմնով և հոգով կապվեց և Աղվանից ու հայոց կողմից անեծքով մերժվեց Աստծու Որդու փառքից՝ իր համար իբրև բաժին առնելով այն, ինչ որ հերձվածողներն առան:

Տեր Սիմոն, իշխեց մեկ ու կես տարի, սա աթոռի սարկավագապետ էր, որը Ներսեսի խառնակչությունը վերացրեց երկրից՝ դնելով յոթ տուն կանոններ:

Տեր Միքայել, իշխեց երեսունհինգ տարի, սա սարկավագ էր Շաքիից և իր մոտ կանչեց մաքենացիների վանահայր Սողոմոնին ու անիծեց Աղվանքի իշխաններին, որոնք ամուսնացել էին իրենց նապարտ ազգականների հետ, և որոնց անմիջապես պատիժ վրա հասավ, ու ոչնչացան: Մրանց հետ նգովեցին նաև վրաց Թալիլե առաջնորդին, որովհետև անօրեն ամուսնության հրաման էր տալիս:

Տեր Անաստաս, իշխեց չորս տարի:

Տեր Հովսեփ՝ տասնյոթ տարի: Մրա հինգերորդ տարում լրացավ հայոց երկու հարյուր թվականը: Սա հայրապետական աթոռ եկավ Ամարասի եպիսկոպոսությունից:

Տեր Դավիթ, իշխեց չորս տարի: Սա էլ հայրապետական աթոռ նստեց Ամարասի եպիսկոպոսությունից, ազատեց սրբությունների հողերն ու սպասները, դավադիրների ձեռքով մահացու դեղ խմելով վախճանվեց:

Տեր Դավիթ, իշխեց ինը տարի: Մեծվյանքի եպիսկոպոսությունից էր. սա վաճառեց Մադրինքի դաստակերտը, սահմանը խաչ դրեց:

Տեր Մատթեոս, իշխեց մեկուկես տարի: Կապաղակի եպիսկոպոսությունից էր, սա էլ վախճանվեց թույնով՝ դավողների ձեռքից:

Տեր Մովսես, իշխեց երկու տարի: Տեր Ահարոն՝ երկու տարի: Տեր Սողոմոն՝ կես տարի: Տեր Թեոդորոս՝ չորս տարի: Սա Գարդմանի եպիսկոպոսությունից էր եկել: Տեր Սողոմոն՝ տասնմեկ տարի: Տեր Հովհաննես՝ քսանհինգ տարի: Սա կաթողիկոսաբանը փոխադրեց Բերդակ, որ իրենց ամառանոցավայրն էր, երբ Պարտավից դուրս բերվեց: Տեր Մովսես՝ կես տարի: Տեր Դավիթ, իշխեց քսանութ տարի: Կապաղակի եպիսկոպոսությունից

էր: Սա օրինեց Շաքիի իշխանի անօրեն ամուսնությունը: Այս իշխանի աշխարհական եղբայրը հարցնելով ասում է նրան. «Տեր, որտեղի՞ց ես գալիս»: Նա պատասխանում է. «Քո եղբոր տնից»: Իսկ իշխանը Դավթին ասում է. «Այդ լեզուդ, որ օրինեց, թող լավվի, իսկ աջդ թող չորանա»: Անմիջապես այսպես էլ եղավ, և չբուժվեց մինչև նրա մահը:

Տեր Հովսեփ, իշխեց քսանհինգ տարի, հայրապետական այծռե նկավ Մեծկվյանքի եպիսկոպոսությունից. սրա հայրապետության երրորդ տարում լրացավ հայոց երեք հարյուր թվակա-նը:

Տեր Սամվել, իշխեց տասնյոթ տարի: Մեծկվյանքի եպիսկոպոսությունից էր: Սա ինքնագլուխ է հայրապետ դառնում, հետո կարգաթող է արվում և ապա երկրորդ անգամ Դվինում ձեռնադրվում է հայոց Գևորգ կաթողիկոսից:

Տեր Հունան, իշխում է ութ ու կես տարի: Սա Դվինի հայոց եպիսկոպոսն էր, առանց Գևորգ կաթողիկոսի թույլտվության գալիս է Աղվանք և ձեռնադրվում հայրապետ: Սրան էլ է նույն Գևորգը կրկին ձեռնադրում:

Տեր Սիմոն, իշխում է քսանմեկ տարի: Սա սուրբ աթոռի դռան եպիսկոպոս էր, որը սպասներով էլ ավելի զարդարեց Սուրբ Խաչը:

Տեր Դավիթ, իշխեց վեց տարի, նկավ Փառախոսի վանքի առաջնորդությունից:

Տեր Սահակ, իշխեց տասնութ տարի, նկավ Մեծկվյանքի եպիսկոպոսությունից:

Տեր Գագիկ, իշխեց տասնչորս տարի, նկավ Գարդմանի եպիսկոպոսությունից: Սրա հայրապետության չորրորդ տարում լրացավ հայոց չորս հարյուր թվականը:

Տեր Դավիթ, իշխեց յոթ տարի, նկավ Կապաղակի եպիսկոպոսությունից:

Տեր Դավիթ, իշխեց վեց տարի, Փառախոսի վանքի առաջնորդն էր, սա ձեռնադրվեց հայոց կաթողիկոս Անանիայի ձեռքով:

Տեր Պետրոս, իշխեց տասնութ տարի, նկավ Գարդմանի եպիսկոպոսությունից:

Տեր Մովսես, իշխեց վեց տարի, եկավ Փառիսոսի վանքի առաջնորդությունից»¹:

Քանի որ 14 տարի իշխած Տեր Գագիկի հայրապետության 4-րդ տարում լրանում է հայոց 400 թվականը, ապա կնշանակի նա իշխել է մինչև 962 թվականը: Իսկ եթե դրան էլ ավելացնենք նրան հաջորդած հայրապետների աթոռակալության տարիները (շուրջ 37 տարի), ապա ընդհուպ մինչև X դարի վերջը Աղվանքում կաթողիկոսական աթոռը միշտ էլ զբաղեցրել են հայ կրոնանկեղեցական վերնախավի ներկայացուցիչները: Նույնը տեղի է ունեցել նաև X դարից հետո:

Անանիա Մոկացին 949 թվականին Արցախում եղած ժամանակ այնտեղ հավաքված Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդներին և ի լուր խռովարարներին հայտարարում է, որ ավանդաբար Հայոց կաթողիկոսությանն են ենթարկվել Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդները²:

Իսկ ի՞նչ է հայտարարում Չ. Բունիաթովը՝ անտեղյակ ձևաճարտվ վերը մատնանշված փաստերին: «Ուղղափառ «եկեղեցական իշխանների» բռնացումը գրգռել և հուզել է ալբանական տեղական հոգևորականությանը: Բայց ալբանական եկեղեցու հետապնդման և նրա ինքնուրույնության և անկախության իրավունքի ճնշման գործում հատուկ դեր է խաղացել գրիգորյանական հայկական եկեղեցին: Հայկական կաթողիկոսությունը մշտապես վիճարկել է յուր նախածնունդը և առավելությունը ալբանականի հանդեպ և ալբանական «հերետիկներին» «խելքի բերելու» համար երբեք չի խուսափել ոչ մի միջոցից իր հակառակորդին ստորացնելու համար: Դարեր շարունակ պայքար էր գնում հայկական ու ալբանական հոգևորականության միջև:

Ալբանական եկեղեցին իր ազդեցությանը ենթարկելու նպատակով հայոց կաթողիկոսները դիմել են նախ Սասանյան, ապա՝ արաբական խալիֆաթի զինված ուժերի օգնությանը: Վերջը-վերջով ալբանական եկեղեցին, հայոց կաթողիկոսների միջնորդության հիման վրա, 1836 թվականին Պետերբուրգի Հոգևոր Սինոդի որոշմամբ վերացվում է և դադարում գոյություն

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 267–271:

² Տես Ստ. Օրբելյան, նշված աշխատությունը, էջ 282:

ունենալուց»¹: Փաստերի աղավաղումը, հորինվածությունը այստեղ այն աստիճան բացահայտ են, որ մեկնաբանություններն ավելորդ են: Նշենք միայն, որ Ջ. Բունիաթովը անհիմն կերպով առարկում է ակադեմիկոս Ա.Գ. Հովհաննիսյանի այն մտքին, թե «այբանական ժողովուրդը երբեք չի ձևավորվել առանձին դավանակից եկեղեցում և նրա լեզուն չի հանդիսացել պահանջարկվող լեզու»²: Մինչդեռ Ա.Գ. Հովհաննիսյանը իրավացի է նշելով, որ եկեղեցական ծառայությունը այբանական լեզվով երբեք չի տարվել: Չհամաձայնվելով այս մտքի հետ, Ջ. Բունիաթովը պնդում է ուղիղ հակառակը. «Հայկական եկեղեցու բազմադարյան պայքարը այբանական եկեղեցու դեմ ճիշտ հակառակն է ապացուցում»³: Եվ ապա. «Չնայած այն բանին, որ այբանական կաթողիկոսները իրավունք ունեին ձեռնադրելու Առանին հարևան և նրանից կախում ունեցող իշխանությունների (օրինակ, Սյունիքի) եպիսկոպոսներին, հայոց կաթողիկոսները այդ իրավունքները անտեսում էին»⁴: Իր այդ մտքերը ապացուցելու համար ևս Ջ. Բունիաթովը իբրև հիմք օգտագործում է առանձին հեղինակների կողմից թույլ տրված սխալները: Օրինակ, նա մեջ է բերում Սեբեոսի հաղորդումն այն մասին, թե իբր դեռ 577 թվականից առաջ «Սյունիքի հողերի տեր Վահանը ապստամբում ու առանձնանում է հայերից և խնդրում պարսկական թագավոր Խոսրովին, որպեսզի նա Սյունիքի հողերի արխիվները Դվինից փոխադրի Փայտակարան (Բայլական) քաղաքը և իրենց քաղաքը մտցնի Ատրպատականի սահմանների մեջ, որպեսզի հայերի անունը հանվի նրանցից: Հրամանը իրագործվում է»⁵: Իսկ Ս.Տ. Երեմյանից նա մեջ է բերում հետևյալ տողերը. «Յոթերորդ դարից (վերջնականապես 8-րդ հարյուրամյակի սկզբից) այբանական եկեղեցին դիտվում էր որպես հայկական եկեղեցու մի մասը»⁶: Այդ սխալների մեջբերումներով Ջ. Բունիաթովը չի բավարարվում: Դրանցից հետո էլ ինքն է հորինում, թե իբր «այդ ժամանակ (VII

¹ Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 92:

² Ա. Հովհաննիսյան, «Դրվագներ...», էջ 139, Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 92:

³ Ջ. Բունիաթով, նույն տեղը:

⁴ Նույն տեղը:

⁵ Նույն տեղը, էջ 92–93:

⁶ Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 93:

դարի վերջում, – Է.Ս.) տեղի է ունենում Առանի մարզեր Սյունիքի, Արցախի, Ուտիքի և մյուսների հայացումը»¹:

Մինչդեռ հանրահայտ է, որ բոլոր դարերում էլ Աղվանից աշխարհի հոգևոր առաջնորդները հայեր են եղել և ինչպես նշվեց, նրանք բոլորն էլ ավանդաբար ենթարկվել են Հայոց կաթողիկոսությանը: Ստ. Օրբելյանը պատմելով Մ. Կաղանկատվացու երկի բովանդակությունը, ապացուցում է այս մտքերը ու թվարկում նրանում տեղ գտած հոգևոր առաջնորդների անունները՝ նրանց ժամանակագրական որոշ տվյալներով հանդերձ: Նրա վկայությամբ՝ «էր ի նմա գրեալ ամենայրն ճշդիվ զի առաջին Եպիսկոպոս յԱղուանս ի սրբոյ Գրիգորոյ՝ հայոց լուսավորիչն, լիներ ձեռնադրեալ ի խնդրոյ Ուռնայրին՝ Արքային Աղուանից»²: Ստ. Օրբելյանը ժամանակագրական կարգով ու պատմական հերթականությամբ թվարկում է Աղվանքի բոլոր կաթողիկոսների անունները՝ մինչև Գագիկի գահակալությունը: Նա գրում է. «Ապա զԳագիկս զայս որ լինէր ամբ 69 ինքնաձեռն և անիշխան թերակատար օժման նոցա»³:

Զիս Բունիաթովը վերը մատնանշվածներից բացի, ուրիշ շատ անհիմն հայտարարություններ էլ է անում: Նա գրում է. «Առանում արդեն V դարում կար սեփական հարուստ գրականություն, հետագայում, սակայն, անհետացած»⁴ և փորձում այդ գրականությունը ներկայացնել իբրև այբանական գրականություն: Զ. Բունիաթովի կարծիքով Աղվանքում այբանական գիրը իր գոյությունը պահպանում է V–VII դարերում՝ մինչև արաբական տիրապետության հաստատումը: «Կարելի է ենթադրել, – գրում է նա, – որ գրավոր աղբյուրների ու գրականության ոչնչացումը կամ դուրս մղումը Առանում տեղի է ունեցել սկսած Աբդ էլ-Մելիք խալիֆի գահակալությունից (685–705 թ.թ.): Նրա օրոք սկսվում է արքունիքի արաբացումը և այբանական գիրը, ինչպես պարսկականն ու խորեզմականը, բնակչության միջնախավերի կուլտուրական աննշանության և գրիգորյանական եկեղեցու ազդեցության պատճառով, դուրս է մղվել, մոռացվել և կործանվել

¹ Նույն տեղը:

² Ստ. Օրբելյան, նշված աշխատությունը, էջ 279:

³ Նույն տեղը, էջ 282:

⁴ Զ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 55:

բնական կերպով: Ալբանական լեզվին փոխարինելու է եկել հայերենը»¹:

Այդպիսով, ըստ Ջ. Բունիաթովի, մինչև արաբական տիրապետության հաստատումը Ադվանքում հայոց լեզուն գոյություն չի ունեցել և այն փաստորեն գոյություն չունեցած արբաներենին փոխարինելու է եկել VII դարի վերջին, VIII դարի սկզբին: Այն էջերը, որոնք Ջ. Բունիաթովը և ուրիշներ վերագրում են Մ. Կադանկատվացուն, հորինված են: Վաչագան Գ-ի թերթերը, հարց ու պատասխանները բոլորն էլ հայերեն էին, որը փաստերով ապացուցված է պրոֆ. Ա.Շ. Մնացականյանի մատնանշված աշխատության 80 և 118–134-րդ էջերում: Իսկ ակադեմիկոս Ս.Տ. Երևմյանի այն հարցին, թե «ինչո՞վ բացատրել, որ հայկական ու վրացական դպրության ծագման սկզբից հարուստ գրականություն է ստեղծվել հայերեն և վրացերեն լեզուներով, որը և պահպանվում է այժմ, իսկ արբանական դպրությունն ու բնախոսքը, արբաներեն լեզվի հետ միասին, կորել են անհետ»², Ջ. Բունիաթովը տալիս է նույն քմածին պատասխանը. «Այդ հարցի պատասխանը պետք է որոնել գրիգորյանական կաթողիկոսության հակաարբանական քաղաքականության մեջ, որը, վերջին հաշվով, հափշտակում է արբանական եկեղեցու բոլոր իրավունքները»³: Ջ. Բունիաթովի գրքում հատուկ տեղ է գրավում VIII–IX դարերում Ադվանքի էթնիկական հիմնահարցին վերաբերող ենթագլուխը (էջ 170–183): Կարդալով այդ ենթագլխի վերնագիրը, նախապես թվում է, թե նրա հեղինակը կփորձի հիմնավորել «ադվանները V–VII դարերում բռնությամբ հայացվելու», «արաբական տիրապետության տարիներին հայերը արտաքսվելով Հայաստանից թափանցել են Ադվանք և բռնությամբ հայացրել տեղի ադվան բնակչությանը» կոնցնպցիաները: Սակայն փաստերի բացակայությունը հեղինակին հարկադրում է լռել այդ մասին: Ավելին, այդ էջերում ևս կարելի է նկատել ու նգրակացնել, որ Ադվանքը միշտ էլ հայկական է եղել: Գրքի 171-րդ էջում կարդում ենք. «Դրությունը այլ էր արաբական գեղերի Ադվանք գաղթեցվելու ժամանակ: Արաբական գործերը, թափանցելով

¹ Նույն տեղը, էջ 57:

² Ս. Երևմյան, նշված աշխատությունը, էջ 327:

³ Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 100:

այդ երկրի (Աղվանքի, – Է.Ս.) տերիտորիան, այստեղ հանդիպում են քրիստոնեաների», այսինքն հայերի: Գրքի 178-րդ էջը բացվում է հետևյալ հարցով. «Ինչո՞ւ Աղվանքում այդքան մեծ թվով արաբների առկայությունը և արաբական լեզվի տարածումը բնակչության արաբացում առաջ չի բերում»:

Այդպիսով, այս հարցից և այն մտքից, որ արաբները Աղվանք թափանցելով այնտեղ հանդիպում են քրիստոնեաների, պարզ երևում է, որ մինչև արաբական տիրապետության հաստատումը և այն հաստատվելուց հետո Աղվանքի բնակչությունը հայ է եղել: «Մեծ թվով արաբների առկայությունը և արաբական լեզվի տարածումը Աղվանքի բնակչության արաբացում առաջ չբերեց» տողերի հեղինակ Ջ. Բունիաթովը, նույն էջում, հակասելով ինքն իրեն, գրում է. «Կարող է պատահել Աղվանքի բնակչության մի ինչ որ մասը (ալբանները) շատ վաղուց արաբացման են ենթարկվել ու ձուլվել արաբների հետ և նրանց հետ էլ հետագայում, թուրք-սելջուկների հանդես գալով, թուրքացման ենթարկվել: Ալբանների մյուս մասը, որ ապրում էր Աղվանքի լեռնային շրջաններում, ենթարկվել է հայացման»: Կրկին սնանկ մտքեր ու անհիմն ենթադրություններ, ապա հետևյալ նույնպիսի ընդհանրացում Ջ. Բունիաթովի կողմից. «Մեզ թվում է, որ ամբողջ շարադրվածը կարող է բացատրել այն փաստը, որ մեծ ժողովրդից, ինչպիսին էին ալբանները, ժողովուրդ, որը նրբևէ ապրել է Ասանա լճից մինչև Դերբենտ ընկած տարածության վրա, և ունեցել է իր եկեղեցին, թագավորները, իշխանները և իր ինքնուրույն կուլտուրան, գրեթե հետք չի մնացել»¹: «Մեծ թվով արաբների առկայությունը և արաբական լեզվի տարածումը Աղվանքի բնակչության արաբացում առաջ չբերեց» տողերի հեղինակ Ջ. Բունիաթովը նույն էջում, հակասելով ինքն իրեն, նաև գրում է. «Արաբ-նվաճողները և տեղական աղվանական իշխանները աստիճանաբար մերձեցել և վերջը-վերջո վերջիններն այնպես են արաբացվել, որ սկսել են կրել մաքուր արաբական, մուսուլմանական անուններ և արաբական լեզուն ու կուլտուրան այնպես են ընդունել, որ դժվար էր որոշել թե որ ազգին ու կրոնին էր պատկանում տեղական այս կամ այն ֆեոդալը»²: «Կարող է պա-

¹ Նույն տեղը, էջ 178:

² Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 178:

տահել Աղվանքի բնակիչների մի ինչ որ մասը (ալբանները) շատ վաղուց արաբացման են ենթարկվել ու ձուլվել արաբների հետ և նրանց հետ էլ հետագայում... թուրքացման ենթարկվել» տողերի հեղինակ Ջ. Բունիաթովը, նույն էջում նաև գրում է. «Սակայն Աղվանքի բնակչության և արաբների միջև տեղի ունեցող քաղաքական և կուլտուրական աստիճանական մերձեցումը վեր չի ածվել փոխադարձ համագործակցման կուլտուրայի ասպարեզում, ինչպես այդ տեղի ունեցավ, ասենք, Իսպանիայում: Աղվանքի բնակչության և արաբների միջև սկսված մերձեցման ընթացքը շատ շուտով կանխվում է՝ սկզբում սելջուկների, ապա՝ մոնղոլների հարձակմամբ»¹:

Ջ. Բունիաթովի հայտարարությունների շինծու լինելը ավելի հստակ կնկատվի, եթե մեջ բերենք նաև նրա հետևյալ տողերը. «Չնայած Առանի լեռնային մարզեր ու շրջաններ Սյունիքի, Արցախի, Խաչենի, Ծաքիի, Գարդմանի և Ադրբեջանական ՍՍՀ այժմյան շրջաններ Կիրովաբադի, Իսմայիլուի, Կուլթկաշենի, Վարդանաշենի և Հայկական ՍՍՀ շրջաններ Սիսիանի, Բասարգեշարի և ուրիշ շրջանների մի քանի գյուղերի բնակիչներ այժմ հայեր են, բայց նրանց սովորություններն ու բնավորությունները միանգամայն այնպիսին են, ինչպես նրանց շրջակա ադրբեջանացիներինը, որոնց նախահայրերը այս կամ այն պատճառով մուսուլմաններն էին դարձել: Այդ շրջանների բնակիչները հենց նրանք են, որոնք նախահայրերը... ասիմիլացվել են հայերի հետ»²:

Հարց է ծագում, եթե Աղվանքի բնակիչները Սևանա լճից մինչև Դերբենտ ալբաններ էին և Աղվանքում արաբների առկայությունն ու արաբական լեզվի տարածումն էլ արաբացում չէր առաջացնում նրանց մոտ, Աղվանքի բնակչության և արաբների միջև սկսված մերձեցման ընթացքը շատ շուտով կանխվում է, ապա ինչո՞ւ և ո՞ր անհետացավ այդ «մեծ ժողովուրդը»: Գոյություն չունեցածը չի անհետանում:

Այս հարցերի արծարծմանն է նվիրված Ջ. Բունիաթովի մատնանշված աշխատության երրորդ գլխի մի մասը («Հայոց կաթողիկոս Եղիայի ժամանումը Պարտավ, Ներսեսին պատժե-

¹ Նույն տեղը:

² Նույն տեղը, էջ 100:

լը»՝ էջ 90–102) և հիմնված գլխի որոշ էջեր: Եվ ահա այդ էջերում էլ հեղինակը, փաստերին անտեղյակ լինելով կամ անտեղյակ ձևանալով, քմածին ամփոփումներ է կատարում. «Նտագայում հայոց եկեղեցին ալբանական հոգևորականությանը դուրս է մղել իր գրաված դիրքերից, – գրում է Չ. Բունիաթովը, – և սկսել ալբանացիների բռնի գրիգորյանացումը, որոնք ապրում էին արաբների համար անմատչելի երկրի լեռնային մասերում: Նայկական հոգևորականությունը աստիճանաբար վերացնում է Առանի եկեղեցու ազդեցությունը այդ բնակիչների մեջ և արաբական իշխանությունների ձեռքով ոչնչացնում ողջ գրականության հուշարձանները (հիշատակները) – այն ամենը, ինչը, թեքուզ և աննշան չափով, կարող էր հիշեցնել ալբանական կուլտուրան: Այդ կատարվել է, կրկնում ենք, սկզբում խալիֆաթի օգնությամբ, իսկ հետագայում ուրիշ նվաճողների օգնությամբ ու գիտությամբ:

Ոչնչացնելով Առանի գրական հիշատակարանները, գրիգորյանական եկեղեցականները նախապես այն թարգմանել են գրաբարով: Այդ կատարվել է Մովսես Կաղանկատվացու «Աղվանների պատմություն» գրքի նկատմամբ մասնավորապես, և ալբանական գրական ստեղծագործությունների հետ՝ ընդհանրապես»¹:

Չ. Բունիաթովը ջանում է ցույց տալ, թե ոնց է հայոց եկեղեցին Աղվանքում զենք ծառայել երկրի հայացման համար: Եվ հայոց եկեղեցու այդ դերը նա վերագրում է ութերորդ դարի սկզբներին, հատկապես այն ժամանակին, երբ «հայոց մոնոֆիզիտ կաթողիկոս Եղիան խալիֆի համագործակցությամբ տապալում է քաղկեդոնական աղվանական կաթողիկոս Ներսես Բակուրին»²: Եվ ապա. «Երբ Նայոց կաթողիկոսը իմանում է, որ Գարդմանի եպիսկոպոս Ներսեսը (Բակուր), համաձայնության գալով Աղվանի իշխան Վարագ-Տրդատ Առաջինի կնոջ՝ Մարամի հետ, շեղվել է հայկական եկեղեցուց, լուրջ անհանգստանում է, որ կարող է այդ հանգամանքը զանազան հերձվածողությունների կամ հերետիկոսությունների առաջացման տեղիք տալ: Նայոց կաթողիկոս Եղիան այդ մասին հայտնում է խալիֆ Աբդ ալ-

¹ Չ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 97:

² Նույն տեղը, էջ 100:

Մելիքին (687–705 թ.թ.), որի օգնությամբ և նրան (Եղիային, – Է.Ս.) հաջողվում է սկսել աղվանական եկեղեցու գրիգորյանացումը»¹:

Այդպիսով, այստեղ ևս Չ. Բունիաթովը կրկնում է Աղվանից եկեղեցու գրիգորյանացման սկիզբը ութերորդ դարին վերագրելու վարկածը: Ըստ Չ. Բունիաթովի իբր թե այդ ժամանակվանից է նաև, որ առանձին ուսումնասիրողներ սկսել են գործ ածել «Հայոց Աղվանք», «Հայոց աղվաններ» արտահայտությունները²: «Այսպես ուրեմն, – գրում է Չ. Բունիաթովը, – հասկանալի է դառնում, որ ոչ Արցախը, ոչ էլ հայացված աղվաններով այլ մարզեր ու շրջաններ, որոնք այժմ բնակեցված են հայերով, նրբեր հայկական կուլտուրայով կենտրոնների չեն պատկանել: Հայկական եկեղեցին չի կարողացել Աղվանքի ժողովրդի հայացված սերնդի մեջ այնպիսի կուլտուրական ազդեցություն թողնել, ինչպիսին այն թողել է, ասենք, Սյունիքի վրա»³: Այս տողերում կեղծիքներից բացի կա նաև խարդավանք, խորամանկություն: Չ. Բունիաթովը խորամանկորեն ուզում է հասկացնել, թե իբր Սյունիքը ևս ալբանական մարզ է եղել՝ աղվան բնակչությամբ, որի վրա հայկական եկեղեցին ավելի մեծ ազդեցություն է թողել և ավելի շատ հայացրել: Ինչ վերաբերում է Արցախին, ապա Չ. Բունիաթովի հորինմամբ «այն միշտ էլ հայկական ազդեցությունից դուրս է գտնվել»⁴: Իր այս հորինվածքները հավաստի տեղեկություններ ներկայացնելու նպատակով, Չ. Բունիաթովը անհասկանալի է համարում Ա.Լ. Յակոբսոնի պնդումն այն մասին, որ «Արցախը (և Խաչենը) հանդիսանում են հայկական մարզեր (կամ իշխանություններ)»⁵:

Նման հավաստի աղբյուրները թերագնահատելու հետ միասին Չ. Բունիաթովը հավատում է Ա.Ս. Վարդապետովի հետևյալ կեղծիքներին. «Հայկական եկեղեցին Աղվանքի բոլոր եկեղեցիներում կարգ է ստեղծել միայն օտարները զավթիչներ-

¹ Նույն տեղը, էջ 225:

² Տես նույն տեղը, էջ 101:

³ Չ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 101:

⁴ Նույն տեղը:

⁵ А.Л. Якобсон, «Из истории армянского средневекового зодчества». С. 144, З. Буниатов. С. 101.

րի օգնությամբ, որոնց մոտ է վազել ամեն անգամ, երբ այդ պահանջել են հայկական կաթողիկոսության ու նախարարության շահերը՝ խաչի դրոշով իր ճանապարհից մաքրելով պատմական Աղվանքի ժողովրդին, որի մասն է կազմում Ղարաբաղը (Արցախը)»¹: Եվ ապա. «Հայկական եկեղեցին, ինչպես նշում է Վարդապետովը, միշտ հմտորեն հարմարվել է նրա համար ստեղծված նոր պայմաններին...»²:

Ինչպես տեսնում ենք, «աղվաններնը բռնությամբ հայերեն դարձնելու» մասին Չ. Բունիաթովի վարկածը շարունակ պատճառաբանվում և ուղեկցվում է «գրիգորյանական եկեղեցու ազդեցության ուժեղացմամբ» կամ «գրիգորյանական կոթողիկոսության հակաալբանական քաղաքականությամբ», «ալբանացիների բռնի գրիգորյանացմամբ» և այլ արտահայտություններով: Իր այս վերջին վարկածն էլ նա ջանում է հիմնավորել ութերորդ դարի սկզբներին հանդես եկած քաղկեդոնական Ներսես Բակուրի գործունեությամբ ու նրա դեմ քրիստոնեական եկեղեցու մղած պայքարով: Ուստի տեղն ենք համարում տալու նաև այդ ժամանակ տեղի ունեցած իրողությունների մանրամասները: Վերը խոսք եղավ պարսկական տիրապետության ու նրա հետևանքների մասին: Իսկ այստեղ նշենք, որ բյուզանդական կայսրությունն էլ վարում էր քաղկեդոնության բռնի տարածման քաղաքականություն: Բյուզանդիայի կայսրը համոզվել էր, որ հայերի Գրիգորյան (մոնոֆիզիտ) կրոնը ժողովրդին անջրպետում է Բյուզանդիայից: Ուստի հայերին քաղկեդոնության մղելը նա համարում է այն հզոր միջոցը, որով պետք է բյուզանդական ազդեցությունը մեծապես տարածվեր ու պահպանվեր ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Հայոց Աղվանքում ու Աղվանից եկեղեցու շրջանակների մեջ ընդգրկված ոչ հայկական գավառներում: Աղվանքում քաղկեդոնության տարածման համար բյուզանդացիների կողմից օգտագործվում են Աղվանից իշխան Վարազ-Տրդատի կին Սպրամը և Աղվանից կաթողիկոս Բակուրը, որը ավելի շուտ

¹ А.С. Вардапетов, «К вопросу об историческом исследовании христианских памятников Нагорного Карабаха», л. I, его же: «Христианские памятники Карабаха», л. 9, З. Буниятов. С. 101.

² Չ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 101:

հայտնի էր Ներսես անունով: Վերջինիս մասին Մ. Կաղանկատվացու երկում կարդում ենք. «Աղվանքի կաթողիկոս Երանելի Եղիազարի մահվան ժամանակ (689 թվականին, – Է.Ս.) Բակուր անունով քաղկեդոնական մի ուն երկաբնակ աղանդավոր կար, որ մի ժամանակ եղել էր Գարդմանի նպիսկոպոս և հորջորջվել էր Ներսես: Սա Վարազ-Տրդատի կնոջ՝ Սպրամ տիկնոջ հետ, որ հետևում էր նույն աղանդին, դաշինք էր կնքել փառամոլ իշխանության հասնելու համար. սա ասել էր. «Եթե դու կամենում ես, ինձ Աղվանքի հայրապետական աթոռը բարձրացրու, և ես ամբողջ Աղվանքը խոստովանությամբ քաղկեդոնական կդարձնեմ»: Սրան լսելով չարափառ կինը՝ խորհրդակցեց Աղվանքի նպիսկոպոսների ու մեծամեծների հետ, որոնցից ոչ ոք չիմանալով դավադրությունը, միահամուռ հանձն առան կատարել այդ խնդիրը»¹:

Այդպիսով, ըստ Մ. Կաղանկատվացու երկի այս տեղեկությունների, Ներսես Բակուրը Աղվանքի կաթողիկոս է դարձել 689 թվականին և իշխել 17 տարի, այսինքն մինչև 705 թվականը²: Վերը արդեն պատմել ենք, որ «Սա լսելքը թռցրեց, կամեցավ իր սեփական Աղվանքի տունը տակն ու վրա անել՝ թեքվելով քաղկեդոնական աղանդի կողմը. սակայն մարմնով և հոգով կապվեց և աղվանից ու հայոց կողմից անեծքով մերժվեց Աստծու Որդու փառքից՝ իր համար իբրև բաժին առնելով այն, ինչ որ հերձվածողներն առան»³:

Այդպիսով, ըստ մատենագրի այն հաղորդման, թե Բակուրը Սպրամի միջոցով Աղվանքի հայրապետ կարգվելու դեպքում՝ «եւ ամբողջ Աղվանքը խոստովանությամբ քաղկեդոնական կդարձնեմ», իսկ երբ Սպրամը կատարեց նրա ցանկությունը, նա «լսելքը թռցրեց, կամեցավ իր սեփական Աղվանքի տունը տակն ու վրա անել՝ թեքվելով քաղկեդոնական աղանդի կողմը»՝ մինչ այդ Աղվանքը մոնոֆիսիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ պարզ ու հստակ վկայություններ են: Դրա վկայությունն է նաև

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 228:

² Տես նույն տեղը, էջ 269 (սխալ է Ջ. Բունիաթովի կարծիքն այն մասին, թե Ներսեսը աթոռակալել է 688–704 թվականներին: Տես, Ջ. Բունիաթով, նշված աշխատությունը, էջ 96):

³ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 269:

այն փաստը, որ չնայած Ներսես Բակուրն ու Սպրամը որոշում են քաղկեդոնական դարձնել Աղվանից աշխարհի եկեղեցին, «Մեծիրանքի եպիսկոպոս Հովելը բազմամարդ ժողովի առաջ Ներսեսից պահանջեց Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տոմարը նգովելու հայտարարություն՝ կնքված կաթողիկոսական մատանիով: Նա ստացավ նամակը, որը, ըստ կանոնական սահմանադրության, արևելյան (Աղվանքի) ժողովի կողմից ընդունվեց: Եվ ապա նույն ինքը՝ Հովել եպիսկոպոսը ու այլ եպիսկոպոսներ հայրապետական շնորհներով նրան հրավիրում են բազմելու Աղվանքի սուրբ այթռին: Հենց նույն ժամին Հովել եպիսկոպոսը իր մոտ է վերցնում նգովքի թուղթը և զգուշությամբ պահում: Սրանից հետո ապրում է տասնչորս տարի ու վախճանվում է»¹: Այդպիսով, Հովելը վախճանվում է 703 թվականին:

Ինչպես տեսանք, Ներսես Բակուրի և Սպրամի կատարածը դավադրություն էր, որից անտեղյակ էր Աղվանքի հայ քաղաքական ու եկեղեցական ընտրանին: Ինչ վերաբերում է Հովելի պահանջին ու բազմամարդ ժողովի կողմից այն հարգվելուն և ընդունվելուն, ապա այդ էլ, ինչպես նշվեց, Աղվանքի եկեղեցու հակաքաղկեդոնական լինելու վկայությունն է: Հովելը նման առաջարկություն է կատարում և ժողովն էլ այն պաշտպանում է՝ իմանալով Ներսեսի քաղկեդոնական լինելը: Իսկ վերջինս էլ ընտրվում է Աղվանքի կաթողիկոս դավադրաբար՝ նախ այն պատճառով, որ նրան ընտրելու համար մեծ ջանքեր է գործադրում Աղվանքի իշխանի կին Սպրամը, երկրորդ, որ Ներսես Բակուրը ժողովականների պահանջը կատարում է՝ կաթողիկոսական մատանիով կնքելով Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տոմարը նգովելու հայտարարությունը:

Մ. Կաղանկատվացու երկի տվյալների համաձայն քանի դեռ Հովելը կենդանի էր, Ներսես Բակուրը հաստատ էր մնում իր երդմանը: Սակայն Հովելի մահից հետո անմիջապես ձեռքն է ձգում երդմնաթուղթը, ոչնչացնում այն, ապա կրկին սկսում քաղկեդոնական իր մոլորությունները: 703 թվականին Ներսեսը «շտապում է Մեծիրանք գավառը, իրեն գործակից է ճարում վանահայր Զաքարիային, խոստանում է սրան եպիսկոպոս դարձնել և շնորհել տներունական հասը, եթե միայն սա վերադարձնի իր

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 228:

ծնագիրը (նզովքի թուղթը), որպեսզի այրի: Նա Բակուրին է տալիս նրդման սուրբ գրությունը, իսկ սա առնում և տեղնուտեղը անմիջապես հրկիզում է: Ապա Զաքարիային ձեռնադրում է Մեծիրանքի եպիսկոպոս և նրան իր մոտիկ բարեկամը համարելով, վերադառնում է իր նախկին փսխածին, որին երկար ժամանակ սպասում էր: Սպրամ տիկինը սրան դրդում է, և նրա ու այլ նախարարների օգնությամբ, որոնք քաղկեդոնություն էին ընդունել, Ներսեսը քարոքանդ է անում բազմաթիվ սեղաններ եկեղեցիների, որոնց հանդես նա հաղթող դուրս եկավ: Եկեղեցու արժանաժառանգ ուղղափառ զավակներին հալածեց ու դարձրեց տարաբնակ: Ամենից առաջ հալածեց Մեծկողմանքի հրաշագործ երանելի Իսրայել եպիսկոպոսին, որ խազիրների, հոների շատ երկրներ քրիստոնյա դարձրեց, սրա հետ հալածեց նաև Գարդմանա եպիսկոպոս Եղիազարին: Իսկ եպիսկոպոսներից ոմանք չենթարկվեցին նրան. դրանք էին Կապաղակի եպիսկոպոս Հովհաննեսը, Ամարասի եպիսկոպոս Սահակը, Հռչի եպիսկոպոս Սիմոնը, Աղվանքի Շերո մեծ իշխանը իր ազնվականներով. և եկեղեցու ուխտի բազմությունը մեծ ժողով գումարելով, նզովեցին Ներսեսին բոլոր հերձվողների հետ միասին և նամակ գրեցին Հայաստան աղետավոր անցքերի մասին»¹:

Այս ժողովի տարեթվի և նրա հետ առնչվող մի շարք միջոցառումների հետ կապված բազմաթիվ, մեկը մյուսին հակասող կարծիքներ են տարածված: Մ. Բարխուդարյանցի հաշվարկներով՝ Ներսես Բակուրին գահընկեց անելու համար Եղիա կաթողիկոսը Պարտավ է գնացել 700 թվականին²: Այս ենթադրությունը անընդունելի է, որովհետև Եղիա կաթողիկոսը Ներսես Բակուրին գահընկեց անելու նպատակով 700 թվականին Պարտավ գնալ չէր կարող, քանի որ նախ՝ նա կաթողիկոս է դարձել 703 թվականին և երկրորդ՝ Ներսես Բակուրը երդմնագրանց է լինում Հովելի մահից հետո, որը, ինչպես տեսանք, տեղի է ունենում նույն 703 թվականին: Ուղղակի թյուրիմացություն պետք է համարել Ներսես Բակուրին դատապարտելու համար գումարված ժողովի արձանագրության (երդմնաթղթի) մեջ տեղ գտած հաղորդումն առ այն, թե «այս թուղթը գրվեց... արաբների ութսուն-

¹ Մ. Կաղանկատվացի, նշված աշխատությունը (երկր), էջ 228–229:

² Տես Մ. Բարխուդարյանց, «Պատմություն Աղուանից», հատոր Ա, էջ 121:

հինգ և հայոց հարյուր քառասունութ թվականներին, հրոտից ամսին»¹: Դա անմիջապես աչքի է գառնում հենց այն հակասությանք, որ մատնանշվում է արաբների (մահմեդական հիջրեթի) և հայոց տարնթվերի վերաբերյալ: Վերը նշվել է, որ հիջրեթը 622 թվականին է, իսկ հայկական մեծ կոչվող թվականի սկիզբը՝ 552 թվականը: Այդպիսով, ըստ այդ գրանցման այնպես է ստացվում, որ հիջրեթով հաշված այդ թուղթը գրվել է 706 թվականին, իսկ հայոց տոմարով հաշված՝ 699 թվականին: Սա ակնառու թյուրիմացություն է, որը այդպես չընդունել, կնշանակի կամայականություն ցուցաբերելուց զատ, թյուրիմացություն համարել նույն երկում Հովելի մահը 703 թվականին վերագրելը, Ներսես Բակուրի կողմից երդմնազանց լինելը Հովելի մահվանից հետո վերագրելը և այլն և այլն:

Ուսումնասիրողները չեն նկատել, որ Պարտավում Ներսես Բակուրին նգովելու և պաշտոնագրկելու համար «տիեզերական» ոչ թե մեկ, այլ երկու ժողով է գումարվել, երկուսն էլ 705 թվականին: Դրա ապացույցը Հայոց Եղիա կաթողիկոսի հետևյալ վկայությունն է. «Ես՝ հայոց կաթողիկոս Եղիաս, իմ եպիսկոպոսների հետ եկա Աղվանք՝ ձեր գերահռչակ Պարտավ քաղաքը: Եվ ինձ մոտ հավաքվեցին հոգևորականներն ու աշխարհականները, ցույց տվին ինձ այն թուղթը, որ *աստջ* նգովել և Ներսեսին գցել էր Աղվանքի կաթողիկոսությունից: Թեպետև նա բռնի կերպով մնացել էր կաթողիկոսական աթոռին, սակայն նույն եպիսկոպոսները և եկեղեցու բովանդակ միաբանությունը վերստին գրով ու կնիքով նգովեցին նրան...»²:

Այդպիսով, նախքան Եղիայի Պարտավ գալը այնտեղ հոգևորականների ու աշխարհականների ժողովը նգովել էր Ներսեսին և գցել «Աղվանքի կաթողիկոսությունից», այլապես դրա վերաբերյալ «թուղթ» չէր ցույց տրվի Եղիային: Իսկ նթն Ներսեսը «բռնի կերպով չմնար կաթողիկոսական աթոռին» ու կատարեր առաջին ժողովի որոշումը, ապա Եղիային Պարտավ հրավիրելու հարկ չէր զգացվի և երկրորդ անգամ ժողով չէր հրավիրվի: Երկու

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 235 («Հրոտից»-ը հուլիսն էր՝ հայկական տարվա վերջին ամիսը, որ ըստ անշարժ տոմարի սկսվում է հուլիսի 7-ից):

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 236:

ժողովները 705 թվականին վերագրելու համար մենք հիմք ենք ընդունում ամենից առաջ այն, որ Ներսես Բակուրը 689 թվականին փոխարինելով Եղիազարին, իշխում է 17 տարի, այսինքն մինչև 705 թվականը: Երկրորդ, որ «նկնդնցու ուխտի բազմության մեծ ժողովին» (երկուսին էլ) մասնակցում էր նաև «Աղվանից Շերո մեծ իշխանը իր ազնվականներով», իսկ նա իշխան էր դարձել 705 թվականին:

Այժմ պատասխանենք այն հարցին, թե ի՞նչ էր կատարվում Աղվանքի այդ ժողովներում՝ վերծանելով բովանդակային կողմը: Առաջին ժողովում ընդունվում է «կանոններ և որոշումներ Աղվանքի տիեզերական ժողովի՝ հրավիրված Հայոց կաթողիկոս Եղիայի ժամանակ (և ոչ թե մասնակցությամբ, – Է.Ս.), որը ըստ կարգի 31-րդ կաթողիկոսն է՝ սուրբ Գրիգորից սկսած» թուղթը, որում ասված է. «Միխայիլ երեցի կողմից Աղվանքի հայրապետական աթոռը ստանձնելու ժամանակ, նա իր աթոռակիցների հետ, որոնք էին՝ Հովհաննեսը – Կապադակի եպիսկոպոսը, Սահակը – Ամարասի եպիսկոպոսը, Եղիազարը – Հռչի եպիսկոպոսը, Իսրայելը – Մեծիրանքի եպիսկոպոսը, Հովակիմը – Գարդմանի եպիսկոպոսը, պայմանավորվում են մեր երկրի բարեկարգման ու մեր հավատի ուղղափառության մասին: Այսպես ուրեմն, ես՝ Շերոս-ապոկիպատ պատրիկս, Գարդմանի տերս ու Աղվանքի իշխանս, Վարազ-Գրիգորը-Աղվանքի պատրիկը և սպարապետը, Բաբ Շահպերոզյանը, Զարմիրը Վարազ-Քուրդակյանը, Թեոդոս Վստամ Յարմանյանը, Վաչագան Վարազակյանը, Յունաստալյանի տոհմից Ռոստոմը, Վարազհոհանյան Վահանը, Քարոյանի տոհմից Սմբատը, Գանկարյանի տոհմից Մահմադը, Ռախտյանի տոհմից Գրիգորը, Խամգիտյանի տոհմից Պատրիկը, Վարոկյանի տոհմից Արևրոն, Մահմեդ Շերոյանը, Թամդիկյանի տոհմից իպատ Վարդիշը հայոց տոմարի 88 թվականին¹ որոշեցինք. Երբ դուք պիտի ինչ որ միջոցներ ձեռնարկեք քաղկեդոնական երեցների կամ Մայրազոմակու վերաբերյալ, կամ պավիկյանների վերաբերյալ, կամ էլ արյունապիղծ ամուսնությունների վերաբերյալ, կամ էլ ընդհանրապես որևիցե մի բանի վերաբեր-

¹ Գ.Մ. Բարսիկյանի հաշվարկներով (տես, էջ 32–33) այդ տեղի է ունեցել 706–707 թվականներին, որը և ընթրիմակել ու կրկնել է Զ. Բունիաթովը: Սակայն դրանք բոլորն էլ սխալ են: Աղվանքի «Տիեզերական ժողովը» տեղի է ունեցել 705 թվականին:

յալ, ապա ոչ որ իրավունք չունի չունկնդրել, չկատարել ձեր հրամանը:

Իսկ եթե որևէ մեկը հրաժարվի, ապա նա թող պատժվի Աստծո կողմից, իսկ դուք լիագործված եք դատելու նրան ըստ ձեր սեփական կամքի և իշխաններից ոչ որ իրավունք չունի խառնվելու և դուք հաստատուն մնացեք ձեր կողմից ընդունված վճիռներում:

Ես, Շերոս-ապոխատ պատրիկս, Գարդմանի տերս և Աղվանքի իշխանս, ամբողջ ազատանու հետ միասին իմ կնիքը դրեցի թղթի վրա»¹:

Այդ ժամանակ Ներսեսին ու նրա հետ բոլոր հերձվածողներին նզովելուց ու այդ «թղթից» գատ, ընդունվում է նաև մի նամակ՝ ուղղված հայոց Եղիա կաթողիկոսին: Ահա այդ նամակը. «Հայոց Տեր Եղիա կաթողիկոսին Աղվանքի միաձայն ժողովից երկրպագություն:

Որովհետև մեր և ձեր միևնույն հավատք ունեցող հայերը հոգ էին տանում միայնաց հոգիների փրկության համար, և Տեր Աստծու ներողամտությամբ գորացավ քաղկեդոնական աշխարհակործան խիստ վտանգավոր կրոնը ու լցրեց աշխարհը, սակայն մեր կողմերը մինչև այսօր անարատ էին մնացել այդ աղանդից: Իսկ այժմ Ներսեսը, որին մենք կարծում էինք, թե բարի հովիվ էր մեզ համար, գայլ է եղել ու սկսել հռչոտել Քրիստոսի բանավոր հոտը. դրա համար կամեցանք ձերդ սրբությանը հիշեցնել, որպեսզի այցի գաք մեզ որպես ձեր անդամների և բժշկեք մեր վնասվածքը:

Ողջ եղեք տիրոջ շնորհիվ»²:

Այս նամակը լրիվ փարատում է Եղիայի Պարտավ գալուց առաջ այնտեղ «տիեզերական» ժողով գումարված չլինելու վերաբերյալ ամեն տեսակի կասկածները:

Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Աղվանից աշխարհից նման թղթեր, բողոքներ շատ են ուղարկվում հայոց կաթողիկոսին, որոնցով խնդրվում էին միջոցներ ձեռք առնել

¹ Մատենադարանի ձեռագրեր, № 3062, էջ 251–252, № 2966, էջ 120 ա, բ, տես նաև Ս. Անեցի, էջ 286: «Թուղթը» գրաբարից թարգմանել է ռուսերեն Գ.Մ. Բարտիկյանը, որից հետո ռուսերենից հայերեն (աշխարհաբար) թարգմանել է Միքայել Սողոմոնյանը:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 229:

Ներսեսի մոլորությունը կանխելու համար: Այդ թղթերից մեկում կարդում ենք. «Իսկ նախարարք աշխարհին իմացնալք զեկուցին մեծի հայրապետին Եղիայի, որոյ ի վերայ գործնալ ոգով չափ և բազում նամակս... առաքնալ երկիցս և երկիցս անգամ...»¹: Մինչ այս ամենից հետո հայոց Եղիային անդրադառնալը նշենք մի քանի հանգամանքներ: Նախ, Չ. Բունիաթովի թափած ջանքերից գալիս ենք այն նգրակացության, որ թուրքական պրոպագանդան ԽՍՀՄ ժամանակներից մինչ օրս ոճի առումով որևէ փոփոխության չի ենթարկվել: Հեյդար Ալիևն անգամ Ջողի մեր հանքերը փորձում էր «ադրբեջանացնել»² ԽՍՀՄ քաղբյուրոյում հարց բարձրացնելով, թե հայերս այդ հանքավայրի շահագործմամբ գետնատակ խուժել ենք Ադրբեջանի տարածք: Հետո իբր Խոջալույում եղեռն ենք կազմակերպել (Բաքվում անգամ եղեռնի զոհերի պուրակ ունեն): Չարունակենք, օրինակները բազմաթիվ են: Սա ըստ էության նույն սուտ պնդումների շարքից է, թե իբր Հայ Առաքելական Եկեղեցին է վերացրել մի այլ եկեղեցական կառույց, կամ գոյություն չունեցող լինու: Եթե անգամ մի պահ, երևակայորեն ընդունենք, որ դա այդպես է, ապա այսպիսի պնդումը ոչ այլ ինչ է, քան հայ քաղաքական ու կրոնաեկեղեցական ընտրանու կուռ ու հզոր լինելու փաստ: Ըստ էության նմանատիպ «գիտական» թեզեր տարածողները մեծարում են մեզ:

Դառնանք նյութին:

Հայոց կաթողիկոս Եղիան թուղթ է հղում արաբական խալիֆի Պարտավում նստող ներկայացուցիչ Աբդլմելիք էմիր Սումիհին, որում ասված է. «Աշխարհակալ Աբդլ ամիրմունիին՝ հայոց եպիսկոպոսապետ Եղիայից:

Ամենակալ Աստծու շնորհիվ Քրիստոսին ծառայող մեր երկիրը հնազանդված ենք գտնում ձեր տերությանը. թե մենք, թե Աղվանքը Քրիստոս աստվածության մի հավատք ենք պաշտում: Իսկ այժմ նա, որ Աղվանքի կաթողիկոսն է և նստում է Պարտավում, խորհրդակցել է բյուզանդացիների կայսեր հետ, նրան է հիշատակում աղոթքներում և ստիպում է, որ ամբողջ երկիրը հավատակից դառնա նրան և միաբանվի նրա հետ: Արդ՝ ի գիտություն թող լինի ձեզ, և անտարբեր մի մնաք այդ խնդրի վերաբեր-

¹ Յովհաննես Դրասխանակերտցոյ, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1912թ., էջ 99:

յալ. նրան մեղսակից է նաև մի հարուստ տիկին. ձեր մեծ իշխանությանը հրամայեցեք պատժել նրանց՝ արժանի իրենց այն գործերի, որ Աստծու դեմ մեղանշել կամեցան»¹:

Այս թղթից ևս նկատվում է, որ այս ամենը տեղի է ունենում 705 թվականին, այլապես կաթողիկոս Եղիան ակնարկելով Սպրամին, չէր ասի թե «նրան մեղսակից է նաև մի հարուստ տիկին», այլ ուղղակի կնշեր, որ նրան մեղսակից է նաև նրկրի իշխանի կինը: Իսկ այդպես չի ասում, որովհետև քանիցս նշվեց, որ 705 թվականի կեսերից Սպրամի ամուսին Վարագ-Տրդատը այլևս իշխան չէր և գտնվում էր Բյուզանդիայում, իսկ Աղվանքում արդեն իշխան էր դարձել Շերոն: Պարտավում նստող Խալիֆի ներկայացուցիչ Աբդլմեվիթ էմիր Սուլիմը Եղիայի նամակին պատասխանում է. «Աստծու մարդ Եղիայիդ՝ հայոց ազգի կաթողիկոսիդ, մտերմական նամակը կարդացի և իբրև քեզ շնորհ իմ հավատարիմ ստորադրյալին բազմաթիվ գորքով ուղարկեցի: Մեր տերության դեմ ապստամբ Աղվանքի վերաբերյալ հրամայել ենք, որ, համաձայն քո կրոնի, նրանց ուղղության բերի, իսկ մեր պատիժը քո ներկայությամբ մեր ծառան կգործադրի Պարտավում. Ներսեսին և նրան համախոհ տիկնոջը միևնույն շղթայով կապված անարգանքով կբերի արքունի դուռը, որպեսզի բոլոր ապստամբների համար իբրև ցույց նրանց նշանակեն»²:

Այդպես էլ կատարվում է: Երբ հայոց կաթողիկոս Եղիան «գալիս-հասնում է Աղվանքի Պարտավ խոշոր քաղաքը. նստում է մեծ եկեղեցում և հրամայում է Ներսեսին բերել իր առջև. բայց նա թաքնված էր ու չէր գտնվում: Այդ ժամանակ Աղվանքի խիստ հավատացյալ Շերո իշխանը բռնելով նրա մերձավորներին՝ հրամայում է բերել Ներսեսին: Նրան կանգնեցնում են բազմամարդ ստյանի մեջ՝ Եղիայի առջև: Այդ եղկելին ոչինչ չպատասխանելով, ըստ արքունի հրամանի, տաժանելի վերքեր ստացավ: Ոտ ոտի կցված կապվեց այն կնոջ (Սպրամի, – Է.Ս.) հետ, և պատրաստվում էր նրան օտար նրկիր տարագրել, բայց որովհետև այդ պատճառով ութ օր անսվաղ մնաց, ուստի վախճանվեց: Նա իրեն թաղել տվեց միևնույն շղթայով և անիծեց Շերոյին, որովհետև սա նրան և Սպրամին առաջնորդեց դեպի չարը, և այդ այն պատճառով:

¹ Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 230:

² Նույն տեղը:

ռով, որ Շնրոյի և Սպրամի միջև տարածայնություն կար իշխանության վերաբերյալ:

Ներսեսը ուղղափառ կերպով աթոռակալեց տասնչորս տարի, իսկ քաղկեդոնականությանը՝ երեք ու կես տարի՝ նմանվելով Նեոֆին, որ պատրաստվել է հանդես գալու վերջին օրերում¹:

Սրանք այսպէս լինելուց հետո նույն ժողովում (երկրորդում, – Է.Ս.) ընտրեցին Սիմոնին, որ մի պարկեշտ ու սուրբ մարդ էր և ձեռնադրեցին նրան Աղվանքի հայրապետ, որ Ներսեսի խափությունը վերացրեց երկրից և բազմաթիվ ուղիղ ու կանոն ավանդեց շնորհած եկեղեցուն. իսկ եղկելի Ներսեսի հերձվածային գրքերը, որ նա լցրել էր արկղները, վերցրեց բոլորը և իր Բերդակուր կոչված ամառանոցավայրում լցրեց Տրտու գետը. սա աթոռակալեց մեկ ու կես տարի»²: Այդպիսով, Սիմոնի աթոռակալությունը հաշվելով 705 թվականի կեսերից տևում է մինչև 707 թվականի կեսերը:

Այժմ՝ կարճ տեղանունների մասին: Բերդակուրը կամ Բերդակորը Աղվանքի կաթողիկոսի ամառանոցավայրն էր՝ իբր թե Պարտավի մոտերքը, որն այժմ ժողովուրդը կոչում է «Կթողիկոսարան», ինչպէս որ Աղվենը թագավորի հովոցի տեղն էր³: Բերդակը պիտի լինի նույն Բերդակուրը⁴: Մեր կարծիքով Աղվանքի կաթողիկոսի ամառանոց Բերդակուրը գտնվում էր Մեծիրանք գավառում՝ այժմյան ԼՂՀ Մարտակերտի համայնքի Լյուլասագ գյուղի մոտ, որ ավանդաբար կոչվում է «Կաթողիկոսարան»: Այդպիսով, Մ. Կաղանկատվացու երկի ծանոթագրություններում Բերդակուրը տեղադրվում է Պարտավի մոտերքը, Արցախի փոխարեն Ուտիքում՝ ուղղակի սխալմամբ:

Անդրադառնանք ձեռնադրված հայրապետ Սիմոնի գործունեությանը, մասնավորապէս նրա «յոթ տուն կանոններին»:

¹ Այս ևս մի վկայություն է այդ ամենը 705 թվականին վերագրելու համար, որովհետև Ներսես Բակուրի աթոռակալության առաջին տարվանից (689 թվականից) մինչև Հովելի մահը (703 թվականը) ուղիղ 14 տարի է դառնում, իսկ Հովելի մահից մինչև 705 թվականի «հրոտից»-ը (հուլիսը)՝ շուրջ երեք տարի:

² Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 231:

³ Տես նույն տեղը, էջ 289, ծանոթագրություն 245:

⁴ Նույն տեղը, էջ 291, ծանոթագրություն 290:

վերջինս Քրիստոսի ընտիր աշակերտներից ու նրա պատվիրանների ճշմարիտ սպասավորներից պահանջում է.

1. Ընտրել բարին ու մերժել անարգել չարը:
2. Մարգարենների, առաքյալների ու վարդապետների միջոցով նախ ամբողջ սրտով սիրել Աստծուն և պահել նրա պատվիրանները, աստվածային հայրերից ընդունածները հաստատուն բռնել:
3. Անխափան պահել սուրբ եկեղեցու կարգ ու կանոնները և դրանք անարատ քահանաների ու սպասավորների միջոցով պայծառեցնել:
4. Միմյանց սիրել ինչպես սեփական անձը:
5. Միաբան կերպով կրոնավորել ըստ կանոնական հրամանի:
6. Չթողնել ու թույլ չտալ անարժաններին ու զինվորականներին գրավել եկեղեցու իշխանությունը:
7. Ոչ պոռնկորդիներին, ոչ շնացողներին, ոչ մարդասպաններին, ոչ գողերին, ոչ ատախտներին, ոչ սուտերդումնակիրներին, ոչ զրկողներին ու չարաչք ազահներին, ոչ գափողներին, ոչ էլ ամենևին զինվոր մարդկանց, հեծյալների ու մաքսապետների, ոչ ոք ճհանդգնի տալ եկեղեցու իշխանությունը և ոչ էլ այդպիսիներին հանձնել հացն ու հասը¹:

705 թվականին Պարտավում տեղի ունեցած հոգևորականների 2-րդ ժողովում, հայոց կաթողիկոս Եղիայի պահանջով, ընդունվում է նաև մի ուրիշ «թուղթ», որը վերաբերում է Հայաստանի ու Աղվանքի միաբանության և դաշինքի հաստատմանը: Ահա այն. «...Մեր մեջ այժմ երևաց Նեստորի ու Մաքսիմիանոսի չար ու դառնամարտ աղանդը՝ անօրեն դարձած Ներսեսի միջոցով, որը... խորամանկությամբ դարձավ հավատակորույս ու մեր հոգիների մոլորեցուցիչ: Որովհետև մեր առաքելաքարոզ (առաքյալների նման քարոզող) հայրերի փրկարար ավանդությունը, որ անարատ ձեռքերով հաստատել էին եկեղեցիներում, նա անարժան ձեռքերով դուրս մղեց. բարուն նախանձախնդիր, ուղղափառ հավատի ավանդապահ եպիսկոպոսներին ցաքուցրիվ արեց. ոմանց բամբասանքներով հալածեց օտար երկրներ, ոմանց վշտի ու նեղության մեջ նետեց, պատվական աթոռը խորտակեց ու ճգնավոր կրոնավորների խմբերը խառնաշփոթության մեջ

¹ Տես Մ. Կաղանկատվացի, նշված երկը, էջ 239:

զգեց: Նրա կողմից Քրիստոսի սուրբ մարմնի պատվական անդամները ցաքուցրիվ դարձվեցին, իսկ Սիոնի որդիները խաբեությամբ բոլորովին մոլորվեցին: Մեր սուրբ տաճարը փոխվեց ապականության...

Եվ արդ՝ մենք բոլորս նզովում ենք բոլոր հերձվածողներին՝ առաջիններին, միջիններին ու վերջիններին, Նոմինոսին ու նրա ուսուցիչ Արիոսին, Վաղենտինոսին, Ապոդինարին, Մանիին, Մարկիոնին, Եվտիքեսին, Նեստորին, Դիոդորոսին, Թեոդորիտոսին, Քաղկեդոնի ժողովը, Լևոնի տումարը, Մաքսիմոսին ու նրա աշակերտներին, որոնց հետ նզովեցինք նաև մեր եղկելի Ներսեսին, որը ընդունեց երկաթնակ աղանդը, և նրանց, որոնք հետևում են այդ աղանդին: Սույն կանոնները Աստծու և ձեր (Եղիայի, – Է.Ս.) սրբության առաջ հաստատեցինք, որպեսզի սրանից հետո մեզանից ոչ ոք չհանդգնի մեր ու ձեր հայրերի ավանդությունից դուրս գալ: Իսկ եթե մի որևէ հանդուգն գտնվի, որը կրկին մոլորություն մեջ տեղ գցի, թող այդպիսին նզովվի Սուրբ Երրորդությունից ու մեր միաբանությունից, Սուրբ Հոգու շնորհներից անմաս մնա և խոստացված արքայությանը չհասնի: Իսկ եթե նախկուպոսներից մեկը այդպիսին կլինի, պատվագուրկ կարվի և բարձր աթոռից կնկնի, իսկ եթե քահանաներից լինի, թող նույնը կրի, եթե կրոնավորներից մեկը լինի, նզովվելով կհալածվի, իսկ եթե ազնվականներից է, կհետացվի եկեղեցուց, չի թույլատրվի ընկերների հետ շփվելու, մինչև որ չուղղվի: Նույնպես և Աղվանքի կաթողիկոսների ձեռնադրության համար այսպես սահմանեցինք. քանի որ մի կարճ ժամանակ մեր կաթողիկոսները մեր նախկուպոսներից էին օծվում, բայց որովհետև մեր երկիրը սխալ գործ բռնեց և հերձվածող դարձավ, դրա համար Աստծու և ձեր հայրության առաջ պայմանավորվեցինք, որ Աղվանքի հայրապետության ձեռնադրությունը մեր երկրի միաձայնությամբ սուրբ Գրիգորի աթոռի միջոցով լինի, ինչպես որ էր սուրբ Գրիգորից սկսած, որովհետև քրիստոնեությունը մենք այնտեղ ընդունեցինք և ճշմարտությամբ գիտենք, թե այն, ինչ դուք եք ընտրում, Աստծուն և մեզ հաճելի է: Այս պայմանից ոչ ոք իրավունք չի ունենա դուրս գալ կամ այլ ձևով վարվել: Իսկ եթե այսպես չլինի, անվավեր ու փուչ կլինի, և այդ ձեռնադրությունը ընդունելի չի համարվի: Արդ՝ նրանք, որոնք Աստծու երկյուղով մեր սահմանադրության կանոնները կկատարեն, Սուրբ Երրորդության ու Աստծու բռ-

լոր ուղղափառ ծառաներից կօրհնվեն. իսկ եթե որևէ մեկը ընդդիմանալով շեղվի այս ճշմարտությունից, ով էլ որ լինի, ինքն է Աստծուն պատասխան տալու»¹:

Այդպիսով, այդ արարողությունների մասնակիցները Հայոց և Աղվանից անխախտ միաբանության երդմնաթուղթ են տալիս Եղիային, որով վերստին հիշվում է երկու եկեղեցիների ավանդական միաբանությունը և դատապարտվում են ոչլուսավորչական բոլոր կրոնական ուղղությունները: Երկրորդ «թղթի» («ձեռնարկի») տակ ստորագրում են Աղվանքի Սիմոն կաթողիկոսը, Կապադակի Հովհաննես Եպիսկոպոսը, Հռոշ Սիմոն Եպիսկոպոսը, Ամարասի Սահակ Եպիսկոպոսը, Ներսիսի վանքի տանուտեր սրբասեր Քչիկը՝ աղանդից գերծ մնացած իր ամբողջ միաբանությամբ, Գտավանքի տանուտերը, Կատարո վանքի տանուտերը, Հովսեփի վանքի տանուտերը, Կաղանկատուքի Դավիթ վանականը, Տյաակերտի Պետրոս վանականը, Ալածոբի Պողոս վանականը, Աղվանքի իշխան Քրիստոսասեր Շերոն, Աղվանքի սպարապետ Ջվանքոն, Վարդան պատրիկն ու նրա եղբայր Գագիկը, Հրահատյան Բաբը, Վարազմանյան Վախտանգը, թագավորական տոհմից Քարոյան Պատրիկը, Վարազհոհանյան Վահանը: Անաստյան Թեոդորոսը, Ռոստոմ Վարազ Աքոյանը, Զարմիրի Վարազ Քուրդաքյանը՝ թագավորական ցեղից, Մահմեդ Շերոյանը և այդ երկրի բոլոր ազատներն էլ օրհնեցին²:

Այդպիսով, քրիստոնեական հավատը Աղվանքում կրկին ընդունվում է հոգևորականների ու աշխարհականների միաբանությամբ, ասել կուզի՝ քաղաքական ու կրոնաեկեղեցական ընտրանիների լիակատար միաբանությամբ: Մեկ անգամ ևս նկատենք, որ Անդրկուրյան Աղվանքից Պարտավում տեղի ունեցած այդ արարողություններին ներկա էր միայն մեկ հոգևորական՝ Կապադակի Հովհաննես Եպիսկոպոսը: Մ. Կաղանկատուքում երկի երրորդ գրքի «Ժ» գլուխը, որ պատմում է, թե ինչպես Աբդլմեյիքի պահանջով ներկայացվում է Աղվանից իշխանների ցուցակը՝ նրանց երդումով հանդերձ՝ մինչև վերջ հեռու մնալու քաղկեդոնիկ աղանդից, Անդրկուրյան Աղվանքից դարձյալ Կապադա-

¹ Մ. Կաղանկատուքի, նշված երկը, էջ 232–235:

² Մ. Կաղանկատուքի, նշված երկը, էջ 233–234:

կի իշխանի անունն է միայն (այն էլ եկվոր)¹: Իսկ Կամբեճանի սահմանակից Կապադակը հայկական հնագույն գավառներից մեկն է, որը Ստրաբոնի վկայությամբ ևս Մեծ Հայքի Սպեր նահանգի կենտրոնում էր գտնվում²: Պարզվում է, որ այդ ժամանակ Ադվանից եկեղեցու շրջանակներում տեղադրված էին միայն բուն հայկական բնակավայրերը:

Այսպես կոչված պայմանի թուղթ է ստորագրում նաև Հայոց կաթողիկոս Եղիան՝ ուղղված Ադվանքին, որում կարդում ենք. «Ադվանքում գտնված չարափառ Ներսեսը իր շարժումը հավատի վերաբերյալ և Քաղկեդոնի երկաթնակ աղանդի գունագարդումը սերմանեց շատերի հոգիներում և իր խորամանկ շարությամբ վտանգեց եպիսկոպոսներին, քահանաներին, կրոնավորներին... Ադվանքի եպիսկոպոսները և եկեղեցու բովանդակ միաբանությունը վերստին գրով ու կնիքով նզովեցին նրան ու Աստծու միջնորդությամբ մեզ հետ միասին պայման դրեցին, թե կմնանք միևնույն հաստատությամբ և չենք ընդունի Քաղկեդոնի պիղծ աղանդը ու Բակուրի ուսմունքը: Արդ՝ եթե հավատարիմ եք մնում նույն պայմանին և սուրբ հայերի ավանդությանը, ընդունեցեք նրանց և սիրեցեք ինչպես ձեր հոգևոր տեսուչների, իսկ եթե որևէ մեկը շեղվի այս պայմանից, լինի կաթողիկոս կամ եպիսկոպոս, իշխանություն չունի ձեզ վրա. դուր մնացեք ձեր եկեղեցիներում և միշտ ու անդադար աղոթք մատուցեք Աստծուն:

Թող ձեզ վրա Աստված լինի իշխան և ուղղափառ վարդապետները»³:

Իր այս թուղթը Եղիան հանձնում է Ներսանիի վանքի վանահայր սրբասեր Բշիկին և Հովսեփի վանքի վանահայր սրբասեր Գրիգորին: Երկու թղթերն էլ Եղիան կնքում է իր մատանիով: Այս ամենի հետ դժվար չէ նկատել, որ, ինչպես վերը նշվեց, VII դարի վերջում, VIII դարի սկզբում Միհրանյան իշխանական տոհմը Ադվանքում և նրա հայկական նահանգ Արցախում փաստորեն սպառվում է: Մնում է պատասխանել այն հարցին, թե ինչի հետևանք էր արաբական խալիֆի Պարտավի ներկայացուցչի

¹ Նույն տեղը, էջ 237:

² Տես Ստրաբոն, գիրք 11, գլուխ 14, պ. 9:

³ Մ. Կադանկատվացի, նշված երկը, էջ 235–236:

համագործակցությունը քրիստոնյա միաբանության հետ: 690-ական թվականներին խալիֆ Աբդ էլ-Մելիքը, ճնշելով երկրի ներսում ծագած խռովությունները և ապստամբությունները, հնարավորություն ունեցավ ամբողջ ուժով գործելու Բյուզանդիայի դեմ: Իսկ Աղվանքում, ինչպես տեսանք, դրությունը չափազանց բարդ էր ու լարված: Կրոնական գործիչների միջև միասնական կարծիքն ու քաղաքական կողմնորոշումը բացակայում էին: Յոթերորդ դարի 2-րդ կեսի նման, VIII դարի սկզբներին Աղվանքի հայ քաղաքական ու կրոնական ընտրանիների շրջանում որոշակիորեն ուրվագծվում էին հասարակական-քաղաքական երկու հոսանքներ, երկու ուղղություններ: Նրանց մի մասը ձգտում էր երկիրը դնել բյուզանդական կայսրության տնօրինության տակ: Այս թեմուգ և թույլ հոսանքը ղեկավարում էր կաթողիկոս Ներսես Բակուրը: Մյուս, ավելի գորեղ հոսանքը իր հետևից տանելով հայ ազնվականության մեծամասնությանը, գտնում էր, որ պետք է հրաժարվել Բյուզանդիայի երկդիմի հովանավորությանը ապավինելու մտքից և երկրի քաղաքական անկախության պահպանման համար արաբների հետ վարել հաշտ ու համերաշխ քաղաքականություն: Այս հոսանքի կողմնակիցները ճիշտ էին ըմբռնել քաղաքական դեպքերի զարգացման ընթացքը: Նրանք հասկացել էին, որ Արաբական խալիֆությունը անարգել ընթանում է դեպի հզորացում, իսկ բյուզանդական կայսրությունը անկում է ապրում: Ուստի ոչ միայն Աղվանքի հայերը, այլև ողջ հայ ժողովուրդը իր ուժերով, նույնիսկ Բյուզանդիայի օգնությամբ, չէր կարող վերացնել արաբական գերիշխանությունը, ուստի պետք է այնպիսի ուղի ընտրվեր, որպեսզի ժողովրդին գոնե որոշ չափով ազատեր կոտորածներից և երկիրը փրկեր ավիրվելուց: Բյուզանդիայի նկատմամբ Պարտավի 705 թվականի եկեղեցական ժողովներում տիրապետող դասակարգի ներկայացուցիչների մեծամասնության բռնած դիրքը բխում էր առաջին հերթին երկրի այն ժամանակվա իրական վիճակից և այն վերաբերմունքից, որն ունեին Բյուզանդիան և Արաբական խալիֆությունը հայերի նկատմամբ: Արաբական իշխանությունները բյուզանդական ազդեցությունը Արմենիայում, ընդ որում նաև Աղվանքում, տարածվելու դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով, հովանավորում էին հակաբյուզանդական հոսանքներին, որպիսիք էին Պարտավի ժողովները և նրանցում ընդունված «թղթերը»: Ահա

Թե՛ն ինչի հետևանք էր Արաբական խալիֆատի Պարտավի ներկայացուցչի համագործակցությունը քրիստոնեա միաբանության հետ՝ ի դեմս նրա քաղաքական ու կրոնանկեղեցական ընտրանու:

ՎԵՐՁԱԲԱՆ

Հայտնի է, որ ընտրանի (էլիտա) ձևակերպումը տարակարծիք մեկնաբանությունների նրկար ուղի է անցել: Տարբեր քաղաքական-հասարակական ֆորմացիաներում այն մեկնաբանվել է յուրովի, իսկ մեր ժողովրդի պատմության ընթացքում նաև զգալի խնդումներ ապրել, մեր կարծիքով՝ նրկու հիմնական պատճառներով:

Առաջինն արտաքին քաղաքականությունն է: Հայկական պետականությունը անկախ տվյալ ժամանակաշրջանի իր գոյության ձևից, ուժեղ կամ թույլ ինստիտուցիոնալ լինելուց, միշտ ճնշման է ենթարկվել անմիջական հարևան ու ոչ հարևան հզոր պետությունների կողմից: Հայ ժողովրդի ողջ գոյատևման ընթացքում հայոց արքունիքը կամ փաստացի քաղաքական-կրոնական ղեկավարությունը գործել են արտաքին ճնշումների ներքո, հայտնվել աշխարհաքաղաքական շահերի բախման խաչմերուկներում: Թե՛ պետության գոյության և թե՛ նրա բազակայության պայմաններում նույն վիճակում է եղել հայկական եկեղեցին:

Երկրորդ պատճառը պետության ներքին կյանքի կազմակերպման խնդիրն էր:

Եկեղեցին մոտ յոթ դար ըստ էության փոխարինում էր պետությանը, կատարում նրա առանձին գործառնությունը ներքին և արտաքին կյանքում, այդ ճնշումների ողջ բեռը ընկած էր հենց կրոնա-եկեղեցական ընտրանու ուսերին:

Ֆորմացիաների առումով ոչ անցումային շրջաններում ընտրանու ձևավորումը բազմազանությամբ աչքի չի ընկնում: Սույն աշխատության բոլոր վեց մասերում նկարագրված էր մեր ժողովրդի կյանքը ֆեոդալական կացութաձևի պայմաններում: Ստրկության տարրեր փորձում էին ներմուծել զավթիչները, որոնք գործ էին ունենում հայերիս ազատատենչության հետ՝ ազատագրական պայքարի տարբեր դրսևորումներով:

Ելնելով այս նրկու հիմնավոր պատճառներից կարելի է պնդել, որ VII–IX դարերում քաղաքական ընտրանու կազմավորումը հիմնականում ընթանում էր հետևյալ “գործող անձանց” շրջանում.

1. իշխանական (արքունական և այլ) ժառանգություն կրողների.

2. առավել ունեվորհների (հող, գորք, տարատեսակ բարիքներ),
3. եկեղեցական ընտրովի սպասավորների (ըստ էության VII–IX դարերում մեզ մոտ գործող միակ ընտրական ինստիտուտը),
4. ազատագրական պայքարի առաջնորդների,
5. լեզվապահպանների:

Այսպիսով, եթե ժամանակակից աշխարհում քաղաքական վերնախավը ձևավորվում է առնվազն ճանաչված 10–11 բաղկացուցիչներից (տես՝ Ս. Կելլեր, Է. Ֆրոմ, Գ. Մոսկա, Տ. Դայ, Մ. Բոդեն, Ա. Էտցիհոնի, Ա. Թոյնքի, Ն. Լասուել, Խ. Օրտեգա-ի-Գասետ և ուրիշներ), ապա մեր շարադրանքից ակնառու երևում է, որ Ղարաբաղում էլիտան հիմնականում ձևավորվում էր նշված հինգ սահմանումների շրջանակում: Որպես տատանվող տիրույթ կարելի է դիտարկել նաև մինչ օրս էլ գործող Ն. Լասուելի չափանիշը՝ իշխանական լիազորություններով օժտվածությունը: Սակայն մեր կարծիքով VII–IX դարերում այն տարբեր դրսևորումներով տրոհվում էր մեր թվարկած շրջանակում:

Ավարտելով ասելիքը, կուզենայինք նշել, որ ձեր դատին ներկայացվող աշխատությունը, ինչպես արդեն ասվել է, ընդամենը մի փորձ է անդրադառնալու Արցախի քաղաքական պատմությանը, մասնավորապես՝ ներկայացնելու, թե ով է կառավարել մ.թ. VII–IX դարերում Արցախում, ովքեր և ինչպես են մշակել քաղաքական կառավարման սկզբունքները և ինչպես են դրանք գործածվել: Աներկբա է, որ խնդրո առարկա թեման դեռ բազմաթիվ ուսումնասիրությունների կարիք ունի: Ներկայացված նյութից ակներև է դառնում, որ աղբբեջանական պատմագրության կողմից արված և մինչ օրս էլ արվող բազմաթիվ խնդարություններն ու կեղծարարությունները պարզապես հարկադրում են այսօրվա և ապագա պատմաբաններին և քաղաքագետներին առավել հաճախակի անդրադառնալ Արցախի քաղաքական պատմությանը: Սա հենց այն դեպքն է, երբ պատմությունը ավելին է, քան լոկ պատմություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի շրջանում»: ՊՌ-ԱԿԶ, Երևան, 1965թ.:
2. Ագաթանգեղոս, «Պատմություն հայոց»: Թիֆլիս, 1914թ.:
3. Ադոնց Ն., «Պատմական ուսումնասիրություններ»: Փարիզ, 1948թ.:
4. Ադրբեջանի պատմություն (ռուսերեն): Բաքու, 1958թ.:
5. «Ազգագրական հանդես», գիրք Բ.: Թիֆլիս, 1897թ.:
6. Ակինյան Ն., «Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր պատմութիւնն Աղուանից»: “Հանդես ամսօրեայ”, 1953-1958թթ., Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1922թ.:
7. Այաօյաճման Ա. “Պատմական Հայաստանի սահմանները”: Գահիրե, 1950թ.:
8. Անապյան Հ., «Հայկական մատենագրությունը V-XVIIIդդ.»: Երևան, 1959թ.:
9. Անեցի Ս., «Հուաքմունք ի գրոց պատմագրաց»: Վարդարշապատ, 1893թ.:
10. Առաքելյան Հ., «Հանրագիտարան-բառարան»: Թիֆլիս, “Էպօլսա”, 1915թ.:
11. Առաքելյան Հ. “Հանրագիտարան-բառարան”, Թիֆլիս, “Էպօլսա”, 1915թ.:
12. Առաքելյան Վ. “Մովսես Կաղանկատվացու “Պատմություն Աղուանից աշխարհի””: Երևան, 1969թ.:
13. Ասողիկ Ստ. “Պատմութիւն տիեզերական” ՄՊԲ, 1885թ., Փարիզ, 1959թ.:
14. Ասորի Մ. “Ժամանակագրություն”, Երուսաղեմ, 1879թ.:
15. «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», ՀՍՍՌ ԳԱ հրատ, Երևան, 1965թ.:
16. Արծրունի Թ., «Պատմութիւն տանն Արծրունեաց»: Վիեննա, 1852թ.:
17. Բարխուդարյանց Մ., «Պատմութիւն Աղուանից»: հ. ԱԲ, Թիֆլիս, 1900-1907թթ.:
18. Գանձակեցի Կ., «Պատմություն Հայոց»: Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965թ.:

19. Դադյան Խ. «Մովսես Կաղանկատվացու Աղունեաց պատմութեան երկաթագիր»: Ա խումբ, օրինակից մի պակաս հատուագ: «Արարատ», 1897թ.:
20. Դրասխանակերտցի Հ. «Պատմություն Հայոց»: Թիֆլիս, 1912թ.:
21. Եղիշև, «Վարդանի և հայոց պատերազմի մասին»: «Հայաստան», Երևան, 1971թ.:
22. Երեմյան Ս., «Մառը և հայագիտության հարցերը»: ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1966թ.:
23. Զալայանց Ս., «Ճանապարհորդութիւն դեպի Մեծն Հայք»: Թիֆլիս, 1858թ.
24. Լեո, «Երկերի ժողովածու», Երևան, 1966-1967թթ.:
25. Լեո, «Պատմություն Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի»: Թիֆլիս, 1914թ.:
26. «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1956, 1971թ.:
27. Հակոբյան Ս. «Հայ գյուղացիության պատմություն»: հատ 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1957թ.:
28. «Հանդես ամսօրյա» 1906-1907թթ.:
29. Հարությունյան Շ. «Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920–1965 թթ.»: «Ուրվագծեր», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1967թ.:
30. Հյուբշման, «Հին հայոց տեղվոյ անունները»: Թարգմ. Հ.Բ. Պիլեզիկճեան, Վիեննա, 1907թ.:/
31. Հովհաննիսյան Ա.Գ. «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության»: Գիրք Ա, Երևան, 1957թ., Գիրք Բ, Երևան, 1959թ.:
32. Հովսեփյան Գար., «Գրչութեան արունստը հին հայոց մէջ»: Մասն Գ, Վաղարշապատ, 1913թ.:
33. Ղևոնդ, երկ. 15:
34. «Ճռաքաղ», տնտրակ Ե.: 1860թ.:
35. Մանանդյան Հ., «Հայաստանի քաղաքները X–XI դարերում»: Երևան, 1940թ.:
36. Մանանդյան Հ., «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետինգերյան քարտեզի»: Երևան, 1936թ.:

37. Մանանդյան Հ., «Ֆեոդալիզմը հին Հայաստանում»: Երևան, 1934թ.:
38. Մատենադարանի ձեռագրեր № 2966, էջ 120 ա, բ: № 3062, էջ 251-252:
39. Մելիք-Բախշյան Ստ., «Պավլիկյան շարժումը Հայաստանում»: Երևան, 1953թ.:
40. Մնացականյան Ա., «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ»: Երևան, 1969թ.:
41. Պողոսյան Ս. «Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX–XIII դարերում»: Երևան, ԵՊՀ հրատ., 1956թ.:
42. Սամվելյան Լս., «Հին հայ իրավունքի պատմություն»: հատ. 1, Երևան, 1939թ.:
43. Սեբեոս «Պատմություն», Երևան, 1939թ.:
44. «Սովետական Ղարաբաղ» մարզային թերթ: 28 սեպտեմբերի 1972թ. հ.228, 5 մարտի 1972թ., հ.55, 27 հուլիսի 1969, հ.175:
45. Ստրաբոն, գիրք 11: Գլուխ 14, Պ.9:
46. «Վասն վանորէից որ ի սուրբ քաղաքն Յերուսաղեմ ըստ նախնեաց մերոց»: Գաղիարեն թարգմանութեամբ, Վենետիկ, 1896թ.:
47. Վարդան Վարդապետ «Հաւաքումն պատմութեան»: Վենետիկ, 1862թ.:
48. Տաշեան Հ., «Ակնարկ մը հայ հնագրութեն վրայ»: Վիեննա, 1898թ.:
49. «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ, 1951թ., № 10:
50. Ութմազյան Հ., «Բաբելյան շարժման արձագանքները Հայաստանում»: «Անդրկովկասի ժողովրդների բարեկամությունը» ժողովածու, ԵՊՀ հրատ., 1954թ.:
51. Օրբելյան Ստ., «Պատմություն նահանգին Սիսական»: Ղուկասեան մատենադարան, Թիֆլիս, 1910թ.:
52. Аб-Юсуф «Книга о земельном налоге». Ленинград, 1941г.
53. Ааааа-Еоөө-оаі Ааеөөаі і â, «Ăрөөñòаі è Èòаі ». Баку, «ЭЛМ», 1991г.
54. Ааі і ö Í. «Ăөі і єñеé Õðàеөөñêеé è àðì ýí ñêèà òí êөі ààòăëè». Петроград, 1912г.

55. Աթաբեյ Բ. «Աթաբեյ թաթի աթի Բեյ».
56. Աթի Բեյ Բ. «Աթաբեյ թաթի աթի Բեյ».
57. «Աթաբեյ թաթի աթի Բեյ».
58. Երեմյան Ս. «Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алп-Илитверу». Записки института Востоковедения АН СССР. Т. 7, 1939г.
59. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
60. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
61. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
62. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
63. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
64. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».
65. Ի Բեյ Բեյ Բ. «Աթի թաթի Բեյ».

Համակարգչային ձևավորումը՝ Վ.Բրյուսովի անվան ԵրԳԱՀ-ի համակարգչային կենտրոն

Ստորագրված է տպագրության՝ 13.03.2010

Հանձնված է տպագրության՝ 17.03.2010

Տպարանակ՝ 300

«Լինգվա» հրատարակչություն՝
 Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
 Հասցեն՝ Երևան, Թումանյան 42,
 Հեռ.՝ 53-05-52,
 Web: <http://www.brusov.am>
 E-mail: yslu@brusov.am